Քրեականացման հիմքերի դասակարգման 2-րդ խումբը ներկայացված է Ա.Դ Անտոնավի և Ա.Ի. Կորոբենի աշխատություններում: Վերջիններս առանձնացրել են քրեականացման իրավաբանական-քրեաբանական, սոցիալ-տնտեսական և սոցիալ-հոգեբանական հիմքերը¹²:

Իրավաբանական-քրեաբանական հիմքը ենթադրում է կատարված արարքին բացառապես քրեաիրավական ներգործության միջոցներով հակազդելու անհրաժեշտություն, իրավունքի մյուս ճյուղերի միջոցով արդյունավետ հակազդեցության հնարավորության բացակայություն: Սոցիալ-տնտեսական հիմքերին է վերաբերում քրեականացման բացասական և դրական հետևանքների համադրումը՝ վերջինների բացահայտ գերակշռման պայմաններում, քրեաիրավական արգելքի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը: Սոցիալ-հոգեբանական հիմքեր են հանդիսանում հասարակության իրավագիտակցության մակարդակը, հոգեբանական առանձնահատկությունները, պատմական ավանդույթները¹³:

Հիշյալ դասակարգման առավելությունն արտահայտվում է նրանում, որ քրեականացման սոցիալական, տնտեսական և քաղաքական գործոններից բացի արարքների քրեականացման հիմնավորման համար օգտագործվում են քրեաբանական բնութագրիչներ:

Քրեականացման հիմքերի դասակարգման 3-րդ խումբը ներկայացված է Վ.Ն. Կուդրյավցևի, Ն.Ֆ. Կուզնեցովայի և Ն.Ա. Լոպաշենկոյի աշխատություններում:

Վ.Ն. Կուդրյավցևի կարծիքով՝ արարքների քրեականացման անհրաժեշտության մեջ գերակայում են սոցիալական պատճառները: Վերջինս առանձնացնում է քրեականացման հետևյալ հիմքերը. պատճառվող վնասի չափով պայմանավորված՝ արարքի արգելման անհրաժեշտությունը, արարքի տարածվածությունը, քրեաիրավական արգելքի թույլատրելիությունը՝ պայմանավորված քաղաքական, բարոյական, իրավական, միջազգային պահանջներով, արգելքի իրականացման գործնական հնարավորությունը, արգելքի նպատակահարմարությունը՝ կապված

¹¹ Уголовное право России: Общая часть: учебник / под ред. В. Н. Кудрявцева, В. В. Лунеева, А. В. Наумова. М.: Юристъ, 2005, с. 30

¹² Коробеев А.И., Советская уголовно-правовая политика: проблемы криминализации и пенализации. Владивосток, 1987, с. 69–88.

¹³ Антонов А.Д., Теоретические основы криминализации и декриминализации: автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2001, с. 17–19.

կողմնակի բացասական ազդեցությունների առաջացման, բնակչության հոգեբանական արձագանքի, տնտեսական գնահատականի և հեռանկարների հետ¹⁴:

Ն.Ֆ. Կուզնեցովան թվարկում է քրեականացման հետևյալ հիմքերը. սոցիալական (տնտեսական, գաղափարախոսական, քաղաքական, բարոյական, սոցիալ-հոգեբանական, կազմակերպական-կառավարչական), սոցիալական-իրավական (իրավական ավանդույթներ, իրավական հոգեբանություն, հանցավորության վիճակ, դինամիկա և կառուցվածք), իրավական (իրավունքի և իրավաստեղծ գործունեության սկզբունքներ)¹⁵:

Ն.Ա. Լոպաշենկոյի կարծիքով՝ քրեականացման հիմքերն են. արարքի քրեաիրավական արգելքի սահմանման պահանջարկը (վնասի չափ, տարածվածություն, հակազդեցության այլ արդյունավետ միջոցների բացակայություն), արգելքի թույլատրելիություն (քաղաքական, բարոյական, իրավական (ներքին), միջազգային), արգելքի իրականացման գործնական հնարավորություն (տրամաբանական-իրավաբանական, քննչական, դատական, քրեակատարողական), արգելքի նպատակահարմարության գնահատում (կողմնակի բացասական ազդեցություններ, բնակչության հոգեբանական արձագանք, տնտեսական գնահատում, հեռանկարներ)¹⁶:

Քրեաիրավական քաղաքականության իրականացման հաջորդ կարևոր մեթոդը քրեական պատասխանատվության տարբերակումն է (дифференциация): Քրեական իրավունքի գիտության մեջ քրեական պատասխանատվության տարբերակումը դիտարկվում է որպես՝ 1. քրեաիրավական քաղաքականության հիմնական ուղղություն¹⁷, քրեական քաղաքականության սկզբունք¹⁸, օրենսդրական գործունեության արդյունք¹⁹:

Տ.Ա. Լեսնիևսկի-Կոստարևան բովանդակային առումով քրեական պատասխանատվության տարբերակումը բնորոշում է որպես քրեական օրենքում պատասխանատվության դասակարգում, բաժանում, շերտավորում, որի արդյունքում օրենսդրի կողմից սահմանվում են տարբեր քրեաիրավական հետևանքներ՝ կախ

¹⁴ Кудрявцев В.Н., Научные предпосылки криминализации // Криминология и уголовная политика. М., 1985, с. 105.

¹⁵ Кузнецова Н.Ф., Социальная обусловленность уголовного закона // Правовые исследования. Тбилиси, 1977, с. 36.

¹⁶ Лопашенко Н.А., Уголовная политика. М., 2009. с. 103.

¹⁷ Кругликов, Л.Л. Вопросы дифференциации ответственности в уголовном законодательстве, Реализация принципа справедливости в правоприменительной деятельности органов уголовной юстиции. Ярославль: ЯрГУ, 1992, с. 58.

¹⁸ Курляндский, В.И., Уголовная политика, дифференциация и индивидуализация уголовной ответственности / В.И. Курляндский // Основные направления борьбы с преступностью. Москва: Юрид. лит., 1975, с. 77.

¹⁹ Васильевский, А.В., Дифференциация уголовной ответственности и наказания в Общей части уголовного права: автореф. дис. канд. юрид. наук. / А.В. Васильевский. Нижний Новгород, 2000, с. 9.

ված տիպային հասարակական վտանգավորության աստիճանից և մեղավորի անձից²⁰:

Լ.Լ. Կրուգլիկովը և Ա.Վ. Վասիլևսկին պատասխանատվության տարբերակումը բնորոշում են որպես օրենսդրի կողմից իրականացված տարանջատում՝ հաշվի առնելով որոշակի հանգամանքներ և նպատակ ունենալով իրավակիրառողի համար ստեղծել իրավախախտման համար պատասխանատվության միջոցների ընտրության համակարգ:

Նշված հեղինակների կարծիքով՝ քրեական պատասխանատվության տարբերակման միջոցներ կարելի է առանձնացնել քրեական օրենսգրքի և՛ ընդհանուր, և՛ հատուկ մասում: Քրեական օրենսգրքի ընդհանուր մասին բնորոշ են պատասխանատվության տարբերակման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են հանցագործությունների տեսակները, քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը և այլն:

Լ.Լ. Կրուգլիկովի կողմից քրեական օրենքի հատուկ մասում քրեական պատասխանատվության տարբերակման միջոցների շարքն են դասվում որակյալ և արտոնյալ հանցակազմերը, իսկ որպես տարբերակման հիմք՝ դիտարկում են որակյալ և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները²¹:

Յու.Բ. Մելնիկովան քրեական պատասխանատվության տարբերակումը համարում է քրեական օրենսդրությամբ պատասխանատվության տարբեր տեսակների, ձևերի, ծավալների և միջոցների սահմանումը, իսկ պատասխանատվության տարբերակման հիմքեր է համարում հանցագործության հանրային վտանգավորության բնույթը և աստիճանը, մեղավորի անձը, պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները²²:

Հեղինակների գերակշիռ մեծամասնության կարծիքով՝ քրեական պատասխանատվության տարբերակումն իրականացնում է օրենսդիրը քրեաիրավական նորմերի ընդունման միջոցով, սակայն առկա են նաև տարբերվող մոտեցումներ: Մասնավորապես, որոշ հեղինակներ թույլ են տալիս քրեական պատասխանատվության տարբերակում և անհատականացում հասկացությունների նույնացումը²³, առանձին հեղինակներ կարծիք են հայտնում, որ պատասխանատվության տարբերակումն իրականացվում է ոչ միայն օրենքում, այլև դատարանում, և ենթադրում է, որ արարքի հանրային վտանգավորությունը և այն կատարողի անձը

²⁰ Лесниевски-Костарева, Т.А. Дифференциация уголовной ответственности. Теория и законодательная практика / Т.А. Лесниевски-Костарева. 2-е изд., перераб и доп. Москва: НОРМА, 2000, с. 368.

²¹ Кругликов, Л.Л. Дифференциация ответственности в уголовном праве / Л.Л. Кругликов, А.В. Васильевский. Санкт-Петербург: Юридический центр Пресс. 2003, с.59-62.

²² Мельникова, Ю.Б. Юридическая ответственность: сущность, понятие, дифференциация / Ю.Б. Мельникова // Дифференциация уголовной ответственности в уголовном праве и процессе сборник научных трудов. – Ярославль: Издательство Ярославского университета, 1994, с. 16.

²³ Карпец, И.И. Индивидуализация наказания в советском уголовном праве / И.И. Карпец. Москва: Юридическая литература, 1961, с. 12.

պետք է հաշվի առնվի բոլոր մակարդակներում՝ թե՛ օրենսդիր, թե՛ իրավակիրառ²⁴:

Ամփոփելով ներկայացված տեսակետները՝ կարելի է եզրակացնել, որ քրեականացումը և պատասխանատվության տարբերակումը պետության քրեաիրավական քաղաքականության իրականացման մեթոդներ են (միջոց), որոնք փոխկապակցված են և փոխլրացնում են միմյանց, սակայն չեն նույնանում:

Արարքի քրեականացումը գործընթաց է, որն ուղղված է արարքը որպես հանցագործություն ճանաչելուն, կամ արդեն իսկ հանցավոր ճանաչված արարքի շրջանակների ընդլայնմանը, որի արդյունք է հանդիսանում համապատասխան հանցակազմի ամրագրումը քրեական օրենքում կամ արդեն իսկ ամրագրված հանցակազմի հատկանիշների ընդլայնումը:

Վերոգրյալի համատեքստում, անդրադառնալով Ա.Ի. Կորոբեևի կողմից քրեական օրենքի հատուկ մասում հանցակազմի հատկանիշների ամրագրման եղանակով քրեականացման դրսևորման 3 հիմնական ձևերի դասակարգմանը, հարկ է նշել, որ հեղինակը փաստացի քրեական պատասխանատվության տարբերակումը համարում է արարքի քրեականացման դրսևորման ձև: Նշված մոտեցումը մեր կողմից ընդունելի չի համարվում, քանի որ քրեական պատասխանատվության տարբերակումն արարքի քրեականացման մաս չի հանդիսանում, թեև այն կարող է իրականացվել քրեականացմանը զուգահեռ, սակայն հանդիսանում է օրինաստեղծ գործունեության ինքնուրույն ուղղություն, որի շրջանակներում ինչպես քրեական օրենսգրքում հատուկ նորմերի նախատեսման, այնպես էլ գործող նորմերի կառուցվածքի փոփոխման արդյունքում քրեականացվող կամ արդեն իսկ քրեականացված արարքների համար նախատեսվում են քրեաիրավական ներգործության տարբերակված միջոցներ՝ պայմանավորված տվյալ արարքի, դրա կատարման հանգամանքների, ինչպես նաև այն կատարող անձի օրենքով նախատեսված առանձնահատկություններով:

Ինչ վերաբերում է արարքի քրեականացման հիմքերին, ապա կարծում ենք, որ վերը մեջբերված գրեթե բոլոր գործոններն էական ազդեցություն ունեն քրեականացման գործընթացի վրա, իսկ դրանց դասակարգումները կրում են պայմանական բնույթ: Ավելին, նշված գործոնները քրեականացման գործընթացից բացի էական ազդեցություն ունեն նաև քրեական պատասխանատվության տարբերակման իրականացման առումով, ուստի դրանք կարող են դիտարկվել որպես հիմք և՛ արարքի քրեականացման, և՛ քրեական պատասխանատվության տարբերակման համար:

«Քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածում ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի համաձայն՝ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության, պատժի կամ քրեաիրավական

²⁴ Коробеев, А.И., Уголовно-правовая политика: тенденции и перспективы / А.И. Коробеев, А.В. Усс, Ю.В. Голик. Красноярск: Издательство Красноярского ун-та. 1991, с. 9.

ներգործության այլ միջոցների ենթարկելը կամ քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելը պետք է լինի արդարացի՝ ապահովելով ինչպես կիրառվող օրենսդրության, այնպես էլ պետական հակազդեցության համաչափությունը կատարված հանցանքին, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձին:

Քրեական պատասխանատվության տարբերակումը հանդիսանում է հիշյալ սկզբունքի կենսագործման կարևորագույն միջոց:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարը հանդիսանում է համաշխարհային գլոբալ խնդիր, ներպետական օրենսդրությամբ դրա հետ կապված արարքների քրեականացման և դրանց առանձին դրսևորումների համար պատասխանատվության տարբերակման հիմնահարցերի վերլուծությունից առաջ հարկ ենք համարում հակիրճ անդրադառնալ նշված ոլորտում գործող հիմնական միջազգային իրավական ակտերին և դրանցով նախատեսված վերաբերելի իրավակարգավորումներին, ինչպես նաև միջազգային մարմիններին:

Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային իրավական հիմքը կազմում են Թմրամիջոցների մասին 1961թ. միասնական կոնվենցիան (1972թ. կատարված փոփոխություններով), Հոգեմետ նյութերի մասին կոնվենցիան, Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի 1988թ. կոնվենցիան, որոնք ընդունվել և Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ են մտել 1993թ.:

Նշված փաստաթղթերը հանդիսանում են թմրամիջոցների նկատմամբ վերահսկողության հիմնական միջազգային պայմանագրերը, որոնք փոխլրացնում են միմյանց:

Առաջին երկու պայմանագրերի կարևորագույն նպատակներն են վերահսկողության միջազգայնորեն ընդունելի միջոցառումների ամրագրումը, բժշկական և գիտական նպատակներով թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի հասանելիության ապահովումը, ապօրինի շրջանառության տիրույթ դրանց արտահոսքի կանխումը, նշված նյութերի ապօրինի շրջանառության և չարաշահման վերաբերյալ ընդհանուր դրույթների սահմանումը:

Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի 1988թ. կոնվենցիան տարածում է վերահսկողության ռեժիմը պրեկուրսորների նկատմամբ, նախատեսում է թմրամիջոցների ապօրինի շրջանառության և դրա հետ կապված փողերի լվացման դեմ պայքարի միջոցառումների մշակում, ինչպես նաև քրեաիրավական հարցերով միջազգային իրավական համագործակցության ամրապնդում:

Նշված երեք կոնվենցիաներով թմրամիջոցների հանձնաժողովին և թմրամիջոցների նկատմամբ վերահսկողության միջազգային կոմիտեին վերապահվել են կարևոր գործառնություններ:

Մասնավորապես, թմրամիջոցների հանձնաժողովը, որի կազմի մեջ մտնում

են ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից 4 տարի ժամկետով ընտրվող 53 անդամ պետություններ, հանդիսանում է թմրամիջոցների հետ կապված հարցերով կենտրոնական մարմին, որի իրավասությանն են վերապահված թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտի դինամիկայի և միտումների վերահսկման, դրանց չարաշահման հետ կապված խնդիրները: Հանձնաժողովն ընդունում, ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդին, ինչպես նաև վերջինիս միջոցով գլխավոր ասամբլեայի հաստատմանն է ներկայացնում թմրամիջոցների ապօրինի շրջանառությանն առավել արդյունավետ հակազդման նոր համաձայնեցված միջոցների և սկզբունքների վերաբերյալ բանաձևերի նախագծեր: Հանձնաժողովի իրավասությանն է վերապահված նաև նյութերի ներառումը ցուցակներում, դրանցում փոփոխությունների կատարումը:

Թմրամիջոցների նկատմամբ վերահսկողության միջազգային կոմիտեն ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից 5 տարի ժամկետով ընտրվող 13 անդամից բաղկացած մշտական մարմին է, որը կառավարությունների կողմից տրամադրված տվյալների հիման վրա վերահսկողություն է իրականացնում թմրամիջոցների հետ կապված հարցերով, հավաքում է տեղեկատվություն թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ և Թմրամիջոցների հանձնաժողովին ու ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդին ներկայացնում է զեկույց աշխարհում տիրող իրավիճակի մասին: Կոմիտեի իրավասությանը վերապահված են նաև լիազորություններ՝ կապված կոնվենցիաների պահանջների կատարման վերահսկման և պետություններին խորհրդատվության տրամադրման հետ:

Թմրամիջոցների մասին 1961թ. միասնական կոնվենցիայի (1972թ. կատարված փոփոխություններով) 4-րդ հոդվածում ամրագրված են ընդհանուր պարտավորությունները, որոնց համաձայն՝ Կողմերը ձեռնարկում են օրենսդրական և վարչական բնույթի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իրենց տարածքների սահմաններում Կոնվենցիայի դրույթները գործադրելու և կիրառելու համար, Կոնվենցիայի կիրառման ոլորտում այլ պետությունների հետ համագործակցության զարգացման համար, Կոնվենցիայի դրույթների պահպանման պայմանով, թմրամիջոցների արտադրությունը, պատրաստումը, արտահանումը, ներմուծումը, տարածումը, վաճառքը, օգտագործումը և պահպանումը բացառապես բժշկական և գիտահետազոտական նպատակներով սահմանափակելու համար:

Նույն կոնվենցիայի 36-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պահպանելով իր սահմանադրական սահմանափակումները՝ յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է միջոցներ, որոնք կապահովեն, որ Կոնվենցիայի դրույթներին հակառակ թմրամիջոցների մշակումը, արտադրությունը, պատրաստումը, առանձնացումը, պահպանումը, առաջարկը, առևտրային նպատակներով առաջարկը, տարածումը, գնումը, վաճառքը, ցանկացած պայմաններով առաքումը, միջնորդությունը,

ուղարկումը, ուղարկումը տարանցիկ երթուղով, ներմուծումն ու արտահանումը և որևէ այլ գործողություն, որը, Կողմերի կարծիքով, կարող է սույն Կոնվենցիայի դրույթների խախտում հանդիսանալ, սահմանվեն որպես պատժելի արարքներ, եթե դրանք կատարվել են կանխամտածված, և ապահովում է, որ լուրջ օրինախախտումները ենթակա լինեն համապատասխան պատիժների կիրառման, մասնավորապես՝ բանտարկության կամ ազատագրկման այլ միջոցի:

Հասարակական կյանքի հիշյալ ոլորտում դրսևորվող արարքների քրեականացման և պատասխանատվության տարբերակման խնդիրներին առավել մանրամասն անդրադարձ է կատարվել Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի 1988թ. կոնվենցիայում: Մասնավորապես, նշված կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում են Կողմերից յուրաքանչյուրի համար պարտադիր չափանիշներ ազգային քրեական օրենսդրության համար:

Նշված հոդվածում ամրագրված դրույթները պարտավորեցնում են կողմերին քրեականացնել ցանկացած թմրամիջոցի կամ ցանկացած հոգեմետ նյութի արտադրությունը, պատրաստումը, վերանշակումը, առաջարկումը, առաջարկումը՝ վաճառքի համար, տարածումը, վաճառքը, ցանկացած պայմաններով կատարվող առաքումը, միջնորդությունը, փոխադրումը, տարանցիկ փոխադրումը, տեղափոխումը, ներմուծումը կամ արտահանումը, պահելը, ձեռք բերելը կամ մշակելը, որը կատարվել է դիտավորությամբ, ինչպես նաև սարքավորումների, սարքերի կամ պրեկուրսորների պատրաստումը, տեղափոխումը, տարածումը, տիրապետումը, եթե հայտնի է, որ դրանք նախատեսված են թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի մշակման, արտադրության կամ պատրաստման համար:

Հատուկ կերպով ընդգծվում է թմրամիջոցների արտադրության նպատակով ափիոնի խաշխաշի, կոկաինի թփի կամ կանեփ բույսի մշակման քրեականացման անհրաժեշտությունը:

Կոնվենցիայի նշված հոդվածում անդրադարձ է կատարված նաև թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունից ստացված գույքի օրինականացման, քննարկվող ոլորտում օրինախախտում կատարելու կամ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելու հրապարակային սադրանքի կամ ցանկացած այլ միջոցներով դրդելու քրեականացմանը:

Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի 1988թ. կոնվենցիայի 3-րդ հոդվածի 5-րդ կետում ամրագրված են թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքները: Դրանք են.

ա) օրինախախտման մեջ հանցավոր խմբի մասնակցությունը, որի կազմի մեջ է մտնում օրինախախտը,

բ) օրինախախտի մասնակցությունը միջազգային կազմակերպված հանցավորության այլ տեսակներին,

գ) օրինախախտի մասնակցությունը տվյալ օրինախախտման կատարմանը նպաստող ապօրինի գործունեության այլ տեսակներին,

դ) օրինախախտի կողմից բռնության գործադրում կամ զենքի կիրառում,

ե) այն փաստը, որ օրինախախտը պաշտոնատար անձ է հանդիսանում, և տվյալ օրինախախտումը կապված է իր պաշտոնի հետ,

զ) անչափահասների ներգրավում և օգտագործում,

է) այն փաստը, որ օրինախախտումը կատարվել է ուղղիչ հիմնարկում, ուսումնական կամ հասարակական հաստատությունում, կամ դրանց անմիջական հարևանությամբ, կամ այլ վայրերում, որտեղ դպրոցականները և ուսանողները անց են կացնում ուսումնական, սպորտային և հասարակական միջոցառումներ,

ը) նախկին դատվածությունների առկայությունը՝ հատկապես նմանատիպ օրինախախտումների համար, արտասահմանյան կամ սեփական երկրում, որքանով դա ընդունելի է և համապատասխանում է տվյալ Կողմի ազգային օրենսդրությանը:

Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների և այլ նյութերի ապօրինի շրջանառության քրեականացման և պատասխանատվության տարբերակման առանձնահատկությունները

Նշված միջազգային իրավական ակտերով նախատեսված արարքների քրեականացմանը վերաբերող պահանջների և 05.05.2021թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթների համադրման արդյունքում կարելի է արձանագրել, որ ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի՝ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պատրաստուկների, պրեկուրսորների, խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունների գլխում, այնպես էլ օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերում ամրագրված դրույթներով արարքների քրեականացմանը հիշյալ միջազգային իրավական ակտով ներկայացվող պահանջներն ընդհանուր առմամբ կատարված են:

05.05.2021թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի կարևորագույն առավելություններից մեկը պետք է համարել այն, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար պատասխանատվություն նախատեսող դրույթներում ընդլայնվել է հանցագործության առարկա հանդիսացող նյութերի շրջանակը՝ բացի թմրամիջոցներից և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերից ներառելով նաև դրանց պատրաստուկները, համարժեք նյութերը և ածանցյալները, որպիսի հանգամանքն ունի գործնական մեծ նշանակություն և հնարավորություն է տալիս, համապատասխան հիմքերի դեպքում, քրեական հետապնդում իրականացնել

իրավասու մարմնի կողմից սահմանված ցուցակներում չընդգրկված նյութերի շրջանառության դեպքում:

Իրացնելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի), կամ դրանց ածանցյալների ապօրինի շրջանառության համար պատասխանատվություն նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասում պահպանվել է օրենսդրի կողմից նախկինում կիրառված մոտեցումը, որի պայմաններում հանցակազմի երկրնորելի օբյեկտիվ կողմը հնարավորություն է տալիս դրանում նշված գործողություններից (արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, տարածելը, գովազդելը կամ դրանք ապօրինի իրացնելը) յուրաքանչյուրի կատարման դեպքում արարքը որակել որպես ավարտված հանցագործություն:

Լիովին արդարացված համարելով հիշյալ մոտեցումը՝ հարկ է նշել, որ ոչ բոլոր պետությունների քրեական օրենսդրությամբ է այն ամրագրված: Օրինակ՝ ՌԳ քրեական օրենսգրքի 228.1 հոդվածով պատասխանատվություն է նախատեսված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց անալոգների ապօրինի արտադրության, իրացման կամ առաքման համար, այսինքն՝ իրացմանը նախորդող գործողությունները (ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը և այլ) ենթակա են որակման որպես չավարտված հանցագործություն:

Հաջորդ կարևոր ձեռքբերումը 05.05.2021թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասում իրացնելու նպատակով թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ), կամ դրանց ածանցյալ ապօրինի գովազդելու համար պատասխանատվության նախատեսումն է:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գովազդը տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն է անորոշ թվով անձանց շրջանում, որը կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

Իրավաբանական գրականության մեջ գովազդելը բնորոշվում է որպես գովազդի առարկայի ցուցադրություն, դրա առկայության մասին տեղեկատվության տարածում, որպես կանոն, մեծ թվով անձանց շրջանում, գովազդի օբյեկտը ձեռք բերելու, դրանից օգտվելու հորդոր, կոչ:

Գովազդի առավել ընդգրկուն հասկացություն է տրված ՌԳ գերագույն դատարանի պլենումի 15.12.2022թ. թիվ 37 որոշման մեջ, որի համաձայն՝ գովազդելն իրենից ներկայացնում է ցանկացած եղանակով, ձևով և միջոցներով, անձանց անորոշ շրջանակի հասցեագրված գովազդի օբյեկտի վերաբերյալ տեղեկատվության տարածումը, որն ուղղված է այդ օբյեկտների նկատմամբ ուշադրություն

գրավելուն, դրանց նկատմամբ հետաքրքրություն ձևավորելուն ու պահպանելուն և շուկայի խթանմանը: Ընդ որում, արարքի որակման համար նշանակություն չունի գովազդի օբյեկտի հասանելիությունը արարքի կատարման պահին:

Արգելված օբյեկտների գովազդի համար քրեական պատասխանատվության կարևոր նախապայմաններից են անձի դիտավորությունը, գործողությունների բովանդակության և հանրային վտանգավորության, այդ թվում՝ գովազդվող տեղեկատվության բնույթի, նշված տեղեկատվությունն անձանց լայն շրջանակի հասանելի դարձնելու հանգամանքի գիտակցումը:

Կարծում ենք, որ սոցիալական կայքերում, հեռահաղորդակցման հավելվածներում գործող թմրամիջոցների վաճառքով զբաղվող էջերում առաջարկվող շրջանառությունն արգելված կամ սահմանափակված նյութերի, դրանց արժեքների, ձեռքբերման պայմանների և հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տեղադրումը, անձանց անորոշ, լայն շրջանակի այդ տեղեկատվությանը հասանելիություն տրամադրելը, ինչպես նաև թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվող անհատական էջերի, դրանց հղումների, դրանցով առաջարկվող թմրամիջոցների և ծառայությունների որակի վերաբերյալ տեղեկություններ տարածող օգտահաշիվների գործունեությանը մասնակցող անձանց արարքները, վերը նշված մյուս հատկանիշների ամկայության պայմաններում, ենթակա են որակման՝ որպես իրացման նպատակով թմրամիջոցների գովազդում: Ընդ որում, տեղեկատվական կամ հեռահաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը որպես հանցակազմի որակյալ հատկանիշ նախատեսելու դեպքում՝ հիշյալ տեխնոլոգիաների կիրառմամբ գովազդելը ենթակա կլինի որակման՝ որպես ծանրացուցիչ հանգամանքներում կատարված:

Կարծում ենք, որ որպես իրացման նպատակով թմրամիջոցների գովազդում պետք է որակվեն նաև հանրային վայրերում թմրամիջոցների վաճառքով զբաղվող էջերի հղումներ պարունակող գրառումներով, այդ թվում՝ «QR» կոդերի պատկերմամբ նյութեր փակցնելու, գրառումներ կատարելու դեպքերը:

05.05.2021թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումների դրական կողմերի արձանագրումից բացի, հարկ է նշել, որ դրանք գերծ չեն որոշակի բացերից: Ընդ որում, նշված բացերը առավելապես վերաբերում են ոչ թե արարքների քրեականացմանը, այլ դրանց առանձին դրսևորումների համար քրեական պատասխանատվության տարբերակմանը: Մասնավորապես, թեև ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածով որպես հանցագործության որակյալ հատկանիշներ նախատեսված են իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը ուսումնական հաստատությունում կամ դրա հարակից տարածքում, զվարճանքի կամ հանդիսադիր վայրում կամ հաստատությունում, սակայն հասարակության առավել խոցելի հատվածի՝ անչափահասների քրեաիրավական հատուկ պաշտպանության ուղղությամբ բավարար միջոցներ ձեռնարկված չեն:

Հարկ է նշել նաև, որ անչափահասին թմրամիջոց իրացնելու համար տարբերակված՝ ավելի խիստ պատասխանատվություն նախատեսելը համահունչ է նաև միջազգային իրավական ակտերի պահանջներին: Մասնավորապես, ինչպես արդեն նշվել է Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի 1988թ. կոնվենցիայի 3-րդ հոդվածի 5-րդ կետում թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների շարքում ընդգրկված է նաև ապօրինի շրջանառությանն անչափահասների ներգրավումն ու օգտագործումը:

Բացի այդ, Երեխայի իրավունքների մասին 1989թ. կոնվենցիայի 33-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, ներառյալ՝ օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները, որպեսզի երեխաներին պաշտպանեն թմրանյութերի և հոգեներգործուն նյութերի ապօրինի օգտագործումից, ինչպես դրանք սահմանված են միջազգային փաստաթղթերում, և կանխեն երեխաների ներգրավումն այդպիսի նյութերի ապօրինի արտադրության ու առևտրի մեջ:

ՌԴ քրեական օրենսգրքի 228.1-րդ հոդվածի 4-րդ մասով որպես հանցակազմի որակյալ հատկանիշ նախատեսված է արարքի կատարումը 18 տարին լրացած անձի կողմից՝ անչափահասի նկատմամբ:

Կարծում ենք, որ օրենսդրական փոփոխության միջոցով համանման դրույթի նախատեսումը ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասում ևս կարևոր քայլ կլինի հանրորեն խիստ վտանգավոր նման դրսևորումների դեմ պայքարում:

Հարկ է նշել նաև, որ իրացման նպատակով արգելված նյութերի շրջանառության համար պատասխանատվություն նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածով որպես որակյալ հատկանիշ նախատեսված չեն նաև արարքը անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ, վիճակի խոցելիությունը կամ նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով, բռնություն գործադրելով, դա գործադրելու սպառնալիքով, շանտաժով կամ հարկադրանքի այլ եղանակով կատարելը:

Նշված հատկանիշները ևս էապես բարձրացնում են արարքի հանրային վտանգավորության աստիճանը և դրանց օրենսդրական ամրագրումը ևս կարող է արդյունավետ միջոց հանդիսանալ նմանօրինակ դրսևորումների դեմ պայքարում:

Կարծում ենք, որ գոյություն ունեցող սպառնալիքներին և ժամանակակից բացասական հասարակական իրողություններին դիմագրավելու համարժեք քրեափրավական ներգործության միջոցներ նախատեսելու առումով ամենասակնառու բացը 05.05.2021թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով տեղեկատվական կամ հեռահաղորդակցական տեխնոլոգիաների, ներառյալ համացանցի օգտագործմամբ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվությունը չտարբերակելն է:

Հանցավոր նպատակներով նոր տեխնոլոգիաների կիրառման գլոբալ խնդիրը, բնականաբար, գտնվում է նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում գործունեություն ծավալող միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում:

Իր 1997 և 1998 թվականների զեկույցներում Թմրամիջոցների նկատմամբ վերահսկողության միջազգային կոմիտեն արձանագրել է, որ էլեկտրոնային և զանգվածային լրատվության մյուս միջոցներով տարածվում է տեղեկատվություն, որը հանդիսանում է թմրամիջոցների օգտագործման դրոշմը կամ հակում: Համացանցի միջոցով իրականացվում է թմրամիջոցների օգտագործման և արտադրության վերաբերյալ տեղեկատվության փոխանակում²⁵:

2001թ. իր զեկույցում Կոմիտեն անհանգստություն է հայտնել միջազգային վերահսկողության տակ գտնվող թմրամիջոցների նկատմամբ նոր տեխնոլոգիաների կիրառման կապակցությամբ՝ արձանագրելով, որ թմրաբիզնեսով զբաղվող խմբավորումները երկակի են օգտագործում նոր տեխնոլոգիաները՝ հուսալի և օպերատիվ կապի օգտագործմամբ թմրամիջոցների տեղափոխման, առաքման և տարածման արդյունավետությունը բարձրացնելու և իրենց ու իրականացվող ապօրինի գործարքներն իրավասու մարմիններից պաշտպանելու նպատակով:

Նույն զեկույցում Կոմիտեն անդրադարձել է նաև կիրեռահանցագործության հասկացությանը՝ նշելով, որ այն ներառում է գործունեության տարբեր տեսակներ, սակայն բովանդակային առումով այն կարող է օգտագործվել բնորոշելու համար էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ օրենքի բոլոր խախտումները²⁶:

Թմրամիջոցների նկատմամբ վերահսկողության միջազգային կոմիտեն 2009թ. հրատարակել է կառավարությունների համար ձեռնարկ՝ համացանցի միջոցով միջազգային հսկողության տակ գտնվող նյութերի ապօրինի առևտրի կանխարգելման վերաբերյալ:

Նշված ձեռնարկում արձանագրվել է, որ վերջին տարիներին զգալիորեն աճել են վեբ-կայքերի միջոցով թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի վաճառքի ծավալները, ինչի հետևանքով համացանցը դարձել է թմրամիջոցների գլխավոր աղբյուրներից մեկը դրանք չարաշահող անձանց համար: Հատուկ մտահոգության առարկա է համարվել այն, որ ունենալով համացանցում անանուն գործելու հնարավորություն՝ արգելված նյութեր կարող են հեշտությամբ ձեռք բերել երեխաներն ու դեռահասները²⁷:

²⁵ Доклад Международного комитета по контролю над наркотиками за 1997 год (Е/ШСВ/1997/1), с.6. Доклад Международного комитета по контролю над наркотиками за 1998 год (Е/ШСВ/1998/1), с.8.

²⁶ Доклад Международного комитета по контролю над наркотиками за 2001 год (Е/ИНСВ/2001/1), с. 1-2.

²⁷ Руководство для правительств по предупреждению незаконной торговли через Интернет веществами, находящимися под международным контролем, ОРГАНИЗАЦИЯ ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ, Нью-Йорк, 2009, с. 1-2.

Հանցագործությունների կատարման ընթացքում համակարգչային տեխնիկայի, համացանցի, օնլայն վճարային գործիքների կիրառումը առանձնակի նշանակություն ունի թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, դրանց համարժեք նյութերի (անալոգի) և ածանցյալների ապօրինի շրջանառության և մաքսանենգության դեպքերի բացահայտմանը խոչընդոտող հանգամանքների շարքում:

Ոչ ակներևության պայմաններում, կողմերի փոխադարձ համաձայնությամբ կատարվող թմրամիջոցների ապօրինի շրջանառությունն օժտված է բարձր լատենտայնությամբ, իսկ համակարգչային տեխնիկայի, համացանցի, հեռահաղորդակցման հավելվածների, զանազան վճարային գործիքների, կրիպտոարժույթի կիրառման արդյունքում բացառվում են իրական անմիջական շփումները հանցագործության առարկան իրացնողի և այն ձեռք բերողի միջև: Ավելին, հիշյալ միջոցների կիրառման արդյունքում նվազագույնի են հասցվում կամ բացառվում են իրական անմիջական շփումները նաև հանցավոր գործունեությանը ներգրավված հանցակիցների միջև:

Նշված հանգամանքներով պայմանավորված՝ հանցագործությունների հիշյալ խումբը մասնագիտական գրականությունում անվանվում է նաև թմրամիջոցների «անշփում» (бесконтактный) իրացում²⁸:

Հիշյալ եղանակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, դրանց համարժեք նյութերի (անալոգի) և ածանցյալների ապօրինի շրջանառության դեպքերի կտրուկ աճը, դրանում ներգրավված անձանց մեծ շրջանակը, հանցավոր գործունեության կազմակերպված բնույթը վկայում են նախ և առաջ նշված հանցատեսակի դեմ պայքարի քրեաիրավական միջոցների կատարելագործման անհրաժեշտության մասին:

Հիշյալ հանգամանքները հաշվի առնելով՝ կարծում ենք պայքարի արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ նշված հանցավոր դրսևորման համար պատասխանատվության խստացումը:

Թմրամիջոցների իրացման համար պատասխանատվություն նախատեսող ՌԴ քրեական օրենսգրքի 228.1-րդ հոդվածի 2-րդ մասով որպես հանցակազմի որակյալ հատկանիշ նախատեսված է թմրամիջոցների իրացումը, որը կատարվել է զանգվածային լրատվության միջոցների, էլեկտրոնային կամ տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցի միջոցով (ներառյալ համացանցը):

ՌԴ գերագույն դատարանի պլենումի 15.12.2022թ. թիվ 37 որոշման համաձայն՝ արարքը ենթակա է որակման հիշյալ հատկանիշով՝ անկախ հանցագործության կատարման փուլից, եթե դրա կատարման համար պայմաններ ստեղծող կամ օբյեկտիվ կողմի հատկանիշ հանդիսացող դիտավորյալ գործողություններից որևէ

²⁸ Богданов А.В., Ильинский И.И., Хазов Е.Н., Информационно-телекоммуникационная сеть Интернет – как один из наиболее востребованных ресурсов в противодействии незаконному обороту наркотиков // Вестник Московского университета МВД России. 2018;(3). С. 173-179.

մեկը կատարվել է հիշյալ ցանցերի օգտագործմամբ: Մասնավորապես, թմրամիջոցների ապօրինի իրացման դեպքում նշված որակյալ հատկանիշով որակման ենթակա են անձի գործողությունները, որոնք ուղղված են հետագայում իրացնելու նպատակով համացանցի միջոցով թմրամիջոցների ձեռքբերմանը, հանցակիցների ներգրավմանը, թմրամիջոցներ ձեռք բերելու համար տեղեկատվության տեղադրմանը: Հիշյալ հատկանիշով որակման են ենթակա նաև հանցակցությամբ կատարված հանցագործությունները, եթե դրանց նախապատրաստման կամ կատարման ընթացքում հանցակիցների միջև կապը ապահովվել է նշված տեխնոլոգիաների միջոցով (օրինակ՝ թմրամիջոցը թաքստոցում տեղադրողի և այդ նպատակով թմրամիջոցը տրամադրած անձի միջև կապը):

Հարկ է նշել նաև, որ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության ընթացքում էլեկտրոնային կամ տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների, ներառյալ համացանցի օգտագործումը, հետապնդում է 2 հիմնական նպատակ՝ արգելված նյութեր առաջարկել անձանց հնարավորինս մեծ շրջանակի և նվազագույնի հասցնելով կամ բացառելով անմիջական շփումը՝ քողարկել հանցավոր գործունեության մասնակիցներին, խուսափել բացահայտումից:

Բաց աղբյուրներում անձանց մեծ շրջանակի համար թմրամիջոցների ձեռքբերման համար անհրաժեշտ տեղեկատվության տեղադրումը ընձեռում է դրանք առանց որևէ բարդության ձեռք բերելու հնարավորություն, ինչը թմրամոլության ավելի մեծ տարածման իրական սպառնալիք է ստեղծում, այդ թվում՝ հասարակության առավել խոցելի հատվածների շրջանում:

Հարկ է նշել, որ հիշյալ գործոններով պայմանավորված նշված եղանակով արարքի կատարումն իր հանրային վտանգավորության աստիճանով համադրելի է ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված առանձնապես որակյալ հատկանիշներին՝ արարքը հանցավոր կազմակերպության կողմից և առանձնապես խոշոր չափերով կատարելուն, քանի որ նշված արարքի կատարումը, որպես կանոն, կրում է կազմակերպված բնույթ, դրա կատարմանը համապատասխան դերաբաշխմամբ ներգրավվում են առնվազն մի քանի հանցակիցներ, քողարկված հանցավոր գործունեությունը կրում է տևական բնույթ և նույնիսկ առանձին հանցակիցների բացահայտման դեպքում չի դադարեցվում, իսկ շրջանառության առարկա են հանդիսանում առանձնապես խոշոր չափերով տարատեսակ թմրամիջոցներ:

Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառությունն առաջին հերթին բնութագրվում է հանցակիցների ճյուղավորված ցանցով, որի կազմում հանցակիցներից յուրաքանչյուր, արգելված նյութերի իրացման ընդհանուր նպատակի իրականացման համար կատարում է միայն որոշակի էպիզոդիկ դեր: Ընդ որում, հանցավոր գործունեության իրականացման ընթացքում հանցակիցների

ցանցի կառուցվածքը, յուրաքանչյուր հանցակցի դերակատարումը հստակեցվել և կոնկրետացվել է այն աստիճանի, որ իրավակիրառ պրակտիկայի արդյունքում ձեռք բերված տվյալների հիման վրա իրավաբանական գրականությունում քննարկումների և վերլուծությունների առարկա է դարձել նշված ցանցի օղակների գործառույթային դերը:

Ս.Վ.Մակսիմովը և Վ.Ս.Օվչինսկին կախված թմրաշրջանառության մեջ անձի դերից առանձնացնում են դրա այնպիսի մասնակիցների ինչպիսիք են կազմակերպիչը (ղեկավարը), պատրաստողներ (արտադրողներ), տեղափոխողներ (փոստատարներ), մեծաքանակ և փոքրաքանակ իրացնողներ, գովազդողներ (տարածողներ), պահակներ (պահեստապետեր), գանձապահներ, հանցավոր ճանապարհով ստացած միջոցներն օրինականացնողներ, «տանիք»²⁹:

Հարկ է նշել, որ թմրահանցավորության մոդերնիզացմանը զուգահեռ փոփոխությունների է ենթարկվում նաև դրանում ներգրավված անձանց շրջանակը:

Ա.Պ.Սուխոդոլովի և Ա.Մ.Բիչկովայի կողմից առանձնացվում է հանցակիցների 2 հիմնական խումբ՝ հանցավոր կազմավորման ղեկավարը և անդամները:

Հանցավոր կազմակերպության ղեկավարը, որպես կանոն, չունի անմիջական կապ ո՛չ արգելված նյութերի, ո՛չ հանցավոր գործունեությանը ներգրավված անձանց մեծամասնության հետ, նրա գործառույթներից են հանցավոր կազմավորման ընդհանուր ղեկավարումը և համակարգումը, իրացման շուկայի ընդլայնումը, թմրամիջոցների մատակարարներ գտնելը և այլն:

Նշված հեղինակների կարծիքով բացի ղեկավարից կարելի է առանձնացնել տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ թմրամիջոցների իրացմանը մասնակցող հետևյալ հանցակիցներին.

- արգելված նյութեր պատրաստողներ (արտադրողներ), վերամշակողները,
- մաքսանենգություն կատարողները, ովքեր իրացման ենթակա թմրամիջոցների խմբաքանակները ներմուծում են իրացման երկրներ,
- մեծածախ սուրհանդակներ (оптовые наркочурьеры), ովքեր իրականացնում են թմրամիջոցների խոշոր խմբաքանակների տեղափոխումն իրացման երկրի տարածքում,
- համացանցային կայքերի, անհատական էջերի պատրաստման, վարման և թարմացման պատասխանատուներ (маркетологи),
- անձինք, ովքեր ստանում են արգելված նյութերի մեծածախ խմբաքանակ, փաթեթավորում այն փոքր չափաբաժիններով և փոխանցում տեղադրողներին (складмены),
- անձինք, ովքեր ստանում են արգելված նյութերի պատվերները, դրանք փոխանցում են տեղադրողներին, վերահսկում են իրացման դիմաց վճարման ստացումը, տեղադրողներից ստանում են հանցագործության առարկայի

²⁹ Криминология : учебник / под ред. В.Н. Кудрявцева, В.Е. Эминова. 4-е изд., перераб. и доп. М. : Норма, 2010, с.662-663.

տեղադրման վայրի տվյալները և դրանք փոխանցում ձեռք բերող անձանց (диспетчеры),

- համակարգողներ, ովքեր անմիջականորեն աշխատում են սուրհանդակների, տեղադրողների, պատվերներ ընդունող և փոխանցող անձանց հետ (кураторы),
- անձինք, ովքեր զբաղվում են այլ հանցակիցների, հիմնականում տեղադրողների ներգրավմամբ (кадровики),
- անձինք, ովքեր իրականացնում են արգելված նյութերի տեղադրումը որոշակի վայրում և փոխանցում են հասցեն ու լուսանկարը (закладчики, кладмены),
- զանձապահներ, ովքեր ստանում են ֆինանսական միջոցները բանկային հաշիվներից, իրականացնում են դրանց բաշխումը հանցավոր գործունեության մասնակիցների միջև (кассиры),
- կանխիկացնողներ, ովքեր նպաստում են էլեկտրոնային միջոցների փոխարկմանը կանխիկ դրամական միջոցների (обналичиватели),
- անձինք, ովքեր իրականացնում են գովազդային նյութերի տեղադրում անհատական էջերում, տարածում են դրանք հասարակական և այլ վայրերում (промоутеры, граффитчики, райтеры, трафаретчики, спамеры),
- անձինք, ովքեր բռնություն են կիրառում թմրամիջոցներ հափշտակած կամ այլ վնաս պատճառած հանցակիցների նկատմամբ (коллекторы),
- անձինք, ովքեր ներգրավվում են միջոցների կանխիկացմանը կամ արգելված նյութերի պարունակությամբ առաքանիների ստացմանը կամ ապօրինի գործարքների համար օգտագործվում են նրանց անձնագրային կամ այլ տվյալները (дропы):

Ընդ որում, վերջին կատեգորիայի անձինք նշված հեղինակների կողմից դասակարգվում են 3 խմբի՝ անձինք, ովքեր գիտակցում են հանցավոր գործունեության հանգամանքները, ովքեր տեղյակ են գործունեության հակաիրավականության մասին, սակայն տեղեկացված չեն դրա մանրամասների վերաբերյալ, ովքեր առհասարակ տեղյակ չեն իրենց գործունեության հակաիրավականության մասին³⁰:

Հարկ է նշել, որ տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող հանցավոր կազմավորումների կողմից նշված գործառնությունների իրականացումն իր հաստատումն է գտել նաև իրավակիրառ պրակտիկայի ամփոփումներում:

Քննարկվող հանցավոր դրսևորման հանրային վտանգավորության առանձնակի բարձր աստիճանը պայմանավորված է նաև թմրամիջոցների մասին տե-

³⁰ Цифровые технологии и наркопреступность: проблемы противодействия использованию мессенджера «Телеграм» в распространении наркотиков / А.П. Суходолов, А.М. Бычкова // Всероссийский криминологический журнал. 2019. Т. 13, № 1. с. 5–17.

ղեկատվության և բուն արգելված նյութի ձեռքբերման գործընթացի այն աստիճանի պարզեցմամբ, որը բնորոշ է ազատ շրջանառության մեջ գտնվող ապրանքների ձեռքբերմանը: Ավելին, թմրամիջոցների իրացման ընթացքում օգտագործվող տեխնոլոգիաները քողարկված գործելու հնարավորություն են ընձեռում նաև արգելված նյութեր ձեռք բերող անձանց համար, որպիսի հանգամանքը ևս նպաստում է շրջանառության նշված եղանակի տարածմանը:

Հիշյալ հանցավոր դրսևորման հանրային վտանգավորության առանձնակի բարձր աստիճանը, տարածվածությունը և քրեական պատասխանատվության տարբերակման համար նշանակություն ունեցող մյուս գործոնները հաշվի առնելով՝ լիովին արդարացված ենք համարում օրենսդրական փոփոխության միջոցով իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար պատասխանատվություն նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասում որպես հանցակազմի առանձնապես որակյալ հատկանիշ նախատեսել արարքի կատարումը տեղեկատվական կամ հեռահաղորդակցական տեխնոլոգիաների, ներառյալ համացանցի օգտագործմամբ:

Եզրակացություն

Քրեականացումը և պատասխանատվության տարբերակումը պետության քրեաիրավական քաղաքականության իրականացման մեթոդներ են (միջոց), որոնք փոխկապակցված են և փոխլրացնում են միմյանց, սակայն չեն նույնանում:

Արարքի քրեականացումը գործընթաց է, որն ուղղված է արարքը որպես հանցագործություն ճանաչելուն կամ արդեն իսկ հանցավոր ճանաչված արարքի շրջանակների ընդլայնմանը, որի արդյունք է հանդիսանում համապատասխան հանցակազմի ամրագրումը քրեական օրենքում կամ արդեն իսկ ամրագրված հանցակազմի հատկանիշների ընդլայնումը:

Վերոգրյալի համատեքստում, անդրադառնալով Ա.Ի. Կորոբենի կողմից քրեական օրենքի հատուկ մասում հանցակազմի հատկանիշների ամրագրման եղանակով քրեականացման դրսևորման 3 հիմնական ձևերի դասակարգմանը, հարկ է նշել, որ հեղինակը փաստացի քրեական պատասխանատվության տարբերակումը համարում է արարքի քրեականացման դրսևորման ձև: Նշված մոտեցումը մեր կողմից ընդունելի չի համարվում, քանի որ քրեական պատասխանատվության տարբերակումն արարքի քրեականացման մաս չի հանդիսանում, թեև այն կարող է իրականացվել քրեականացմանը զուգահեռ, սակայն հանդիսանում է օրինատեղծ գործունեության ինքնուրույն ուղղություն, որի շրջանակներում ինչպես քրեական օրենսգրքում հատուկ նորմերի նախատեսման, այնպես էլ գործող նորմերի կառուցվածքի փոփոխման արդյունքում քրեականացվող կամ արդեն իսկ քրեականացված արարքների համար նախատեսվում են քրեաիրավական ներգործության տարբերակված միջոցներ՝ պայմանավորված տվյալ արարքի, դրա

կատարման հանգամանքների, ինչպես նաև այն կատարող անձի՝ օրենքով նախատեսված առանձնահատկություններով:

Սույն հոդվածում նշված սոցիալական, տնտեսական, քաղաքական, իրավական-քրեաբանական գործոնները քրեականացման գործընթացից բացի, էական ազդեցություն ունեն նաև քրեական պատասխանատվության տարբերակման իրականացման առումով, ուստի դրանք կարող են դիտարկվել որպես հիմք և՛ արարքի քրեականացման, և՛ քրեական պատասխանատվության տարբերակման համար:

Միջազգային իրավական ակտերով նախատեսված՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված արարքների քրեականացմանը վերաբերող պահանջների և 05.05.2021թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթների համադրման արդյունքում կարելի է արձանագրել, որ ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի՝ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պատրաստուկների, պրեկուրսորների, խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունների գլխում, այնպես էլ օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերում ամրագրված դրույթներով արարքների քրեականացմանը ներկայացվող պահանջներն ընդհանուր առմամբ կատարված են:

Միևնույն ժամանակ, գործող իրավակարգավորումները գերծ չեն որոշակի բացերից, որոնք առավելապես վերաբերում են ոչ թե արարքների քրեականացմանը, այլ դրանց առանձին դրսևորումների համար քրեական պատասխանատվության տարբերակմանը:

Մասնավորապես, քրեական պատասխանատվության տարբերակման հիմք հանդիսացող թվարկված գործոնների հաշվառմամբ լիովին արդարացված ենք համար օրենսդրական վիճակի միջոցով ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասում որպես հանցակազմի առանձնապես որակյալ հատկանիշներ նախատեսել արարքի կատարումը տեղեկատվական կամ հեռահաղորդակցական տեխնոլոգիաների, ներառյալ համացանցի օգտագործմամբ, ինչպես նաև արարքի կատարումը 18 տարին լրացած անձի կողմից՝ անչափահասի նկատմամբ:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Թմրամիջոցների վերահսկման միջազգային խորհրդի 2022 թվականի զեկույց (E/INCB/2022/1) (Միավորված ազգերի կազմակերպություն, 2023 թ.): Report of the International Narcotics Control Board 2022 (E/INCB/2022/1) (United Nations, 2023).
2. Թմրամիջոցների համաշխարհային զեկույց 2022, գրքույկ 4, Թմրամիջոցների շուկայի միտումները. կոկաին, ամֆետամինի տիպի խթանիչներ, նոր հոգեակտիվ նյութեր (Միավորված ազգերի կազմակերպության հրատարակություն, 2022թ.): World Drug Report 2022, book 4, Drug market trends: cocaine, amphetamine-type stimulants, new psychoactive substances (United Nations publication 2022):
3. Քրեական իրավունքի ամբողջական դասընթաց / խմբ. Ա. Ի. Կորոբեև, Սանկտ Պետերբուրգ, «Պրես» իրավական կենտրոն, 2008 թ.: Complete Course on Criminal Law / ed. A. I. Korobeeva. St. Petersburg: Legal Center “Press”, 2008.
4. Կուդրյավցև Վ.Ն. , Քրեաիրավական արգելքի հիմքերը, Մոսկվա 2016թ.: V.N. Kudryavtsev, Grounds for Criminal Law Prohibition, M., 2016.
5. Լունեև Վ.Վ., Համաշխարհային և ռուսական քրեաբանության դասընթաց, 2 հատոր, Մ., 2011թ.: Luneev V.V., Course on World and Russian Criminology: textbook. In 2 vols. M., 2011.
6. Գավրիլով Բ.Յա., Ռուսաստանի ժամանակակից քրեական քաղաքականությունը. թվեր և փաստեր, Մ., 2008թ.: Gavrilov B.Ya., Modern Criminal Policy of Russia: Figures and Facts. M., 2008.
7. Չուբարև Ս.Մ., Նորը քրեական և քրեակատարողական օրենսդրության մեջ. պատժիչ քաղաքականության մարդասիրական որոշ ասպեկտներ, Ռուսական իրավունքի ամսագիր, 2004թ., N 4: Zubarev S.M., New in Criminal and Penal Legislation: Some Humanitarian Aspects of Punitive Policy // Journal of Russian Law. 2004. No. 4.
8. Չլոբին Գ.Ա., Քրեաիրավական արգելքի հիմքերը, Մ., 1982թ.: Zlobin G.A., Grounds for Criminal Law Prohibition, M., 1982:
9. Նաումով Ա.Վ. Ռուսաստանի քրեական իրավունք, 3 հատոր, Մ., 2007թ.. Naumov A.V., Russian Criminal Law: Course of Lectures. In 3 volumes. M., 2007.
10. Ռուսաստանի քրեական իրավունք. Ընդհանուր մաս. դասագիրք /խմբ. Վ.Ն. Կուդրյավցև, Վ.Վ. Լունեև, Ա.Վ.Նաումով, «Յուրիստ», Մ., 2005 թ.: Criminal law of Russia: General part / ed. V. N. Kudryavtseva, V. V. Luneeva, A. V. Naumova. M.: Urist, 2005.

11. Կորոբեև Ա.Ի., Խորհրդային քրեաիրավական քաղաքականություն, Վլադիվոստոկ, 1987 թ.:
Korobeev A.I., Soviet Criminal-Law Policy: Problems of Criminalization and Penalization. Vladivostok, 1987.
12. Անտոնով Ա.Դ., Քրեականացման և ապաքրեականացման տեսական հիմունքները, Մ., 2001թ.:
Antonov A.D., Theoretical Foundations of Criminalization and Decriminalization, M., 2001..
13. Կուդրյավցև Վ.Ն., Քրեականացման գիտական նախադրյալներ, Քրեաբանություն և քրեական քաղաքականություն, Մ., 1985թ.:
Kudryavtsev V.N., Scientific Prerequisites for Criminalization, Criminology and Criminal Policy. M., 1985.
14. Կուզնեցովա Ն.Ֆ., Քրեական իրավունքի սոցիալական պայմանավորվածությունը, Իրավաբանական հետազոտություններ, Թբիլիսի, 1977թ.:
Kuznetsova N.F., Social Conditionality of Criminal Law, Legal studies. Tbilisi, 1977.
15. Լոպաշենկո Ն.Ա., Քրեական քաղաքականություն. Մ., 2009թ.:
Lopashenko N.A., Criminal Policy, M., 2009.
16. Կրուգլիկով Լ.Լ., Պատասխանատվության տարբերակման հիմնախնդիրները քրեական օրենսդրության մեջ, Արդարության սկզբունքի իրականացումը քրեական արդարադատության մարմինների իրավակիրառ գործունեության մեջ, Յարոսլավլ, ՅարՊՀ, 1992 թ.:
Kruglikov L.L., Issues of Differentiation of Responsibility in Criminal Legislation, Implementation of the Principle of Justice in the Law Enforcement Activities of Criminal Justice Authorities, Yaroslavl: YarSU, 1992.
17. Կուրլյանդսկին Վ.Ի., Քրեական քաղաքականություն, քրեական պատասխանատվության տարբերակում և անհատականացում, Հանցավորության դեմ պայքարի հիմնական ուղղությունները, Մոսկվա, Իրավականական գրականություն, 1975 թ.:
Kurlyandsky V.I., Criminal Policy, Differentiation and Individualization of Criminal Liability, Moscow, 1975.
18. Վասիլևսկի Ա.Վ., Քրեական պատասխանատվության և պատժի տարբերակումը քրեական իրավունքի ընդհանուր մասում, Նիժնի Նովգորոդ, 2000 թ.:
Vasilievsky A.V., Differentiation of Criminal Liability and Punishment in the General Part of Criminal Law, Nizhny Novgorod, 2000.
19. Լեսնևսկի-Կոստարևա Տ.Ա., Քրեական պատասխանատվության տարբերակում, Տեսություն և օրենսդրական պրակտիկա, Մոսկվա, «Նորմա», 2000 թ.:
Lesniewski-Kostareva T.A., Differentiation of Criminal Liability. Theory and Legislative Practice, Moscow, 2000.

20. Կրուգլիկով Լ.Լ., Պատասխանատվության տարբերակումը քրեական իրավունքում, Սանկտ Պետերբուրգ: Իրավաբանական կենտրոն «Պրես», 2003 թ.: Kruglikov L.L., Differentiation of Liability in Criminal law, St. Petersburg, Legal Center Press, 2003.
21. Մելնիկովա Յու.Բ., Իրավաբանական պատասխանատվություն՝ էությունը, հասկացությունը, տարբերակումը, գիտական աշխատանքների ժողովածու, Յարոսլավլ, Յարոսլավլի համալսարանի հրատարակչություն, 1994 թ.: Melnikova Yu.B., Legal responsibility - essence, concept, differentiation, anthology of scientific works, Yaroslavl, Yaroslavl University Publishing House, 1994.
22. Կարպեց Ի.Ի., Պատժի անհատականացումը խորհրդային քրեական իրավունքում, Մոսկվա, Իրավաբանական գրականություն, 1961 թ.: Karpets I.I., Individualization of Punishment in Soviet Criminal Law, Moscow, 1961.
23. Կորոբեև Ա.Ի., Քրեաիրավական քաղաքականություն՝ միտումներ և հեռանկարներ, Կրասնոյարսկ, Կրասնոյարսկի համալսարանի հրատարակչություն, 1991 թ.: Korobeev A.I., Criminal Law Policy: Trends and Prospects, Krasnoyarsk, Krasnoyarsk University Publishing House, 1991.
24. Թմրամիջոցների վերահսկման միջազգային խորհրդի 1997 թվականի զեկույցը (E/SHCB/1997/1): Report of the International Narcotics Control Board for 1997 (E/SHCB/1997/1).
25. Թմրամիջոցների վերահսկման միջազգային խորհրդի 1998 թվականի զեկույցը (E/SHCB/1998/1): Report of the International Narcotics Control Board for 1998 (E/SHCB/1998/1).
26. Թմրամիջոցների վերահսկման միջազգային խորհրդի 2001 թվականի հաշվետվությունը (E/INCB/2001/1): Report of the International Narcotics Control Board for 2001 (E/INCB/2001/1).
27. Ուղեցույց կառավարությունների համար ինտերնետի միջոցով միջազգային վերահսկվող նյութերի ապօրինի առևտուրը կանխելու վերաբերյալ, ՄԱԿ, Նյու Յորք, 2009 թ.: Guidance for Governments to Prevent Illicit Trade in Internationally Controlled Substances Via the Internet, UN, New York, 2009.
28. Բոգդանով Ա.Վ., Իլյինսկի Ի.Ի., Խազով Է.Ն., Տեղեկատվական և հեռահաղորդակցության ցանց Ինտերնետը որպես թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ամենապահանջված ռեսուրսներից մեկը // Ռուսաստանի ՆԳՆ Մոսկվայի համալսարանի տեղեկագիր, 2018 թ.: Bogdanov A.V., Ilyinsky I.I., Khazov E.N. Information and Telecommunication Network Internet as One of the Most Popular Resources in Combating Drug Trafficking, Bulletin of Moscow University of the Ministry of Internal Affairs of Russia, 2018.

29. Քրեաբանություն, դասագիրք, խմբ.՝ Վ.Ն. Կուդրյավցև, Վ.Ե. Էմինով, Մ., «Նորմա», 2010 թ.:
V.N. Kudryavtsev, V.E. Eminov, Criminology, M., Norma, 2010.
30. Սուխոդոլով Ա.Պ., Բիչկովա Ա.Մ., Թվային տեխնոլոգիաները և թմրահան-
ցավորությունը, թմրամիջոցների տարածման մեջ «Telegram» մեսենջերի
օգտագործմանը հակազդելու հիմնախնդիրներ, Համառուսական քրեաբա-
նական ամսագիր, 2019թ., N 1:
Sukhodolov A.P., Bychkova A.M., Digital Technologies and Drug Crime, Prob-
lems of Countering the Use of the Telegram messenger in Drug Distribution, All-
Russian Criminological Journal, 2019, No. 1.

Armen Panosyan

*Head of the Department for Crimes against Public Health of
the Prosecutor General's Office of the Republic of Armenia*

**THE ISSUES OF DIFFERENTIATION OF CRIMINAL LIABILITY FOR
ILLEGAL TRAFFICKING OF DRUGS, PSYCHIATRIC (PSYCHOACTIVE)
SUBSTANCES, THEIR MIXTURES OR THEIR EQUIVALENTS
(ANALOGUE) OR THEIR DERIVATIVES FOR THE PURPOSE OF
ILLEGAL TRADE OR OTHER SPECIFIC FORMS OF REALIZATION¹**

Abstract

The article refers to the analysis of Article 393 of the Criminal Code of the Republic of Armenia from May 5, 2021, which contains responsibility for the illegal trafficking of drugs, psychiatric (psychoactive) substances, their mixtures or their equivalents (analogue) or their derivatives for the purpose of illegal trade or other specific forms of realization. The article aims to justify the necessity of differentiating criminal liability for individual manifestations of the mentioned crime due to its higher public danger.

In the article, the features and problems of criminalization and differentiation of responsibility for the illegal trafficking of drugs and other substances with the purpose of their realization in the Republic of Armenia were analyzed within the context of legal regulations of international legal acts, including reports from international organizations and perspectives from legal scholars.

Based on the studies conducted within the framework of the article, positive aspects of the legal regulations outlined in Article 393 of the new Criminal Code of the Republic of Armenia were highlighted and analyzed. The factors justifying the need to differentiate responsibility for individual manifestations of the discussed crime, including those committed using information and telecommunication technologies, were examined. Consequently, it was proposed to make changes to Article 393 in the Criminal Code of the Republic of Armenia.

Keywords: illegal drug trafficking; use of information and telecommunication technologies; criminalization; differentiation of criminal liability.

¹ The article was presented on 02.09.2023 and was reviewed on 01.12.2023.

Армен Паносян

*Начальник управления по преступлениям против здоровья населения
Генеральной прокуратуры Республики Армения*

**ПРОБЛЕМЫ ДИФФЕРЕНЦИАЦИИ УГОЛОВНОЙ
ОТВЕТСТВЕННОСТИ ЗА НЕЗАКОННЫЙ ОБОРОТ НАРКОТИЧЕСКИХ
СРЕДСТВ, ПСИХОТРОПНЫХ (ПСИХОВОЗДЕЙСТВУЮЩИХ)
ВЕЩЕСТВ, ИХ ПРЕПАРАТОВ ИЛИ РАВНОЦЕННЫХ ИМ ВЕЩЕСТВ
(АНАЛОГОВ) ИЛИ ИХ ПРОИЗВОДНЫХ С ЦЕЛЬЮ СБЫТА ИЛИ
ИХ НЕЗАКОННЫЙ СБЫТ¹**

Абстракт

Статья посвящена анализу статьи 393 Уголовного кодекса Республики Армения от 05.05.2021 г., предусматривающей ответственность за незаконный оборот наркотических средств, психотропных (психовоздействующих) веществ, их препаратов или равноценных им веществ (аналогов) или их производных с целью сбыта или их незаконный сбыт.

Статья направлена на обоснование необходимости дифференциации уголовной ответственности за отдельные проявления указанного преступления, характеризующие повышенной степенью общественной опасности.

В статье в контексте правового регулирования международно-правовых актов, докладов международных организаций, взглядов ученых-правоведов рассмотрены особенности и проблемы криминализации и дифференциации ответственности за незаконный оборот наркотических средств и других веществ с целью сбыта в РА.

На основе исследований, проведенных в рамках данной статьи, представлены положительные аспекты правового регулирования, закрепленного в статье 393 нового УК РА, выявлены и проанализированы факторы, обосновывающие необходимость дифференциации ответственности за отдельные проявления обсуждаемого преступления, в том числе деяния, совершаемые с использованием информационно-телекоммуникационных технологий. На основании этого предложено внести изменения в статью 393 УК РА.

Ключевые слова: незаконный оборот наркотиков с целью сбыта; использование информационно-телекоммуникационных технологий; криминализация; дифференциация уголовной ответственности.

¹ Статья была представлена 02.09.2023 и прошла рецензирование 01.12.2023.

Լևոն Չարխիֆալական

*ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և
հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության
նկատմամբ հսկողության վարչության պետ*

ՊԱՏԺԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ¹

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է պատժի նպատակներն իրացված լինելու համատեքստում դրա հետագա կրման նպատակահարմարության, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման քրեաիրավական ինստիտուտի կիրառման ընթացքում առաջացող խնդիրներին, դատապարտյալի պատշաճ վարքագիծ դրսևորելու և նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելու համատեքստում իրավատու մարմինների ներկայացրած զեկույցների կազմման կառուցակարգը վերանայելու անհրաժեշտությանը:

Նկատի ունենալով, որ ՀՀ կառավարությունը որդեգրել է քրեակատարողական համակարգը բարեփոխելու ռազմավարություն, որն, ի թիվս այլնի, իրենից ներկայացնում է նաև ազատազրկման ավանդական գաղափարախոսությունից անցում դեպի վերացիալականացման և վերականգնողական արդարադատության՝ հետևաբար հիշյալ նպատակին հասնելուն ուղղված միջոցները պետք է լինեն առավել առարկայական:

Թեև ինչպես 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ Գործող քրեական օրենսգիրք), այնպես էլ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժը կորցրած ՀՀ քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ Նախկին քրեական օրենսգիրք) պատժի նպատակների մասով ունեն որոշակի տարբերություն՝ պատժի ենթարկված անձին վերացիալականացնելու համատեքստում, այնուամենայնիվ պատժի նպատակներին հասնելուն ուղղված միջոցները նույնական են, քանի որ այդպիսիք պետք է ուղղված լինեն հասարակությանը՝ անվտանգությամբ, տուժողներին՝ սոցիալական արդարության վերականգնման, իսկ դատապարտյալներին՝ վերացիալականացման ճանապարհով հանցավոր վարքագծից հրաժարվելու հնարավորությամբ ապահովելուն:

¹ Հոդվածը ներկայացվել է 15.09.2023թ., գրախոսվել է 11.11.2023թ.:

Հողվածում ներկայացվել է դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ իրավասու մարմինների կողմից զեկույցների կազմման գործընթացում իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած խնդիրները, դրանց լուծման առաջարկները, որոնք համակցության մեջ հնարավորություն կտան առավել ամբողջական և համապարփակ պատկերացում կազմել դատապարտյալի անձի, պատժի կրման ընթացքում նրա դրսևորած վարքագծի, պատժի մնացած մասը կրելու անհրաժեշտության բացակայության, ուղղման ճանապարհին կանգնած լինելու, իրավահպատակ վարքագիծ դրսևորելու հավանականության և պատժի նպատակներն իրագործված լինելու վերաբերյալ:

Հիմնաբառեր- պատիժ, պատժի նպատակներ, պատժից պայմանական վաղաժամկետ ազատել, դատապարտյալի կողմից պատշաճ վարքագիծ դրսևորել, նոր հանցանք կատարելու հավանականություն, վերասոցիալականացում, զեկույցներ:

Ներածություն

Գործող քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված են պատժի նպատակները, դրանք են՝ վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները:

Ի տարբերություն գործող քրեական օրենսգրքի՝ նախկին քրեական օրենսգիրքը վերասոցիալականացման փոխարեն պատժի նպատակներից է դիտարկել պատժի ենթարկված անձին ուղղելը:

Առավել վաղ՝ 1961 թվականի մարտի 7-ին ընդունված և 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժը կորցրած ՀՀ քրեական օրենսգիրքը պատժի նպատակների մասով ուներ առավել պահպանողական բնույթ, ինչն արտահայտվում էր առաջնային և երկրորդային նպատակներ սահմանելով: Մասնավորապես. Օրենսգրքի 20-րդ հոդվածը սահմանում էր, որ պատիժը ոչ միայն մեղքի քավումն է կատարված հանցագործության համար (առաջնային նպատակ), այլև նպատակ ունի դատապարտվածներին ուղղել և վերադաստիարակել աշխատանքին ազնվորեն վերաբերվելու, օրենքները ճշտորեն կատարելու, համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև կանխել նոր հանցագործությունների կատարումը ինչպես դատապարտվածների, այնպես էլ այլ անձանց կողմից (երկրորդային նպատակ):

Պատժի բովանդակությունն իր մեջ ներառում է մի քանի միջոցներ, ինչպիսիք են՝ պատժիչ միջոցները, որն իրենից ներկայացնում է անձին որոշակի իրավունքներից և ազատություններից զրկելով, դատապարտյալի վրա ազդեցության միջոցներ գործադրելով, որոնք ուղղված են նոր հանցագործություններ կատարելու կանխարգելմանը և արտահայտվում են առօրյա կյանքի մշտադիտարկ-

մամբ, վարքագծի և գործողությունների նկատմամբ սահմանափակումներով, ինչպես նաև համապատասխան միջոցառումներին մասնակցելով, որոնք դրսևորվում են աշխատելու, կրթություն ստանալու հնարավորությամբ և ուղղված են դատապարտյալին բնականոն կյանքին նախապատրաստելուն²:

Ընդ որում, պատիժն ունի ինչպես իրավական, այնպես էլ սոցիալական գործառույթ: Պատժի իրավական գործառույթն արտահայտվում է նրանով, որ այն հանդես է գալիս որպես քրեական պատասխանատվության իրականացման միջոց: Իսկ սոցիալական գործառույթը հանցավորության դեմ պայքարի, հասարակությանը ոտնձգություններից պաշտպանելու միջոց է³:

Առաջին անգամ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը կիրառվել է Ֆրանսիայում 1885 թվականին: Այդ ժամանակից ի վեր այս ինստիտուտը ընդունվել է աշխարհի գրեթե բոլոր երկրների իրավական համակարգերում (քրեական կամ քրեական դատավարության իրավունք): Դրա կիրառումը հումանիզմի դրսևորում է և ուղղված է դատապարտյալների ուղղմանն ու վերադաստիարակմանը⁴:

Այն կարծիքը, որ քրեական պատիժը պետք է ուղղված լինի առաջին հերթին հանցագործին «շտկելուն», նրան կրկին հասարակության օրինապահ անդամ դարձնելուն, բավական նոր է:

Սկզբում այն կապված էր կրոնական կազմակերպությունների գործունեության հետ, որոնք ձգտում էին, որ հանցագործն ընդունի իր մեղքերը և ներում խնդրի:

20-րդ դարում շատ պետություններում հանցագործի ուղղումը համարվում էր ազատագրկման հիմնական նպատակներից մեկը: Ուղղման հիմնական միջոցը դատապարտյալներին աշխատանքի մեջ ներգրավելն է, ինչպես նաև նրանց կրթություն ստանալու հնարավորություն տալը⁵:

Հակառակ դրան՝ կան որոշակի խումբ մասնագետներ, որոնք դատապարտյալներին ուղղելու սկզբունքային հնարավորությունը կասկածի տակ են առնում⁶:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 19-րդ հոդվածը սահմանում է վերասոցիալականացում եզրույթի բովանդակությունը, ինչն իրենից ներկայացնում է դատապարտյալի հետ համագործակցությամբ և նրա ակտիվ մասնակցությամբ իրականացվող գործունեություն՝ ուղղված դատապարտյալի սոցիալական վերաինտեգրմանը և վերականգնմանը:

Ընդ որում, պատժի կրման ընթացքում վերասոցիալականացման որոշակի

² Уголовное право России. Часть Общая / Отв. ред. Л. Л. Кругликов. 2-е изд., перераб. и доп. М., 2005. § 1.3 главы 14.

³ Уголовное право России. Части Общая и Особенная / Под ред. А. И. Рагоа. М., 2008. С. 181.

⁴ Додонов В. Н. Сравнительное уголовное право. Общая часть / под общ. ред. С. П. Щербы. М.: Юрлитинформ, 2009. С. 397. 448 с. — ISBN 978-5-93295-470-6.

⁵ Punishment Archived 2009-08-21 at the Wayback Machine. // MSN Encarta.

⁶ Назаренко Г. В. Уголовное право: Курс лекций. М.: Осъ 89, 2005. С. 156.

աստիճանի հասած լինելու դեպքում է միայն հնարավոր օբյեկտիվ պատկերացում կազմել դատապարտյալի պատշաճ վարքագծի դրսևորման և նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականության ցածր լինելու մասին, ինչի մասին ամրագրված է նաև գործող քրեական օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումներով:

Աշխարհի շատ երկրներում պայմանական վաղաժամկետ ազատումը հնարավոր է միայն դատապարտյալին ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կիրառման դեպքում, սակայն որոշ ազգային իրավական համակարգերում (մասնավորապես՝ հետխորհրդային տարածքի պետություններում) այն կարող է կիրառվել նաև այն դատապարտյալների նկատմամբ, որոնք պատիժ են կրում ուղղիչ աշխատանքների, զինվորական ծառայության մեջ սահմանափակման, կարգապահական գումարտակում պահելու ձևով⁷:

Գիտության մեջ առկա է մոտեցում, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը իրականում դատարանի դատավճռի փոփոխություն է⁸:

Այլ հեղինակներ նշում են, որ դատարանի դատավճռի փոփոխությունը կարող է իրականացվել միայն հատուկ դատավարական կարգով և վերադաս դատարանի կողմից, իսկ պայմանական վաղաժամկետ ազատման հարցը որոշում է պատիժը կայացրած նույն ատյանի դատարանը, հետևաբար պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը չի խաթարում պատժի կայունությունը⁹:

Մեկ այլ կարծիքի համաձայն՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը իրենից ներկայացնում է պատժի վաղաժամ ավարտ՝ պայմանով, որ անձի կողմից փորձաշրջանի ընթացքում կպահպանվեն օրենքով սահմանված պահանջները¹⁰:

Այլ տեսաբանների կարծիքով՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը կարող է դիտվել ինչպես դատապարտյալի սուբյեկտիվ իրավունք¹¹, այնպես էլ քրեաիրավական խրախուսման տեսակներից մեկը¹²:

Գործող քրեական օրենսգրքի 85-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման ձևով պատիժ կրող անձը օրենքով սահմանված պատժի նվազագույն ժամկետը կրելուց հետո դատարանի կողմից կարող է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե

⁷ Додонов В. Н., Сравнительное уголовное право. Общая часть / под общ. ред. С. П. Щербы. М.: Юрлитинформ, 2009. С. 397- 448 с. ISBN 978-5-93295-470-6.
⁸ Андреев В., Как исполняется приговор // Известия. 1987. 3 янв.
⁹ Курс уголовного права. Т. 2. Общая часть: Учение о наказании / под ред. Н. Ф. Кузнецовой, И. М. Тяжковой. М., 2002. 464 с.
¹⁰ Курс уголовного права. Т. 2. Общая часть: Учение о наказании / под ред. Н. Ф. Кузнецовой, И. М. Тяжковой. М., 2002. 464 с.
¹¹ Улицкий С. Я., Некоторые теории юридической природы условно-досрочного освобождения в советском праве. Ученые записки ДВГУ. Владивосток, 1968. Т. 14. С. 89.
¹² Михлин А. С., Проблемы досрочного освобождения от наказания. М., 1982. С. 26.

դատարանը համոզվում է, որ դատապարտյալի վերաօնգիալականացումը հնարավոր է առանց պատժի մնացած մասը կրելու, քանի որ՝

1) պատժի կրման ընթացքում դրսևորել է պատշաճ վարքագիծ, և

2) դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է:

Ընդ որում, օրենսդիրը դատապարտյալի պատշաճ վարքագիծը և նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի է առնում որոշակի հանգամանքներ:

Դատապարտյալի պատշաճ վարքագծի դրսևորման և նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատող հանգամանքների մասին իրավասու մարմինների, այն է՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական և պրոբացիայի ծառայության զեկույցներում ամրագրված դիրքորոշումները թեև դատարանների համար ունեն մասնագիտական, խորհրդատվական բնույթ¹³, սակայն այդպիսիք իրենց մեջ պետք է պարունակեն այնպիսի փաստական տվյալներ, որոնք հնարավորություն կտան օբյեկտիվ պատկերացում կազմել դատապարտյալի անձի, կատարած հանցանքի նկատմամբ ունեցած անկեղծ վերաբերմունքի, պատժի կրման ընթացքում դրսևորած վարքագծի, հիշյալներից ածանցված՝ դատապարտյալի ուղղման ընդունելի աստիճանի հասած լինելու մասին:

ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հունիսի 12-ի, 2019 թվականի հունիսի 4-ի թիվ 198-Լ հրամաններով սահմանվել են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույցների կազմման կարգը, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով ներկայացվող փաստաթղթերի օրինակելի ձևերը:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի կողմից 2019 թվականի հունիսի 07-ին հաստատվել է նաև պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ զեկույցի կազմման համար դատապարտյալի անձնական գործի և վարքագծի փաստական նկարագրի վերաբերյալ ներկայացված տեղեկանքում ներառված տեղեկատվության գնահատման չափորոշիչների գնահատման մեթոդական ուղեցույց (այսուհետ նաև՝ Ուղեցույց):

Վերոհիշյալ իրավական ակտերով փաստացի սահմանվել են զեկույցների կազմման չափորոշիչները և դատապարտյալի վարքագծի գնահատման վավերապայմանները, համաձայն որոնց՝ դատապարտյալի կողմից պատժի կրման ընթացքում պատշաճ վարքագիծ դրսևորելու և նոր հանցանք կատարելու

¹³ Տե՛ս ՇՂ/0021/15/20 գործով Գարիկ Ստեփանի Դավթյանի վերաբերյալ ՀՀ վճռարեկ դատարանի 2022 թվականի մարտի 23-ի որոշումը:

հավանականությունը գնահատելու համար սահմանվել է որոշակի միավորներ հավաքելու սանդղակ:

Ընդ որում, չափորոշիչները գնահատվում են 0-ից մինչև 5 միավորով, և դրանց գումարման արդյունքում ստացված առավելագույն միավորը կազմում է 43 միավոր: Չեկույցը դրական է գնահատվում չափորոշիչների (այսուհետ նաև՝ Չափորոշիչ) գումարման միջոցով 28 և ավել միավոր կազմելու դեպքում, հակառակ դեպքում՝ այն գնահատվում է բացասական:

Ինչպես արդեն իսկ վերը նշվեց, վերասոցիալականացումը իրենից ներկայացնում է դատապարտյալի հետ համագործակցությամբ և նրա ակտիվ մասնակցությամբ իրականացվող գործունեություն՝ ուղղված դատապարտյալի սոցիալական վերահիմնագրմանը և վերականգնմանը, սակայն մեր գնահատմամբ՝ նախատեսված չափորոշիչներով կազմված զեկույցներով հնարավոր չէ դատապարտյալի վարքագիծը բովանդակային առումով ամբողջապես անհատականացնել, ինչից էլ ածանցված՝ օբյեկտիվ գնահատել պատժի կրման ընթացքում նրա դրսևորած վարքագիծը, հետևաբար՝ նաև կանխատեսում անել հետագայում նոր հանցանք կատարելու հավանականության ցածր լինելու մասին:

Միավորների մեխանիկական գումարման նման եղանակով դատապարտյալի վարքագծի գնահատումը չի ծառայում իր նպատակին և թույլ չի տալիս իրական պատկերացում կազմել դատապարտյալի դրսևորած վարքագծի բովանդակության մասին, քանի որ այդ գնահատումն իրականացվում է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի կողմից՝ քրեակատարողական հիմնարկներից ներկայացված տեղեկատվության հիման վրա՝ հիմնականում առանց դատապարտյալի հետ շփվելու և նրան անձնապես ճանաչելու:

Այլ կերպ ասած՝ փաստացի Չեկույց կազմողը գերակշիռ դեպքերում անձամբ չի շփվում իր իսկ կողմից բնութագրվող դատապարտյալի հետ, մինչդեռ դատապարտյալի հետ անմիջական շփումն ավելի մեծ հնարավորություն է տալիս անձին օբյեկտիվ բնութագրելու և նրա վարքագծի վերաբերյալ առավել փաստարկված հետևության հանգելու համար, հատկապես, որ իրավակիրառ պրակտիկայում դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ գործերով դատական քննությանը մասնակցում է համապատասխան քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի աշխատակիցը՝ որպես քրեակատարողական ծառայության ներկայացուցիչ:

Ստորև կներկայացվի Չեկույցների կազմման չափորոշիչներով՝ դատապարտյալի վարքագծի գնահատման վավերապայմանների համատեքստում տրամադրվող միավորների վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները և դրանց լուծման առաջարկները:

Չափորոշիչներով նախատեսված է դատապարտյալին տրամադրել 5 միավոր՝ 2 և ավելի անգամ խրախուսվելու, և 3 միավոր՝ 1 անգամ խրախուսվելու համար:

Մինչդեռ որևէ չափանիշ չի սահմանվել այն դեպքերի համար, երբ դատապարտյալը պատժի կրման ընթացքում մեկ կամ մի քանի անգամ խրախուսվել է, սակայն դրանից հետո սկսել է դրսևորել ակնհայտ բացասական վարքագիծ, ինչի համար նրա նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժի միջոցներ:

Նախատեսված է նաև, որ կատարած հանցանքի ծանրության աստիճանով պայմանավորված, կարգապահական տույժի, օրենքով սահմանված 6-ամսյա ժամկետը լրանալուց հետո (մեկ տարի, մեկուկես տարի, երկու տարի) դատապարտյալին կարող է տրամադրվել ևս 1 կամ 2 միավոր:

Արդյունքում առաջանում է մի իրավիճակ, երբ դատապարտյալը 2 և ավելի անգամ խրախուսվելու դեպքում ստանում է 5 միավոր, որին, նշված կանոնի համաձայն, կարող է գումարվել ևս 1 կամ 2 միավոր:

Այլ կերպ ասած՝ դատապարտյալին ամեն դեպքում միավոր տրվում է թե՛ խրախուսվելու, թե՛ կարգապահական տույժ ստանալու համար՝ այն պայմաններում, որ առաջին դեպքում գնահատվում է դատապարտյալի՝ պատժի կրման ամբողջ ժամանակահատվածում խրախուսանքի առկայությունը կամ բացակայությունը, իսկ կարգապահական տույժի դեպքում՝ միայն պատժի ժամկետի կոնկրետ ժամանակահատվածը (մեկ տարի, մեկուկես տարի, երկու տարի):

Նման մոտեցմամբ դատապարտյալի վարքագծի գնահատումն արդարացի չէ, քանի որ դատապարտյալի նկատմամբ տույժի միջոց կիրառելու դեպքում բացառապես որոշակի ժամանակահատված անցնելու փաստի հիմքով վարքագծի գնահատումը անհատականացված մոտեցում չի ապահովում, չի խթանում դատապարտյալի իրավահպատակ վարքագծի դրսևորմանը, ավելին՝ խրախուսվելուց հետո բացասական վարքագիծ դրսևորած դատապարտյալի և օրինապահ վարքագիծ դրսևորած դատապարտյալի միջև չի ապահովվում տարբերակված մոտեցում:

Այս համատեքստում իրավաչափ կարող է դիտարկվել դատապարտյալի վարքագծի գնահատումը՝ մեկ տարի կարգապահական տույժի չենթարկվելու և վերասոցիալականացմանը ակտիվ մասնակցելու միաժամանակյա պայմանների առկայության դեպքում:

Նախատեսված է դատապարտյալին տրամադրել 1-3 միավոր՝ պատժի կրման ընթացքում կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին մասնակցելու համար:

Ընդ որում, դատապարտյալին՝ որպես մշակութային միջոցառումներին մասնակցություն ունեցող անձ համարելու և առավել ևս մասնակցության հանգամանքը գնահատելու համար, անհրաժեշտ է արձանագրել դատապարտյալի

անմիջական և կոնկրետ մասնակցությունը, ինչը կարող է արտահայտվել այդպիսիք կազմակերպելու կամ կազմակերպելուն ուղղված առարկայական նախաձեռնություն ցուցաբերելու, դրանց իրականացմանն ակտիվորեն մասնակցելու, ինչպես նաև անմիջական մասնակցության մասին վկայող այլ հանգամանքներ:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ քրեակատարողական հիմնարկի տարածքում մարզական կամ մշակութային միջոցառումներին դատապարտյալների մասնակցությունը գնահատելը փաստարկված չէ:

ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրամանով հաստատվել է կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը, համաձայն որի՝ դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն ընթացիկ փուլում ներառում են դատապարտյալների ազատ ժամանակն արդյունավետ տնօրինելու նպատակով մշակութային, մարզական և այլ բնույթի միջոցառումներ կազմակերպելը¹⁴ Հրամանը՝ կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին:

Վերոհիշյալ իրավական ակտից ևս բխում է, որ նման միջոցառումները կրում են բացառապես ժամանցային բնույթ և ուղղված են դատապարտյալների ազատ ժամանակն արդյունավետ տնօրինելուն, ավելին՝ նման միջոցառումների արդյունավետությունը որևէ կերպ չի հաշվառվում, ինչի արդյունքում դրանց մասնակցելն առանձին դեպքերում կրում է ձևական բնույթ:

Իրավակիրառ պրակտիկայում արձանագրվել է դեպք, երբ ցմահ ազատազրկման դատապարտված անձը ցանկություն է հայտնել մասնակցել քրեակատարողական հիմնարկում կազմակերպվող շախմատի մրցաշարին, սակայն խաղի կանոնները խախտելու համար կազմակերպիչների կողմից կատարված դիտողությունից հետո հայտարարել է, որ պարտվել է, սակայն կարևորը ոչ թե խաղալն է, այլ փաստացի մրցաշարին ներկա գտնվելը, որպիսի հանգամանքը հետագայում կհամարվի մրցաշարի մասնակցություն:

Այդ մասին դատապարտյալը բարձրաձայնել է նաև ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի քննության ժամանակ՝ հայտարարելով, որ շախմատ խաղալ չգիտի, սակայն շախմատի մրցաշարին մասնակցելու ցանկություն է հայտնել, որպեսզի այդ փաստը հաշվառվի համապատասխան զեկույցներում:

Կատարված դիտարկումները վկայում են նաև, որ միևնույն չափանիշով են գնահատվում ինչպես մի շարք միջոցառումների և դատապարտյալների ինքնա-

¹⁴ ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրաման:

գործ միավորումների աշխատանքներին մասնակցած, այնպես էլ բացառապես մեկ միջոցառման մասնակցած դատապարտյալները:

Համանման չփաստարկված մոտեցումներից խուսափելու համար՝ առավել արդյունավետ կարող են դիտարկվել և դատապարտյալի դրսևորած պատշաճ վարքագծի համատեքստում գնահատվել այն միջոցառումները, որոնք իրականացվել են ինքնագործ միավորումների կողմից համապատասխան նպատակային ուղղվածությամբ հասարակական, միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ՝ միաժամանակ կոնկրետ տարբերակելով դատապարտյալի կողմից մասնակցությունների հաճախականությունը և այդ ընթացքում նրա ցուցաբերած ակտիվությունը:

Կրթական դասընթացներին մասնակցելու ցանկություն հայտնելու մասին դատապարտյալի կողմից մեկ անգամ ներկայացված դիմումը, խմբերի համալրվածության պատճառաբանությամբ, մերժելու հանգամանքը՝ գործող կարգի համաձայն գնահատվում է մեկ միավորով:

Մինչդեռ հիշյալ հանգամանքը դատապարտյալի պատշաճ վարքագծի մասին չի փաստում, քանի որ բովանդակային առումով այն չի վկայում դատապարտյալի կողմից վերասոցիալականացմանն ուղղված ակտիվ գործողություններ կատարելու մասին:

Նույն հիմնավորմամբ՝ որևէ կերպ արդարացված չէ դատապարտյալի կողմից քրեակատարողական հիմնարկի գրադարանից օգտվելու փաստը բացառապես գիրք ստանալու կամ ընթերցասրահում գտնվելու հանգամանքով պայմանավորելը՝ նկատի ունենալով, որ քրեակատարողական հիմնարկներում որևէ հաշվառում չի իրականացվում դատապարտյալի կողմից ընթերցասրահում զբաղմունքի կամ գրադարանից ստացած գրքերի ըստ նպատակային նշանակության օգտագործելու վերաբերյալ:

Այս համատեքստում հարկ է արձանագրել, որ քրեակատարողական հիմնարկներում գրադարաններից գրքերի տրամադրումն իրականացվում է աշխատակիցների, իսկ առանձին դեպքերում՝ որպես գրադարանավար աշխատող դատապարտյալների կողմից: Տրամադրված գրքերը գրանցվում են համապատասխան մատյանում՝ նշելով դատապարտյալի անունը, ազգանունը, գրքի անվանումը, տրամադրման օրը, ամիսը, տարեթիվը, իսկ վերադարձնելուց՝ վերադարձնելու օրը, ամիսը, տարեթիվը:

Հետևաբար մեր գնահատմամբ՝ անհրաժեշտ է դատապարտյալների կողմից գրադարանից օգտվելու փաստը պատշաճ հաշվառել, մշակել մեխանիզմներ ստացած գիրքը նպատակային նշանակությամբ օգտագործելու հանգամանքը ստուգելու վերաբերյալ, իսկ բացառապես գրադարանից գիրք ստանալու հանգամանքը չգնահատել դատապարտյալի կողմից պատշաճ վարքագիծ դրսևորելու համատեքստում:

Դատապարտյալի վարքագծի գնահատման վավերապայման չի կարող լինել

և վերասոցիալականացման բաղադրիչ չի կարող դիտարկվել նաև դատապարտյալի կողմից որևէ կինոդիտման մասնակցությունը՝ նկատի ունենալով, որ ինքնին վերցրած այդ հանգամանքը որևէ կերպ չի փաստում դատապարտյալի վարքագծի դեպի դրական փոփոխությունը. այն ևս դատապարտյալի ազատ ժամանակն արդյունավետ տնօրինելու դրսևորում է:

Նույն հիմնավորմամբ՝ համապատասխան միավորով գնահատման ենթակա չէ նաև «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ ՊՈԱԿ) կողմից կազմակերպված դասընթացներին դատապարտյալների բացառապես մասնակցության փաստը, քանի որ հիշյալ դասընթացներին մասնակցելու արդյունքում դատապարտյալի վարքագծի փոփոխությունը որևէ կերպ չի արձանագրվում, չի հաշվառվում, ավելին, ըստ կարգի՝ դատապարտյալը պարտավոր է միայն ներկա գտնվել դասընթացների սահմանված քանակով ժամերին, ինչի համար էլ ստանում է համապատասխան հավաստագիր:

ՊՈԱԿ-ի կողմից քրեակատարողական հիմնարկներում իրականացվող վերականգնողական ծրագրերի գործընթացը չի կարող համարվել դատապարտյալների վերասոցիալականացմանն ուղղված գործընթացի բաղադրիչ, քանի որ կարևորվում է ներգրավված անձանց ներկայությունը կազմակերպվող աշխատանքներին, իսկ դրանց արդյունքի գնահատման վերաբերյալ որևէ իրավակարգավորում առկա չէ:

Այս համատեքստում ևս հարկ է արձանագրել, որ դատապարտյալների մասնակցությունը դասընթացներին, առանձին դեպքերում, պատշաճ չի վերահսկվում, ինչի արդյունքում կատարված ուսումնասիրություններով բազմիցս արձանագրվել է, որ դատապարտյալը ներկա չի գտնվել դասընթացին, սակայն նշված հանգամանքը չի հաշվառվել, կամ դասընթացի ժամանակ գտնվել է ոչ թե դասասենյակում, այլ միջանցքում, ինչը նույնպես չի հաշվառվել:

Հետևաբար բացառապես իրականացվող ծրագրերին ներկա գտնվելու փաստը դատապարտյալի վարքագծի գնահատման օբյեկտիվ հիմք չի կարող հանդիսանալ, չի կարող վկայել նրա վերասոցիալականացման կամ ուղղման որոշակի աստիճանի հասած լինելու մասին՝ առավել ևս պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու ինստիտուտի հնարավոր կիրառման դեպքում:

Քրեակատարողական հիմնարկներում անցկացվող դասընթացների արդյունավետությունը բարձրացնելու, առանձին դեպքերում դրանց մասնակցության իմիտացիոն ռիսկերը չեզոքացնելու նպատակով անհրաժեշտ է մշակել դատապարտյալների կողմից դասընթացներին մասնակցության արդյունքի ստուգման կառուցակարգ, ստուգման արդյունքները հաշվառել համապատասխան փաստաթղթերում, ինչից էլ ածանցված՝ կարող է գնահատվել դատապարտյալի վարքագիծը վերասոցիալականացման միջոցառումներին մասնակցելու համատեքստում:

Այլ կերպ ասած՝ գնահատման ենթակա պետք է լինի պատժի կրման ընթացքում դատապարտյալի կողմից դրսևորած վարքագծի արդյունքը, այլ ոչ թե բացառապես ներկա գտնվելու փաստը: Մինչդեռ վերը նշվածն ինքնին պասիվ վարքագծի դրսևորում է, հետևաբար չի կարող գնահատվել որպես վերասոցիալականացման բաղադրիչ:

Դատապարտյալի վարքագծի գնահատման չափորոշիչներից է նաև պատժի կրման ընթացքում դատապարտյալի աշխատելու հանգամանքը:

Միաժամանակ գնահատման է ենթակա նաև դատապարտյալի աշխատելու ցանկությունն այն դեպքում, երբ հնարավորություն չի եղել աշխատելու, այդ թվում՝ հիվանդության, հաշմանդամության կամ տարիքի պատճառով:

Ի տարբերություն Նախկին քրեական օրենսգրքի, որով սահմանված էր պատժի կրման ընթացքում առնվազն երեք ամիս աշխատելու հանգամանքը՝ Գործող օրենսգիրքը նման ժամկետային սահմանափակում չի նախատեսում: Հետևաբար ստացվում է մի իրավիճակ, երբ տևական ժամանակ քրեակատարողական հիմնարկում աշխատող և աշխատանքներին դրվագային մասնակցություն ունեցած դատապարտյալների միջև ստեղծվում են անհավասար պայմաններ, ինչը կարող է արդարացի դժգոհության տեղիք տալ:

Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ քրեակատարողական հիմնարկի կամ դրան հարող տարածքների՝ առանց վարձատրության բարեկարգման աշխատանքներում ընդգրկվելու դեպքում դատապարտյալների կողմից կատարված աշխատանքները որևէ կերպ չեն հաշվառվում, այդ կապակցությամբ համապատասխան փաստաթղթեր չեն կազմվում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առանձին դեպքերում դատապարտյալներն ընդգրկվել են քրեակատարողական հիմնարկի կամ դրան հարող տարածքների առանց վարձատրության բարեկարգման աշխատանքներում, սակայն կա՛մ չեն աշխատել, կա՛մ կատարել են այնպիսի աշխատանք, որը չի ներառվել այդ աշխատանքների շրջանակում, կա՛մ հրաժարվել են կատարել իրենց հանձնարարված աշխատանքը:

Բացի այդ, պատժի կրման ընթացքում միայն մեկ անգամ դիմած և աշխատանքով չապահովված դատապարտյալը չի կարող համարվել աշխատելու ցանկություն հայտնող և նրա վարքագիծը գնահատվել, իսկ դատապարտյալի առողջական վիճակի պատճառով անաշխատունակության մասին եզրակացությունը պետք է տրամադրի իրավասու պետական մարմինը:

Հակառակ պարագայում՝ ստացվում է մի իրավիճակ, երբ դատապարտյալը, տեղյակ լինելով աշխատատեղի զբաղված լինելու կամ այդպիսին չլինելու մասին, մեկ անգամ աշխատելու ցանկություն հայտնելու մասին դիմում է գրում, ինչը նշված հիմնավորմամբ մերժվում է, հետագայում աշխատելու ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկում, սակայն դիմում գրելու փաստով դատապարտյալի վարքագիծը գնահատվում է համապատասխան միավորով:

Վերոշարադրյալ հանգամանքներով պայմանավորված՝ առկա է դատապարտյալների կողմից առանց վարձատրության քրեակատարողական հիմնարկի կամ դրան հարող տարածքների բարեկարգման աշխատանքներ կատարելու հաշվառման կառուցակարգ ներդնելու անհրաժեշտություն, որը հնարավորություն կտա նրանց վարքագիծը օբյեկտիվ գնահատման ենթարկել՝ տարբերակելով աշխատանքները բարեխղճորեն կատարող դատապարտյալին այդ աշխատանքները ոչ պատշաճ կատարողից, կամ հիշյալ աշխատանքներում ներգրավված, բայց չաշխատող դատապարտյալից:

Այս համատեքստում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ կատարված ուսումնասիրություններով արձանագրվել են դեպքեր, երբ առանձին դատապարտյալներ, որոնք ունեցել են դատական ակտով սահմանված և չկատարված ֆինանսական պարտավորություններ, ընդգրկվել են բարեկարգման չվարձատրվող աշխատանքներում, իսկ նման պարտավորություններ չունեցող որոշ դատապարտյալներ ներգրավվել են տեխնիկատնտեսական աշխատանքներում, որի համար ստացել են համապատասխան վարձատրություն:

Մինչդեռ ֆինանսական պարտավորություններ ունեցող դատապարտյալներին տեխնիկատնտեսական վարձատրվող աշխատանքներում ներգրավելը հնարավորություն կտար նրանց ստացած վարձատրության մի մասն ուղղել այդ պարտավորությունների կատարմանը, ինչն էլ իր հերթին կարող է գնահատվել որպես վերատոցիալականացման բաղադրիչ, ինչպես նաև հանցագործության հետևանքով նյութական վնաս կրած տուժողի մոտ կառաջացնի սոցիալական արդարության վերականգնման համոզմունք:

Հանցագործության արդյունքում դատապարտյալի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու ուղղությամբ ձեռնարկված միջոցներն ունեն էական նշանակություն պատժի նպատակներից մեկի՝ սոցիալական արդարության վերականգնման տեսանկյունից¹⁵:

«Քրեակատարողական օրենսգրքի 108-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ աշխատանքով ապահովելու նախապատվությունը տրվում է այն դատապարտյալին, որն ունի գույքային պարտավորություններ կամ գտնվում է նյութական ծանր վիճակում:

Վերոհիշյալ իրավակարգավորումից տեսանելի է, որ վերականգնողական արդարադատության տեսանկյունից պետությունը գույքային պարտավորություններ ունեցող դատապարտյալին պատժի կրման ընթացքում աշխատանքով ապահովելու, այդ աշխատանքի դիմաց վարձատրություն ստանալու, գույքային պարտավորությունները մարելու նկատմամբ ունի սկզբունքային մոտեցում:

Դատապարտյալներին համապատասխան աշխատանքով ապահովելու, ըստ

¹⁵ Տե՛ս Արմեն Գազիկի Ղազարյանի գործով «Հ վճռաբեկ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԱԴ/0002/12/16 որոշումը:

այդմ՝ բովանդակային առումով նաև պատժի կրման ընթացքում վերասոցիալականացմանը մասնակցելու խնդիրը շարունակում է մնալ արդիական:

Կատարված դիտարկումները վկայում են այն մասին, որ հաճախ դատապարտյալները դժգոհում են պատժի կրման ընթացքում համապատասխան աշխատանքով (բացի վճարովի տեխնիկատնտեսական աշխատանքներից) ապահովված չլինելու, դրանից ածանցված՝ նաև զբաղվածություն չունենալու փաստից:

Ընդ որում, դժգոհություններն արտահայտվում են նաև այն համատեքստում, որ տարիքային առանձնահատկություններով կամ այլ հանգամանքներով պայմանավորված՝ քրեակատարողական հիմնարկներում կազմակերպվող տարբեր դասընթացներին մասնակցությունը և այդ կապակցությամբ համապատասխան գիտելիքների ձեռքբերումը զգալի խումբ դատապարտյալների կողմից դիտարկվում է ոչ ռացիոնալ, հակառակ դրան՝ համապատասխան արտադրություններ լինելու և արտադրանք արտադրվելու հնարավորության դեպքում դրանց մասնակցությունը գնահատվում է առավել նպատակահարմար:

Այս կապակցությամբ դատապարտյալների վերասոցիալականացմանը և դրական վարքագծի ձևավորմանը կարող է նպաստել քրեակատարողական հիմնարկներում համապատասխան արտադրությունների հիմնումը և դրանցում դատապարտյալների ներգրավումը՝ այդ եղանակով նպաստելով նաև համապատասխան մասնագիտական (արհեստագործական) հմտությունների ձեռքբերմանը:

Մասնավորապես՝ դատապարտյալներին աշխատանքով ապահովելու նպատակով առաջարկվում է քրեակատարողական հիմնարկներում «Չ զինված ուժերի կարիքների համար ոչ ռազմական բնույթի արտադրատեսակների (զինվորական համագգեստի, դրա առանձին դետալների, «Չ սահմանների սահմանազատման համար անհրաժեշտ միջոցների՝ փշալարերի, դրանց հենապուների, այլ հնարավոր արտադրատեսակի) արտադրությունների հիմնումը և դրանցում դատապարտյալների ներգրավումը՝ հիշյալ արտադրություններում աշխատանքը ներառելով չվարձատրվող (կամ նվազագույն աշխատավարձի դիմաց վարձատրվող) աշխատանքների ցանկում:

Այս համատեքստում առաջարկվում է նաև սահմանել հարկային արտոնություններ այն իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար, որոնք քրեակատարողական հիմնարկներում կհիմնեն արտադրություններ՝ դատապարտյալներին ապահովելով ամենօրյա աշխատանքով:

Դատապարտյալի վարքագծի գնահատման վավերապայմաններից է նաև դատապարտյալի տարիքը հանցագործության կատարման և պատիժը կրելու ժամանակ 1 կամ 2 միավորով գնահատելը:

Ընդ որում, ինչպես հանցագործության կատարման պահին, այնպես էլ Ձեկույցի կազմման ժամանակ անձի մինչև 28 տարեկան լինելու հանգամանքը գնահատման ենթակա չէ:

Մանան մոտեցումը մեր գնահատմամբ ոչ միայն փաստարկված չէ, այլև իրավական առումով անհիմն, չի բխում վերաբերելի օրենսդրական կարգավորումներից, ավելին՝ հակասում է դրանց տրամաբանությանը:

Մասնավորապես՝ Գործող քրեական օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումներով նախատեսված են անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելու առավել մեղմ պայմաններ, մինչդեռ պատժի կրման ընթացքում անչափահաս դատապարտյալի տարիքով պայմանավորված վարքագծի գնահատման որևէ չափանիշ նախատեսված չէ, ինչը հակասում է ՀՀ քրեական և քրեակատարողական օրենսդրության սկզբունքներին:

Հակառակ դրան՝ հատուկ և առավել գիտակցական վարքագիծ դրսևորելու տարիքում, այն է՝ 28 և ավելի բարձր տարեկանում հանցանք կատարած կամ պատիժ կրող անձի համար նախատեսված է վարքագծի գնահատման համապատասխան չափանիշ:

Վերոշարադրյալ հիմնավորումներով, մեր գնահատմամբ, հանցանք կատարելիս և պատիժ կրելիս դատապարտյալի տարիքը որպես կենսագրական տվյալ առանձին գնահատման ենթակա չէ, այլ այն պետք է գնահատվի մյուս հանգամանքների հետ համակցության մեջ:

Գնահատման վավերապայման է նաև, հանցագործության բնույթից և հանրային վտանգավորությունից ելնելով (անզգուշությամբ կատարված ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ), դատապարտյալի վարքագծի համատեքստում համապատասխան միավոր նախատեսելը:

Մինչդեռ մեր դիտարկմամբ՝ հիշյալ հանգամանքներն առանձին վերցրած, որևէ առնչություն չունեն պատժի կրման ընթացքում դատապարտյալի կողմից դրսևորած վարքագծի հետ, հետևաբար դրանք որպես առանձին չափանիշ գնահատման ենթակա չեն կարող լինել:

Գործող քրեական օրենսգրքով որպես դատապարտյալի կողմից կրկին հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատող հանգամանք, նախատեսված է նաև ռեցիդիվի առկայությունը, ինչի հիման վրա նշված հանգամանքի վերաբերյալ սահմանվել է գնահատման առանձին չափանիշ:

Կատարված դիտարկումներով հաստատվել է, որ այս չափանիշով առաջնորդվելու դեպքում դատապարտյալի մոտ ռեցիդիվի բացակայությունը գնահատվել է համապատասխան միավորով, ինչն էլ միավորների հանրագումարի արդյունքով Չեկույցը դիտարկվել է դրական:

Մինչդեռ մեր կարծիքով՝ գնահատման ենթակա պետք է լինի ոչ թե ռեցիդիվի բացակայության, այլ դատվածությունը մարված անձի կողմից կրկին հանցագործություն կատարելու հանգամանքը և նման վարքագիծը հետագայում այլևս չկրկնելուն ուղղված քրեակատարողական հիմնարկում նրա հետ տարված սոցիալ-վերականգնողական՝ ուղղման գործընթացով նախատեսված աշխատանքների արդյունքը:

Ըստ չափորոշիչների գնահատման է ենթակա նաև կատարած հանցանքի նկատմամբ դատապարտյալի ունեցած վերաբերմունքը, մասնավորապես՝ հանցանքն ընդունելու և զղջալու պայմաններում նախատեսված է դատապարտյալին գնահատել համապատասխան միավորով:

Պատժի կրման ընթացքում դատապարտյալի դիրքորոշման փոփոխությունը՝ հանցանքն ընդունելու և զղջալու վերաբերյալ, արձանագրվում է արձանագրությամբ, որը հետագայում Չեկոյցների կազմման համար գնահատման հիմք է հանդիսանում:

Մինչդեռ այդ գործընթացին վերաբերելի որևէ իրավական կարգավորում սահմանված չէ:

Հետևաբար, մեր գնահատմամբ, պատժի կրման ընթացքում դատապարտյալի վարքագծի փոփոխությունը իր կողմից կատարված հանցանքն ընդունելու, դրա համար զղջալու համար առանձին դեպքերում կարող է կրել ձևական բնույթ, այն է՝ դրական զեկոյց ունենալու համար համապատասխան միավոր ստանալու ակնկալիքը:

Այդ կապակցությամբ առաջարկվում է մշակել համապատասխան կառուցակարգ և ստեղծել անհրաժեշտ գործիքներ՝ պատժի կրման ընթացքում, ուղղման գործընթացի շրջանակներում իրականացված սոցիալ-հոգեբանական համապատասխան աշխատանքների արդյունքները պարբերաբար հաշվառելու, գնահատելու և դատապարտյալների վարքագծի դրական տեղաշարժերն արձանագրելու համար:

Նման դրական տեղաշարժերի պարբերաբար արձանագրումներն էլ հետագայում կարող են հիմք հանդիսանալ՝ կատարված հանցանքի նկատմամբ պատժի կրման ընթացքում դատապարտյալի վարքագծի փոփոխություն գրանցելու համար:

Հակառակ պարագայում՝ դատապարտյալը գիտակցելով, որ կազմվող Չեկոյցում կարող է ակնկալել 3 միավոր ստանալու հնարավորություն, հայտարարում է կատարած հանցանքի համար մեղքն ընդունելու և զղջալու մասին և ստորագրում այդ մասին կազմված արձանագրությունը:

Հետևաբար առկա է անհրաժեշտություն, որ դատապարտյալների հետ տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքների արդյունքներն արձանագրվեն և գնահատվեն պարբերաբար՝ յուրաքանչյուր անգամ անդրադառնալով կիրառված գործիքներին և դատապարտյալի վարքագծի վրա դրանցից յուրաքանչյուրի ունեցած ազդեցությանը:

Գնահատման է ենթակա նաև դատապարտյալի կողմից հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված կամ այլ կերպ հարթած լինելը կամ պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու վերաբերյալ գրավոր պարտավորություն ստանձնելը:

Հատկանշական է, որ դատապարտյալի վարքագիծը համապատասխան մի-

ավորով է գնահատվում նաև այն դեպքում, երբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով դատապարտյալը նման պարտավորություն չունի:

Մեր դիտարկմամբ՝ նման մոտեցումը որևէ կերպ արդարացված չէ, քանի որ դատական ակտով տուժողին պատճառված վնասը հատուցելու պարտավորություն նախատեսված չլինելու դեպքում կամ նյութական հետևանք չնախատեսող հանցագործության համար դատապարտված անձի վարքագիծը այս համատեքստում չի կարող գնահատվել: Այն չի վկայում նաև դատապարտյալի վերասոցիալականացման մասին՝ նկատի ունենալով, որ տվյալ դեպքում դատապարտյալը պատիժ կրելու ընթացքում այդ կապակցությամբ որևէ վարքագիծ չի դրսևորել, ավելի պարզ՝ որևէ միջոց չի ձեռնարկել նյութական վնասը հատուցելու ուղղությամբ՝ այդպիսին պարզապես չլինելու պատճառով:

Մեր դիտարկմամբ՝ գնահատման ենթակա չէ նաև վնասի հատուցման վերաբերյալ գրավոր պարտավորություն ստանձնելու փաստը՝ հաշվի առնելով, որ իրավակիրառ պրակտիկայում այն դատապարտյալի վարքագիծը համապատասխան միավորով գնահատելուց բացի, որևէ այլ հետևանք չի առաջացնում՝ նկատի ունենալով նաև, որ պարտավորությունը հետագայում չկատարելու հանգամանքը պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացի վրա որևէ բացասական հետևանք չի կարող առաջացնել:

Հակառակ դրան՝ անհրաժեշտություն է գնահատման սանդղակում ներառել նաև դատական ծախսերն ու դատապարտյալի ունեցած մյուս հնարավոր գույքային պարտավորությունները պատժի կրման ընթացքում հատուցված լինելու փաստը:

Գտնում ենք, որ կատարված հանցանքին առնչվող ցանկացած ֆինանսական պարտավորության նկատմամբ դատապարտյալի դրսևորած վարքագիծը համահավասար պետք է գնահատվի քաղաքացիական հայցի հետ, իսկ դատական ակտով նման պարտավորություն նախատեսված չլինելու պայմաններում դատապարտյալի վարքագծի գնահատումն իրավաչափ չէ:

Դրա մասին է վկայում նաև այնպիսի փաստական հանգամանք, ինչպիսին է հանցագործությամբ պատճառված վնասը դատապարտյալի կողմից դեռևս մինչդատական վարույթի ընթացքում հատուցված լինելը, սակայն կազմվող Չեկույցում հիշյալ փաստը որպես դատապարտյալի կողմից պատժի կրման ընթացքում պատշաճ վարքագծի դրսևորում համապատասխան միավորով գնահատելը:

Մեր դիտարկմամբ՝ հիմնավոր չէ նաև քրեական ենթամշակույթի հանդեպ դատապարտյալի ունեցած բացասական վերաբերմունքի համար 5 միավոր գնահատելու մոտեցումը՝ նկատի ունենալով, որ Ուղեցույցով միավորներ են նախատեսված նաև որոշակի հակումներ, հնարավոր կախվածություններ չունենալու համար:

Դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը հաշվի առնելու հանգամանքն անհրաժեշտ է դիտարկել որոշակի հակումներ, հնարավոր կախվածություններ ունենալու կամ չունենալու համատեքստում,

հատկապես, որ ՀՀ քրեական օրենսդրությամբ արդեն իսկ քրեական պատասխանատվություն է նախատեսված քրեական ենթամշակույթին հարելու մասով տարբեր արարքների կատարման համար:

Այս առումով ուշադրության է արժանի իրավակիրառ պրակտիկայում գոյություն ունեցող այնպիսի իրավիճակներ, երբ դատապարտյալը դրսևորել է քրեական ենթամշակույթին համապատասխան վարքագիծ, վարել է հանցավոր սպրելակերպ, հանցավոր աշխարհում հայտնի է եղել կոնկրետ մականունով, սակայն պրոբացիայի ծառայության աշխատակցի հետ զրույցի ընթացքում հերքել է քրեական ենթամշակույթին հարելու հանգամանքը, ինչի արդյունքում նրա վերաբերյալ կազմվել է դրական զեկույց՝ հանցանք կատարելու հավանականությունը գնահատելով ցածր:

Դատապարտյալի վարքագծի գնահատման վավերապայման է հանդիսանում նաև դատապարտյալի կողմից վերասոցիալականացմանը, այդ թվում՝ անձնական զարգացման միջոցառումներին մասնակցելու համար:

Մեր գնահատմամբ՝ կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին մասնակցելն ինքնին հանդիսանում է մասնակցություն վերասոցիալականացմանը, հետևաբար բովանդակային առումով միևնույն հանգամանքի վերաբերյալ դատապարտյալի վարքագծի կրկնակի գնահատումը՝ նոր հանցագործություն կատարելու հավանականության համատեքստում, փաստարկված չէ:

Դատապարտյալի ընտանիքի կամ արտաքին աշխարհի հետ կապը կամ խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը, որպես նոր հանցանք կատարելու հավանականության գնահատում, մեր դիտարկմամբ արդյունավետ չէ՝ նկատի ունենալով, որ ընտանիքի հետ կապը գնահատելիս չի տարանջատվում դրա հաճախականությունը, այսինքն՝ պատժի կրման ընթացքում դատապարտյալն ընտանիքի հետ հեռախոսակապով կամ տեսակցության միջոցով կապը պահել է մեկ կամ մի քանի անգամ, թե պարբերաբար:

Այս համատեքստում անհրաժեշտ է արձանագրել, որ պատժի կրման ամբողջ ժամանակահատվածում մեկ տեսակցություն կամ մեկ հեռախոսազանգ ունեցած դատապարտյալն ու մշտապես այդ իրավունքից օգտվողը գնահատվում են համահավասար:

Իրավակիրառ պրակտիկայում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման քրեաիրավական ինստիտուտի կիրառման ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծման ուղղված ներկայացված առաջարկությունները մի փոքր մասն են կազմում: Առկա խնդիրներն ավելի շատ են, հետևաբար պահանջվում են առավել թիրախային լուծումներ:

Եզրակացություն

ՀՀ օրենսդրությունը պատժի նպատակների իրացվելիության համատեքստում որդեգրել է վերասոցիալականացման քաղաքականություն, ինչն իրենից ներկայացնում է պատժի կրման ընթացքում այնպիսի համալիր միջոցառումների իրականացում, որն ուղղված է անձի հանցավոր վարքագծի հետևանքով խախտված կամ կորցրած հասարակական կապերի և հարաբերությունների վերականգնմանը, անձի մոտ իրավահպատակ վարքագծի դրսևորմանը:

Վերասոցիալականացման արդյունավետությունը բարձրացնելու համար կարևոր է ոչ միայն օրենսդրության և դրա կատարումն ապահովող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործում, այլև վերասոցիալականացման բովանդակությունը կազմող բաղադրիչների միջոցով դրանց առարկայական կիրառումն ապահովելու նպատակով անհրաժեշտ քայլերի ձեռնարկում:

Սկստի ունենալով, որ վերասոցիալականացման ծրագրերի նպատակներից են դատապարտյալների կրիմինոգեն վարքագիծը բացառելը, նոր հանցագործություն կատարելը կանխելը՝ հետևաբար այդ ծրագրերը պետք է լինեն առարկայական, դատապարտյալների վարքագիծը պետք է գնահատվի այդ ծրագրերին կոնկրետ մասնակցություն ունենալով, իսկ մասնակցության արդյունքները պետք է լինեն տեսանելի և ստուգման ենթակա:

Այս համատեքստում հարկ է նշել, որ տարբեր կրթական ծրագրերին կամ դասընթացներին մասնակցությունները, եթե առկա չեն դրանց արդյունքները ստուգելու հստակ կառուցակարգեր, ապա գործնականում այդպիսիք ուղղված են լինում դատապարտյալի վարքագծի գնահատման չափորոշիչներին համահունչ միավոր ստանալուն, ինչը չի կարող դիտարկվել որպես վերասոցիալականացման արդյունք:

Հետևաբար քրեակատարողական հիմնարկներում իրականացվող ուղղման գործընթացի ծրագրերը առանձին դեպքերում կարող են կրել ձևական բնույթ, եթե դրանց արդյունավետությունը փաստվում է բացառապես դատապարտյալի ներկա գտնվելու հանգամանքով:

Հիշյալի արդյունքում հնարավոր չէ նաև դիտարկել դատապարտյալի վարքագծի դեպի դրական փոփոխության դինամիկան:

Նույն հիմնավորմամբ՝ դատապարտյալի կողմից պատշաճ վարքագծի դրսևորում չեն կարող գնահատվել այնպիսի հանգամանքներ, որոնք գոյություն են ունեցել օբյեկտիվ իրականության մեջ՝ անկախ դատապարտյալի կամքից, կամ այդպիսիք առկա են եղել մինչև անձի վերաբերյալ դատավճռի կայացումը կամ անձի կողմից դատապարտյալի դատավարական կարգավիճակ ձեռ բերելը:

Միևնույն ժամանակ գտնում ենք, որ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ազատությունից զրկված անձանց զբաղվածության պատշաճ ապահովման հարցին: Այս առումով առանցքային նշանակություն կարող է ունենալ քրեակատարողական հիմնարկներում պետության ֆինանսավորմամբ որոշ արտադրությունների ստեղծումն ու պետության կարիքների համար արտա-

դրանքի թողարկումը, ինչպես նաև հարկային արտոնություններ սահմանելու եղանակով մասնավոր ընկերությունների կողմից քրեակատարողական հիմնարկների տարածքում որոշակի խումբ արտադրատեսակների արտադրություններ կազմակերպելը:

Դատապարտյալին աշխատանքով ապահովումը նրա վերասոցիալականացմանն ուղղված կարևոր բաղադրիչ է, այն կբացառի նաև միջանձնային հարաբերություններում հնարավոր լարվածության աճը, ինչպես նաև կհանդիսանա պատժի նպատակներին հասնելուն ուղղված գործուն միջոց:

Հետևաբար պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի գործադրման հիմքում պետք է դրվի պատժի նպատակների համակցված իրագործման հնարավորությունը, ինչն էլ իր հերթին բավարար հիմքեր կստեղծի անձի կողմից հասարակությունում վերաինտեգրվելու և ուղղման ընդունելի աստիճանի հասած լինելու կապակցությամբ հիմնավոր կանխատեսում անելու համար:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ԾԳ/0021/15/20 գործով Գարիկ Ստեփանի Դավթյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2022 թվականի մարտի 23-ի որոշումը:
The verdict from 23.03.2023 on Garik Stepan Davtyan of the Court of Cassation of the RA, of the Case No. SHD/0021/15/20.
2. Արմեն Գագիկի Ղազարյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԱԳ/0002/12/16 որոշումը:
The verdict from 01.11.20126 on Armen Gagik Ghazaryan of the Court of Cassation of the RA, of the Case No. ARD/0002/12/16.
3. ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրամանը՝ կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին:
Order of the Minister of Justice of the Republic of Armenia No. 279-N dated July 13, 2016 On Approval of the Procedure for the Activities of Structural Units Engaged in Social, Psychological and Legal Work with Arrested Persons and Convicts
4. Уголовное право России. Часть Общая / Отв. ред. Л. Л. Кругликов. 2-е изд., перераб. и доп. М., 2005.
Criminal Law of Russia. General Part / Ed. by L. L. Kruglikov. 2nd ed., Moscow, 2005.
5. Уголовное право России. Части Общая и Особенная / Под ред. А. И. Рарога. М., 2008.
Criminal Law of Russia. General and Special / Edited by A. I. Raroga. Moscow, 2008.
6. Додонов В. Н., Сравнительное уголовное право. Общая часть / под общ. ред. С. П. Щербы. — М.: Юрлитинформ, 2009.
Dodonov V. N., Comparative Criminal Law. The General Part / Edited by S. P. Shcherba. — Moscow, Yurлитinform, 2009.
7. Назаренко Г. В., Уголовное право : Курс лекций. — М.: Ось—89, 2005.
Nazarenko G. V., Criminal Law: Course Lectures. — Moscow, Axis—89, 2005.
8. Андреев В., Как исполняется приговор // Известия. 1987. 3 янв.
Andreev V., How the Sentence is Executed // Izvestia. 1987 January 3.
9. Курс уголовного права. Т. 2. Общая часть: Учение о наказании / под ред. Н. Ф. Кузнецовой, И. М. Тяжковой. М., 2002.
Course of Criminal Law. Vol. 2. General Part: The Doctrine of Punishment / Edited by N. F. Kuznetsova, I. M. Tyazhkova/ Moscow, 2002.

10. Улицкий С. Я., Некоторые теории юридической природы условно-досрочного освобождения в советском праве. Ученые записки ДВГУ. Владивосток, 1968. Ulitsky S. Ya. Some Theories of the Legal nature of Parole in Soviet Law. Scientific Notes of the FEFU. Vladivostok, 1968.
11. Михлин А. С. Проблемы досрочного освобождения от наказания. М., 1982. Mikhlin A. S. Problems of the exemption from punishment on parole. Moscow, 1982.
12. Punishment Archived 2009-08-21 at the Wayback Machine. // MSN Encarta.

Levon Charkhifalakyán

Head of the Department of Supervision over Legality of Penalties and Other Means of Compulsion of the Prosecutor General's Office of the Republic of Armenia

**PRACTICAL PROBLEMS OF THE CRIMINAL LAW INSTITUTE
ARISING DURING EXEMPTION FROM PUNISHMENT ON
PAROLE IN THE REPUBLIC OF ARMENIA¹**

Abstract

The article is devoted to the expediency of further serving of punishment in the context of realization of the goals of punishment, the problems of the criminal law institution arising during the exemption from punishment on parole, the need to review the mechanism for reporting submitted by the competent authorities in the context of assessing the likelihood of proper behavior of the convicted person and the commission of a new crime.

Considering that the Government of the Republic of Armenia has adopted a strategy for reforming the penal enforcement system, which, among other things, also represents a transition from the traditional ideology of deprivation of liberty to resocialization and restorative justice, therefore, aimed at achieving this goal, should be more substantive.

The Criminal Code of the Republic of Armenia (adopted on May 5, 2021) and the Criminal Code of the Republic of Armenia (adopted on April 18, 2003 and in force starting from July 1, 2022) have a certain difference in terms of the goals of punishment in the context of the re-socialization of a person who has been punished; however, the measures aimed at achieving the goals of punishment are identical, since such measures should be aimed at ensuring the safety of society, restoring social justice to victims, and by resocialization providing convicts with the opportunity to abandon criminal behavior.

Միջազգային պաշտպանություն հայցելու և այն ստանալու մեխանիզմները եղել և շարունակում են մնալ կարևոր ու զգայուն մարտահրավեր առաջադեմ հասարակության համար: Այս ոլորտում գրքայ առումով կատարված բարեփոխումները և զարգացումներն իրենց արտացոլումն են գտել նաև ՀՀ իրավակիրառ պրակտիկայում, որը վերլուծվել է սույն հետազոտության մեջ և հանգում է հետևյալ հիմնական փաստարկներին:

1. Միջազգային պաշտպանության իրավունքը երաշխավորված է մի շարք հիմնարար փաստաթղթերով և չի կարող սահմանափակվել զուտ ձևական, ոչ իրատեսական, կամայական պահանջների նախատեսմամբ (իրավունքի իրացման անիրատեսական ժամկետ, կոնկրետ վայր դիմելու կամ որոշակի ձևաչափով դիմելու պահանջ):
2. Տվյալ իրավունքի ապահովումը հանդիսանում է նաև ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորություն:
3. ՀՀ-ն, միանալով մի շարք պայմանագրերի և երկկողմ համաձայնագրեր կնքելով օտարերկրյա պետությունների հետ, ստանձնել է նաև անձանց հանձնելու մասին պարտավորություն¹⁷:
4. Պետության միջազգային պարտավորությունները պետք է բավանսավորվեն, սակայն հակասության դեպքում առավել ուշադրություն և նախապատվություն է տրվում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ստանձնած պարտավորությունների լիարժեք կատարմանը՝ միտված չեզոքացնելու անձի նկատմամբ արգելված վերաբերմունքի ռիսկերը:
5. Այս առումով ՀՀ-ի կողմից ձեռնարկված օրենսդրական բարեփոխումների արդյունքում կատարվել են գործնական քայլեր՝ անձի իրավունքների ապահովման համատեքստում:
6. Գործող քրեական օրենսգրքով ՀՀ սահմանն ապօրինի հատելու համար քրեական պատասխանատվությունից ազատող խրախուսական նորմը առավել հստակ է ամրագրվել և համահունչ է ինչպես այլ երկրների, այնպես էլ ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից մշակված հիմնական չափորոշիչներին:
7. «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունները օրենսդրորեն ամրագրել են ինչպես անձի՝ ապաստանի հայցով դիմելու կոնկրետ կառուցակարգերը և երաշխիքները, այնպես էլ իրավասու մարմինների՝ որոշակի գործողություններ կատարելու ուղղակի պարտականություններ (անձին գրավոր պարզաբանել իր իրավունքը, ապահովել դիմումի ընթացքը, դիմումը քննարկել սեղմ ժամկետում և անձին տրա-

¹⁷ Դրանցից մի քանիսը հրապարակված են ՀՀ արդարադատության նախարարության կայք էջում. https://www.moj.am/legal/browse/international_treaties (մուտք 30.08.2023թ.):

մադրել որոշումը՝ իր համար հասկանալի լեզվով, գործի քննությունը դատարանում իրականացնել ողջամիտ ժամկետներում):

8. Մինչույն ժամանակ, ակնհայտ է, որ տվյալ ոլորտում խնդիրները հնարավոր չէ լուծել «տեղային» մոտեցմամբ՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ վերը նշված օրենքն ընդունվել է դեռևս 2008 թվականին, մինչդեռ ներկա գլոբալ, այդ թվում՝ իրավական գործընթացները շարունակաբար զարգանում են, ինչի կապակցությամբ առավել ընդունելի է դիտվում միջազգային պաշտպանության մասին նոր միասնական օրենքի մշակումն ու ընդունումը¹⁸:
9. Նախորդ կետի իրագործումը նաև կփարատի այն հարցը, թե արդյո՞ք կատարված օրենսդրական բարեփոխումները կիրառելի են քաղաքական ապաստան հայցելու ինստիտուտի նկատմամբ:

¹⁸ Տե՛ս, օրինակ, «Միջազգային պաշտպանության մասին» Վրաստանի 01.12.2016թ. օրենքը. <https://matsne.gov.ge/ru/document/download/3452780/0/ru/pdf> (մուտք 30.08.2023թ.):

Գրականանության ցանկ (reference list, список литературы)

1. Իրավական ակտեր և նախադեպային որոշումներ
 - 1.1 Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 04.11.1950թ. կոնվենցիա:
The Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, 04.11.1950.
 - 1.2. Փախստականների կարգավիճակի մասին 28.07.1951թ. կոնվենցիա
The Refugee Convention, 28.07.1951:
 - 1.3. Փախստականների կարգավիճակի մասին 28.07.1951թ. կոնվենցիան լրացնող 31.01.1967թ. արձանագրություն:
 - 1.4. Protocol relating to the Status of Refugees, 31.01.1967.
 - 1.5. 05.07.1995թ. ընդունված ՀՀ Սահմանադրություն՝ 2005թ. փոփոխություններով՝ 06.12.2015թ. խմբագրությամբ:
Constitution of the Republic of Armenia, 05.07.1995, with amendments of 2005, in the redaction of 06.12.2015.
 - 1.6. «Փախստականների և ապաստանի մասին» 27.11.2008 ՀՀ օրենք՝ 05.05.2021թ. փոփոխություններով:
Law of the Republic of Armenia On the status of refugees and asylum, 27.11.2008, with amendments of 05.05.2021.
 - 1.7. ՀՀ վարչական դատավարության 05.12.2013թ. օրենսգիրք՝ 05.05.2021թ. փոփոխություններով:
Administrative Procedure Code of the Republic of Armenia, 05.12.2013, with amendments of 05.05.2021.
 - 1.8. 18.04.2003թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգիրք: Criminal Code of the Republic of Armenia, 18.04.2003.
 - 1.9. 05.05.2021թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգիրք: Criminal Code of the Republic of Armenia, 05.05.2021.
 - 1.10. 01.07.1998թ. ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
Criminal Procedure Code of the Republic of Armenia, 01.07.1998.
 - 1.11. F.G. v. Sweden - ECHR.
 - 1.12. Shahzad v. Hungary - ECHR.
 - 1.13.M.H. and Others v. Croatia - ECHR.
 - 1.14.A.A. and Others v. North Macedonia - ECHR.
 - 1.15.Rakhimov v. Russia - ECHR.
 - 1.16.Jabari v. Turkey - ECHR.
 - 1.17.M.S.S. v. Belgium and Greece - ECHR.
 - 1.18. ՀՀ կառավարություն 04.11.2021թ. №1791-Ն որոշում՝ ՀՀ կառավարության 14.06.2007թ. №818-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին:

04.11.2021 Decision of the Government of the Republic of Armenia №1791-Ն on amending and supplementing 14.06.2007 Decision of the Republic of Armenia №818-N.

1.19. Եվրոպայի Խորհրդի 2013/32/EU 26.06.2013թ. հրահանգ:
Directive 2013/32/EU of the European Parliament and of the Council of 26 June 2013.

22.07.1999թ. Վրաստանի քրեական օրենսգիրք (30.06.2023թ. փոփոխություններով):

Criminal Code of Georgia 22.07.1999 (with amendments of 30.06.2023).

1.20. 09.07.1999թ. Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգիրք (14.03.2023թ. փոփոխություններով):

Criminal code of the Republic of Belarus 09.07.1999 (with amendments of 14.03.2023).

2. Տեսական և այլ աղբյուրներ

2.1. Ալիզադան ընդդեմ Հայաստանի գործով ՄԱԿ ՓԳՀ զեկույցը Մարդու իրավունքների Եվրոպական դատարանին:

Submission by the Office of the United Nations High Commissioner for Refugees in the case of Alizada v. Armenia before the European Court of Human Rights.

2.2. ՄԱԿ տնտեսական և սոցիալական խորհրդի 03.10.1946թ. №E/236 հրահանգը:

UNO Economic and Social Council Directive №E/236, 03.10.1946.

2.3. ՄԱԿ ՓԳՀ 14.12.1950թ. կանոնադրությունը:

Statute of the Office of the United Nations High Commissioner for Refugees, 14.12.1950.

2.4. Թիվ ՎԴ/0170/05/20 վարչական գործ:

Administrative case ՎԴ/0170/05/20.

2.5. Թիվ ՎԴ/0705/05/20 վարչական գործ:

Administrative case ՎԴ/0705/05/20.

2.6. Թիվ ՎԴ/5185/05/18 վարչական գործ:

Administrative case ՎԴ/5185/05/18.

2.7. Թիվ ՎԴ1/0088/05/21 վարչական գործ:

Administrative case ՎԴ1/0088/05/21.

Anna Hovhannisyán

*Deputy Head of the Department of International Legal Cooperation
of the Prosecutor General's Office of the Republic of Armenia*

SEVERAL ISSUES AND IMPLEMENTED REFORMS FOR SEEKING INTERNATIONAL PROTECTION IN THE REPUBLIC OF ARMENIA¹

Abstract

The migration and integration processes carried out at the global level inevitably bring up certain problems in that field, in the solution of which the common approach of the states and the application of universal standards are important.

The Constitution of the Republic of Armenia and international treaties envisage the provision of international legal protection and the application of appropriate guarantees to those who need it.

However, the analysis of the practical situation has shown that in a number of cases, applying the right to seek international protection in the RA by persons, imprisoned in accordance with the law, is seen as a way to avoid certain restrictions imposed on them under the legislation.

The purpose of this article is to conduct research on implementation of the procedures for requesting international protection, the tools and mechanisms for guaranteeing the relevant rights, and the reforms implemented in the RA.

Based on the conducted analysis, the article presents the current situation before the relevant legislative reforms and the need for the implementation of these reforms, their essence and proposals regarding some of the existing problems.

Keywords: international protection; a refugee; asylum; extradition; international cooperation; illegal border crossing.

¹ The article was presented on 09.09.2023 and was reviewed on 30.11.2023.

Анна Оганесян

Заместитель начальника управления международно-правового сотрудничества Генеральной прокуратуры Республики Армения

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПРОЦЕДУРЫ ОБРАЩЕНИЯ ЗА МЕЖДУНАРОДНОЙ ЗАЩИТОЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ И ПРОВЕДЕННЫЕ РЕФОРМЫ¹

Абстракт

Миграционные и интеграционные процессы, происходящие на глобальном уровне, неизбежно выявляют некоторые имеющиеся в данной сфере проблемы, при решении которых важную роль играют единый подход государств и применение универсальных стандартов.

Конституцией Республики Армения и международными договорами предусмотрено предоставление международно-правовой защиты и соответствующих гарантий лицам, нуждающимся в международной защите. Однако изучение практики показало, что в ряде случаев реализация права на получение международной защиты в РА лицами, лишенными свободы в установленном законом порядке, рассматривается как способ избежать определенных установленных законом ограничений в отношении этих лиц.

Целью данного исследования является изучение порядка реализации процедур обращения за международной защитой, применения инструментов и механизмов обеспечения соответствующих прав, а также реформ, реализованных в РА.

На основе проведенного исследования в рамках статьи проанализирована ситуация, сложившаяся до принятия соответствующих законодательных реформ, их суть, обоснована необходимость проведения этих реформ, а также выдвинуты предложения по устранению некоторых существующих проблем.

Ключевые слова: международная защита; беженец; убежище; выдача; экстрадиция; международное сотрудничество; незаконное пересечение границы.

¹ Статья была представлена 09.09.2023 и прошла рецензирование 30.11.2023.

Շուշանիկ Իսրայելյան

*ՀՀ գլխավոր դատաստագրության մարդու դեմ ուղղված
հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ*

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱՎ

Համառոտագիր

Հայաստանի իրավական համակարգում ավանդաբար առանձնացվող պատասխանատվության տեսակների ցանկում դատավարական, այդ թվում՝ քրեադատավարական պատասխանատվությունը ներառված չի եղել: 1998 թվականի խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նույնպես բացակայում էին «քրեադատավարական պատասխանատվություն» կամ «դատական սանկցիա» հասկացությունները, սակայն առանձին դատավարական նորմեր պարունակում էին դատավարական պատասխանատվության միջոցներ:

Երբ առաջին անգամ ՀՀ դատավարական համակարգ ներմուծվեցին դատական սանկցիաները, նկատողություն տեսակի սանկցիան բովանդակային որոշակի առումով նույնանում էր նախագրուշացման հետ: Այսպես՝ 21.02.2007թ. ՀՀ դատական օրենսգրքով առաջին անգամ ամրագրվեց «դատական սանկցիա» հասկացությունը: Նույն օրը 1998թ. ՀՀ քր. դատ. օր.-ը լրացվեց 314.1-րդ հոդվածով, որը դատական սանկցիաների համակարգում ներառում էր նաև նախագրուշացումը:

07.02.2018թ. ՀՀ դատական օրենսգրքում նախագրուշացումը՝ որպես դատական սանկցիա, փոխարինվեց նկատողությամբ, սակայն, «նկատողություն» դատական սանկցիային զուգահեռ, նույն օրենքում նախատեսվեց նաև դատական սանկցիա կիրառելու իրավասության մասին նախագրուշացնելու վերաբերյալ դրույթ, ըստ որի՝ դատավորն անհրաժեշտության դեպքում հասկանալի ձևով նախագրուշացնում է դատական սանկցիա կիրառելու դատարանի իրավասության մասին, ինչպես նաև պարզաբանում դատական սանկցիա կիրառելու հիմքերը և հետևանքները (ՀՀ դատական օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մաս): Նշված ձևակերպումից ակնհայտ է, որ նախագրուշացումը բովանդակային առումով ոչ թե դատական սանկցիա է, այլ դատական սանկցիա կիրառելու հնարավորության մասին պարզաբանում, նախագրուշացումը դատական սանկցիայի կիրառմանը նախորդող ակտ է:

¹ Հոդվածը ներկայացվել է 04.09.2023թ., գրախոսվել է 15.11.2023թ.:

Արդեն իսկ 2021թ. ընդունված ՀՀ քր. դատ. օր.-ում նախատեսվեց դատավարական սանկցիաների մասին առանձին գլուխ: Դրանով դատավարական սանկցիաների համակարգում ներառվեց նաև նկատողությունը, որը, որպես քիչ թե շատ նոր դատավարական սանկցիա, իրավակիրառ պրակտիկայում ամավել արդյունավետ մեկնաբանության տեսանկյունից, անհրաժեշտություն ունի ուսումնասիրության:

Հիմնաբառեր- քրեադատավարական սանկցիաներ, քրեադատավարական պատասխանատվություն, նկատողություն, նախազգուշացում, դատավարական խախտում:

Ներածություն

Վերջին շրջանում իրավագիտության մեջ տարածում է գտել այն մոտեցումը, որ իրավունքի յուրաքանչյուր ճյուղ պետք է ունենա պատասխանատվության սեփական միջոցները: Որևէ իրավունքի ճյուղ չի կարող բնականոն իրականացնել իր գործառույթներն առանց սեփական պատասխանատվության միջոցների²:

Իրավագիտության մեջ ավանդաբար առանձնացվել են քրեական, վարչական, քաղաքացիական և կարգապահական, որոշ դեպքերում՝ նյութական իրավաբանական պատասխանատվության տեսակները, սակայն հասարակական հարաբերությունների և օրենսդրության զարգացումն առաջ է բերել իրավաբանական պատասխանատվության նոր տեսակներ: Դեռևս 1970-ականներին դատավարական պատասխանատվությունը դիտարկվում էր որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ³:

Ներկայումս իրավագիտության մեջ քրեադատավարական պատասխանատվությունը՝ որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ, ստացել է համընդհանուր ճանաչում⁴, սակայն պոզիտիվ իրավունքում քրեադատավարական պատասխանատվության ինստիտուտը կայացման փուլում է:

² Хачатуров Р. Л., Липинский Д. А. Общая теория юридической ответственности. СПб.: Юридический центр-Пресс, 2007; Витрук Н. В. Общая теория юридической ответственности. 2-е изд., испр. и доп. М.: Норма, 2009.

³ Чечина Н. А., Элькинд П. С. Об уголовно-процессуальной и гражданской процессуальной ответственности // Советское государство и право. 1973. № 9. С. 34.
Chechina N. A., Elkind P. S., On criminal procedural and civil procedural liability // Soviet state and law. 1973. No. 9. S. 34.

⁴ Ветрова Г. Н. Уголовно-процессуальная ответственность. М.: Наука, 1987; Громов Н.А., Полуниин С.А. Санкции в уголовно-процессуальном праве России. М.: Городец, 1998; Вепрев В. С, Основания уголовно-процессуальной ответственности. М.: Юрлитинформ, 2007; Гамбарян А., Исраелян Ш. Ограничение осуществления права как мера уголовно-процессуальной ответственности // Судебная власть и уголовный процесс. 2016. № 2.

Ղամբարյան Ա., Իսրայելյան Շ., «Ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից հեռացնելը՝ որպես քրեադատավարական պատասխանատվության միջոց»//Օրենք և իրականություն, 2009, № 11:
Ղամբարյան Ա., Իսրայելյան Շ., «Իրավական քաղաքականությունը դատախազների և փաստաբանների նկատմամբ դատական սանկցիաների կիրառման ոլորտում» // Օրենք և իրականություն, 2011, № 6 (188):

1998 թվականի խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր.) բացակայում էին «քրեադատավարական պատասխանատվություն» կամ «դատական սանկցիա» հասկացությունները, սակայն առանձին դատավարական նորմեր պարունակում էին դատավարական պատասխանատվության միջոցներ:

Նշենք, որ ՀՀ դատավարական համակարգում, երբ առաջին անգամ ներմուծվեցին դատական սանկցիաները, սույն հոդվածում քննարկվող տեսակի սանկցիան կոչվում էր ոչ թե նկատողություն, այլ նախազգուշացում: Այսպես՝ 21.02.2007թ. ՀՀ դատական օրենսգրքով (ուժը կորցրել է) առաջին անգամ ամրագրվեց «դատական սանկցիա» հասկացությունը: Նույն օրը 1998թ. ՀՀ քր. դատ. օր.-ը լրացվեց 314.1-րդ հոդվածով, որը դատական սանկցիաների համակարգում, ի թիվս այլնի, ներառում էր նախազգուշացումը:

07.02.2018թ. ՀՀ դատական օրենսգրքում նախազգուշացումը՝ որպես դատական սանկցիա, փոխարինվեց նկատողությամբ, սակայն, «նկատողություն» դատական սանկցիային զուգահեռ, նույն օրենքում նախատեսվեց նաև դատական սանկցիա կիրառելու իրավասության մասին նախազգուշացնելու վերաբերյալ դրույթ:

Արդեն իսկ 2021թ. ընդունված ՀՀ քր. դատ. օր.-ում հարկադրանքի միջոցներ բաժնում նախատեսվեց դատավարական սանկցիաների մասին առանձին գլուխ (17-րդ գլուխը), որով դատավարական սանկցիաների համակարգում, ի թիվս այլնի, ներառված է նկատողությունը, որը, որպես քիչ թե շատ նոր դատավարական սանկցիա, անհրաժեշտություն ունի ուսումնասիրության:

1. ՆԿԱՏՈՂՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Ընդհանուր դրույթներ

Նկատողությունը ոչ գույքային բնույթի պատժիչ սանկցիայի տեսակ է, որը ներգործում է դատավարական խախտում թույլ տված անձի հոգեբանության վրա և նպատակաուղղված է առաջին հերթին դատավարական այլ իրավախախտումների կանխմանը, պարտականությունների կատարման ապահովմանը: Նկատողությունն արտահայտում է դատավարական խախտման համար պետական պարավանք. այս սանկցիայի կիրառմամբ տեղի է ունենում իրավախախտում թույլ տված անձի վարքագծի իշխանական դատապարտում⁵:

Նկատողության օրենսդրական բնորոշման համաձայն՝ այն որոշակի վարությանի գործողության կատարման ժամանակ կամ դատական նիստի ընթացքում վարույթի մասնակցին կամ այլ անձին ուղղված՝ պատշաճ վարքագիծ դրսևորելու կամ իրավասու անձի կարգադրություններին ենթարկվելու հրահանգ է (ՀՀ

⁵ Липинский Д. А., Хачатуров Р. Л., Общая теория юридической ответственности: монография. С.Пб.: Юридический центр Пресс, 2007. С. 779; Громов Н. А., Полунин С. А. Санкции в уголовно-процессуальном праве России. М.: Городец, 1998. С. 86-87.

քր. դատ. օր.-ի 142-րդ հոդվածի 1-ին մաս): Այս բնորոշումը մասամբ է արտահայտում իրավաբանական պատասխանատվության այս տեսակի էությունը, քանի որ դրանում շեշտադրվել է միայն այս սանկցիայի կանխարգելիչ (նախագգուշացնող) տեսանկյունը, մինչդեռ, այն ունի նաև դատապարտող (պարսավող) նշանակություն: Վարույթն իրականացնող անձը, «նկատողություն» սանկցիան կիրառելիս, պետք է արտահայտի դատավարական խախտման նկատմամբ իր իշխանական դատապարտումը (պարսավանքը), այնուհետև հրահանգի դրսևորել պատշաճ վարքագիծ:

Նկատողությունը՝ որպես քրեադատավարական սանկցիա, անկասկած միջամտում է մարդու իրավունքներին, շոշափում է նրա իրավաչափ շահերը, հակառակ դեպքում այն չէր կարող համարվել պատասխանատվության միջոց: Մյուս կողմից՝ նկատողությունը, օրենքով նախատեսված դատավարական մյուս սանկցիաների համեմատ, ամենամեղմն է, քանի որ միջամտության ինտենսիվությունը (ուժգնությունը) թույլ է:

1.2. Նկատողության միջամտությունը մարդու սահմանադրական կարգավիճակին

Դատավարական այս սանկցիան ինչպե՞ս է միջամտում մարդու իրավական կարգավիճակին: Նկատողության այն բաղադրիչը, որն արտահայտում է իրավախախտման համար իշխանական դատապարտում (պարսավանք), առնչվում է այնպիսի իրավական բարիքին, ինչպիսին մարդու արժանապատվությունն է (ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդված): Ճիշտ է, նկատողության ձևով մարդու արժանապատվությանը միջամտելու ուժգնությունը թույլ է (մակերեսային է), այնուամենայնիվ իրավախախտման համար պերֆորմատիվ պարսավանքն առնչվում է նրա արժանապատվությանը. մարդուն դատավարական իրավախախտում վերագրելը և դրա համար նրան պարսավելը չի կարող չշոշափել նրա արժանապատվությանը:

Երբ անձը կասկածի տակ է դնում իրեն տրված նկատողության հիմքում դրված դատավարական խախտման փաստական հանգամանքները, ապա այս դեպքում մարդու արժանապատվության պաշտպանության սահմանադրական բարիքը կարող է համակցվել անմեղության կանխավարկածի համաիրավական սկզբունքի հետ:

Նկատողության այն բաղադրիչը, որն արտահայտում է պատշաճ վարքագիծ դրսևորելու կամ իրավասու անձի կարգադրություններին ենթարկվելու հրահանգ, ներգործում է մարդու ազատ գործելու իրավունքին (ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդված), քանի որ նկատողության անհատական ակտով մարդու վրա դրվում է կոնկրետ կարգադրության ենթարկվելու կամ կոնկրետ վարքագիծ դրսևորելու անհատականացված պարտականություն, ինչը սահմանափակում է մարդու ազատ գործելու հնարավորությունը:

1.3. Նկատողությունը և նախազգուշացումը

Հայաստանի իրավական համակարգում նկատողությունը և նախազգուշացումը գործածվել են տարաբնույթ իմաստներով, ինչի վրա իր ազդեցությունն է ունեցել այն, որ խորհրդային և հետխորհրդային որոշ իրավական համակարգերում (օրինակ՝ ռուսական իրավունքում) դրանք ունեցել են տարբեր նշանակություն, օրինակ՝ նախազգուշացումը համարվում է տույժի տեսակ, իսկ բանավոր նկատողությունը՝ ոչ⁶:

ՀՀ դատավարական համակարգում, երբ առաջին անգամ ներմուծվեցին դատական սանկցիաները, քննարկվող տեսակի սանկցիան կոչվում էր ոչ թե նկատողություն, այլ նախազգուշացում⁷: Այսպես՝ 21.02.2007թ., ընդունված ՀՀ դատական օրենսգրքի (ուժը կորցրել է) 63-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն.

«Քրեական գործի քննության ժամանակ ամբաստանյալի կողմից դատական նիստի կարգը խախտելու և նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու կամ նախազահող դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու դեպքում դատարանը կիրառում է նախազգուշացում»:

07.02.2018թ. ՀՀ դատական օրենսգրքում նախազգուշացումը՝ որպես դատական սանկցիա, փոխարինվեց նկատողությամբ, սակայն, «նկատողություն» դատական սանկցիային զուգահեռ, նույն օրենքում նախատեսվեց նաև դատական սանկցիա կիրառելու իրավասության մասին *նախազգուշացնելու* վերաբերյալ դրույթ: Այսպես՝ դատավորն անհրաժեշտության դեպքում հասկանալի ձևով նախազգուշացնում է դատական սանկցիա կիրառելու դատարանի իրավասության մասին, ինչպես նաև պարզաբանում դատական սանկցիա կիրառելու հիմքերը և հետևանքները (ՀՀ դատական օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մաս)⁸: Այս ձևակերպումից ակնհայտ է, որ նախազգուշացումը ոչ թե դատական սանկցիա է, այլ դատական սանկցիա կիրառելու հնարավորության մասին պարզաբանում է, նախազգուշացումը դատական սանկցիայի կիրառմանը նախորդող ակտ է:

1.4. Նկատողության պրեյուդիցիալ կապը դատավարական այլ սանկցիաների հետ

Նկատողության պահանջները չկատարելը կարող է առաջ բերել օրենսգրքով նախատեսված այլ սանկցիայի կիրառում (ՀՀ քր. դատ. օր.-ի 142-րդ հոդվածի

⁶ Долгих И. П., Предупреждение и устное замечание: к вопросу о разграничении юридических терминов // Актуальные проблемы правовой науки. Сборник статей Международной научно-практической конференции, Уфа, 10 сентября 2014 года. Уфа. 2014. С. 14.

⁷ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում առաջուր, որպես վարչական տույժի միջոց, նախատեսված է նախազգուշացումը (տե՛ս նշված օրենսգրքի 25-րդ հոդվածը):

⁸ Դատավարական սանկցիաների իրավական կարգավորման և հնարավոր կոլիզիաների, այդ թվում՝ «նախազգուշացում» - «նկատողություն» հասկացությունների մասով տե՛ս Ա.Դամբարյան, Շ.Իսրայելյան, Քրեադատավարական սանկցիաները (Գիտագործնական մեկնաբանություններ), «ՏԻԳՐԱՆ ՄԵՏ» հրատ., Երևան, 2022, էջեր 17-21: A. Ghambaryan, Sh. Israyelyan, Criminal Procedural Sanctions (Scientific Comments), “TIGRAN METS” ed., Yerevan, 2022, p. 17-21.

3-րդ մաս): Ավելին, Օրենսդիրը մի շարք սանկցիաների կիրառման համար սահմանել է նկատողություն ստացած լինելու (դրա պահանջները չկատարելու) նախապայման⁹: Սա նշանակում է, որ նշված դատավարական սանկցիաների կիրառման համար նկատողությունն ունի պրեյուդիցիալ նշանակություն: Այսպես՝ դատական նիստի դահլիճից հեռացնելը, դատական տուգանք կիրառել, եթե անձին տրվել է նկատողություն, սակայն վերջինս պիտանի չի եղել:

Վարույթն իրականացնող մարմինը նկատողության յուրաքանչյուր դեպքում պատշաճ ձևով համապատասխան անձին հայտնում է ավելի խիստ սանկցիա կիրառելու և դրա հետևանքների մասին:

2. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ, ՈՐՈՆՑ ԿԱՐՈՂ Է ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՏՐՎԵԼ

2.1. Ընդհանուր դրույթներ

Նկատողություն կարող է տրվել վարույթի մասնակցին կամ այլ անձին: Օրենսդիրը չի հստակեցրել վարույթի այն մասնակիցներին, որոնց կարող է նկատողություն տրվել: Դրա համար, որպես չափանիշ, սահմանված է միայն վարության գործողության կատարմանը կամ դատական նիստին մասնակցելը, ինչը նշանակում է, որ այս սանկցիան կարող է կիրառվել վարության գործողությանը կամ դատական նիստին մասնակցող (դատավարական կարգավիճակ ունեցող) անձի կամ այլ անձի նկատմամբ:

Ինչպես նշվեց, ՀՀ քր. դատ. օր.-ի 17-րդ գլխով նախատեսված դատավարական սանկցիաները կարող են կիրառվել հիմնականում վարույթի մասնավոր մասնակիցների և վարույթին օժանդակող անձանց, ինչպես նաև դատական վարույթին մասնակցող քննիչի և դատախազի նկատմամբ: Այս պարագայում քննիչը և դատախազը ոչ թե վարույթի հանրային մասնակիցներ են, այլ մեղադրանքի կողմի ներկայացուցիչներ:

2.2. Քննչական գործողությանը մասնակցող հանրային մասնակցին նկատողություն տալու անթույլատրելիությունը

Եթե մինչդատական վարույթում հանրային մի մասնակցի կողմից կատարվող վարության գործողությանը մասնակցում է մեկ այլ հանրային սուբյեկտ, ապա նրան նկատողություն չի կարող տրվել: Օրինակ՝ քննչական խմբի ղեկավարն իրավասու է մասնակցելու խմբի այլ քննիչների կողմից կատարվող քննչական գործողություններին (ՀՀ քր. դատ. օր.-ի 184-րդ հոդվածի 4-րդ մաս): Քննչական գործողություն կատարող քննիչը չի կարող քննչական խմբի ղեկավարին, որպես դատավարական սանկցիա, տալ նկատողություն: Այս սուբյեկտների միջև թեև առկա են դատավարական հարաբերություններ, սակայն «խմբի ղեկավար - խմբի անդամ» հարաբերությունների՝ որոշ իմաստով ենթակարգային

⁹ Դամբարյան Ա., Իսրայելյան Շ., Քրեադատավարական սանկցիաները (Գիտագործնական մեկնաբանություններ), «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» հրատ., Երևան, 2022, էջ 162:

բնույթը բացառում է քննչական խմբի քննիչի կողմից քննչական խմբի ղեկավարի նկատողություն տալը: Ակնհերև է, որ քննչական խմբի քննիչը չի կարող նկատողություն տալ իրենց աշխատանքները ղեկավարող և իրենց համար պարտադիր հանձնարարություններ տվող անձին¹⁰:

Ասվածը *mutatis mutandis* վերաբերում է նաև այն դեպքերին, երբ քննիչը քննչական գործողության կատարման բնականոն ընթացքն ապահովելու համար դրա կատարմանը ներգրավում է հետաքննության մարմնի աշխատակցի (ՀՀ քր. դատ. օր.-ի 210-րդ հոդվածի 4-րդ մաս):

2.3. Դատական նիստը նախագահողի կողմից դատարանի կազմի մեկ այլ դատավորին կամ պահեստային դատավորին նկատողություն տալը

Դատական վարույթը կոլեգիալ կազմով իրականացնելիս նիստը նախագահողը ղեկավարում է դատական նիստը, միջոցներ է ձեռնարկում ապահովելու օրենսգրքով նախատեսված այլ պահանջների պահպանումը, ինչպես նաև դատական նիստին ներկա գտնվող անձանց պատշաճ վարքագիծը (ՀՀ քր. դատ. օր.-ի 34-րդ հոդվածի 3-րդ մաս), սակայն այդ գործառնության չի բխում նիստը նախագահողի՝ դատական կազմի մյուս դատավորներին նկատողություն տալու լիազորությունը: Ասվածն ունի իրավափիլիսոփայական և ձևական-իրավաբանական հիմնավորումներ:

Իրավափիլիսոփայական տեսանկյունից՝ հասարակության ներկայությամբ դատարանի նախագահի կողմից դատարանի կազմի մեկ այլ դատավորին (լայն իմաստով՝ դատարանն ինքն իրեն) նկատողություն տալը կհեղինակագրկի դատարանին:

Ձևական-իրավաբանական տեսանկյունից՝ դատավարական սանկցիա կիրառելու լիազորությունը վերապահված է դատարանին, և ոչ թե՛ դատական նիստը նախագահողին: Կոլեգիալ կազմով վարույթն իրականացնող բոլոր դատավորները դատարանի կողմից լուծման ենթակա բոլոր հարցերի կապակցությամբ օժտված են հավասար լիազորություններով (ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 4-րդ մաս):

Եթե լինի այնպիսի իրավիճակ, որ դատարանի կազմի որևէ դատավոր դրսևորի ոչ պատշաճ վարքագիծ, ապա դրան արձագանքելու ձևը կարգապահական վարույթն է կամ բացարկի ինստիտուտի կիրառումը:

Ինչ վերաբերում է պահեստային դատավորին, որը պարտավոր է դատաքննության ընթացքում ներկա լինել դատական նիստի դահլիճում (ՀՀ քր. դատ. օր.-ի 32-րդ հոդվածի 2-րդ մաս), ապա նրա կողմից դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու դեպքում բացակայում է նրան նկատողություն չտալու ֆորմալ-իրավաբանական հիմնավորումը, սակայն այս դեպքում պահպանվում է

¹⁰ Ղամբարյան Ա., Իսրայելյան Շ., Քրեադատավարական սանկցիաները (Գիտագործնական մեկնաբանություններ), «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» հրատ., Երևան, 2022, էջ 52:

դատական իշխանության հեղինակության մասին պահանջը: Ճիշտ է՝ տվյալ դեպքում պահեստային դատավորը գործառության շահերը պահպանելու համար, պարզապես ներկա է դատական նիստի դահլիճում, սակայն՝ եթե նա հանրությանը ներկայանում է դատավորի հագուստով կամ նրան ներկայացնում են որպես դատավոր (թեկուզ պահեստային), ապա նրան նկատողություն տալը կարող է բացասաբար անդրադառնալ դատարանի հեղինակության վրա, ինչպես նաև կասկածի տակ դնել նույն մեղադրանքով նրա կողմից հետագայում որպես արդարադատություն իրականացնող դատարան հանդես գալու հնարավորությունը:

2.4. Այլ անձին նկատողություն տալը

Նկատողություն կարող է տրվել նաև դատավարական հարաբերություններին չմասնակցող (դատավարական կարգավիճակ չունեցող), սակայն վարության գործողություններին կամ դատական նիստին ներկա գտնվող անձանց, օրինակ՝ խուզարկության օբյեկտի օրինական տիրապետողին (ՀՀ քր. դատ. օր.-ի 234-րդ հոդվածի 2-րդ մաս), կամ անորոշ դատավարական կարգավիճակ ունեցող անձանց, օրինակ՝ դատախարակչական հսկողությունը կիրառելու դեպքում՝ փակ մանկական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչին (ՀՀ քր. դատ. օր.-ի 129-րդ հոդվածի 3-րդ մաս), զինվորական հսկողությունը կիրառելու դեպքում՝ հրամանատարության ներկայացուցչին (ՀՀ քր. դատ. օր.-ի 130-րդ հոդվածի 2-րդ մաս): Տվյալ անձանց կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու դեպքում նրանց կարող է տրվել նկատողություն:

3. ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

3.1. Ընդհանուր դրույթներ

ՀՀ քր. դատ. օր.-ի 142-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումից կարելի է եզրակացնել, որ նկատողություն տալու փաստական հիմքը ոչ պատշաճ վարքագիծն է կամ իրավասու անձի կարգադրություններին չենթարկվելը: «Ոչ պատշաճ վարքագիծը» լայն հասկացություն է, որը կարող է ներառել դատավարական խախտումների տարբեր դրսևորումներ, օրինակ՝ պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը: Իրավասու անձի կարգադրությանը չենթարկվելը պարտականությունը չարամտորեն չկատարելու եղանակներից է: Բացի այդ, պետք է հիշել, որ դատարանի և վարույթի հանրային մասնակցի կողմից իր իրավասության սահմաններում կայացված դատավարական ակտերը ենթակա են պարտադիր կատարման բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց, այլ կազմակերպությունների կողմից (ՀՀ քր. դատ. օր.-ի 9-րդ հոդվածի 7-րդ մաս):

Նկատողություն կարող է տրվել բացառապես դատավարական հարաբերությունների շրջանակներում ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու դեպքում:

3.2. Դատավարական և կարգապահական խախտումների սահմանազատումը

Օրենսդրությամբ փաստաբանի, դատախազի և քննիչի կողմից պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը համարվում է նաև կարգապահական զանցանք, որի համար նրանց նկատմամբ կարող է, ի թիվս այլ կարգապահական տույժերի, նշանակվել նկատողություն: Օրինակ՝ դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերից մեկը իր պարտականությունները չկատարելն է կամ ոչ պատշաճ կատարելը («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Դատախազի պարտականությունների ցանկում նախատեսված է Սահմանադրության, օրենքների, այդ թվում՝ ՀՀ քր. դատ. օր.-ի պահանջները կատարելը: Դատախազի նկատմամբ կարող են նշանակվել, ի թիվս այլ կարգապահական տույժերի, նկատողություն և խիստ նկատողություն («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետեր):

Եթե դատախազը դատական նիստի ընթացքում խախտում է օրենքի պահանջները, ապա, ըստ էության, կատարում է այնպիսի խախտում, որի համար կարող է կիրառվել և՛ դատավարական սանկցիա (նկատողություն), և՛ կարգապահական սանկցիա (նկատողություն): Նույն արարքի համար նույնաբնույթ (միևնույն գործառույթ իրականացնող) սանկցիաների կիրառման դեպքում կիսախտվի non bis in idem սկզբունքը: Ուստի, եթե դատարանը դատական նիստին մասնակցող դատախազին նկատողություն է տվել, ապա նույն խախտման փաստով կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը, փաստորեն, չի կարող կիրառվել:

Մեկ այլ օրինակ՝ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1 կետի համաձայն.

«Փաստաբանը, որը ներկայանում կամ մասնակցում է գործին դատարանի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը»:

Նույն կանոնագրի 6.1.3-րդ կետի համաձայն.

«Մինչդատական վարույթում փաստաբանը պարտավոր է հարգանքով վերաբերվել դատավարության մասնակիցներին և մնալ կոռեկտության շրջանակներում, իսկ դատավարության մասնակիցների (մեղադրող կողմի և այլն)

գործողություններին կամ ոչ կոռեկտ արտահայտություններին անդրադառնալ օրենքով սահմանված եղանակներով՝ դիմումների, հայտարարությունների, միջնորդությունների, բացարկների, առարկությունների կամ բողոքների միջոցով¹¹»:

Այս պարագայում նույնպես, դատավորի կողմից փաստաբանին նկատողություն տալը բացառում է նույն արարքի համար փաստաբանին, որպես կարգապահական տույժ, նկատողություն տալը: Միևնույն ժամանակ, համալիր խախտումների նույնականացումը պարզելիս կարևոր է արարքների փաստական հանգամանքների տարբերության բացահայտումը¹²: Օրինակ՝ վարույթյին գործողության մասին պատշաճ ծանուցված փաստաբանը, իր գերժանրաբեռնվածության պատճառով չի ներկայանում վարույթն իրականացնող մարմնի կանչով: Նկարագրված իրավիճակում փաստաբանը կատարել է երկու խախտում: Նա խախտել է մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար վարույթն իրականացնող մարմնի հրավերով ներկայանալու դատավարական պարտականությունը (ՀՀ քր. դատ. օր.-ի 40-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետ), միաժամանակ, խախտել է փաստաբանների համար սահմանված վարքագծի կանոնը, երբ գերզբաղվածության պայմաններում ստանձնել է մեղադրյալի շահերը ներկայացնելու պարտականությունը: Այսպես, «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 3.1.8-րդ կետի համաձայն.

«Փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը»:

Նկարագրված իրավիճակի փաստական հանգամանքները վկայում են, որ փաստաբանը կատարել է երկու տարբեր խախտում. վարույթն իրականացնող մարմնի հրավերով չներկայանալը (դատավարական խախտում) և զբաղվածության պայմաններում ընդունել է իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը (կարգապահական խախտում):

4. ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՏՎԼՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՆԿԵԿԱՅԻ ԲՈՂՈՔՎՐԿՈՒՄԸ

4.1 Ընդհանուր դրույթներ

Նկատի ունենալով, որ նկատողության՝ որպես դատավարական սանկցիայի ներգործությունը մարդու կարգավիճակին ուժգին չէ՝ Օրենսդիրն այս սանկցիայի կիրառման բարդացված կարգ չի նախատեսել: Այնուամենայնիվ, պետք է քննարկել, թե ով է իրավասու նկատողություն տալ վարույթի մասնակցին կամ այլ անձին, ինչպես նաև նկատողության ամրագրման դատավարական ձևը և այն բողոքարկելու հնարավորությունները:

¹¹ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք (19.10.2019թ. խմբագրությամբ) // https://advocates.am/images/general_meetings/2019/Kanonagirk_19.10.2019.pdf:
¹² Դամբարյան Ա., Իսրայելյան Շ., Քրեադատավարական սանկցիաները (Գիտագործնական մեկնաբանություններ), «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» հրատ., Երևան, 2022, Բաժին 1:

4.2. Նկատողություն տալու լիազորություն ունեցող սուբյեկտները

Նկատողություն տրվում է վարության զործողությանը կամ դատական նիստին մասնակցող (ներկա գտնվող) անձանց, ուստի կարելի է եզրակացնել, որ այս սանկցիան կիրառելու լիազորությունն ընդհանուր առմամբ վերապահված է վարության զործողություն կատարող քննիչին և դատարանին:

Մինչդատական վարություն վարության մասնավոր մասնակիցների մասնակցությամբ վարության զործողություններ կատարելու լիազորությունը, որպես կանոն, վերապահված է քննիչին, սակայն որոշ դեպքերում քննիչը վարության զործողության կատարումը օրենքի ուժով պատվիրակում է փորձագետին: Օրինակ՝ այն դեպքում, երբ քննիչն իրավասու չէ ներկա լինելու մերկացմամբ զուգորդվող քննմանը, քննվողի մարմնի վրա հանցագործության հետքերի կամ հատուկ նշանների առկայության պարզումը, քննիչի հանձնարարությամբ, կատարում է բժշկության բնագավառի ձեռնհաս փորձագետը: Այդ ստուգման արդյունքները փորձագետը շարադրում է տեղեկանքում, որը, որպես հավելված, կցվում է արձանագրությանը (ՀՀ քր. դատ. օր.-ի 227-րդ հոդվածի 2-րդ մաս):

Եթե քննիչը քննման զործողությունը պատվիրակում է փորձագետին, ապա այս դեպքում փորձագետը գործառության շարքում (տվյալ վարության զործողության մասով) հանդես է գալիս որպես ad hoc վարության իրականացնող անձ և կարող է վարության զործողությանը մասնակցող կամ ներկա գտնվող անձանց (այլ անձանց) նկատողություն տալ:

Այս մոտեցման դեպքում ծագում է տրամաբանական հարց՝ փորձագետն ինչ ձևով պետք է ամրագրի նկատողություն տալը՝ պետք է կայացնի առանձին դատավարական որոշում (ՀՀ քր. դատ. օր.-ի 142-րդ հոդվածի 2-րդ մաս), թե՞ նկատողության փաստն արտացոլի քննման մասին տեղեկանքում, որի հիման վրա վարության իրականացնող քննիչը կկազմի նկատողության մասին գրավոր որոշում: Թեև փորձագետը գործառության իմաստով վարության իրականացնում, սակայն Օրենսդիրը փորձագետին չի վերապահել նույնիսկ իր կատարած քննման արձանագրությունը կազմելու հնարավորություն, ուստի նրան, առավել ևս, չէր վերապահի իշխանական ակտ՝ դատավարական որոշում կայացնելու լիազորություն: Այս պայմաններում, փորձագետը նկատողության փաստը պետք է շարադրի քննման արդյունքների մասին տեղեկանքում (ՀՀ քր. դատ. օր.-ի 227-րդ հոդվածի 2-րդ մաս), որը, որպես հավելված, կկցվի նկատողություն տալու մասին քննիչի որոշմանը:

Քննչական մարմնի ղեկավարի՝ լիազորությունների վերլուծությունը թույլ է տալիս փաստելու, որ վերջինս կարող է անձին նկատողություն տալ բացառապես այն դեպքում, երբ որոշում է կայացրել նախաքննությունն անձամբ կատարելու մասին՝ օգտվելով քննիչի բոլոր լիազորություններից: Քննչական մարմնի ղեկավարի մյուս լիազորություններն ուղղված են ոչ թե նախաքննության կատարմանը, այլ դրա կազմակերպմանը և արդյունավետության ապահովմանը:

Որպեսզի պարզենք, թե դատախազն այս պարագայում կարող է նկատողության տալ, թե՞ ոչ, պետք է պատասխանենք այն հարցին, թե դատախազն արդյոք կարո՞ղ է վարույթի մասնակցի անմիջական մասնակցությամբ կատարել վարության գործողություն: Դատախազը՝ որպես վարույթն իրականացնող մարմին, հանդես է գալիս մեղադրական եզրակացությունը կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշումը քննիչից ստանալու պահից մինչև մեղադրական եզրակացությունը դատարան հանձնելը, քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը հաստատելը կամ վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը (ՀՀ քր. դատ. օր.-ի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Դատախազը վարույթն իրականացնող մարմնի կարգավիճակով կարող է հանդես գալ առավելագույնը յոթ օր (ՀՀ քր. դատ. օր.-ի 205-րդ հոդվածի 1-ին մաս): Մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերով հսկող դատախազն իրավասու է վերացնել կամ փոխել մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցը, իսկ եթե խափանման միջոց չի կիրառվել՝ միջոցներ ձեռնարկել խափանման միջոց կիրառելու համար (ՀՀ քր. դատ. օր.-ի 205-րդ հոդվածի 3-րդ մաս): Եթե խափանման միջոցի կիրառման իրավակարգավորումներն այնպիսին են, որ դատախազը վարույթի մասնակցին կամ այլ անձին պետք է ծանոթացնի խափանման միջոց կիրառելու որոշմանը, նրան հանձնի դրա պատճենը, ծանոթացնի մեղադրանքի էությանը (խոսքը մեղադրյալին մեղադրանքի էությանը ծանոթացնելու մասին չէ), բացատրի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, այսինքն՝ նրանց հետ պետք է գտնվի անմիջական շփման մեջ, ապա դատախազը, փաստական հիմքերի առկայության դեպքում, նրանց կարող է նկատողություն տալ:

Դատական նիստը նախագահողը նախապատրաստում և ղեկավարում է դատական նիստը, միջոցներ է ձեռնարկում ապահովելու վարույթի արդարացի իրականացումը և նույն օրենսգրքի այլ պահանջների պահպանումը, ինչպես նաև դատական նիստին ներկա գտնվող անձանց պատշաճ վարքագիծը (ՀՀ քր. դատ. օր.-ի 34-րդ հոդված): Արդեն նշվեց, որ վարույթը կոլեգիալ կազմով իրականացնելու դեպքում անձին նկատողություն տալու լիազորությունը վերապահված է ոչ թե նիստը նախագահողին, այլ դատական կազմին: Օրենսդիրը հստակ նշել է, որ Նախագահողը վարույթի հետ կապված բոլոր հարցերը ներկայացնում է բոլոր դատավորների լուծմանը: Որոշումն ընդունվում է դատավորների ձայների պարզ մեծամասնությամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 34-րդ հոդվածի 4-րդ մաս): «Վարույթի հետ կապված բոլոր հարցերը» օրենսդրական ձևակերպումից պարզ է, որ նկատողություն տալու մասին որոշում կայացնում է դատական կազմը, սակայն այն բանավոր հայտարարում է նախագահողը:

4.3. Նկատողություն տալու դատավարական ձևը

Մինչդատական վարույթում նկատողությունը տրվում է գրավոր, իսկ դատական վարույթում՝ բանավոր՝ այն մտցնելով դատական նիստի արձանագրության մեջ (ՀՀ քր. դատ. օր.-ի 142-րդ հոդվածի 2-րդ մաս): Մինչդատական վարույթում գրավոր տրվող նկատողությունը պետք է ունենա պատճառաբանված որոշման ձև, իսկ դատական վարույթում դատավորը պետք է բանավոր ձևով ներկայացնի դատավարական այն խախտումը, որի համար անձին տրվում է նկատողություն և պատշաճ վարքագիծ դրսևորելու հրահանգ, որոնք արձանագրվում են:

4.4. Նկատողություն տալու մասին որոշման բողոքարկումը

Մինչդատական վարույթում քննիչի կողմից անձին նկատողություն տալու մասին որոշումը կարող է բողոքարկվել հսկող դատախազին: Եթե հսկող դատախազը վերացնում է քննիչի անօրինական որոշումը, ապա պետք է հանձնարարի նրան՝ չեզոքացնել դրա հետևանքները, եթե այդպիսիք առկա են (ՀՀ քր. դատ. օր.-ի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-կետ), օրինակ՝ հանձնարարի քննիչին ներողություն հայցել վարույթի մասնակցից՝ նրան անհիմն դատավարական իրավախախտում վերագրելու և պարսավելու համար:

ՀՀ քր. դատ. օր.-ի 299-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված չէ քննարկվող սանկցիան կիրառելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկելու հնարավորություն: Ի դեպ, համեմատության համար նշենք, որ կարգապահական տույժի ձևով նկատողությունը կարող է բողոքարկվել դատարան¹³:

Պետք է պարզել քննիչի կողմից նկատողություն տալու մասին որոշումը ՀՀ քր. դատ. օր.-ի 299-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա բողոքարկելու հնարավորությունը: Այդ նպատակով պետք է պատասխանել այն հարցերին, թե քննարկվող սանկցիան արդյոք հետագայում հնարավոր է լինելու վիճարկել դատաքննության ընթացքում, կամ դատարան բողոքարկելու բացակայությունն արդյոք բողոքարկողին ակնհայտորեն չի՞ զրկելու իր իրավաչափ շահերն արդյունավետ պաշտպանելու իրական հնարավորությունից: Եթե այս հարցերից որևէ մեկին կտրվի բացասական պատասխան, ապա քննիչի՝ նկատողություն տալու մասին որոշումը կարող է ՀՀ քր. դատ. օր.-ի 299-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա բողոքարկվել դատարան:

Դժվար է պատկերացնել, թե վարույթի մասնակիցը քրեական մեղադրանքով դատաքննության ընթացքում քննիչի տված նկատողությունն ի՞նչ հարցի շրջանակներում է վիճարկելու, և դատարանն ինչպե՞ս է արձագանքելու դրան, եթե նույնիսկ քննիչի որոշումը եղել է ակնհայտ ապօրինի. չէ՞ որ մեղադրանք քննող դատարանը, ի տարբերություն քաղաքացիական և վարչական գործեր քննող դատարանների, չունի քննիչի որոշումը վերացնելու լիազորություն, իսկ դատաքննու-

¹³ Տե՛ս, օրինակ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածը:

թյան փուլում, բնականաբար, չի կարող վարույթի հանրային մասնակցի վրա դնել անձի իրավունքների խախտումը վերացնելուն ուղղված կոնկրետ վարույթային ակտեր կայացնելու (կատարելու) պարտականություն: Փաստորեն՝ նշվածը վկայում է, որ անձը գրկված է քննիչի տված նկատողությունը դատաքննության ընթացքում վիճարկելու հնարավորությունից, ուստի մինչդատական վարույթում այն կարող է բողոքարկվել դատարան չՀ քր. դատ. օր.-ի 299-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա:

Նկատողությունը դատարան բողոքարկելու անհրաժեշտությունը կարևոր է նաև նկատողության և այլ դատավարական սանկցիաների պրեյուդիցիալ կապի տեսանկյունից: Եթե անձը հնարավորություն ունենա դատարանում վիճարկել քննիչի տված նկատողությունը, ապա կկարողանա կանխել իր նկատմամբ առավել խիստ սանկցիայի կիրառումը: Օրինակ՝ անձին վարույթից կարելի է հեռացնել երեք անգամ դատավարական սանկցիայի ենթարկելուց հետո: Եթե անձը կարողանա արդյունավետ պաշտպանվել «նկատողություն» սանկցիայից, ապա կկարողանա նաև կանխել վարույթից հեռացնելու սանկցիայի կիրառումը: Հակառակ դեպքում մասնակից՝ քննիչի տված նկատողությունը պետք է վիճարկի վարույթից հեռացնելու մասին որոշման բողոքարկման շրջանակներում¹⁴:

Եզրակացություն

Նկատողությունը ոչ գույքային բնույթի պատժիչ սանկցիայի տեսակ է, որը ներգործում է դատավարական խախտում թույլ տված անձի հոգեբանության վրա և նպատակաուղղված է դատավարական այլ իրավախախտումների կանխմանը, պարտականությունների կատարման ապահովմանը, ինչպես նաև դատավարական իրավախախտումների նախականիմանը: Նկատողությունը՝ որպես քրեադատավարական սանկցիա, միջամտում է մարդու իրավունքներին, շոշափում է նրա իրավաչափ շահերը, հակառակ դեպքում այն չէր կարող համարվել պատասխանատվության միջոց:

Նկատողության՝ մարդու իրավական կարգավիճակին միջամտության բաղադրիչը, որն արտահայտում է իրավախախտման համար իշխանական դատապարտում (պարսավանք), առնչվում է այնպիսի իրավական բարիքի, ինչպիսին մարդու արժանապատվությունն է: Իսկ երբ անձը կասկածի տակ է դնում իրեն տրված նկատողության հիմքում դրված դատավարական խախտման փաստական հանգամանքները, ապա մարդու արժանապատվության պաշտպանության սահմանադրական բարիքը կարող է համակցվել անմեղության կանխավարկածի համաիրավական սկզբունքի հետ: Նկատողության այն բաղադրիչը, որն արտահայտում է պատշաճ վարքագիծ դրսևորելու կամ իրավասու անձի կարգադրություններին ենթարկվելու հրահանգ, ներգործում է մարդու ազատ գործելու

¹⁴ Ղամբարյան Ա., ԻսրայելյանՇ., Քրեադատավարական սանկցիաները (Գիտագործնական մեկնաբանություններ), «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» հրատ., Երևան, 2022,Բաժին 7:

իրավունքին, քանի որ նկատողության անհատական ակտով մարդու վրա դրվում է կոնկրետ կարգադրությանը ենթարկվելու կամ կոնկրետ վարքագիծ դրսևորելու պարտականություն, ինչը սահմանափակում է մարդու ազատ գործելու հնարավորությունը:

ՀՀ դատավարական իրավունքում «նկատողություն» տեսակի քրեադատավարական սանկցիան ի սկզբանե նախատեսված է եղել որպես «նախազգուշացում», որն, ըստ էության, ոչ թե դատական սանկցիա է, այլ դատական սանկցիա կիրառելու հնարավորության մասին պարզաբանում, դատական սանկցիայի կիրառմանը նախորդող ակտ: Սակայն օրենսդրական զարգացումներն իրավացիորեն բերել են քննարկվող տեսակի սանկցիայի անվանման և բովանդակության փոփոխության, որպիսի պայմաններում նկատողությունը ձեռք է բերել դատավարական սանկցիայի բնույթ:

Նկատողության պահանջները չկատարելը կարող է առաջ բերել օրենսգրքով նախատեսված այլ սանկցիայի կիրառում, ավելին՝ մի շարք սանկցիաների կիրառման համար նկատողություն ստացած լինելը (դրա պահանջները չկատարելը) նախապայման է: Փաստորեն՝ քրեադատավարական մի շարք սանկցիաների կիրառման համար նկատողությունն ունի պրեյուդիցիալ նշանակություն:

Նկատողություն կարող է տրվել բացառապես դատավարական հարաբերությունների շրջանակներում ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու դեպքում: Օրենսդիրը չի հստակեցրել վարույթի այն մասնակիցներին, որոնց կարող է նկատողություն տրվել: Դրա համար, որպես չափանիշ, սահմանված է միայն վարությանին գործողության կատարմանը կամ դատական նիստին մասնակցելը, ինչը նշանակում է, որ տվյալ սանկցիան կարող է կիրառվել վարությանին գործողությանը կամ դատական նիստին մասնակցող՝ դատավարական կարգավիճակ ունեցող անձի կամ այլ անձի նկատմամբ:

Նկատողություն կարող է տրվել նաև դատավարական հարաբերություններին չմասնակցող՝ դատավարական կարգավիճակ չունեցող, սակայն վարությանին գործողություններին կամ դատական նիստին ներկա գտնվող անձանց:

Նկատողություն տրվում է վարությանին գործողությանը կամ դատական նիստին մասնակցող (ներկա գտնվող) անձանց, ուստի տվյալ սանկցիան կիրառելու լիազորությունը, ընդհանուր առմամբ, վերապահված է վարությանին գործողություն կատարող քննիչին և դատարանին, ինչպես նաև դատախազին: Սակայն դատախազի կողմից տվյալ սանկցիայի կիրառումն առավել սահմանափակ կիրառություն կարող է ունենալ՝ պայմանավորված վերջինիս՝ վարության իրականացնող մարմին համարվելու՝ քրեադատավարական փուլային սահմանափակմամբ:

Դատական վարույթը կոլեգիալ կազմով իրականացնելիս՝ նիստը նախազահողի գործառույթներից, սույն աշխատանքում տրված իրավափիլիսոփայական և ձևական իրավաբանական հիմնավորումներից ելնելով, չի բխում նրա կողմից

դատական կազմի մյուս դատավորներին, ինչպես նաև պահեստային դատավորին նկատողություն տալու լիազորությունը:

Եթե մինչդատական վարությամբ հանրային մի մասնակցի կողմից կատարվող վարության գործողությանը մասնակցում է մեկ այլ հանրային սուբյեկտ, ապա նրան նկատողություն չի կարող տրվել:

Վարությի հանրային մասնակիցների կողմից պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը մի կողմից նկատողության կիրառման փաստական հիմք է, մյուս կողմից՝ կարող է դիտարկվել որպես կարգապահական զանցանք: Սակայն նշված մասնակիցների նկատմամբ դատավարական տվյալ տեսակի սանկցիայի կիրառումը բացառում է նույն արարքի համար, որպես կարգապահական տույժ, նկատողություն տալը: Մինչդեռ ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ համալիր խախտումների նույնականացումը պարզելիս, կարևոր է արարքների փաստական հանգամանքների տարբերության բացահայտումը:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ Սահմանադրություն:
RA Constitution.
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք:
RA Criminal Procedure Code.
3. ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք:
RA Code of Administrative Offenses.
4. ՀՀ աշխատանքային օրենսգիրք:
RA Labor Code.
5. Փաստաբանի վարքագծի կանոնագիրք (19.10.2019թ. խմբագրությամբ):
Lawyer's Code of Conduct (edited on 19.10.2019).
6. Ղամբարյան Ա., Իսրայելյան Շ., «Ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից հեռացնելը՝ որպես քրեադատավարական պատասխանատվության միջոց» // Օրենք և իրականություն, 2009, № 11:
Ghambaryan A., Israelyan Sh., “Removing the Defendant from the Courtroom as a Measure of Criminal liability” // Law and Reality, 2009, № 11.
7. Ղամբարյան Ա., Իսրայելյան Շ., Իրավական քաղաքականությունը դատախազների և փաստաբանների նկատմամբ դատական սանկցիաների կիրառման դրոշմում // Օրենք և իրականություն, 2011, № 6 (188):
Ghambaryan, Sh. Israelyan, “Legal Policy in the Field of Applying Judicial Sanctions to Prosecutors and Lawyers” // Law and Reality, 2011, No. 6 (188).
8. Гамбарян А., Исраелян Ш., Ограничение осуществления права как мера уголовно-процессуальной ответственности // Судебная власть и уголовный процесс. 2016. № 2.
Gambaryan A., Israelyan Sh., Limiting the Exercise of Rights as a Measure of Criminal-procedural Responsibility // Judicial Power and Criminal Process. 2016. No. 2.
9. Ղամբարյան Ա., Իսրայելյան Շ., Զրեադատավարական սանկցիաները (Գիտագործնական մեկնաբանություններ), «ՏԻԳՐԱՆ ՄԵՏ» հրատ., Երևան, 2022.
Ghambaryan A., Israyelyan Sh., Criminal Procedural Sanctions (Scientific Comments), “TIGRAN METS” ed., Yerevan, 2022.
10. Липинский Д. А., Хачатуров Р. Л., Общая теория юридической ответственности: монография. С.Пб.: Юридический центр Пресс, 2007. С. 779; Громов Н. А., Полунин С. А. Санкции в уголовно-процессуальном праве России. М.: Городец, 1998. С. 86-87.
Lipinsky D. A., Khachaturov R. L., General Theory of Legal Responsibility: Monograph. S.Pb. Legal Center Press, 2007. P. 779, Gromov N. A., Polunin S. A. Sanctions in the Criminal Procedure Law of Russia. M.: Gorodets, 1998. S. 86-87.

11. Долгих И. П., Предупреждение и устное замечание: к вопросу о разграничении юридических терминов // Актуальные проблемы правовой науки. Сборник статей Международной научно-практической конференции, Уфа, 10 сентября 2014 года. Уфа. 2014. С. 14.
Dolgikh I. P., Warning and Oral Remark: On the Issue of Delimitation of Legal Terms // Actual Problems of Legal Science. Collection of Articles of the International Scientific and Practical Conference, Ufa, September 10, 2014. Ufa. 2014. S. 14.
12. Ветрова Г. Н., Уголовно-процессуальная ответственность. М.: Наука, 1987.
Ветрова G. N., Criminal-procedural Responsibility. M.: Science, 1987.
13. Громов Н.А., Полунин С.А., Санкции в уголовно-процессуальном праве России. М.: Городец, 1998.
Gromov N.A., Polunin S.A., Sanctions in Criminal Procedural Law of Russia. M.: Gorodets, 1998.
14. Вепрев В. С., Основания уголовно-процессуальной ответственности. М.: Юрлитинформ, 2007..
Veprev V. S., Grounds of Criminal Procedural Liability. M.: Yurlitinform, 2007.

Shushanik Israyelyan

*Deputy Head of the Department for Combating Crimes against
Humanity of the Prosecutor General's Office of the Republic of Armenia*

CONSIDERATION AS A CRIMINAL SANCTION¹

Abstract

In the list of types of liability traditionally distinguished in the legal system of Armenia, procedural, including criminal, liability was not included. The 1998 edition of the RA Criminal Procedure Code also lacked the concepts of “criminal liability” or “judicial sanction”, but separate procedural norms contained procedural liability measures.

When judicial sanctions were first introduced into the judicial system of the Republic of Armenia, the reprimand type sanction was identified with a warning in a certain content sense. Thus, on 21.02.2007 The concept of “judicial sanction” was established for the first time by the RA Judicial Code. On the same day in 1998 RA Cr. judge Or. was supplemented by Article 314.1, which included the warning in the system of judicial sanctions.

Статья посвящена анализу практических проблем прокурорского надзора за законностью применения наказания в виде лишения свободы и выявлению путей решения этих проблем.

Несмотря на то что Закон Республики Армения «О прокуратуре» и Уголовно-исполнительный кодекс Республики Армения определяют соответствующие правовые нормы прокурорского надзора за законностью применения наказаний и других мер принуждения, на наш взгляд, указанные правовые нормы не соответствуют сущности и смыслу полномочий прокуратуры, предусмотренных пунктом 5 части 2 статьи 176 Конституции Республики Армения.

В силу вышеуказанной конституционной юрисдикции Прокуратура Республики Армения уполномочена осуществлять контроль за законностью применения наказаний и других мер принуждения, из чего следует, что Прокуратура должна быть уполномочена применять меры прямого прокурорского вмешательства при осуществлении этих полномочий, поскольку, согласно действующему законодательству, Прокуратура Республики Армения по содержанию выполняет роль наблюдателя и при обнаружении правового акта, противоречащего законодательству, не отменяет его, а вносит в орган, исполняющий наказание, ходатайство о пересмотре деяния, противоречащего законодательству, либо вносит такое ходатайство после приостановления действия указанного деяния. Примечательно, что, согласно позиции Прокуратуры, противоречащий законодательству акт может остаться неизменным в результате окончательного рассмотрения в установленном законодательством порядке, а Прокуратуре не предоставлена законная возможность сделать законность такого решения предметом судебного обсуждения.

В статье рассмотрены вопросы прокурорского надзора за законностью наказаний и других средств принуждения в виде лишения свободы, а также рассмотрены пути решения этих проблем.

Ключевые слова: наказание; прокурорский надзор; лишение свободы; законность.

⁵ Статья была представлена 04.09.2023 и прошла рецензирование 15.11.2023.

Քրիստինե Գաբուզյան

*ՀՀ գլխավոր դատախազի խորհրդակցական,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս*

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ¹

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի կիրառությանն առնչվող հիմնախնդիրներին: Հոդվածում ուսումնասիրվում են հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի կիրառության համար անհրաժեշտ չափանիշները, պայմանները, պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունները:

Հոդվածում զուգահեռներ են անցկացվում հայցային վաղեմության ժամկետի կասեցման և վերականգնման ինստիտուտների միջև, և քննարկվում է հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի գոյության անհրաժեշտությունը:

Արդյունքում, միջազգային փորձի հաշվառմամբ, հիմնավորվում է հայցային վաղեմության ժամկետի վերականգնումը որպես առանձին ինստիտուտ նախատեսելու աննպատակահարմարությունը՝ հաշվի առնելով նաև դրանից բխող գործնական խնդիրները:

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վերականգնման համար անհրաժեշտ համարվող այնպիսի պայմաններ, ինչպիսիք այդ հանգամանքների՝ անձի հետ կապված լինելն է, միայն ֆիզիկական անձի կողմից միջնորդություն ներկայացնելը, իրականում պետք է բացառվեն՝ նկատի ունենալով նաև պրակտիկայում տրված մեկնաբանությունները, իսկ մյուս պայմանները՝ հանգամանքների բացառիկությունն ու հարգելիությունը, ինչպես նաև այդ հանգամանքների տեղի ունենալը հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում, լիովին տեղավորվում են կասեցման հիմքերին ներկայացվող պահանջներում: Իսկ մի բանի համար, որը կարող է լիովին տե-

¹ Հոդվածը ներկայացվել է 08.10.2023թ., գրախոսվել է 13.11.2023թ.:

ղավորվել կասեցման ինստիտուտի ներքո, կարիք չկա ունենալ լրացուցիչ ինստիտուտ՝ հայցային վաղեմության ժամկետի վերականգնում՝ մանավանդ, նկատի ունենալով, որ այն որևիցե խնդիր չի լուծում, և դեռ ավելին՝ ավելացնում է անորոշությունն ու առաջացնում կիրառման դժվարություններ, հակասություններ, ուստիև առաջարկում ենք հրաժարվել բաց թողնված հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու կառուցակարգից և սահմանափակվել միայն կասեցման ինստիտուտի գոյությամբ:

Հիմնաբառեր – հայցային վաղեմություն, ժամկետ, կասեցում, վերականգնում, բացառիկ դեպք, հարգելի ճանաչել:

Ներածություն

Դեպքերի մեծամասնությունում հայցային վաղեմությունը սկսվելով հոսում է անընդհատ: Սակայն օրենքը հաշվի է առնում, որ իրական կյանքում կարող են առաջանալ այնպիսի հանգամանքներ, որոնք խոչընդոտում են (կամ առնվազն դժվարացնում են) իրավագոր անձին հայց ներկայացնել վաղեմության ժամկետի սահմաններում²: Օրենսդիրը չի կարող հաշվի չառնել նման հանգամանքների գոյությունը և դրանց հետ չկապել համապատասխան իրավական հետևանքներ, ուստի, նկատի ունենալով նշվածը, նախատեսել է համապատասխան կառուցակարգեր, որոնց թվում նաև՝ հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտը:

Այսպես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի³ (այսուհետ նաև՝ ԶՕ) «Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելը» վերտառությամբ 342-րդ հոդվածը սահմանում է՝

«Բացառիկ դեպքերում, երբ դատարանը հայցվորի անձի հետ կապված հանգամանքների (ծանր հիվանդության, անօգնական վիճակի, անգրագիտության և այլն) հաշվառմամբ հարգելի է ճանաչում հայցային վաղեմության ժամկետի բացթողումը, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության: Հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները կարող են ճանաչվել հարգելի, եթե դրանք տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում»:

Հոդվածի տառացի մեկնաբանությունից բխում է, որ հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու համար կարևոր է որոշակի պայմանների միաժամանակյա առկայություն.

² Տե՛ս Мозолин В. П., Масляев А. И., Гражданское право, в 2-х ч., Ч. 1, М.: Изд. Юристъ, 2005, <https://jurisprudence.club/pravo-grajdanskoe/priostanovlenie-pereryiv-vosstanovlenie.html> (մուտք 22.08.2022թ.):

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքը, ՀՕ-239, ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

1. հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հիմք հանդիսացող հանգամանքների «բացառիկությունը»,
2. հանգամանքների՝ «անձի հետ կապված» լինելը,
3. հանգամանքների հարգելիությունը,
4. միայն տուժող *քաղաքացու* կողմից վերականգնման հարցի բարձրացումը,
5. վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվան կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում տեղի ունենալը:

Հարկ է նկատի ունենալ, որ թեպետ հայցային վաղեմությունը քաղաքացիական իրավունքին առավել վաղ հայտնի ինստիտուտներից է, այնուամենայնիվ մինչև օրս առկա կարգավորումները տարրնկալումների, տարատեսակ մեկնաբանությունների տեղիք են տալիս: Դիցուք՝ հայցային վաղեմության ժամկետի վերականգնման ինստիտուտի կիրառության համար նախանշված պայմանների առնչությամբ հաճախ ականատես ենք լինում ոչ միատեսակ, հակադիր դիրքորոշումներ արտահայտող դատական պրակտիկայի: Այսպես, դատարանները տարբեր կերպ են մեկնաբանում «անձի հետ կապված հանգամանքներ» ձևակերպումը, ավելի լայն մեկնաբանելով համապատասխան նորմերը՝ հայցային վաղեմության ժամկետի կիրառությունը տարածում են նաև իրավաբանական անձանց նկատմամբ: Անորոշություն է առկա նաև հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի կիրառության ժամկետների առնչությամբ. մասնավորապես՝ որքա՞ն պետք է լինի համապատասխան հանգամանքների տևողությունը՝ որպես խոչընդոտ որակվելու և հարգելի ճանաչվելու համար, և որքա՞ն ժամանակ է տրամադրվում անձին դրանք դադարելուց հետո իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար:

Նշված անորոշությունն ու պրակտիկ խնդիրները պայմանավորված են նաև նրանով, որ չնայած հայցային վաղեմության՝ հնագույն ինստիտուտ լինելուն, դրան նվիրված կարգավորումները ժամանակի ընթացքում մնացել են գրեթե անփոփոխ, ինչը խնդրահարույց է զարգացող և արագ փոփոխվող քաղաքացիական իրավահարաբերությունների պարագայում:

Այս ամենը վկայում է, որ հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի կիրառության համար անհրաժեշտ պայմաններից յուրաքանչյուրն առանձին ուսումնասիրության կարիք ունի՝ դրանց կիրառության ընթացքում ի հայտ եկող խնդիրներն ուրվագծելու և իրավահարաբերության կողմերի, քաղաքացիական շրջանառության մասնակիցների և ողջ հանրության շահերին համահունչ և իրավական որոշակիությանը համապատասխանող կարգավորումներ նախատեսելու նպատակով:

1. Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հիմք հանդիսացող հանգամանքների «բացառիկությունը»

Առաջին չափանիշը, որով իրավասու մարմինը պետք է առաջնորդվի անձի հետ կապված այս կամ այն հանգամանքը որպես բաց թողնված հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հիմք գնահատելիս, «բացառիկությունն» է⁴:

Ինքնին հողվածում այս կամ այն հանգամանքի՝ վերականգնման հիմք լինելը գնահատելու համար որպես ուղենիշ նշված հանգամանքները՝ «ծանր հիվանդություն», «անօգնական վիճակ», «անգրագիտություն» (նամանակավանդ վերջին երկուսը) վկայում են նման դեպքերի հազվագյուտ լինելու, այսինքն՝ բացառիկության⁵ մասին:

Այսպես, օրինակ, անգրագիտության բացառիկության վկայությունը Հայաստանում անգրագիտության ցածր մակարդակն է. 2011թ.-ի մարդահամարի տվյալներով գրաճանաչ չէ Հայաստանի բնակչության միայն 0,3 տոկոսը⁶:

Նշենք նաև, որ սկնհայտ է, որ խոսքը վերաբերում է ընդհանուր անգրագիտությանը, այն չի կարող վերաբերել իրավական անգրագիտությանը⁷, ինչպես նաև այն դեպքերին, երբ անձը պարզապես չի տիրապետում լեզվին (թեպետ ռուսական գրականության մեջ որպես անգրագիտության օրինակ նշվել է նաև այն դեպքը, երբ հայցվորը չի տիրապետում ռուսաց լեզվին⁸): Անշուշտ, պետական

⁴ Պետք է նշել, որ ՔՕ 342-րդ հոդվածի ձևակերպումն այնքան էլ հաջողված չենք համարում. սահմանումից թվում է, թե «բացառիկությունը» վերաբերում է ոչ թե հայցվորի անձի հետ կապված հանգամանքներին, այլ այն դեպքերին, երբ դատարանն իրավասու է հարգելի ճանաչել ժամկետի՝ այդ հանգամանքներով պայմանավորված բացթողումը:

⁵ «Բացառիկ» բառը բնորոշվում է որպես 1. արտակարգ, արտասովոր, 2. բացառություն կազմող, տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 1, Գլխ. խմբ.՝ Ա. Ս. Ղարիբյան, ՀՄՍՀ ԳԱ, Հր. Աճառյանի անվ. լեզվի ին-տ., Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 306, http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%A2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BC%D5%AB%D5%AF (մուտք 22.08.2022թ.):

Գրեթե նույն բնորոշումն է տալիս նաև Աղայանի բառարանը՝ 1. բացառություն կազմող, ընդհանուր կարգից՝ կանոնից բացառվող, 2. հազվագյուտ, արտակարգ, 3. միայն տվյալ անձին՝ կոլեկտիվին մարմնին պատկանող՝ վերաբերող, տե՛ս Արդի հայերենի բացատրական բառարան, հատոր 1, Է. Բ. Աղայան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, էջ 182, <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&query=%D5%A2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BC%D5%AB%D5%AF> (մուտք 22.08.2022թ.) (Explanatory Dictionary of Modern Armenian, Volume 1:

⁶ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական - վերլուծական զեկուլյց, ըստ 2017թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, Երևան, 2018, https://www.armstat.am/file/article/poverty__2018-arm.pdf (մուտք 22.08.2022թ.):

⁷ St'u Sdelki, predstavitel'stvo, iskovaya давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации /отв. ред. А. Г. Карапетов, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ - Павлов А. А. М.: Изд. М-Логос, 2018, էջ 1242, Երևան քաղաքի Արարիկի և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2013թ. նոյեմբերի 1-ի թիվ ԵԱՔԳ/0887/02/13 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

⁸ St'u Sdelki, predstavitel'stvo, iskovaya давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации /отв. ред. А. Г. Карапетов, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ - Павлов А. А. М.: Изд. М-Логос, 2018, էջ 1242:

լեզվին չտիրապետելը կարող է դժվարություն առաջացնել իրավունքների խախտման մասին իմանալու կամ դրանց պաշտպանության իրականացմանը ձեռնամուխ լինելու հարցում, սակայն ինքնին անգրագիտության վկայություն չէ:

Լեզվին չտիրապետող անձի նկատմամբ պահանջները, ի տարբերություն ընդհանուր անգրագիտություն ունեցող անձի, ավելի խիստ են, նրանից ավելի մեծ շրջահայացություն է պահանջվում: Օրինակ՝ եթե փաստաթղթի բովանդակությունը սխալ հասկանալը, որի պատճառով անձը բաց է թողել հայցային վաղեմության ժամկետը, վերականգնման հիմք պետք է հանդիսանա անգրագետ անձի պարագայում, նույն նշանակությունը չպետք է ունենա պարզապես լեզվին չտիրապետող անձի համար, քանի որ վերջինս, հասկանալով իր՝ լեզվին բավարար չափով չտիրապետելու փաստը, պարտավոր էր հաշվի առնել սխալ հասկանալու ռիսկերը և փաստաթղթի բովանդակությունը պարզելու համար դիմել լեզվին տիրապետող որևիցե անձի կամ թարգմանչի օգնությանը: Նման դեպքում բացակայում է վերականգնելու համար անհրաժեշտ բացառիկությունը:

Ո՛չ իրավաբանական գրականության և ո՛չ էլ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ չտվեց հայտնաբերել, թե ինչն է ընկալվում վերականգնման հաջորդ հիմքի՝ «անօգնական վիճակի» ներքո:

Հետաքրքիր է այն, որ քրեական իրավունքում «անօգնականությունը» որոշ հետինակներ բնորոշում են հենց քաղաքացիաիրավական կատեգորիաների միջոցով՝ «անօգնական» եզրույթի տակ ընդգրկելով անձի ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված հանգամանքների լայն շրջանակ (այդպիսիների թվին են դասվում դատական կարգով սահմանափակ գործունակ ճանաչված անձինք կամ ծանր հոգեկան խանգարումներից տառապող և մասնագիտացված բժշկական հաստատությունում հաշվառված անձինք⁹, ծանր հիվանդներ, տարեցներ, անգիտակից վիճակում գտնվողներ, ծանր ալկոհոլային, թմրանյութային, թունային հարբածության տակ գտնվողներ և այլն¹⁰), որոնց մեծամասնությանը, սակայն, չի կարող իրավական նշանակություն տրվել քաղաքացիական իրավա-հարաբերություններում՝ բաց թողնված հայցային վաղեմության ժամկետները վերականգնելու ինստիտուտի կիրառության համատեքստում¹¹:

Իրականում անօգնական վիճակը կարող է պայմանավորված լինել բազմա-

⁹ Стів Шарикова В. С., Скрипченко Н. Ю., «Беспомощное состояние потерпевшего»: доктринальное определение и правоприменительная практика // Таврический научный обозреватель, № 3 (ноябрь), 2015, էջ 145:

¹⁰ Стів Варданыя А. В., Безручко Е. В., К вопросу о неоднозначной оценке беспомощного состояния в практике верховного суда российской федерации, журнал Известия Тульского государственного университета. Экономические и юридические науки, №3-2, 2015, էջ 11:

¹¹ Օրինակ՝ գործերից մեկով դատարանը նշել է, որ որպես բացառիկ դեպք վկայակոչած՝ հայցվորի տարիքը (ծնված՝ 18.10.1951թ.) բացառիկ դեպք չէ և հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու պատճառ չի կարող հանդիսանալ: Տե՛ս Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2013թ. նոյեմբերի 1-ի թիվ ԵԱՔԴ/0887/02/13 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

պիսի հանգամանքներով՝ ինչպես առողջական, տարիքային (անչափահասների դեպքում), այնպես էլ այլ պատճառներով¹²:

Այս առումով կարծում ենք, որ «ծանր հիվանդությունը» որպես առանձին հիմք նշելը տեղին չէ, քանի որ նախ՝ այն կարող է լիովին տեղավորվել «անօգնական վիճակի» ներքո (այն հանգամանքը, որ հարգելի ճանաչելու հիմք հանդիսացող հանգամանքների շրջանակում չեն կարող ներառվել այն դեպքերը, երբ անձն ունեցել է ներկայացուցչի միջոցով հանդես գալու հնարավորություն¹³, վկայում է այն մասին, որ ծանր հիվանդությունների տակ օրենսդիրը նկատի է ունեցել հենց այն դեպքերը, երբ անձը գտնվում է անօգնական վիճակում, ինչը, կարծում ենք, ավելի համահունչ է նաև բացառիկության հատկանիշին), և բացի այդ, ինքնին նման կատեգորիան բժշկական տեսանկյունից այդքան էլ ճիշտ չէ¹⁴. Թերևս այդ է պատճառը, որ օրենսդրության մեջ տվյալ կատեգորիան կիրառելիս, որպես կանոն, նույն ակտով սահմանվում է նաև այն, թե որոնք են տվյալ ակտով կարգավորվող հարաբերությունների տեսանկյունից համարվում ծանր հիվանդություններ¹⁵, որպիսի մոտեցումը, այսինքն՝ սպառնիչ ցանկի նախատեսումը, անհնար է հայցային վաղեմության վերականգնման ինստիտուտի պարագայում:

Բացի այդ, ոչ բոլոր «ծանր հիվանդությունները» և ոչ միշտ են կարող խոչընդոտել իրավունքների պաշտպանությունն իրականացնելուն: Օրինակ՝ հոգեկան խան-

¹² Որպես անօգնական վիճակի օրինակ գրականության մեջ նշվել է այն դեպքը, երբ հայցվորը պահվել է որպես զերի: Տե՛ս Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации / отв. ред. А. Г. Карапетов, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ - Павлов А. А.; М.: М-Логос, 2018, էջ 1242:

¹³ Տե՛ս Тархов В. А., Гражданское право. Общая часть: Курс лекций. Чебоксары: Чув. кн. изд-во, 1997, էջ 246, Վճռաբեկ դատարանի՝ 2016թ. հուլիսի 22-ի թիվ ԵՄԳ/2775/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

¹⁴ Հիվանդությունների դասակարգման չափանիշների մասին տե՛ս Порядин Г. В., Введение в патофизиологию. Предмет и задачи патофизиологии, Лекция 1, <https://medknigaservis.ru/wp-content/uploads/2019/01/NF0011912.pdf> (մուտք 22.08.2022թ.), Патофизиология: учебник: в 2 т. / под ред. В. В. Новицкого, Е. Д. Гольдберга, О. И. Уразовой, 4-е изд., перераб. и доп., ГЭОТАР-Медиа, 2009, Т. 1, <https://fnkcr.ru/elib/resource20.pdf> (մուտք 22.08.2022թ.), Ефремов А. В., Начаров Ю. В., Самсонова Е. Н., Основы общей нозологии: Учебное пособие, Новосибирск, 2006, <https://studfile.net/preview/2705074/page/6/>, (մուտք 22.08.2022թ.):

Թեև բժշկական գրականության մեջ հանդիպում է դեպք, երբ դասակարգման հիմքում որպես սկզբունք դրված է ծանրությունը, սակայն այդտեղ խոսքը հիվանդի վիճակի ծանրության մասին է (ժայրահեղ ծանր, ծանր, միջին և թեթև աստիճանի ծանրություն): Տե՛ս Курс лекций по патофизиологии: учебное пособие для студентов медицинских вузов: в 4-х ч., Ч. 1, Ю. Ю. Бяловский [и др.] / под ред. Ю. Ю. Бяловского, В. В. Давыдова, Рязань, 2018, 2018, էջ 23, <https://rzgmu.ru/images/files/6/13090.pdf> (մուտք 22.08.2022թ.):

¹⁵ Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության՝ «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշման հավելված 2-ով հաստատված է պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդությունների ցանկը (ընդունվել է 26.05.2006թ., ուժի մեջ է մտել 16.07.2006թ., ՀՀԳՏ 2006.07.06/36(491) Հոդ.781):

գարումներն ամենատարբեր բնույթի ու ծանրության են լինում, սակայն անկախ ծանրությունից՝ իրավունքների պաշտպանությունն իրականացնելու խոչընդոտ են միայն, եթե հոգեկան խանգարման հետևանքով անձը առհասարակ կամ տվյալ կոնկրետ ժամանակահատվածում չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ դեկլարել դրանք՝ անկախ անգործունակ ճանաչված լինելու հանգամանքից: Անգամ ծանրագույն հիվանդությունների դեպքում, օրինակ՝ ցրված կամ բազմակի սկլերոզի¹⁶ հազվադեպ տեսակի՝ չարորակ ցրված կամ բազմակի սկլերոզի՝ Մարբուրգի հիվանդության դեպքում մի քանի ամիս շարունակ անձը կարող է գտնվել կոմատոզ վիճակում, որից հետո նկատվի դրական դինամիկա¹⁷:

Ստացվում է՝ «անօգնական վիճակը» լայն հասկացություն է, որը ներառում է նաև ծանր հիվանդությամբ պայմանավորված իրավունքների պաշտպանությանը ձեռնամուխ լինելու անկարողությունը, իսկ «ծանր հիվանդություն» եզրույթն, ինչպես տեսանք, ամորոշ է և դրանով իսկ, կարծում ենք, տարաբնույթ մեկնաբանության ու հետևաբար նաև ոչ միատեսակ կիրառման ռիսկեր է պարունակում:

2. Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հիմք հանդիսացող հանգամանքների՝ «անձի հետ կապված» լինելը

Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի կիրառության համար բավարար չէ հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու պատճառ հանդիսացած հանգամանքների բացառիկությունը. «բացառիկ» հիմքերը պետք է կապված լինեն հենց պարտատիրոջ հետ, ընդ որում՝ պահանջվում է, որ այդ հիմքերը լինեն *«անձի հետ կապված»*: Բոլոր այն հանգամանքները, որոնք կապված են պատասխանողի¹⁸ կամ այլ անձանց հետ և թեկուզ իրականում խոչընդոտել են հայցվորի՝ իր իրավունքների պաշտպանությանը ձեռնամուխ լինելուն, չեն կարող համարվել հարգելի¹⁹:

Իսկ ինչ նկատի ունի օրենսդիրը «անձի հետ կապված» հանգամանքի ներքո: ԹՕ 342-րդ հոդվածում թվարկված հիմքերի՝ իրավակիրառողի համար ուղղորդիչ նշանակություն ունեցող ոչ սպառիչ ցանկը թույլ է տալիս եզրահանգել, որ

¹⁶ Վերջինս ինքնին լայն տարածված հիվանդություն չէ: 2020թ, տվյալներով ամբողջ աշխարհում գրանցված է 2,8 միլիոն հիվանդության դեպք տարբեր երկրներում և պոպուլյացիաներում տարբեր հաճախականությամբ, Atlas of MS, 3rd edition, PART 2: Clinical management of multiple sclerosis around the world, Key findings about the diagnosis and clinical management of MS, MS international federation, April 2021, <https://www.msif.org/wp-content/uploads/2021/05/Atlas-3rd-Edition-clinical-management-report-EN-5-5-21.pdf> (access 24.04.2023):

¹⁷ Տե՛ս Волошина Н. П., Зозуля И. С., Егоркина О. В., Костюковская А. Е., Рассеянный склероз с фульминантным течением, Академия дистанционное обучение, Укр. мед. Часопис, №4 (84) VII - VIII, 2011, էջ 36-38, <https://www.umj.com.ua/article/16414/rasseynnyj-skleroz-s-fulminantnym-techeniem> (մուտք 22.08.2022թ.):

¹⁸ Տե՛ս Гражданское право: учебник, Т. 1 / под редакцией А. П. Сергеева, Ю. К. Толстого, . М.: Изд. “Проспект”, 2005, էջ 375:

¹⁹ Տե՛ս ի թիվս այլնի Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ԱՎԴ3/0144/02/12 քաղաքացիական գործով կայացված որոշումը:

թերևս «անձի հետ կապված հանգամանք» ձևակերպումը միտված է ընդգծելու այդ հանգամանքների «սուբյեկտային» բնույթը, որոնք ի տարբերություն կասեցման հիմքերի՝ միայն կոնկրետ անձին առնչվող հանգամանքներ են:

Այսպես, գործերից մեկով Վերաքննիչ դատարանը նշել է՝ «... հայցային վաղեմության ժամկետի վերականգնման համար հարգելի ճանաչվող հանգամանքները պետք է ունենան ընդհանուր հատկանիշներ նույն հոդվածում նշված օրինակների հետ: Այդպիսի օրինակների վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանց հիմքում դրված է մեկ ընդհանուր հատկանիշ՝ հայցվորի համար իր անձի հետ կապված՝ իրավունքների և պարտականությունների իրացման անհնարինություն ստեղծող որոշակի օբյեկտիվ իրադրություն, որպիսի պայմաններում հայցվորը, սուբյեկտիվ անկարողությունից ելնելով, չի կարողացել իրացնել օրենքով սահմանված ժամկետում հայց ներկայացնելու իրավունքը»²⁰:

«Անձի հետ կապված հանգամանքներ» ձևակերպումն իրականում սահմանափակում է հայցային վաղեմության ժամկետի վերականգնման ինստիտուտի կիրառման հնարավորությունը՝ դրանից բխող բացասական հետևանքներով²¹. «անձի հետ կապված հանգամանք» ձևակերպման նման սահմանափակ մեկնաբանումը պրակտիկայում խնդիրներ է հարուցում՝ հանգեցնելով հակասական դատական պրակտիկայի²²:

Պետք է նշել, որ պրակտիկան իրականում առաջ է գնացել և չի սահմանափակվում հոդվածի տառացի մեկնաբանությամբ: Մանավանդ անտեղին է դառնում նշված հատկանիշի կիրառումը նաև իրավաբանական անձանց նկատմամբ ինստիտուտի գործողությունը տարածելու պարագայում²³:

Բացի այդ, որպես բաց թողնված հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հիմք նշված այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են այլ անձանց կողմից խոչընդոտներ ստեղծելը կամ փաստաթղթերի ահռելի, անկանոն կուտակումները²⁴ դատարանները չեն համարել հարգելի հիմքեր՝ պատճառաբանելով

²⁰ Տե՛ս Վերաքննիչ դատարանի՝ 2019 հունիսի 6-ի թիվ ԵԱՔԳ/3849/02/15 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

²¹ Գրականության մեջ ևս ընդգծվել է «հայցվորի անձի հետ կապված հանգամանքներով» ձևակերպումից ազատվելու անհրաժեշտությունը: Տե՛ս Տլանով Գ. Թ., Некоторые проблемы применения исковой давности //Научный альманах. N 7 (9), 2015, էջ 1156, <http://ucom.ru/doc/na.2015.07.1154.pdf> (մուտք 22.08.2022թ.):

²² Օրինակ՝ հարազատների հիվանդության, նրանց նկատմամբ խնամք իրականացնելու հանգամանքի՝ որպես վերականգնման հիմքի կապակցությամբ պրակտիկայում տարբեր մոտեցումներ են արտահայտվել: Տե՛ս Վերաքննիչ դատարանի՝ 2019 հունիսի 6-ի թիվ ԵԱՔԳ/3849/02/15 քաղաքացիական գործով կայացրած որոշումը և Վճռաբեկ դատարանի՝ 2007 թ. նոյեմբերի 9-ի թիվ 3-1133(ՎԳ) քաղաքացիական գործով կայացրած որոշումը :

²³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2016թ. հունիսի 22-ի թիվ ԵՄԳ/2775/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

²⁴ Տե՛ս Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի 2020թ. օգոստոսի 28-ի թիվ ԵԳ/21599/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը և Վերաքննիչ դատարանի՝ 2020թ. օգոստոսի 21-ի թիվ ՏԳ/2323/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

դրանց՝ հայցային վաղեմության ժամկետները լրանալուց ավելի քան վեց ամիս առաջ տեղի ունեցած լինելու հանգամանքը, այլ ոչ թե անձնական բնույթի բացակայությունը:

Այսինքն՝ ըստ էության չի բացառվում, որ եթե դրանք տեղի ունենային վերջին վեց ամսվա ընթացքում, դատարանը կանդրադառնար դրանք հարգելի ճանաչելու հնարավորությանը:

Այսպես, որպես հարգելի կարող են դիտվել նաև հանգամանքներ, որոնք, կապված չլինելով հայցվորի մեղքի, անփութության կամ անուշադրության հետ, անհնար կամ ծայրահեղ դժվարին են դարձնում իրավունքների պաշտպանությունը. օրինակ՝ ռուսական դատական պրակտիկայում նրանց թվին է դասվել բուժ-հաստատության վարչակազմի կողմից անգործունակին խնամակալ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փոխանցման տևական ձգձգումը²⁵:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի կիրառման համար պարտադիր պայման չէ այս կամ այն հանգամանքի՝ հայցվորի անձի հետ կապված լինելը, ընդ որում, այդպիսիք կարող են որակվել նաև այլ անձանց կողմից ստեղծվող խոչընդոտները:

3. Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հիմք հանդիսացող հանգամանքների հարգելիությունը

Վերը քննարկված հանգամանքներն ինքնին բավարար չեն կոնկրետ հանգամանքը հայցային վաղեմության ժամկետը վերականգնող հիմք դիտելու համար. անհրաժեշտ է, որ այդ հանգամանքներն իրենց բնույթով լինեն հարգելի:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հարգելիության չափանիշին, նշել է, որ նկատի ունենալով այն, որ հայցային վաղեմության ժամկետի բացթողումը կարող է պայմանավորված լինել նաև օբյեկտիվ հանգամանքներով, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածում նախատեսել է հայցային վաղեմության ժամկետի բացթողումը դատարանի կողմից հարգելի ճանաչելու կառուցակարգ²⁶:

«Հարգելիությունը» որոշելու չափանիշ պետք է դիտվի այն, թե որքանով է կոնկրետ հանգամանքը խոչընդոտել իրավունքների պաշտպանությունն իրականացնելուն: Ընդ որում, նշված շրջանակում չեն կարող ներառվել այն դեպքերը, երբ անձը գրկված չէ ներկայացուցչի միջոցով հանդես գալու հնարավորությունից²⁷:

Հարգելի չեն կարող համարվել այն դեպքերը, երբ ժամկետի բացթողումը ան-

²⁵ Ст'я Определение ВС РФ от 25 ноября 2014 г. № 78-КГ14-36. http://www.supcourt.ru/stor_pdf.php?id=622776 (մուտք 22.08.2022թ.):

²⁶ Ст'я Վճռաբեկ դատարանի՝ 2016թ. հուլիսի 22-ի թիվ ԵՄԳ/2775/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

²⁷ Ст'я Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ԱՎԳ3/0144/02/12 քաղաքացիական գործով կայացրած որոշումը, Վճռաբեկ դատարանի՝ 2016թ. հուլիսի 22-ի թիվ ԵՄԳ/2775/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

ձի մեղավորության, այդ թվում՝ անփութության արդյունք է: Օրինակ՝ դատական պրակտիկայում իրավամբ հարգելի չեն ճանաչվում հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու այնպիսի պատճառներ, ինչպիսիք վիճելի հրամանները (կարգապահական տույժի կիրառման և աշխատանքից ազատելու մասին) օրենքով սահմանված կարգով և ժամկետներում դատարանում վիճարկելու փոխարեն իրավունքների պաշտպանությունը արտադատական կարգով իրականացնելու փորձը²⁸, հայց ներկայացնելու համար ամբողջական փաստաթղթեր չունենալը²⁹, ինչպես նաև հայցադիմումը վերադարձնելուց հետո դատարանի կողմից սահմանված ժամկետում թերությունները շտկելու և կրկին հայցադիմումը ներկայացնելու փոխարեն՝ դատարանի որոշումը բողոքարկելը³⁰:

4. Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու համար դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտը

Մյուս պայմանը, որը բխում է հողվածի տառացի մեկնարանությունից, այն է, որ հայցային վաղեմության ժամկետի վերականգնման հարցը կարող է դրվել միայն տուժող քաղաքացու կողմից:

Այս տեսանկյունից ՀՀ դատական պրակտիկան մեկ քայլ առաջ է: Վճռաբեկ դատարանն իր՝ 2016թ. հուլիսի 22-ի թիվ ԵՄԴ/2775/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ³¹, իրացնելով իրեն վերապահված իրավունքի զարգացմանը նպաստելու գործառնությունը (մինչ այդ Վճռաբեկ դատարանը ևս արձանագրել էր, որ որպես հայցային վաղեմության ժամկետի վերականգնում հայցող սուբյեկտ կարող են հանդես գալ բացառապես ֆիզիկական անձինք³²), նշել է, որ որպես հայցային վաղեմության ժամկետի վերականգնում՝ հայցող սուբյեկտ կարող են հանդես գալ ոչ միայն ֆիզիկական անձինք, այլև իրավաբանական անձինք: Թեպետ, պետք է նշել, որ անգամ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումից հետո էլ դատարանները շարունակում են 342-րդ հոդվածը չկիրառելու հիմքում դնել իրավաբանական անձանց նկատմամբ վերականգնման ինստիտուտի կիրա-

²⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019թ. դեկտեմբերի 11-ի թիվ ԾԴ-1/0848/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը, Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 24-ի թիվ ԿԴ3/1217/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը, ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2016թ.-ի մայիսի 5-ի թիվ ԱՎԴ/3507/02/15 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

²⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019թ. մարտի 4-ի թիվ ԾԴ/3951/02/18 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

³⁰ Տե՛ս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020թ. մարտի 17-ի թիվ ԵԴ/36304/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

³¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2016թ. հուլիսի 22-ի թիվ ԵՄԴ/2775/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

³² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2013թ. հոկտեմբերի 4-ի թիվ ԱՎԴ3/0144/02/12 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

ռելի չլինելը³³ արդյունքում շեղվելով Վճռաբեկ դատարանի կողմից խնդրո առարկա նորմին տրված մեկնաբանությունից:

5. Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի կիրառության ժամկետային պայմանները

Հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու պատճառները կարող են հարգելի ճանաչվել, եթե նրանք տեղի են ունեցել վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվան կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում:

Նշված կարգավորումից, սակայն, հստակ չէ, թե համապատասխան հանգամանքների տևողությունն ինչքան պետք է լինի՝ որպես խոչընդոտ որակվելու և հարգելի ճանաչվելու համար, և որքան ժամանակ է տրամադրվում անձին դրանք դադարելուց հետո իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար:

Վճռաբեկ դատարանը փորձ է արել բացատրել նշված դրույթը, մասնավորապես նշել է հետևյալը՝ «հողվածի հիշատակված դրույթում ամրագրված հանգամանքները պետք է տեղի ունենան հայցային վաղեմության վերջին վեց ամիսների ընթացքում և տևեն մինչև ժամկետի ավարտը: Այլ կերպ՝ եթե հարգելի հանգամանքներն ի հայտ են եկել վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, սակայն վերացել են մինչև ժամկետի ավարտը, և անձն ունեցել է հայց ներկայացնելու ժամանակ, սակայն բաց է թողել այն, ուրեմն բացթողումը հարգելի համարվել չի կարող»³⁴:

Չենք կարծում, թե Վճռաբեկ դատարանի պարզաբանումը հստակություն և որոշակիություն է մտցնում բարձրացված հարցերում: Ընդհակառակը, կարծում ենք, որ այն իրավունքների խախտման վտանգ է պարունակում՝ նկատի ունենալով, որ հայց ներկայացնելու համար բավարար է դիտվում վեցամսյա ժամանակահատվածից զգալիորեն պակաս ցանկացած ժամանակահատված, որպիսի պարագայում բացառված չէ, որ հայց ներկայացնելու համար բավարար դիտվի, օրինակ, մեկ կամ երկու շաբաթը և բաց թողնված ժամկետը չվերականգնվի, հնարավոր է, որ անգամ մեկ օրը բավարար համարվի՝ նկատի ունենալով, որ Վճռաբեկ դատարանը շեշտել է, որ այդ հանգամանքները պետք է տեղի ունենան հայցային վաղեմության վերջին վեց ամիսների ընթացքում և ***տևեն մինչև ժամկետի ավարտը***:

Մյուս խնդրահարույց հարցն այն է, թե որքան ժամանակ է տրամադրվում

³³ Տե՛ս ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019թ. հոկտեմբերի 1-ի թիվ № ԳԴ4/2018/02/18 քաղաքացիական գործով կայացրած որոշումը, ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 29-ի թիվ № ԳԴ4/2344/02/18 քաղաքացիական գործով կայացրած որոշումը, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020թ. մարտի 11-ի թիվ ՏԴ/2323/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

³⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2013 թ հոտեմբերի 4-ի թիվ ԱՎԴ3/0144/02/12 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

անձին այդ հանգամանքների դադարումից հետո իրավունքների պաշտպանությանը ձեռնամուխ լինելու համար:

Ակնհայտ է, որ վերականգնման հիմք հանդիսացող հանգամանքների գոյությունը դադարելուց հետո անձը չպետք է հնարավորություն ունենա անորոշ ժամկետով ձգձգել իրավունքի պաշտպանությունը:

Գրականության մեջ խոսվում է ողջամիտ ժամկետի մասին այն բանից հետո, երբ դադարել են վաղեմության ժամկետի բացթողումն արդարացնող հարգելի հանգամանքները, որի սահմաններից դուրս հայց ներկայացնելու դեպքում բաց թողնված վաղեմության ժամկետը վերականգնելու մասին հայցվորի միջնորդությունը պետք է դիտել որպես իրավունքի չարաշահում³⁵:

Սակայն, հարցը դիտելով Վճռաբեկ դատարանի վերոնշյալ մեկնաբանության լույսի ներքո, ակնհայտ է ռիսկը, որ որպես բավարար կարող են որակվել նաև շատ կրճատ ժամանակահատվածները:

Քննարկվող ձևակերպման անհաջող ու անորոշ լինելու մասին է վկայում նաև դատական պրակտիկան: Գործերից մեկով դատարանը, անդրադառնալով հայցային վաղեմության ժամկետի վերականգնման ինստիտուտի կիրառության ժամանակային սահմանափակումներին, նշել է, որ *հիշատակված իրավանդումի վերլուծությունից բխում է, որ նույնիսկ հայցային վաղեմության ժամկետը հարգելի նախաձեռնման պարագայում, այդ ժամկետը կարող է վերականգնվել հայցային վաղեմության ժամկետով* (ընդգծումը՝ Գ. Բ.)³⁶:

Այսինքն՝ դատարանն, ըստ էության, անալոգիայով կիրառել է 339-րդ հոդվածի 4-րդ մասով կասեցման համար սահմանված կանոնը:

6. Չուգահեռներ հայցային վաղեմության ժամկետի վերականգնման և կասեցման ինստիտուտների միջև. հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի անհրաժեշտության հարցը

Հայցային վաղեմության ժամկետի վերականգնման համար անհրաժեշտ պայմանների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում դրա նմանությունը հայցային վաղեմության կասեցման ինստիտուտի հետ, մանավանդ ֆիզիկական խոչընդոտի՝ անհաղթահարելի ուժի հետ:

Քննարկվող հոդվածում օգտագործվող «բացառիկ դեպքերում» արտահայտությունը հիմք է տալիս աղերսներ նկատելու ՔՕ 339-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ որպես հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցնելու հիմք նախատեսված և որպես արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հան-

³⁵ Ст'я Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации // отв. ред. А. Г. Карапетов, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ - Павлов А. А. М., Изд.: М-Логос, 2018, էջ 1245:

³⁶ Ст'я ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2015թ. ապրիլի 1-ի թիվ ԵԱԲԴ/1553/02/13 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

գամանք բնութագրվող անհաղթահարելի ուժի հետ: Բացառիկության (հազվադեպ լինելու) պահանջը ըստ էության նույնանման է անհաղթահարելի ուժի պարտադիր բնութագրիչ համարվող «արտակարգությանը»:

Բացի այդ, կարող ենք զուգահեռ անցկացնել նաև անհաղթահարելի ուժի բնութագրիչ անկասելիության և վերականգնման հիմքերից պահանջվող հարգելիության միջև:

Պատահական չէ, որ գրականության մեջ հատուկ շեշտվել է դրանց տարբերակման անհրաժեշտությունը՝ հիմքում դնելով այն, որ հարգելի պատճառների թվին են դասվում խոչընդոտները, որոնք անհաղթահարելի են տվյալ անձի համար, բայց անհաղթահարելի չեն ընդհանուր առմամբ³⁷ (նման մոտեցումը չի կարելի ընդունել անվերապահորեն. կասեցման հիմքերում ևս առկա են այնպիսիք, որոնք սուբյեկտիվ բնույթի են, անկանխելի են միայն տվյալ կոնկրետ անձի համար (օրինակ՝ անգործունակ անձի ներկայացուցիչ չունենալը)): Այսինքն՝ վերականգնման հիմքերը նույնացվում են պատահարների³⁸ հետ, մինչդեռ, իրականում առնվազն չեն կարող սահմանափակվել դրանցով (օրինակ՝ վերականգնման հիմքերի շարքում նշված է նաև անգրագիտությունը):

Ուստի, թեև պատահարների հետ նույնացումն անթույլատրելի է, սակայն պարտադիր պայման պետք է լինի անկանխելիությունը, որը, սակայն, ի տարբերություն պատահարների, պետք է վերաբերի ոչ թե բուն իրադարձությանը³⁹ (այս պարագայում իրադարձությունն ինքնին կարող է և անկանխելի լինել), այլ տվյալ պարագայում մեկնաբանվի ավելի լայն. օրինակ՝ եթե անձը իմացել է որոշակի իրադարձության վրա հասնելու մասին, հնարավորություն չի ունեցել կանխել այն, սակայն հնարավորություն է ունեցել մինչև վրա հասնելը քայլեր ձեռնարկել իրավունքների պաշտպանության ուղղությամբ, ապա հայցային վաղեմության ժամկետի բացթողումը չպետք է ճանաչվի հարգելի. այսինքն՝ այստեղ կարևոր

³⁷ Ст'ю Тархов В. А., Гражданское право. Общая часть: Курс лекций, Чебоксары: Чув. кн. изд-во, 1997, էջ 246:

³⁸ Պատահար են համարվում այնպիսի երևույթները, որոնք տեղի են ունենում պարտապանի կամքից անկախ: Պատահարը սուբյեկտիվորեն անկանխատեսելի և անկանխելի երևույթ է, քանի որ դրա առաջանալու մասին պարտապանը չգիտի և պարտավոր չէ գիտենալ: Ընդ որում՝ դրանք այնպիսի երևույթներ են, որոնք հնարավոր է կանխել, եթե անձը գիտենա դրանց առաջանալու մասին: Ст'ю Բարսեղյան Ս. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, 4-րդ հրատ., «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2014, էջ 538:

Պատահարի և անհաղթահարելի ուժի տարբերությունների մասին առավել մանրամասն տե՛ս Головин Н. М., Разграничение категорий «случай» и «непреодолимая сила» // Политика, государство и право, 2013. № 2 (14), <http://politika.snauka.ru/2013/02/653> (մուտք 22.08.2022թ.):

³⁹ Պատահարն այն է, ինչը ոչ որ նախորդ կանխատեսելի չի կարող: Քանի որ այն նախապես կանխատեսելի հնարավոր չէ, այն բնութագրվում է սուբյեկտիվ անկասելիությամբ: Դրա հետ մեկտեղ, եթե անձը իմանար սպասվող պատահարի մասին, նա կկարողանար այն կանխել: Այսպես, անկանխատեսելիության հատկանիշը դեպքի համար հիմնական է: Ст'ю Иванова С. Н., Понятие непреодолимой силы и ее квалифицирующих признаков в современном гражданском праве // Пробелы в российском законодательстве, Юридический журнал, 2008, Изд. дом ЮР-ВАК, № 2, էջ 111:

նշանակություն չունի անձի կողմից իրադարձության վրա հասնելը կանխատեսելու պարագայում այն կանխելու հնարավորությունը:

Որոշակի բացառիկ հանգամանքներով պայմանավորված հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի կարող է համարվել միայն այն պարագայում, երբ հետևանքներն անկանխելի են եղել, և բացակայել է անձի մեղքը:

Այսպիսով, վերը ներկայացված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վերականգնման համար անհրաժեշտ համարվող այնպիսի պայմաններ, ինչպիսիք այդ հանգամանքների՝ անձի հետ կապված լինելը, միայն ֆիզիկական անձի կողմից միջնորդություն ներկայացնելը, իրականում պետք է բացառվեն, իսկ մյուս պայմանները՝ հանգամանքների բացառիկությունն ու հարգելիությունը, ինչպես նաև այդ հանգամանքների տեղի ունենալը հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում, լիովին տեղավորվում են կասեցման հիմքերին ներկայացվող պահանջներում:

Առկա կարգավորումների պարագայում ստացվում է, որ նմանատիպ հանգամանքների հետ օրենսդիրը կապում է տարբեր իրավական հետևանքներ, մի դեպքում՝ հայցային վաղեմության ժամկետի կասեցում, մեկ այլ դեպքում՝ վերականգնման հնարավորություն:

Մինչդեռ թե՛ կասեցման և թե՛ վերականգնման հիմքերն ըստ էության կարող են վերաբերել թե՛ իրավաբանական և թե՛ ֆիզիկական խոչընդոտների, երկուսն էլ տևական բնույթ ունեն, երկուսի դեպքում էլ մինչև համապատասխան հանգամանքի վերանալը (կասեցման պարագայում իհարկե միայն ֆիզիկական խոչընդոտների դեպքում) կարող է խոչընդոտող բնույթը դադարել և երկուսի պարագայում էլ պետք է պարզել խոչընդոտի գոյության տևողությունն ու ըստ այդմ չհաշվարկել հայցային վաղեմության ժամկետի մեջ:

Երկու դեպքում էլ գործ ունենք այնպիսի հանգամանքների հետ, որոնք գոյություն ունեն օբյեկտիվորեն, և որոնց խոչընդոտող բնույթը կախված չէ կողմերի կամքից, անգամ եթե նրանց գործողությունների հետևանք են (օրինակ՝ կասեցման հիմք հանդիսացող իրավաբանական խոչընդոտների դեպքում), և որոնք չեն կարող կանխվել անձի կողմից:

Գրականության մեջ որպես հայցային վաղեմության ժամկետի վերականգնման ինստիտուտի առանձնահատկություն, որով այն սկզբունքորեն տարբերվում է կասեցումից և ընդհատումից, նշվում է այն, որ վերականգնվում է արդեն լրացած վաղեմությունը, և դատարանը ելնում է այդ հանգամանքից⁴⁰: Միևնույն ժամանակ վերականգնման արդյունքում տեղի չի ունենում հայցային վաղեմության վերսկսում, այլ միայն պաշտպանություն է տրվում անձի խախտված իրա-

⁴⁰ Ст'и Гражданское право: учебник, Т. 1, под редакцией А. П. Сергеева, Ю. К. Толстого, М.: Изд. "Проспект", 2005, էջ 375:

վունքին հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի համարելու հիմքերի առկայության դեպքում՝ չնայած վաղեմությունն անցած լինելուն⁴¹:

Թեպետ առկա են որոշ տարբերություններ, փաստացի թե՛ կասեցման ու թե՛ վերականգնման իրավական հետևանքը նույնն է. անտեսվում է խոչընդոտների գոյության ժամանակահատվածը, և հնարավորություն է տրվում անձին պաշտպանել իր խախտված իրավունքը:

Սակայն վերականգնման ինստիտուտի կիրառումը օրենսդիրը պայմանավորում է ավելի խիստ չափանիշներով, որոնք, ինչպես տեսանք, անհարկի սահմանափակում են պաշտպանության իրավունքն ու թերևս հենց այդ պատճառով դատական պրակտիկայում հաճախ շրջանցվում:

Բացի այդ, նաև անհասկանալի և անտրամաբանական է, թե ինչու է մի խոչընդոտի (հաճախ բավականին նման) դեպքում հայցային վաղեմության ժամկետը համարվում լրացած, իսկ մյուսի դեպքում՝ ոչ:

Առկա կարգավորումների պարագայում ստացվում է, որ եթե, օրինակ, անձը երկու օր գտնվել է ռազմական դրության փոխադրված զինված ուժերի կազմում, ապա նրան տրամադրվում է լրացուցիչ վեց ամիս ժամանակ իրավունքների պաշտպանության համար: Մինչդեռ, հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսվա ընթացքում մեկ ամիս կոմստոգ վիճակում գտնվելուն ոչ մի իրավական նշանակություն կարող է և չտրվել հայցային վաղեմության ժամկետի ընթացքի վրա ազդեցության տեսանկյունից:

Կասեցման դեպքում իրավական նշանակություն չի տրվում նաև ներկայացուցչի միջոցով պաշտպանությունն իրականացնելու հնարավորությանը, ինչը որոշ դեպքերում, կարծում ենք, անհիմն առավելություն է:

Վերոնշյալ հանգամանքները վկայում են այն մասին, որ իրականում բացակայում է կասեցման և վերականգնման հիմք հանդիսացող հանգամանքները սահմանազատելու անհրաժեշտությունը:

Եզրակացություն

Վերոգրյալը ցույց է տալիս, որ առկա է առհասարակ հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի գոյության նպատակահարմարությունը վերանայելու անհրաժեշտություն: Կարծում ենք՝ կատարված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնել, որ գործնականում բացակայում է կասեցման և վերականգնման հիմք հանդիսացող հանգամանքներն առանձին նախատեսելու անհրաժեշտությունը, և նման պարագայում վերականգնման հիմք հանդիսացող

⁴¹ Ст'у Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации /отв. ред. А. Г. Карапетов, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ - Павлов А. А. М.: Изд. М-Логос, 2018, էջ 1241, Վճռարեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ԱՎԳՅ/0144/02/12 քաղաքացիական գործով կայացված որոշումը, Վճռարեկ դատարանի՝ 2016թ. հուլիսի 22-ի թիվ ԵՄԳ/2775/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

հանգամանքներին ավելի խիստ պահանջներ առաջադրելը չի համապատասխանում արդարության, համաչափության սկզբունքներին և կարող է անգամ չարաշահումների տեղիք տալ: Ուստի, կարծում ենք, որ բացակայում է կասեցման ու վերականգնման ինստիտուտները տարբերակելու անհրաժեշտությունը:

Այսպիսով, հայցային վաղեմության վերականգնման ինստիտուտի հատկանիշների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այն մեծամասամբ նույնանում է հայցային վաղեմության ժամկետի կասեցման ինստիտուտի հետ, իսկ եթե ինչ-որ բան բաղի տեսք ունի, լողում է բաղի նման և կականում է բաղի պես, սպա այն հավանաբար բաղ է⁴²:

Ընդ որում, հարկ է նկատել, որ բացառությամբ հետխորհրդային տարածաշրջանի մի շարք երկրների՝ վաղեմության վերականգնման ֆենոմենը գործնականորեն հայտնի չէ արտասահմանյան օրենսդրություններին, այն չի հիշատակվում նաև հայցային վաղեմության ինստիտուտին առնչվող կարգավորումներ պարունակող միջազգային ակտերում (Ունիդրոյաի սկզբունքներ⁴³, Եվրոպական մասնավոր իրավունքի մոդելային կանոններ⁴⁴, «Ապրանքների միջազգային առուծախում հայցային վաղեմության մասին» ՄԱԿ-ի 1974 թվականի կոնվենցիա⁴⁵)⁴⁶:

Ուստի, կարծում ենք, մի բանի համար, որը կարող է լիովին տեղավորվել կասեցման ինստիտուտի ներքո, կարիք չկա ունենալ լրացուցիչ ինստիտուտ՝ հայցային վաղեմության ժամկետի վերականգնում՝ մանավանդ, նկատի ունենալով, որ այն որևիցե խնդիր չի լուծում, և դեռ ավելին՝ ավելացնում է անորոշություն ու կիրառման դժվարություններ, հակասություններ, և կարող ենք «Օկկամի ածելի» սկզբունքի կիրառմամբ հրաժարվել բաց թողնված հայցային վաղեմության

⁴² Տե՛ս [⁴³ Տե՛ս Unidroit Principles Of International Commercial Contracts 2016, <https://www.unidroit.org>](https://idioms.thefreedictionary.com/duck+test(access 24.04.2023): /instruments/commercial-contracts/unidroit-principles-2016(access 22.08.2022):</p>
</div>
<div data-bbox=)

⁴⁴ Տե՛ս Principles, Definitions and Model Rules of European Private Law, Draft Common Frame of Reference (DCFR), Articles and Comments [Interim Edition, to be completed], prepared by the Study Group on a European Civil Code and the Research Group on the Existing EC Private Law (Acquis Group), https://www.ccbe.eu/NTCdocument/DCFRpdf1_1262861061.pdf (access 22.08.2022):

⁴⁵ Տե՛ս Convention on the Limitation Period in the International Sale of Goods, Date of adoption: 14 June 1974, Date of adoption of amending protocol: 11 April 1980, Entry into force: 1 August 1988, https://uncitral.un.org/en/texts/salegoods/conventions/limitation_period_international_sale_of_goods#:~:text=The%20Limitation%20Convention%20establishes%20uniform,its%20breach%2C%20termination%20or%20validity (access 22.08.2022):

⁴⁶ Իրավինականների մեծամասնությունում, որոնցում հայրենական իրավունքը դիմում է տվյալ ինստիտուտին, արտասահմանյան իրավակարգերն օգտագործում են այլ միջոցներ. վաղեմության հատուկ (երկարացված) ժամկետներ, հոսքի սկզբի առանձնահատուկ որոշում կամ անչափահասների և անգործունակների պահանջների նկատմամբ վաղեմության ժամկետների լրանալը հետաձգելու մասին կանոնների սահմանում, վաղեմության կասեցման հնարավոր հիմքերի ընդլայնում և այլն: Տե՛ս Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации / отв. ред. А. Г. Карапетов, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ - Павлов А. А. М.: Изд. М-Логос, 2018, էջ 1241:

Ժամկետը վերականգնելու կառուցակարգից և սահմանափակվել միայն կասեցման ինստիտուտի գոյությամբ⁴⁷ :

Այսպիսով, առաջարկում ենք ուժը կորցրած ճանաչել հայցային վաղեմության ժամկետի վերականգնում նախատեսող ՔՕ 342-րդ հոդվածը, իսկ ՔՕ 339-րդ հոդվածի 1-ին մասում կատարել լրացում՝ նախատեսելով, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը համարվում է կասեցված, եթե իրավունքի պաշտպանության իրականացմանն արգելք է հանդիսացել անձի կամքից անկախ և անկանխելի բացառիկ հանգամանք:

⁴⁷ Այս կերպ կլուծվեն նաև խնդիրները՝ կապված այնպիսի հարցերի հետ, թե ինչ տևողության դեպքում է հանգամանքը համարվում խոչընդոտ, դրա վերանալուց հետո ինչքան ժամանակում անձը պետք է իրականացնի իրավունքների պաշտպանությունը:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50).
The Civil Code of the Republic of Armenia, HO-239, adopted on 05.05.1998, entered into force on 01.01.1999, Official Journal of the Republic of Armenia 1998.08.10/17(50).
2. Հայաստանի Հանրապետության կառավարության՝ «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշում, ընդունվել է 26.05.2006թ., ուժի մեջ է մտել 16.07.2006թ., ՀՀՊՏ 2006.07.06/36(491) Հոդ.781.
Decision of the Government of the Republic of Armenia No. 825-N of May 26, 2006 “On approving the procedure for organizing medical-sanitary and preventive health care for detainees and convicts, using medical facilities of healthcare authorities and involving their medical staff for this purpose”, adopted on 26.05.2006, entered into force on 16.07.2006, Official Journal of the Republic of Armenia 2006.07.06/36(491), Art. 781
3. Վճռաբեկ դատարանի՝ 2016թ. հուլիսի 22-ի թիվ ԵՄԴ/2775/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը.
The decision of the Court of Cassation of July 22, 2016 on Civil Case No. EMD/2775/02/14.
4. Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ԱՎԴ3/0144/02/12 քաղաքացիական գործով կայացված որոշումը.
The decision of the Court of Cassation of October 4, 2013 on Civil Case No. AVD3/0144/02/12.
5. Վճռաբեկ դատարանի՝ 2007 թ. նոյեմբերի 9-ի թիվ 3-1133(ՎԴ) քաղաքացիական գործով կայացրած որոշումը.
The decision of the Court of Cassation of November 9, 2007 on Civil Case No. 3-1133(VD).
6. Վերաքննիչ դատարանի՝ 2020թ. օգոստոսի 21-ի թիվ ՏԴ/2323/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը.
The decision of the Court of Appeal of August 21, 2020 on Civil Case No. TD/2323/02/19.
7. Վերաքննիչ դատարանի՝ 2019 հունիսի 6-ի թիվ ԵԱԶԴ/3849/02/15 քաղաքացիական գործով կայացրած որոշումը.
The decision of the Court of Appeal of June 6, 2019 on Civil Case No. YAKD/3849/02/15.

8. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 24-ի թիվ ԿԴ3/1217/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:
The decision of the Court of Appeal of July 24, 2015 on Civil Case No. KD3/1217/02/14.
9. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020թ. մարտի 11-ի թիվ ՏԴ/2323/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:
The decision of the Court of General Jurisdiction of Tavush Marz of March 11, 2020 on Civil Case No. TD/2323/02/19
10. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր-իրավասության դատարանի՝ 2020թ. մարտի 17-ի թիվ ԵԴ/36304/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:
The decision of the Court of General Jurisdiction of First Instance of Yerevan of March 17, 2020 on Civil Case No. ED/36304/02/19.
11. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2020թ. օգոստոսի 28-ի թիվ ԵԴ/21599/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:
The decision of the Court of General Jurisdiction of First Instance of Yerevan of August 28, 2020 on Civil Case No. ED/21599/02/19.
12. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019թ. մարտի 4-ի թիվ ՇԴ/3951/02/18 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:
The decision of the Court of General Jurisdiction of Shirak Marz of the Republic of Armenia of March 4, 2019 on Civil Case No. SHD/3951/02/18.
13. ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019թ. հոկտեմբերի 1-ի № ԳԴ4/2018/02/18 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:
The decision of the Court of First Instance of General Jurisdiction of Gegharkunik Marz, RA of October 1, 2019 on Civil Case No. GD4/2018/02/18.
14. ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 29-ի № ԳԴ4/2344/02/18 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:
The decision of the General Jurisdiction Court of First Instance of Gegharkunik Marz, RA, of November 29, 2019 on Civil Case No. GD4/2344/02/18.
15. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019թ. դեկտեմբերի 11-ի թիվ ՇԴ1/0848/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:
The decision of the Court of General Jurisdiction of Shirak Marz of the Republic of Armenia of December 11, 2019 on Civil Case No. SHD1/0848/02/19.
16. ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2016թ.-ի մայիսի 5-ի թիվ ԱՎԴ/3507/02/15 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

The decision of the Court of General Jurisdiction of Ararat and Vayots Dzor Marzes of RA of May 5, 2016 on Civil Case No. AVD/3507/02/15.

17. ՀՀ Երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2015թ. ապրիլի 1-ի թիվ ԵԱ-ՔԳ/1553/02/13 քաղաքացիական գործով կայացրած որոշումը.

The decision of the Court of General Jurisdiction of Arabkir and Kanaker-Zeytun Administrative Districts of Yerevan, RA of April 1, 2015 on Civil Case No. YAKD/1553/02/13.

18. Երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2013թ. նոյեմբերի 1-ի թիվ ԵԱՔԳ/0887/02/13 քաղաքացիական գործով կայացրած որոշումը.

The decision of the Court of First Instance of General Jurisdiction of Arabkir and Kanaker-Zeytun Administrative Districts of Yerevan of November 1, 2013 on Civil Case No. YEAKD/0887/02/13.

19. Convention on the Limitation Period in the International Sale of Goods, Date of adoption: 14 June 1974, Date of adoption of amending protocol: 11 April 1980, Entry into force: 1 August 1988, https://uncitral.un.org/en/texts/salegoods/conventions/limitation_period_international_sale_of_goods#:~:text=The%20Limitation%20Convention%20establishes%20uniform,its%20breach%2C%20termination%20or%20validity (access 22.08.2022).

20. Principles, Definitions and Model Rules of European Private Law, Draft Common Frame of Reference (DCFR), Articles and Comments [Interim Edition, to be completed], prepared by the Study Group on a European Civil Code and the Research Group on the Existing EC Private Law (Acquis Group), https://www.ccbe.eu/NTC-document/DCFRpdf1_1262861061.pdf (access 22.08. 2022).

21. Unidroit Principles Of International Commercial Contracts 2016, <https://www.unidroit.org/instruments/commercial-contracts/unidroit-principles-2016> (access 22.08.2022).

22. Определение КГД ВС РФ от 25 ноября 2014 г. № 78-КГ14-36, http://www.supcourt.ru/stor_pdf.php?id=622776 (մուտք 22.08.2022թ.).

The decision № 78-КГ14-36 of the Supreme Court of RF of November 25, 2014, (access 22.08.2022).

23. Արդի հայերենի բացատրական բառարան, հատոր 1, Է. Բ. Աղայան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&query=%D5%A2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BC%D5%AB%D5%AF> (մուտք 22.08.2022թ.).

Explanatory Dictionary of Modern Armenian, Volume 1, E. B. Aghayan, “Armenia” pub. house, Yerevan, 1976, <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&query=%D5%A2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BC%D5%AB%D5%AF> (access 22.08.2022).

24. Բարսեղյան Տ. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրա-

- վունք, առաջին մաս, 4-րդ հրատ., «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2014, 560 էջ.
Barseghyan T. K., Civil Law of the Republic of Armenia, first part, 4th ed., “Tigran Mets” pub. house, Yerevan, 2014, p. 560.
25. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 1, Գլխ. խմբ.՝ Ա. Ս. Ղարիբյան, ՀՍՍՀ ԳԱ Հր. Անառնյանի անվ. լեզվի ին-տ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%A2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BC%D5%AB%D5%AF (մուտք 22.08.2022թ.).
Explanatory Dictionary of the Modern Armenian Language, Volume 1, Ch. ed.: A. S. Gharibyan, USSR Academy of Sciences, Institute of Language after Hr. Acharyan, Yerevan, USSR Academy of Sciences Publishing House, 1969, http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%A2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BC%D5%AB%D5%AF (access 22.08.2022).
26. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական - վերլուծական զեկույց, ըստ 2017թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, Երևան, 2018, https://www.armstat.am/file/article/poverty__2018-arm.pdf(մուտք 22.08.2022թ.).
Social picture and poverty of Armenia, Statistical-analytical report, based on the results of the comprehensive survey of living conditions of households in 2017, Yerevan, 2018, <https://www.armstat.am/file/article/poverty 2018-arm.pdf> (access 22.08.2022).
27. Варданыан А. В., Безручко Е. В., К вопросу о неоднозначной оценке беспомощного состояния в практике верховного суда российской федерации // журнал Известия Тульского государственного университета. Экономические и юридические науки, № 3-2, 2015. С. 9-16.
Vardanyan A. V., Bezruchko E. V., On the issue of the ambiguous assessment of the helpless state in the practice of the Supreme Court of the Russian Federation, journal “Izvestiya Tula State University”. Economic and legal sciences, pub. house “Tula State University”, 2015, No. 3-2, p. 9-16.
28. Волошина Н. П., Зозуля И. С., Егоркина О. В., Костюковская А. Е., Рассеянный склероз с fulминантным течением, Академия дистанционное обучение, Укр. мед. Часопис, №4 (84) VII - VIII 2011 г., <https://www.umj.com.ua/article/16414/rasseyannyj-skleroz-s-fulminantnym-techeniem> (մուտք 22.08.2022թ.).
Voloshina N. P., Zozulya I. S., Egorkina O. V., Kostyukovskaya A. E., Multiple sclerosis with fulminant course, Academy of Distance Learning, Ukr. med. Chasopis, No. 4 (84) VII - VIII 2011, <https://www.umj.com.ua/article/16414 /rasseyannyj-skleroz-s-fulminantnym-techeniem> (access 22.08.2022).
29. Головин Н. М., Разграничение категорий «случай» и «непреодолимая сила»// Политика, государство и право, 2013. № 2 (14), <http://politika.snauka.ru/2013/02/653> (մուտք 22.08.2022թ.).

- Golovin N. M., Distinction between the categories “accident” and “force majeure”, *Politics, State and Law*, 2013. No. 2 (14), <http://politika.snauka.ru/2013/02/653> (access 22.08.2022).
30. Гражданское право: учебник, Том 1, под редакцией А. П. Сергеева, Ю. К. Толстого. М.: Изд. “Проспект”, 776 с.
Civil law, textbook, revised and supplemented, volume 1, edited by A. P. Sergeev, Yu.K. Tolstoy, pub. house “Prospekt”, Moscow, 2005, p. 776.
31. Ефремов А. В., Начаров Ю. В., Самсонова Е. Н., Основы общей нозологии, Учебное пособие. Новосибирск, 2006, <https://studfile.net/preview/2705074/page:6/> (дата звернення 22.08.2022).
Efremov A. V., Nacharov Yu. V., Samsonova E. N., Fundamentals of general nosology, Textbook, Novosibirsk, 2006, <https://studfile.net/preview/2705074/page:6/> (access 22.08.2022).
32. Иванова С. Н., Понятие непреодолимой силы и ее квалифицирующих признаков в современном гражданском праве//Пробелы в российском законодательстве, Юридический журнал, №2, 2008. М.: Изд. дом Юр-ВАК. С. 111-114.
Ivanova S. N., The concept of force majeure and its qualifying features in modern civil law, Gaps in Russian legislation, Legal Journal, 2008, pub. house Yur-VAK, number 2, p. 111-114.
33. Курс лекций по патофизиологии: учебное пособие для студентов медицинских вузов: в 4-х ч., Ч. 1, Ю. Ю. Бяловский [и др.]/под ред. Ю.Ю. Бяловского, В.В. Давыдова, Рязань, 2018, 2018, 261 с., <https://rzgmu.ru/images/files/6/13090.pdf> (дата звернення 22.08.2022р.).
Course of lectures on pathophysiology: textbook for students of medical universities: in 4 parts, Yu. Yu. Byalovsky [etc.]; edited by Yu. Yu. Byalovsky, V. V. Davydov, Ryazan, 2018, Part 1, 2018, p. 261, <https://rzgmu.ru/images/files/6/13090.pdf> (access 22.08.2022).
34. Мозолин В. П., Масляев А. И., Гражданское право, в 2-х ч., Ч.1, М.: Изд. Юрист, 2005, <https://jurisprudence.club/pravo-grajdanskoe/priostanovlenie-pereryiv-vosstanovlenie.html> (дата звернення 22.08.2022р.).
Mozolin V. P., Maslyayev A. I., Civil Law, in 2 parts, part 1, Moscow, pub. house “Yurist”, 2005, <https://jurisprudence.club/pravo-grajdanskoe/priostanovlenie-pereryiv-vosstanovlenie.html> (access 22.08.2022).
35. Патофизиология: учебник: в 2 т./под ред. В. В. Новицкого, Е. Д. Гольдберга, О. И. Уразовой, 4-е изд., перераб. и доп., ГЭОТАР-Медиа, 2009, Т. 1, 848 с., <https://fnkcr.ru/elib/resource20.pdf> (дата звернення 22.08.2022р.).
Pathophysiology. textbook: in 2 volumes, edited by V. V. Novitsky, E. D. Goldberg, O. I. Urazova, 4th ed., revised and supplemented, GEOTAR-Media, 2009, V. 1, p. 848, <https://fnkcr.ru/elib/resource20.pdf> (access 22.08.2022).
36. Порядин Г. В., Введение в патофизиологию. Предмет и задачи патофизиологии, Лекция 1, <https://medknigaservis.ru/wp-content/uploads/2019/01/NF0011912.pdf>

([url](#) 22.08.2022р.).

Poryadin G. V., Introduction to pathophysiology. Subject and tasks of pathophysiology, Lecture 1, <https://medknigaservis.ru/wp-content/uploads/2019/01/NF0011912.pdf> (access 22.08.2022).

37. Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации/отв. ред. А. Г. Карапетов, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ - Павлов А. А. М.: Изд. М-Логос, 2018, 1264 с.
Transactions, representation, limitation periods: comments to articles 153-208 of the Civil Code of the Russian Federation, ch. ed. A. G. Karapetov, comments on article 163, points 1, 3, 4 article 165, articles 171, 172, 175–177, 202–205 Civil Code of the RF - Pavlov A. A.; Moscow, pub. house M-Logos, 2018, p. 1246.
38. Сланов Г. Т., Некоторые проблемы применения исковой давности//Научный альманах, N 7 (9) 2015,
<http://ucom.ru/doc/na.2015.07.1154.pdf> ([url](#) 22.08.2022р.).
Slanov G. T., Some problems of application of limitation periods, Scientific Almanac N 7 (9) 2015 Legal Sciences, <http://ucom.ru/doc/na.2015.07.1154.pdf> (access 22.08.2022).
39. Тархов В. А., Гражданское право. Общая часть: Курс лекций. Чебоксары: Чув. кн. изд-во, 1997, 331 с.
Tarkhov V. A., Civil Law. General part. Course of lectures, Cheboksary: Chuv. book pub. house, 1997, p. 331.
40. Шарикова В. С., Скрипченко Н. Ю., «Беспомощное состояние потерпевшего»: доктринальное определение и правоприменительная практика//Таврический научный обозреватель, № 3 (ноябрь), 2015, с. 145-148.
Sharikova V. S., Skripchenko N. Yu., “Helpless state of the victim”: doctrinal definition and law enforcement practice, Tauride Scientific Observer, No. 3 (November), 2015, pub. house “Interregional Institute for Territorial Development”, p. 145-148.
41. 41. Atlas of MS, 3rd edition, PART 2: Clinical management of multiple sclerosis around the world, Key findings about the diagnosis and clinical management of MS, MS international federation, April 2021, <https://www.msif.org/wp-content/uploads/2021/05/Atlas-3rd-Edition-clinical-management-report-EN-5-5-21.pdf> (access 24.04.2023).
42. Stanley L. Robbins, Jonathan H. Robbins, Dante G. Scarpelli, Classifications Of Diseases, <https://www.britannica.com/science/human-disease/Classifications-of-diseases> (access 22.08.2022).
43. <https://idioms.thefreedictionary.com/duck+test> (access 24.04.2023).

Kristine Gabuzyan

*Adviser to the Prosecutor General of the Republic of Armenia,
Lecturer of the Chair of Civil Law, Faculty of Law, Yerevan State University*

SOME ISSUES OF THE APPLICATION OF THE INSTITUTION OF RESTORATION OF THE LIMITATION PERIOD¹

Abstract

The article is devoted to the problems related to application of the institution of restoration of limitation periods. The article examines the criteria and conditions for application of the limitation period and the interpretations given to them in practice.

The article draws parallels between the institutions of suspension and restoration of limitation periods and discusses the necessity of the existence of the institution of restoration of limitation periods.

As a result, taking into account the international practice, the inexpediency of providing for the restoration of limitation periods as a separate institution is justified, taking into account also the practical problems arising from it.

The conducted analysis allows us to conclude that conditions considered necessary for restoration, such as the fact that these circumstances should be related to a person, only the submission of a petition by a natural person, should in fact be excluded, taking into account the interpretations given in practice, and other conditions - the exclusivity and justifiability of the circumstances, as well as the occurrence of these circumstances in the last six months of the limitation period, and if that period is equal to six months or less than six months during the limitation period, fully fit into the criteria submitted to the grounds of suspension. And for something that can be fully brought under the institution of suspension, there is no need to have an additional institution - the restoration of the limitation periods - especially considering that it does not solve any problem, and even more, it adds uncertainty, difficulties of application and contradictions. Therefore, we suggest abandoning the institution of restoration of limitation periods and limit ourselves only to the existence of the institution of suspension.

Keywords: limitation period; term; suspension; restoration; exclusive circumstances; to recognise justifiable.

¹ The article was presented on 08.10.2023 and was reviewed on 13.11.2023.

Кристине Габузян

*Советник Генерального прокурора Республики Армения,
преподаватель кафедры гражданского права факультета права
Ереванского государственного университета*

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ ИНСТИТУТА ВОССТАНОВЛЕНИЯ СРОКА ИСКОВОЙ ДАВНОСТИ

Абстракт

Статья посвящена проблемам, связанным с применением института восстановления срока исковой давности. В статье рассматриваются критерии, условия, необходимые для применения института восстановления срока исковой давности, и толкования, которые им даны на практике.

В статье проводятся параллели между институтами приостановления и восстановления срока исковой давности, а также рассматривается необходимость существования института восстановления срока исковой давности как таковой.

В результате с учетом международного опыта обоснована нецелесообразность предусматривать восстановление срока исковой давности как отдельный институт с учетом вытекающих из этого практических проблем.

Проведенный анализ позволяет сделать вывод о том, что некоторые условия, считающиеся необходимыми для восстановления, например то, что данные обстоятельства должны быть связаны с конкретным лицом или что заявление должно быть подано только физическим лицом, фактически должны быть исключены с учетом толкований, которые были даны на практике, а иные условия – исключительность и уважительность обстоятельств, а также наступление этих обстоятельств в последние шесть месяцев срока исковой давности, а также если этот срок равен шести месяцам или менее шести месяцев в течение срока исковой давности – полностью соответствуют требованиям, предъявляемым к основаниям приостановления. А для того, что вполне можно подвести под институт приостановления, нет необходимости иметь дополнительный институт – восстановление срока исковой давности – особенно если учесть, что он не решает никакой проблемы, и даже более того, добавляет неопределенность, трудности применения и противоречия. Поэтому предлагаем отказаться от института восстановления пропущенного срока исковой давности и ограничиться лишь институтом приостановления.

Ключевые слова: исковая давность; срок; приостановление; восстановление; исключительный случай; признать уважительным.

¹ Статья была представлена 08.10.2023 и прошла рецензирование 13.11.2023.

Եվա Սաղոյան

*ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ՈՐՊԵՍ ԶԲՈՍԱԾՐՋԻԿՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ¹

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում հայրենական զբոսաշրջային օրենսդրությամբ ֆինանսական ապահովման ինստիտուտի ներդրման որոշ հիմնահարցերի: Հոդվածը նպատակ ունի զբոսաշրջային գործունեության իրավական կարգավորման միջազգային չափանիշների հետ համեմատության լույսի ներքո անդրադառնալու արտասահմանյան երկրների օրենսդրությամբ և «Զբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծով² նախատեսված ֆինանսական ապահովման միջոցներին, քննարկելու ֆինանսական ապահովման միջոցներով հատուցման պահանջ ներկայացնելու հիմքերի հետ կապված խնդրահարույց որոշ հարցեր:

Միջազգային և ներպետական փորձի վերլուծության արդյունքում հոդվածում առաջարկվում է որպես զբոսաշրջային գործունեության ոլորտում կիրառվող պարտադիր ֆինանսական ապահովման միջոցներ բանկերի, այլ վարկային հաստատությունների կամ ապահովագրական ընկերությունների երաշխիքից բացի նախատեսել նաև արտագնա զբոսաշրջային գործունեության սուբյեկտների տարեկան հատկացումների հաշվին ձևավորված երաշխիքային ֆոնդը: Միևնույն ժամանակ առաջարկվում է տարանջատել ֆինանսական ապահովման նշված միջոցներից յուրաքանչյուրի կիրառության շրջանակը՝ որպես չափանիշ հիմք ընդունելով պարտավորությունը չկատարելու պատճառների օբյեկտիվ կամ սուբյեկտիվ բնույթը: Մասնավորապես՝ ֆինանսական երաշխիքով հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորություն առաջարկվում է նախատեսել զբոսաշրջային ծառայությունների մատուցման համար արգելք հանդիսացող արտակարգ և տվյալ

¹ Հոդվածը ներկայացվել է 30.09.2023թ., գրախոսվել է 13.11.2023թ.:
² Նախագծի՝ ՀՀ Ազգային ժողով ներկայացված տարբերակը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=71881>

պայմաններում անկանխելի հանգամանքների (անհաղթահարելի ուժ), այդ թվում՝ օտարերկրյա պետության իրավասու մարմնի ակտով տվյալ պետություն զբոսաշրջիկների մուտքն արգելելու, ինչպես նաև արտագնա զբոսաշրջային ծառայություններ մատուցող զբոսաշրջային օպերատորի և իր անունից զբոսաշրջային փաթեթներ իրացնող արտագնա զբոսաշրջային գործակալի անվճարունակության հետևանքով պարտավորության կատարման անհնարինությամբ պայմանավորված՝ զբոսաշրջային ծառայությունների մատուցման պարտավորությունը չկատարելու դեպքում, իսկ երաշխիքային ֆոնդին հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորություն՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների արարքների առնչությամբ ՀՀ քրեական օրենսգրքով³ նախատեսված առերևույթ հանցանքի վերաբերյալ քրեական վարույթ նախաձեռնված լինելու, ինչպես նաև երաշխիք տրամադրած ապահովագրական ընկերության կամ բանկի (այլ վարկային հաստատության անվճարունակության) սնանկության դեպքում, եթե նա օրենքի համաձայն պարտավոր էր հատուցել զբոսաշրջիկին պատճառված վնասը:

Հիմնաբառեր- ֆինանսական ապահովում, բանկային երաշխիք, ապահովագրական երաշխիք, զբոսաշրջային գործունեության սուբյեկտի անվճարունակություն, կատարման անհնարինություն, կանխամտածված սնանկություն, խարդախություն, երաշխիքային ֆոնդ:

Ներածություն

Չբոսաշրջության ոլորտում ֆինանսական ապահովման կառուցակարգի ներդրումը և առանց ֆինանսական ապահովման զբոսաշրջային գործունեությամբ զբաղվելու արգելքը քաղաքակիրթ զբոսաշրջային շուկայի ձևավորման նախապայման է, որն էապես բարձրացնում է զբոսաշրջիկների՝ որպես զբոսաշրջային ծառայություններ սպառողների իրավունքների պաշտպանության մակարդակը⁴:

Հայաստանի Հանրապետությունում 2003 թվականին «Չբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի⁵ ընդունումից հետո մինչ օրս զբոսաշրջային գործունեությամբ զբաղվելու համար անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունենալուց բացի, որևէ այլ հատուկ պահանջ կամ պայման, այդ թվում՝ ֆինանսական ապահովում ունենալու պարտականություն, նախատեսված չի եղել: Նման իրավիճակը ոչ միայն բացասաբար է անդրադարձել ճանապարհորդության հետ կապված հնարավոր ռիսկերից

³ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 05.05.2021 թ., ուժի մեջ մտել՝ 27.05.2021 թ.:

⁴ Stéu Zavyalova C.B., Механизм финансовых гарантий прав и законных интересов туристов: вчера, сегодня, завтра// Общество: политика, экономика, право, N 9, 2016, <https://cyberleninka.ru/article/n/mehanizm-finansovyyh-garantiy-prav-i-zakonnyh-interesov-turistov-vchera-segodnya-zavtra> (մուտք՝ 28.09.2023 թ.):

⁵ ՀՕ-11-Ն, ընդունվել է 17.12.2003 թ., ուժի մեջ մտել՝ 08.02.2004, ՀՀՊՏ 2004.01.29/6(305):

զբոսաշրջիկների գույքային շահերի պաշտպանությունն ապահովող պրակտիկայի ձևավորման վրա, այլև համահունչ չէ զբոսաշրջության ոլորտի իրավական կարգավորման միջազգային չափանիշներին, ինչը, իր հերթին, ճանապարհորդությունների կազմակերպման գործընթացում արտասահմանյան իրավակարգերի հետ անխուսափելի առնչության պայմաններում խնդրահարույց է:

Եվրոպական միության երկրների զբոսաշրջային օրենսդրությունների համար իրավական հիմք հանդիսացող «Փաթեթային ճանապարհորդությունների և առնչվող ճանապարհորդական համաձայնությունների մասին» Եվրոպական խորհրդի և խորհրդարանի 2015 թվականի նոյեմբերի 25-ի դիրեկտիվը⁶ (այսուհետ՝ դիրեկտիվ) նախատեսում է, որ անվճարունակությունից պաշտպանությամբ վերաբերող՝ դիրեկտիվի պահանջները պարտադիր են նաև այն ոչ անդամ պետությունների համար, որոնք որևէ ձևով ուղղորդում են իրենց գործունեությունը ԵՄ անդամ որևէ պետություն (նախաբան, կետ 50):

Այս պահանջի և ընդհանուր առմամբ դիրեկտիվի կարգավորումների՝ Հայաստանի Հանրապետության համար ուղենշային լինելու մասին վկայում է նաև Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագրով⁷ Հայաստանի Հանրապետության հանձնառությունը՝ իր օրենսդրությունն աստիճանաբար մոտարկելու Եվրոպական միության օրենսդրության համապատասխան մասերին, այդ թվում՝ դիրեկտիվին⁸:

Զբոսաշրջիկների շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով սեղմ ժամկետներում իր զբոսաշրջային օրենսդրությունը վերանայելու և արդի միջազգային պահանջներին համապատասխանեցնելու, մասնավորապես՝ ազգային օրենսդրությամբ զբոսաշրջային ծառայություններ մատուցողների ռեեստր ներդնելու, ինչպես նաև ապահովագրական/ռեզերվային ֆոնդերի կամ, ազգային օրենսդրությանը համապատասխան, ֆինանսական գործիքների միջոցով զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվությունն ապահովելու օրենսդրական պահանջ սահմանելու պարտականություն Հայաստանը ստանձնել է նաև Եվրասիական տնտեսական միության շրջանակներում⁹:

⁶ Directive (EU) 2015/2302 of the European Parliament and of the Council of 25 November 2015 “On package travel and linked travel arrangements”, amending Regulation (EC) No 2006/2004 and Directive 2011/83/EU of the European Parliament and of the Council and repealing Council Directive 90/314/EEC.

⁷ Կնքվել է 2017 թվականի նոյեմբերի 24-ին, ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել՝ 2018 թվականի ապրիլի 18-ին:

⁸ Համաձայնագրի հավելված VI-ով ՀՀ-ի համար նախատեսվել է 2015/2302 հրահանգի (ԵՄ) դրույթները, այդ թվում՝ դրա կիրարկող ակտերը Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 տարվա ընթացքում կիրարկելու պարտականություն:

⁹ St`u Решение Высшего Евразийского экономического совета от 14 мая 2018 г. № 7 «О внесении изменений в перечень секторов (подсекторов) услуг, в которых функционирует ЕРУ в рамках Евразийского экономического союза».

Ի կատարումն ստանձնած միջազգային պարտավորությունների՝ ՀՀ կառավարությունն իր 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսել է «Զբոսաշրջության մասին» նոր օրենքի և դրանից բխող մի շարք իրավական ակտերի նախագծերի մշակման և դրանց իրականացման պարտականություն¹⁰: Այդ նպատակով 2022 թվականին շրջանառության մեջ է դրել «Զբոսաշրջության մասին» նոր օրենքի նախագիծը (այսուհետ՝ նաև Նախագիծ), որով, ի թիվս այլ սկզբունքորեն նոր ինստիտուտների, ներդրվել է նաև արտագնա զբոսաշրջային ծառայություններ մատուցող զբոսաշրջային օպերատորի և իր անունից զբոսաշրջային փաթեթներ իրացնող արտագնա զբոսաշրջային գործակալի կողմից ներկայացվող երաշխիքի ինստիտուտը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ գործող օրենքով զբոսաշրջային գործունեության ֆինանսական ապահովման ինստիտուտն առհասարակ նախատեսված չէ, իսկ Նախագիծն անցել է պաշտոնական շրջանառության փուլը և ներկայացվել ՀՀ Ազգային ժողով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախանշված են դրա ընդունման հստակ ժամկետներ՝ զբոսաշրջային գործունեության ոլորտում ֆինանսական ապահովման ինստիտուտը հարկ ենք համարում քննարկել դիրեկտիվի, միջազգային փորձի և նախագծային կարգավորումների համադրված վերլուծության լույսի ներքո:

1. Զբոսաշրջային գործունեության ոլորտում կիրառվող ֆինանսական ապահովման միջոցները

Միջազգային պրակտիկայում, անկախ զբոսաշրջության ոլորտի նկատմամբ պետության որդեգրած քաղաքականությունից¹¹, այդ ոլորտի պետական վերահսկողության մեխանիզմների փոխարեն կամ դրանց զուգահեռ կիրառվում է ֆինանսական ապահովման մեխանիզմը:

Եվրոպական միության երկրներում այս մեխանիզմի կիրառման իրավական հիմքերը դրվել են 1990 թ. հունիսի 13-ի «Համալիր տուրերի, ճանապարհորդությունների և կազմակերպված հանգստի մասին» ԵՄ դիրեկտիվով¹², որը սպառո-

¹⁰ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշման հավելված 1-ի «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 10.1 կետով այս միջոցառման կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2024 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակը:

¹¹ Մի շարք երկրներում զբոսաշրջության ոլորտը գտնվում է պետական ուղղակի վերահսկողության ներքո, որն իրականացվում է զբոսաշրջային գործունեության սուբյեկտների լիցենզավորման միջոցով: Լիցենզավորման պահանջ ներկայումս նախատեսված է նաև մի շարք երկրների (Բելգիա, Լատվիա, Լիտվա, Ուկրաինա և այլն) օրենսդրություններով: Այնուամենայնիվ, ԵԱՏՄ անդամ պետություններն այս հարցում որդեգրել են առավել ազատական մոտեցում՝ գերծ մնալով զբոսաշրջային գործունեության ոլորտի նկատմամբ պետական վերահսկողության խիստ մեթոդների կիրառումից:

¹² Council of European Union Directive 90/314/EEC of 13 June 1990 “On package travel, package holidays and package tours”.

դի հետ զբոսաշրջային գործարք կնքած կազմակերպչին¹³ և (կամ) վաճառողին պարտավորեցնում էր ներկայացնել բավարար սպացույցներ իր անվճարունակության դեպքում սպառողի կողմից վճարված դրամական միջոցները վերադարձնելու, ինչպես նաև զբոսաշրջիկի՝ հայրենիք վերադարձի (ռեպատրիացիա) համար կատարված ծախսերը հատուցելու հնարավորության վերաբերյալ:

Նույն պահանջն ամրագրվել է նաև ԵՄ 2015 թ. նոր դիրեկտիվով, ի կատարումն որի՝ ԵՄ երկրներն իրենց օրենսդրություններ են ներմուծել համապատասխան կարգավորումներ: Ընդ որում՝ ինչպես 1990, այնպես էլ 2015 թվականի դիրեկտիվն անդամ պետություններին տվել է ֆինանսական ապահովման միջոցների ընտրության հնարավորություն՝ որպես նախապայման նախատեսելով միայն դրանց արդյունավետությունը:

Ըստ այդմ՝ ԵՄ անդամ, ինչպես նաև եվրոպական այլ երկրներում կիրառվում են ֆինանսական ապահովման տարբեր միջոցներ, ինչպիսիք են՝ բանկային երաշխիքը, զբոսաշրջային ընկերությունների պատասխանատվության ապահովագրությունը, բանկային դեպոզիտները, տրաստային հաշիվները, իրենց անդամների համար զբոսաշրջային ընկերությունների ասոցիացիաների երաշխավորությունները, երաշխիքային ֆոնդերը, այս միջոցների զուգակցումը¹⁴:

Նախագիծը արտագնա զբոսաշրջության հետ կապված ծառայություններ մատուցող զբոսաշրջային օպերատորի, ինչպես նաև իր անունից զբոսաշրջային փաթեթներ իրացնող արտագնա զբոսաշրջային գործակալի համար նախատեսում է «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ծանուցման հետ միաժամանակ երաշխիք ներկայացնելու պարտականություն (հոդված 14, մասեր 3-5):

¹³ Կազմակերպչին իր կարգավիճակով նույնանում է ՀՀ զբոսաշրջային օրենսդրությամբ նախատեսված՝ զբոսաշրջային օպերատորի, իսկ վաճառողը՝ զբոսաշրջային գործակալի հետ:

¹⁴ Sten Otcheskij I. E., *Защита прав потребителей в обязательствах по возмездному оказанию туристических услуг* Ж Монография, . М.: Юстициформ, 2017, էջեր 93-94: Այսպես, օրինակ՝ Լիտվայում կիրառվող ֆինանսական ապահովման միջոցներն են՝ ապահովագրական ընկերության կողմից տրամադրված ապահովագրական պոլիսը և/կամ բանկի կամ այլ ֆինանսական հաստատության ֆինանսական երաշխիքը, Լատվիայում՝ ապահովագրությունը կամ բանկային երաշխիքը, Ֆրանսիայում՝ Կոլեկտիվ երաշխավորման կազմակերպության, վարկային կամ ապահովագրական կազմակերպության երաշխիքները, Գերմանիայում՝ 2021 թվականի նոյեմբերից հետո՝ բացառապես «Զբոսաշրջային երաշխավորման ֆոնդերի (Reisesicherungsfondsgesetz) կողմից անվճարունակությունից պաշտպանության մասին» ակտով լիազորված՝ երաշխավորման ֆոնդի երաշխիքը, իսկ այն կազմակերպչների համար, որոնց՝ նախորդ ֆինանսական տարվա ընթացքում ստացված եկամուտը չի գերազանցում 10 մլն եվրոն՝ ապահովագրական ընկերության կողմից տրամադրված ապահովագրական պոլիսը կամ բանկային հաստատության կողմից տրամադրված երաշխիքը, Ավստրիայում՝ բանկային երաշխիքը, ապահովագրական պոլիսը կամ հանրային կազմակերպության երաշխիքը (guarantee from a public corporation), ՌԴ-ում՝ բանկային երաշխիքը, զբոսաշրջային օպերատորի պատասխանատվության ապահովագրությունը, ռեզերվային ֆոնդը և օպերատորի անձնական պատասխանատվության ֆոնդը, Բելառուսում՝ ապահովագրական ընկերությունների, բանկային կամ այլ ֆինանսավարկային կազմակերպությունների, զբոսաշրջային օպերատորների պատասխանատվության ֆոնդեր ձևավորած ասոցիացիաների երաշխիքները:

Թեև Նախագիծը չի հստակեցրել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից ներկայացվող երաշխիքի տեսակը՝ երաշխիքի ներկայացման հետ կապված հարաբերությունների կարգավորման լիազորությունը վերապահելով Հայաստանի Հանրապետության կառավարությանը (հոդված 14, մաս 6), այնուամենայնիվ ՀՀ օրենսդրությամբ երաշխիքի պարտավորությամբ որպես երաշխավոր կարող է հանդես գալ բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական ընկերությունը (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք¹⁵, հոդված 383), ուստի կարելի է եզրակացնել, որ Նախագծով, որպես զբոսաշրջային գործունեության ֆինանսական ապահովման միջոց, ընտրվել է ֆինանսական հաստատությունների կամ ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվող երաշխիքը:

2. Ֆինանսական ապահովման միջոցներով հատուցման պահանջ ներկայացնելու հիմքերը

2.1 Կատարման պատահական անհնարինությունը

Ինչպես նշվեց, դիրեկտիվն անդամ պետություններին պարտավորեցնում է երաշխավորել, որ իրենց տարածքում հիմնադրված կազմակերպիչները (վաճառողները) տրամադրում են զբոսաշրջիկների կողմից կամ հօգուտ նրանց կատարված վճարումների վերադարձի ապահովում այն դեպքում, **երբ համապատասխան ծառայությունները չեն կարող մատուցվել կազմակերպչի (վաճառողի) անվճարունակության հետևանքով**: Եթե զբոսաշրջային փաթեթում ընդգրկված է փոխադրման ծառայություն, ապա ապահովումը պետք է ծածկի նաև զբոսաշրջիկի հայրենիք վերադարձի ծախսերը (հոդված 17):

Այսինքն՝ դիրեկտիվով նախատեսված՝ պարտադիր ֆինանսական ապահովման մեխանիզմն ուղղված է ոչ թե առհասարակ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների քաղաքացիական կամ պայմանագրային պատասխանատվությանը, այլ միայն անվճարունակության հետևանքով պարտավորության կատարման անհնարինության դեպքում զբոսաշրջային փաթեթի արժեքի, իսկ փաթեթում փոխադրման ծառայություն ընդգրկված լինելու դեպքում նաև՝ զբոսաշրջիկի հայրենիք վերադարձի (ռեպատրիացիա) ծախսերի հատուցումն ապահովելուն:

Իհարկե, զբոսաշրջային գործունեության սուբյեկտները, առաջնորդվելով կամքի ինքնավարության սկզբունքով, զրկված չեն իրենց ընդհանուր պատասխանատվությունը, այդ թվում՝ ցանկացած պատճառով պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվությունը կամավոր ապահովելու հնարավորությունից: Ինչ վերաբերում է զբոսաշրջային գործունեության ոլորտում պարտադիր ֆինանսական ապահովմանը, ինչը, ըստ էության, դիրեկտիվով նախատեսված պահանջ է, ապա կարծում ենք՝ այս դեպ-

¹⁵ ՀՕ-239, ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

քում ֆինանսական ապահովման միջոցներով պահանջ ներկայացնելու հնարավորությունը ոչ թե ցանկացած, այլ միայն որոշակի հանգամանքներով պայմանավորված՝ պարտավորությունը չկատարելու դեպքերով սահմանափակելն արդարացված է՝ հաշվի առնելով պարտադիր ֆինանսական ապահովմամբ հետապնդվող նպատակները. չէ՞ որ քաղաքացիական շրջանառության մասնակիցների տնտեսական գործունեությանը ցանկացած միջամտություն, որը ենթադրում է վերջիններիս իրավունքների սահմանափակում, և որպիսին է նաև պարտադիր ֆինանսական ապահովում ունենալու պահանջը, պետք է հետապնդի համաչափ և արդարացված նպատակ: Հետևաբար, պարտադիր ֆինանսական ապահովման միջոցների կիրառության դեպքերը չպետք է անհարկի ընդլայնվեն, այլ պետք է սահմանափակվեն միայն այն իրավիճակներով, երբ, որևէ գործունեության բարձր ռիսկայնությամբ պայմանավորված, անձանց շահերի պաշտպանությունը պահանջում է իմպերատիվ երաշխիքներ (այդպիսին է օրինակ՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության դեպքը):

Այս կապակցությամբ համակարծիք ենք գրականության մեջ արտահայտված այն տեսակետին, որ զբոսաշրջության ոլորտում պարտադիր ֆինանսական ապահովման մեխանիզմը զբոսաշրջային գործունեության սուբյեկտի անվնարունակության հիմքով վերջինիս գործունեության դադարեցման դեպքում (ըստ մեզ՝ կատարման պատահական անհնարինության հանգեցնող որոշակի հիմքերով) զբոսաշրջիկների գույքային շահերի պաշտպանության միջոց է, որն անհրաժեշտ է տարանջատել այլ հիմքերով զբոսաշրջիկի հետ կնքված պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար զբոսաշրջային օպերատորի գույքային պատասխանատվության ապահովման միջոցներից¹⁶:

Անվնարունակության հիմքով ֆինանսական ապահովման միջոցներով հատուցման պահանջներ կարող են ներկայացվել երկու դեպքում. առաջին՝ երբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների անվնարունակությունը վրա է հասել պայմանագրի կնքումից հետո, սակայն մինչև դրա կատարումը, երկրորդ՝ երբ արդեն պայմանագրի կատարման ընթացքում զբոսաշրջային գործունեության սուբյեկտների անվնարունակության արդյունքում ծառայությունների մատուցումը դարձել է անհնարին: Վերջին դեպքում ապահովման մեխանիզմն ուղղված է չմատուցված ծառայությունների արժեքը հատուցելուն¹⁷:

Մինևույն ժամանակ դիրեկտիվը չի հստակեցրել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների «անվնարունակ» կարգավիճակին համապատասխանող հա-

¹⁶ Ст'ю Завьялова С., նշված աշխատությունը, <https://cyberleninka.ru/article/n/mehanizm-finansovyh-garantiy-prav-i-zakonnyh-interesov-turistov-vchera-segodnya-zavtra> (մուտք՝ 28.09.2023 թ.):

¹⁷ Ст'ю Carlos Torres, Javier Melgosa Arcos, Laurence Jegouzo and others, Collective commentary about new Package travel directive, ESHTTE, 2020, էջ 90; <https://intranet.eshte.pt/collectivecommentary>

մարվելու պահը՝ նկատի ունենալով տարբեր երկրներում անվճարունակության (սնանկության) վարույթների իրավական կարգավորման տարբերությունները:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի¹⁸ կարգավորումների և զբոսաշրջային գործունեության ոլորտում պարտադիր ֆինանսական ապահովմամբ հետապնդվող նպատակների համադրման արդյունքում գտնում ենք, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի սնանկության վտանգի վերաբերյալ դիմումը կամ սնանկության դիմումը դատարանի կողմից վարույթ ընդունելու պահից մինչև սնանկության գործն ավարտելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, այսինքն՝ սկսած զբոսաշրջային գործունեության սուբյեկտի առերևույթ անվճարունակության պահից մինչև անվճարունակության փաստի վերջնական հաստատումը, անվճարունակության հիմքով զբոսաշրջային ծառայությունների մատուցման պարտավորությունը կատարելու անհնարինության դեպքում երաշխիք տրամադրած բանկին, այլ վարկային հաստատությանը կամ ապահովագրական ընկերությանը կարող է ներկայացվել զբոսաշրջային փաթեթի արժեքը վերադարձնելու և զբոսաշրջիկի ռեպատրիացիայի ծախսերի հատուցման պահանջ, բացառությամբ եթե կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում սնանկության կառավարչի կողմից օրենքով սահմանված կարգով ներկայացված հաղորդման հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթ (հոդված 58, մաս 3)¹⁹:

Միևնույն ժամանակ, կարծում ենք՝ ֆինանսական ապահովման միջոցներով հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորությունը միայն զբոսաշրջային գործունեության սուբյեկտի անվճարունակության հիմքով սահմանափակելն արդարացված չէ, քանի որ անվճարունակությունը պարտավորության կատարման պատահական անհնարինության հանգեցնող միակ դեպքը չէ: Պրակտիկայում հաճախակի են այն դեպքերը, երբ այլ օբյեկտիվ պատճառներով ևս զբոսաշրջային ծառայությունների մատուցումը դառնում է անհնար:

Պայմանագրային հարաբերություններում պարտապանին պատասխանատվությունից ազատելու հիմքերից մեկը կատարման անհնարինությունն է: Այն դեպքում, երբ կատարման անհնարինությունն առաջացել է պարտապանի մեղքից անկախ, վերջինս ազատվում է պատասխանատվությունից, եթե ապացուցվի, որ կատարման անհնարինությունը հետևանք է այնպիսի հանգամանքների, որոնք կանխել ինքն ի վիճակի չէր: Կատարման անհնարինություն կարող է առաջանալ պատահարի կամ անհատլթահարելի ուժի, իրավասու մարմինների կողմից պարտավորության կատարումն արգելելու կամ սահմանափակելու հետևանքով²⁰:

¹⁸ ՀՕ-51-Ն, ընդունվել է 25.12.2006 թ., ուժի մեջ մտել՝ 10.02.2007 թ., ՀՀՊՏ 2007.01.31/7(531)

¹⁹ Նման բացառություն սահմանելու անհրաժեշտությունը կհիմնավորվի հաջորդիվ:

²⁰ Տե՛ս Բարսեղյան Տ., ՀՀ քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, 4-րդ հրատ., Եր., «Տիգրան մեծ» հրատ., 2014, էջեր 537-539:

Միևնույն ժամանակ, գործարարների պարտավորական հարաբերություններում նախատեսված է պատասխանատվության հատուկ կանոն, ըստ որի՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը (ՀՀ քաղ. օր., հոդված 417, մաս 3):

Հետևաբար, եթե օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա գործարարական գործունեության սուբյեկտը պատասխանատվությունից կազատվի, եթե ապացուցի, որ պարտավորությունը պատշաճ կատարելն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով:

Արտակարգ և անկանխելի կարող են համարվել ինչպես բնական երևույթները (երկրաշարժ, ջրհեղեղ, փոթորիկ, ձնասափ, հրաբուխ և այլն), այնպես էլ հասարակական երևույթները (պատերազմական գործողություններ, գործադուլ, համաճարակ և այլն): Չրոսաշրջության ոլորտում արտակարգ և անկանխելի հանգամանքների թվին է դասվում նաև օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ տվյալ պետություն զբոսաշրջիկների մուտքն արգելելու որոշումը:

Սա նշանակում է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտները՝ որպես գործարարներ, ճանապարհորդության ընթացքում կատարման պատահական անհնարինության հանգեցնող՝ անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքներ ի հայտ գալու դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հիշյալ նորմերի ուժով կարող են ազատվել պատասխանատվությունից, այսինքն՝ նաև նախատեսված ժամկետից շուտ զբոսաշրջիկի վերադարձի (ռեպատրիացիա) հետ կապված ծախսերը հատուցելու պարտականությունից, քանի որ անհաղթահարելի ուժի կամ պարտատիրոջ մեղքի առկայության դեպքում գործարարական բնույթ ունեցող պարտավորությունը դադարում է՝ առանց պատասխանատվություն առաջացնող պարտավորության փոխակերպվելու²¹:

Ինչ վերաբերում է անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքների հետևանքով նախքան ճանապարհորդությունը դրա չեղարկման դեպքում վճարված զբոսաշրջային փաթեթի արժեքը, ինչպես նաև կատարման անհնարինությամբ պայմանավորված՝ զբոսաշրջիկի վերադարձից հետո չմատուցված

²¹ Стѣн Брагинский М., Витрянский В., Договорное право, Общие положения, Книга первая, издание 3-е, М.: изд. Статут, 2001, էջ 263;
https://private-right.ru/wp-content/uploads/Dogovornoe_pravo_T1.pdf.

զբոսաշրջային ծառայությունների արժեքը վերադարձնելու՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պարտականությանը, ապա այս կապակցությամբ հարկ է նկատի ունենալ, որ կատարման անհնարինության դեպքում ապրանքներ փոխանցելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու պարտավորությունը թեև դադարում է, սակայն, որպես կանոն, ծագում է պատճառված վնասը հատուցելու, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների արժեքը վերադարձնելու պարտավորություն: Եթե կատարման անհնարինությունն առաջացել է այնպիսի հանգամանքների հետևանքով, որոնց համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ, նրանցից յուրաքանչյուրը կարող է պահանջել վերադարձնել այն, ինչի դիմաց ինքը հանդիպական բավարարում չի ստացել: Հակառակ դեպքում, պարտավորության՝ իր մասը կատարած, սակայն հանդիպական բավարարում չստացած կողմի հաշվին վերջինիս կոնտրագենտն անհիմն կհարստանա²²:

Այնուամենայնիվ, պրակտիկան վկայում է, որ զբոսաշրջային փայթեթում ընդգրկված ծառայությունների դիմաց վճարված գումարը զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից համապատասխան ծառայությունը մատուցող՝ իր կոնտրագենտներին փոխանցելուց հետո, նույնիսկ անհաղթահարելի ուժի հետևանքով ճանապարհորդության չեղարկելիս վերջիններս, որպես կանոն, հրաժարվում են վերադարձել զբոսաշրջային փայթեթի արժեքը՝ վկայակոչելով դրանք արդեն իսկ իրենց կոնտրագենտներին փոխանցված լինելու հանգամանքը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ դիրեկտիվը նախատեսում է նախքան ճանապարհորդությունը ծագած արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով պարտավորությունը չկատարելու դեպքում զբոսաշրջային փայթեթի արժեքի հատուցման, իսկ ճանապարհորդության ընթացքում նույն հանգամանքների ծագելու դեպքում՝ զբոսաշրջիկի վերադարձի և չնախատեսված կացության ծախսերի հատուցման հստակ երաշխիքներ: Այսպես, դիրեկտիվի 12-րդ հոդվածի 2-րդ մասը զբոսաշրջիկին իրավունք է տալիս նախքան ճանապարհորդությունը սկսելը լուծել պայմանագիրը՝ առանց որևէ հատուցում վճարելու այն դեպքում, եթե ժամանման վայրում կամ դրա անմիջական մոտակայքում ծագել են արտակարգ և անխուսափելի հանգամանքեր, որոնք էապես ազդում են զբոսաշրջային փայթեթի մատուցելու, կամ զբոսաշրջիկի՝ ժամանման վայր հասնելու վրա: Այս հիմքով պայմանագիրը լուծելիս զբոսաշրջիկը պետք է իրավունք ունենա ստանալու զբոսաշրջային փայթեթի համար կատարված վճարի ամբողջական հատուցում, բայց այլ լրացուցիչ հատուցում ստանալ չի կարող:

Դիրեկտիվը կարգավորումներ է նախատեսել նաև այն դեպքերի համար, երբ արտակարգ և անխուսափելի հանգամանքները ծագել են ճանապարհորդության ընթացքում: Այսպես, դիրեկտիվի 13-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ այն

²² Ст'у Брагинский М., Витрянский В., նշված աշխատ., նույն տեղում;
https://private-right.ru/wp-content/uploads/Dogovornoe_pravo_T1.pdf..

դեպքում, երբ արտակարգ և անխուսափելի հանգամանքների հետևանքով հնարավոր չէ ապահովել զբոսաշրջիկի՝ ժամանակին հայրենիք վերադարձը, կազմակերպիչը պետք է կրի վերջինիս կացության ծախսերը, ոչ ավելի, քան, երեք օր, եթե ուղևորների իրավունքների պաշտպանության օրենսդրությամբ ավելի երկար ժամկետներ նախատեսված չեն (նախաբան, կետ 35):

Վերոգրյալը թույլ է տալիս պնդել, որ, հաշվի առնելով զբոսաշրջային ծառայությունների մատուցման պարտավորության կատարման անհնարինության հետ կապված ռիսկերը, մասնավորապես՝ ճանապարհորդության ընթացքում կատարման անհնարինություն առաջանալու դեպքում զբոսաշրջիկի անհապաղ վերադարձն ապահովելու անհրաժեշտությունը, անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքների հետևանքով պարտավորությունը չկատարելու համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտների՝ օրենքի ուժով պատասխանատվությունից ազատված լինելը չի նշանակում, որ զբոսաշրջիկի ծախսերն առհասարակ չպետք է հատուցվեն:

Մեր կարծիքով, այս դեպքում նույնպես որպես զբոսաշրջիկների գույքային շահերի պաշտպանության միջոց պետք է կիրառվի ֆինանսական երաշխիքի մեխանիզմը: Այդ ուղղությամբ է ընթանում նաև միջազգային պրակտիկան²³:

Ինչպես արդարացիորեն նշվում է իրավաբանական գրականության մեջ, պարտավորական իրավահարաբերությունների առանձնահատկությունն արտահայտվում է ոչ միայն պարտավորության պատշաճ կատարում պահանջելու, այլև պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում հատուցում ստանալու՝ պարտատիրոջ իրավունքով. պարտավորական իրավահարաբերությունը փոխկապակցված հարաբերությունների համալիր է: Համապատասխանաբար, պարտավորության ապահովումը չի կարող հանգել միայն պարտապանի կողմից հիմնական պարտավորության պատշաճ կատարման ապահովմանը՝ դրանով իսկ սահմանափակելով պարտատիրոջ իրավունքը՝ ապահովման միջոցով վերացնելու հիմնական պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքները: Ապահովման ենթակա է համալիր

²³ Օրինակ՝ Կանադայի Քվեբեք նահանգի Քաղաքացիական օրենսգրքի 2464-րդ հոդվածի համաձայն՝ ապահովագրողը պարտավոր է հատուցել անհաղթահարելի ուժի կամ ապահովագրի մեղքով պատճառված վնասը, եթե կողմերի միջև կնքված պայմանագրով բացառություն նախատեսված չէ: «Զբոսաշրջության մասին» Բելառուսի 2021 թվականի նոյեմբերի 11-ի օրենքի թիվս այլնի, զբոսաշրջային օպերատորի կողմից պարտավորության կատարման անհնարինության դեպք է ամրագրում նաև անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքները, որոնք ծագել և այդպիսին են ճանաչվել այն երկրում, որի տարածքում նախատեսվում էր իրականացնել միջազգային ճանապարհորդությունը, ինչպես նաև արտասահմանյան պետության իրավասու մարմնի կողմից զբոսաշրջիկների մուտքն իր տարածք արգելելու կամ սահմանափակելու վերաբերյալ որոշման ընդունումը (հոդված 26): Արտակարգ իրավիճակներում զբոսաշրջիկների ռեպատրիացայի ծախսերի հատուցման մեխանիզմներ են նախատեսված նաև «Ռուսաստանի Դաշնությունում զբոսաշրջային գործունեության հիմունքների մասին» 1996 թ. նոյեմբերի 24-ի ՌԴ ֆեդերալ օրենքի 11.4-րդ հոդվածը:

պարտավորական իրավահարաբերությունը, այդ թվում՝ պարտադիրորջը պետք է երաշխավորվի ապահովման միջոցով ստանալու ոչ այնքան պարտավորության պատշան կատարում, որը հաճախ կարող է նաև անհնար լինել, որքան դրա դիմաց փոխհատուցում, այդ թվում՝ վնասների հատուցում²⁴:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ որպես ֆինանսական երաշխիքով հատուցման պահանջ ներկայացնելու հիմք անհրաժեշտ է նախատեսել զբոսաշրջային ծառայությունների մատուցման համար արգելք հանդիսացող արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքների (անհաղթահարելի ուժ), այդ թվում՝ օտարերկրյա պետության իրավասու մարմնի ակտով տվյալ պետություն զբոսաշրջիկների մուտքն արգելելու, ինչպես նաև արտագնա զբոսաշրջային ծառայություններ մատուցող զբոսաշրջային օպերատորի և իր անունից զբոսաշրջային փաթեթներ իրացնող արտագնա զբոսաշրջային գործակալի անվճարունակության հետևանքով պարտավորության կատարման անհնարինությանը պայմանավորված՝ զբոսաշրջային ծառայությունների մատուցման պարտավորությունը չկատարելը:

Ինչ վերաբերում է անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքներին, ապա դրանք յուրաքանչյուր դեպքում կարող են մասնավորեցվել կոնկրետ պայմանագրով, ինչը թույլ կտա կողմերին խուսափել անհաղթահարելի ուժի մեկնաբանման հարցում իրավական անորոշությունից²⁵:

2.2. Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների՝ առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող արարքները

Գործնականում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ զբոսաշրջային ծառայությունների մատուցման պարտավորությունը չի կատարվում սուբյեկտիվ պատճառներով, այդ թվում՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների դիտավորյալ հակաիրավական, ընդհուպ՝ քրեական օրենքով նախատեսված հանցակազմների հատկանիշներ պարունակող արարքների արդյունքում: Նման իրավիճակներում ողջամտորեն կարող է բարձրացվել ֆինանսական ապահովման միջոցների կիրառելիության հարցը:

Այս հարցի վերաբերյալ դեռևս ԵՄ նախկին՝ 1990 թվականի 90/134 դիրեկտիվի գործողության ընթացքում իր իրավական դիրքորոշումն է արտահայտել Եվրոպական միության արդարադատության դատարանը: Այսպես, մի գործով Համբուրգի շրջանային դատարանը կասեցրել էր գործի քննությունը և դիմել էր Արդարադատության դատարան՝ ստանալու դիրեկտիվի մեկնաբանությունն առ այն, թե դրանով նախատեսված՝ անվճարունակությունից պաշտպանության մե-

²⁴ St'u Леухова М., Трезубов С., Проблемы правовой природы финансового обеспечения деятельности туроператора//Вестник Кемеровского государственного университета, 2015, N 2 /62/, էջ 279:

²⁵ St'u C. Torres, F. Javier Melgosa Arcos, L. Jegouzo, V. Francescellini, F. Morandi, Tourism law in Europe, pub. house "ESHTE", 2022, էջ 90, <https://publications.eshte.pt/dir/tlie/tlie/4/>.

խանհիզմը կիրառելի է արդյոք այն դեպքերում, երբ ճանապարհորդության կազմակերպիչն անվճարունակ է դառնում ի սկզբանե հանցավոր դիտավորությանը զբոսաշրջիկի կողմից վճարված գումարը ոչ վերջինիս ճանապարհորդությունը կազակերպելու նպատակով օգտագործելու արդյունքում: Մույն գործով Արդարադատության դատարանն արձանագրեց, որ նախևառաջ պետք է նկատի ունենալ, որ դիրեկտիվը ճանապարհորդության կազմակերպչի վրա դրել է պարտականություն՝ ներկայացնելու իր անվճարունակության դեպքում զբոսաշրջիկի կողմից վճարված՝ զբոսաշրջային փաթեթի արժեքի և զբոսաշրջիկի ռեպատրիացիայի ծախսերի հատուցման համար բավարար ապահովում, ընդ որում՝ այդ ապահովման նպատակը կազմակերպիչների անվճարունակության հետևանքով առաջացող ֆինանսական ռիսկերից սպառողներին պաշտպանելն է: Հետևաբար, ակնհայտ է, որ դիրեկտիվը երաշխիքներ չի նախատեսում միայն կոնկրետ պատճառներով առաջացած անվճարունակության համար: Դատարանի եզրահանգմամբ՝ ճանապարհորդության կազմակերպչի ոչ շրջահայաց (հանցավոր) վարքագիծը կամ արտակարգ և չնախատեսված իրավիճակները չեն կարող խոչընդոտել զբոսաշրջային փաթեթի արժեքի վերադարձին և զբոսաշրջիկի ռեպատրիացիային, քանի որ դիրեկտիվը հետապնդում է սպառողների իրավունքների պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու նպատակ: Այսպիսով, Արդարադատության դատարանն արձանագրեց, որ անվճարունակությունից պաշտպանության մեխանիզմը կիրառելի է նաև այն դեպքերում, երբ կազմակերպչի անվճարունակությունն առաջացել է վերջինիս խարդախ վարքագծի (fraudulent conduct) արդյունքում²⁶:

Արդարադատության դատարանի՝ նշված իրավական դիրքորոշման համար հիմք հանդիսացող գործի փաստերի, ինչպես նաև Դատարանի եզրահանգումների վերլուծության արդյունքում դժվար չէ նկատել, որ ներկայացված դիրքորոշումը վերաբերելի է այն դեպքերին, երբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների գործողությունները պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի 288-րդ հոդվածով նախատեսված՝ կանխամտածված սնանկության հանցակազմի հատկանիշներ:

Միևնույն ժամանակ նույն խնդիրն առկա է նաև զբոսաշրջային գործունեության սուբյեկտների հանցավոր այլ արարքների դեպքում: Այսպես, ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական պրակտիկայում լայն տարածում ունեն զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կամ որպես այդպիսիք ներկայացած անձանց կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածով նախատեսված՝ խարդախության հանցակազմի հատկանիշներ պարունակող գործողությունների, մասնավորապես՝ խաբեության կամ զբոսաշրջիկների վստահությունը չարա-

²⁶ St'u Judgement of the Court of Justice of European Union of 16 February 2012, issue C-134/11, ECLI:EU:2012:98

շահելու եղանակով խարդախությամբ զբոսաշրջիկների գումարները հափշտակելու դեպքերը²⁷, որոնց պարագայում զբոսաշրջիկների գույքային շահերի պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունը նույնպես արդիական է:

Հարկ է նշել, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների հանցավոր արարքներից զբոսաշրջիկների գույքային շահերի պաշտպանության հարցը քննարկման առարկա է դարձվել նաև իրավաբանական գրականության մեջ: Այսպես, Ի. Օտչեսկին, վերլուծելով ռուսական զբոսաշրջային օրենսդրությունը, որը որպես ֆինանսական ապահովման միջոցներ նախատեսում է զբոսաշրջային օպերատորի պատասխանատվության ապահովագրությունը և բանկային երաշխիքը, և հղում անելով ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 963-րդ հոդվածին, համաձայն որի՝ ապահովագրողն ազատվում է հատուցում վճարելու պարտականությունից, եթե ապահովագրական պատահարն առաջացել է ապահովադրի, ապահովագրված անձի կամ շահառուի դիտավորյալ գործողությունների արդյունքում, ինչպես նաև ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 928-րդ հոդվածի 1-ին մասին, համաձայն որի՝ չի թույլատրվում հակաօրինական շահերի ապահովագրությունը, եզրակացնում է, որ հանցագործության կամ այլ դիտավորյալ իրավախախտման համար պատասխանատվությունն ապահովագրման ենթակա չէ, ուստի այս դեպքում զբոսաշրջային օպերատորի պատասխանատվության ապահովագրությունը՝ որպես ֆինանսական ապահովման միջոց, կիրառելի չէ²⁸: Մ. Բրազինսկին նույն կապակցությամբ նշում է, որ օրենսդիրը, առաջնորդվելով քաղաքացիական իրավունքի հիմնարար սկզբունքներով, անթույլատրելի է համարել ապահովագրական հատուցում վճարելն այն դեպքում, երբ ապահովագրական պատահարն առաջացել է դիտավորյալ հակաիրավական գործողության արդյունքում շահ ստանալու՝ ապահովագրված անձի ձգտման հետևանքով: Այս դեպքում հատուցում պահանջելու իրավունքից զրկելու հիմքում, ի թիվս այլնի, ընկած է նաև հանրային շահը: Այդ իսկ պատճառով օրենսդիրն անթույլատրելի է համարում պայմանագրում որպես ապահովագրական պատահար այնպիսի հանգամանքի ամրագրումը, որը կարող է լինել սեփական դիտավորության հետևանք²⁹:

Կարծում ենք՝ այս վերլուծությունները կիրառելի են նաև հայրենական օրենսդրական կարգավորումների պայմաններում: Այսպես, ՀՀ Քաղ. օր. 1019-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց, եթե ապահովագրական պատահարը վրա է հասել ապահովադրի, ապահովագրված անձի կամ շահառուի դիտավորության

²⁷ Տե՛ս օրինակ՝ «Դավինչի» ՄՊ զբոսաշրջային ընկերության կողմից խարդախությամբ առանձնապես խոշոր չափերով գումար հափշտակելու դեպքով նախաձեռնված քրեական վարույթի վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի հաղորդումը <https://investigative.am/news/view/davinchi-khardakhutyun.html>.

²⁸ Տե՛ս Отческий И., նշված աշխատ., էջ 103:

²⁹ Հղումը ըստ Отческий И., նշված աշխատ., էջ 104:

հետևանքով: Օրենսգրքի 984-րդ հոդվածի համաձայն՝ չի թույլատրվում հակաօրինական շահերի ապահովագրությունը:

«Չբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ որպես ֆինանսական ապահովման միջոց նախատեսում է երաշխիքը: «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքով³⁰ ապահովագրական ընկերության կողմից տրամադրվող երաշխիքը ոչ կյանքի ապահովագրության դասերից մեկն է (հոդված 7, մաս 2, կետ 15), հետևաբար դրա նկատմամբ կիրառելի է հակաօրինական շահերի, ինչպիսին է նաև զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող արարքի արդյունքում պարտավորությունը չկատարելու դեպքում զբոսաշրջիկին ծախսերի հատուցման համար ապահովագրական երաշխիք տրամադրելու և այդ դեպքում ապահովագրական հատուցում վճարելու արգելքը:

Այսպիսով, ակնհայտ է, որ ապահովագրության ձևով ֆինանսական ապահովումը զբոսաշրջիկներին չի պաշտպանում զբոսաշրջային գործունեության սուբյեկտների հանցավոր և դիտավորյալ հակահրավակական այլ գործողություններից³¹: Մինևույն ժամանակ, մասնագիտական գրականության մեջ կա կարծիք, որ չկա որևէ օրենսդրական արգելք այդ դեպքերում բանկային երաշխիքով հատուցում պահանջելու համար³²: Որոշ հեղինակներ էլ առաջարկում են տարանջատել բանկային երաշխիքի և ապահովագրության կիրառման հիմքերը՝ կանխամտածված սնանկության և խարդախության՝ (զբոսաշրջիկների վնասած գումարների հափշտակության և անհետացման դեպքում) կիրառելով բանկային երաշխիք, իսկ այլ ռիսկերի դեպքում՝ զբոսաշրջային օպերատորների պատասխանատվության ապահովագրության³³:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ երաշխիքի կանոնակարգմանը նվիրված դրույթների ուսումնասիրությունից ևս բխում է, որ նման դեպքերում բանկային երաշխիքի կիրառման ուղղակի արգելք օրենսդրորեն նախատեսված չէ: Մակայն մեր կարծիքով պարտապանի հանցավոր վարքագծի արդյունքում վնաս պատճառելու ռիսկի ֆինանսական ապահովումը չի բխում նաև բանկային երաշխիքի՝ որպես պարտավորության ապահովման միջոցի տրամաբանությունից, քանի որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից սեփական դիտավորյալ հակահրավակական արարքների հետևանքով պատճառված վնասի հատուցումը բանկային երաշխիքով ապահովելու հնարավորությունը «կարժեգրկի» պարտապանի ստանձնած պարտավորությունը՝ կանխավ հիմքեր ստեղծելով վերջինիս անբա-

³⁰ ՀՀ օրենք, ՀՕ-177-Ն, ընդունվել է 09.04.2007 թ., ուժի մեջ մտել՝ 30.09.2007 թ., ՀՀՊՏ 2007.05.30/27(551):

³¹ Տե՛ս Отческий И., նշված աշխատ., էջ 104:

³² Տե՛ս Отческий И., նշված աշխատ., նույն տեղում:

³³ Տե՛ս Дедиков С.В., Выплаты произведены, но проблемы остались// Законы России: опыт, анализ, практика, 2008, N 3, էջ 69:

րեխիդն վարքագծի համար և այդպիսով խախտելով իրավահարաբերության մասնակիցների շահերի հավասարակշռությունը³⁴:

Ավելին, կարծում ենք՝ նման ռիսկերն ապահովելու նպատակով ֆինանսական կազմակերպությունների հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելն ինքնին անտրամաբանական է, քանի որ դժվար է պատկերացնել պարտավորությունը չկատարելու դիտավորություն ունեցող, առավել ևս՝ հանցավոր նպատակներ հետապնդող անձի կողմից ի սկզբանե իր պարտավորության կատարման ապահովման նպատակով ֆինանսական կազմակերպություններին դիմելը:

Բացի այդ, դատելով ՀՀ առևտրային բանկերի կողմից առաջարկվող բանկային երաշխիքների տրամադրման պայմաններից, որոնց՝ կոնտրազենտի համապատասխանությունը ենթադրում է վերջինիս հուսալիության բարձր մակարդակ, կարծում ենք՝ բանկերը նույնպես կիռուսափեն երաշխիքներ տրամադրել հանցագործության հետևանքով զբոսաշրջիկի վնասների հատուցման համար:

Մինևույն ժամանակ, չհերքելով ՀՀ զբոսաշրջային պրակտիկայում լայն տարածում ունեցող նման դեպքերի հանրային բարձր վտանգավորությունը և զբոսաշրջիկների գույքային շահերի պաշտպանության անհրաժեշտությունը՝ կարծում ենք, որ նշված դեպքերում կարող են կիրառվել պաշտպանության այլ միջոցներ: Ըստ մեզ՝ այդ նպատակին կարող է ծառայել միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող այնպիսի մեխանիզմ, ինչպիսին երաշխիքային ֆոնդն է:

Երաշխիքային, ռեզերվային կամ նմանատիպ այլ ֆոնդերի կիրառման արտասահմանյան երկրների փորձը վկայում է, որ առանձին տարբերություններով հանդերձ, դրանց գաղափարն ընդհանուր առմամբ այն է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից պարտադիր վճարվող որոշակի հատկացումների հաշվին ձևավորվող ֆոնդի միջոցները ծառայում են որպես երաշխիք որոշակի պատճառներով զբոսաշրջային ծառայությունները չմատուցելու դեպքում զբոսաշրջիկների վնասների հատուցման համար:

Զբոսաշրջային փաթեթի արժեքի, ինչպես նաև զբոսաշրջիկների ռեպատրիացիայի ծախսերի հատուցումը երաշխավորող ֆինանսական ապահովման հիմնական միջոցների՝ ապահովագրական ընկերության կամ ֆինանսական հաստատության կողմից տրամադրվող երաշխիք ներկայացնելու՝ օրենսդրական պահանջի առկայության պայմաններում երաշխիքային ֆոնդը, ըստ մեզ, պետք է ծառայի որպես «պահեստային» միջոց այն դեպքերի համար, երբ հատուցումը ֆինանսական ապահովման այլ միջոցներով անհնար է:

Հարկ է նշել, որ երաշխիքային ֆոնդի գաղափարը ՀՀ օրենսդրության համար նոր չէ: Այսպես, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը³⁵

³⁴ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Обзор судебной практики Верховного суда Российской Федерации № 3 (2020) (Утвержден Президиумом Верховного Суда Российской Федерации 25 ноября 2020 г.):

³⁵ ՀՕ-177-Ն, ընդունվել է 18.05.2010 թ., ուժի մեջ մտել՝ 30.09.2007թ., ՀՀՊՏ 2010.06.16/26(760):

նախատեսում է վնասների հատուցումն ապահովող Երաշխավորման ֆոնդի ինստիտուտը: Նշված օրենքի 49-րդ հոդվածը սահմանում է այն դեպքերը, երբ անձին պատճառված վնասը հատուցվում է այդ ֆոնդի միջոցներով: Դրանք են՝ պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձի անհայտ լինելը, պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագրի կնքված չլինելը, հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ վնաս պատճառելը, վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերության անվճարունակ (սնանկ) ճանաչվելը, եթե նա օրենքի համաձայն պարտավոր էր հատուցել պատճառված վնասը:

Թվարկված դեպքերի ուսումնասիրությունից բխում է, որ դրանք այնպիսի իրավիճակներ են, երբ սուբյեկտիվ պատճառներով անհնար է պատասխանատվության պարտադիր ապահովագրության միջոցով անձանց պատճառված վնասի հատուցումը, բացառությամբ ԱՊՊԱ պայմանագրի կնքած ապահովագրական ընկերության՝ անվճարունակ (սնանկ) ճանաչվելու դեպքի, որը թերևս հիմնական ֆինանսական ապահովման միջոցով հատուցում վճարելու անհնարինության օբյեկտիվ պատճառ է:

Անդրադառնալով զբոսաշրջության ոլորտում հնարավոր նման իրավիճակներին՝ կարծում ենք՝ այսպիսիք են հենց զբոսաշրջային գործունեության սուբյեկտների հակաիրավական գործողությունների առնչությամբ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված առերևույթ հանցանքի վերաբերյալ քրեական վարույթ նախաձեռնված լինելու իրավիճակները³⁶: Միևնույն ժամանակ, որպես երաշխավորման ֆոնդի միջոցներով հատուցման դեպք, ըստ մեզ, անհրաժեշտ է նախատեսել նաև երաշխիք տրամադրած ապահովագրական ընկերության կամ բանկի (այլ վարկային հաստատության անվճարունակությունը) սնանկությունը, եթե նա օրենքի համաձայն պարտավոր էր հատուցել պատճառված վնասը:

Ինչ վերաբերում է Երաշխիքային ֆոնդի միջոցների ձևավորմանը, ապա կարծում ենք՝ այս դեպքում նույնպես անհրաժեշտ է առաջնորդվել ֆինանսական ապահովման այս միջոցը կիրառող երկրների փորձով, ինչպես նաև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքով (հոդված 46) ամրագրված կարգավորումներով, մասնավորապես՝ արտագնա զբոսաշրջային օպերատորների և իրենից անունից զբոսաշրջային փաթեթներ իրացնող արտագնա զբոսա-

³⁶ Չբոսաշրջային գործունեության սուբյեկտների դիտավորյալ հակաիրավական այն գործողությունների համար պատասխանատվությունը, որոնք չեն պարունակում առերևույթ հանցագործության հատկանիշներ, քաղաքացիաիրավական կարգավորումների տիրույթում է, ուստի դրանց համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվության կամ դրա ֆինանսական ապահովման հարցը դուրս է մեր կողմից առաջարկվող երաշխիքային ֆոնդի ինստիտուտի տրամաբանությունից:

շրջային գործակալների՝ նախորդ տարվա շահույթից որոշակի տոկոսով հատկացումներ կատարելու միջոցով Երաշխիքային ֆոնդ ձևավորելով՝ ֆոնդի կառավարչին ընձեռելով վնաս պատճառած անձի դեմ համապատասխան դեպքերում հետադարձ պահանջ ներկայացնելու իրավունք:

Եզրակացություն

Չքոսաշրջիկների գույքային շահերի պաշտպանությունն ապահովելու, ինչպես նաև զբոսաշրջության ոլորտի իրավական կարգավորման միջազգային չափանիշներին համապատասխանելու նպատակով ՀՀ օրենսդրությամբ զբոսաշրջային գործունեության ֆինանսական ապահովման ինստիտուտի ներդրումն օբյեկտիվ անհրաժեշտություն է: Այդ մասին են վկայում նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները և ի կատարումն դրանց մշակված «Չքոսաշրջության մասին» նոր օրենքի նախագիծը, որը, սակայն, սահմանափակվում է միայն զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից երաշխիք ներկայացնելու պարտականության ամրագրմամբ՝ առանց մանրամասնելու ֆինանսական ապահովման ինստիտուտի իրավական կարգավորման հետ կապված մի շարք կարևոր հարցեր:

ԵՄ դիրեկտիվը պահանջում է երաշխավորել անվճարունակությունից պաշտպանության մեխանիզմների առկայությունը՝ միևնույն ժամանակ երաշխիքներ նախատեսելով ինչպես նախքան ճանապարհորդությունը սկսելը, այնպես էլ դրա ընթացքում արտակարգ և անխուսափելի հանգամանքների հետևանքով պարտավորության կատարման անհնարինության դեպքում:

Հաշվի առնելով վերագրյալը՝ գտնում ենք, որ որպես ֆինանսական հաստատությունների կամ ապահովագրական ընկերությունների կողմից տրվող երաշխիքով հատուցման պահանջ ներկայացնելու հիմք՝ անհրաժեշտ է նախատեսել զբոսաշրջային ծառայությունների մատուցման համար արգելք հանդիսացող արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքների (անհաղթահարելի ուժ), այդ թվում՝ օտարերկրյա պետության իրավասու մարմնի ակտով տվյալ պետություն զբոսաշրջիկների մուտքն արգելելու, ինչպես նաև զբոսաշրջային գործունեության սուբյեկտի՝ անվճարունակության հետևանքով պարտավորության կատարման անհնարինությամբ պայմանավորված՝ զբոսաշրջային ծառայությունների մատուցման պարտավորությունը չկատարելը:

Ընդ որում՝ մեր կարծիքով ֆինանսական ապահովման այս միջոցով պահանջ կարող է ներկայացվել սնանկության վտանգի վերաբերյալ կամ սնանկության դիմումը դատարանի կողմից վարույթ ընդունելու պահից մինչև սնանկության վարույթն ավարտելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ, եթե կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում սնանկության կառավարչի կողմից օրենքով սահմանված կարգով ներկայացված հաղորդման հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պրակտիկայում լայն տարածում ունեն գրոսաշրջային գործունեության սուբյեկտների՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված առերևույթ հանցագործությունների հատկանիշներ պարունակող արարքներ կատարելու դեպքերը, ինչպես նաև նկատի ունենալով նման դեպքերում ապահովագրական երաշխիքի կիրառման օրենսդրական արգելքը և բանկային երաշխիքի կիրառման աննպատակահարմարությունը՝ կարծում ենք՝ անհրաժեշտ է ներդնել գրոսաշրջային գործունեության սուբյեկտների հակաիրավական գործողությունների առնչությամբ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված առերևույթ հանցանքի վերաբերյալ քրեական վարույթ նախաձեռնված լինելու, ինչպես նաև երաշխիք տրամադրած ապահովագրական ընկերության կամ բանկի (այլ վարկային հաստատության անվճարունակության) սնանկության (եթե նա օրենքի համաձայն պարտավոր էր հատուցել պատճառված վնասը) դեպքում արտագնա գրոսաշրջային օպերատորների և իրենց անունից փաթեթներ իրացնող գրոսաշրջային գործակալների ամենամյա հատկացումների հաշվին ձևավորված Երաշխիքային ֆոնդի միջոցներով գրոսաշրջային փաթեթի արժեքը և գրոսաշրջիկի ռեպատրիացիայի ծախսերը հատուցելու իրավական կառուցակարգ:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագիր, կնքվել է 2017 թվականի նոյեմբերի 24-ին, ՀՀ Ազգային ժողովի կողմից: “Comprehensive and Enhanced Partnership Agreement Between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, on one side, and the Republic of Armenia, on the other side, signed on 24.12.2017, ratified by the National Assembly of RA on 18.04.2018.
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50): The Civil Code of the Republic of Armenia, LA-239 (adopted on 05.05.1998, entered into force on 01.01.1999, Official Journal of the Republic of Armenia 1998.08.10/17(50).
3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 05.05.2021 թ., ուժի մեջ մտել՝ 27.05.2021 թ.: The Criminal Code of the Republic of Armenia, LA-199-N, adopted on 05.05.2021, entered into force on 27.05.2021.
4. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-11-Ն, ընդունվել է 17.12.2003 թ., ուժի մեջ մտել՝ 08.02.2004 թ., ՀՀՊՏ 2004.01.29/6(305): “Law on Tourism and Tourism Activity” of RA, Adopted on 17.12.2003, Entered Into Force on 08.02.2004, Official Journal of the Republic of Armenia 2004.01.29/6(305).
5. «Մնանկության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-51-Ն, ընդունվել է 25.12.2006 թ., ուժի մեջ մտել՝ 10.02.2007 թ., ՀՀՊՏ 2007.01.31/7(531): “Law on bankruptcy” of RA, LA-51-N, adopted 17.12.2003, entered into force on 08.02.2004, Official Journal of the Republic of Armenia 2007.01.31/7(531).
6. «Ապահովագրության և սպահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-177-Ն, ընդունվել է 09.04.2007 թ., ուժի մեջ մտել՝ 30.09.2007 թ., ՀՀՊՏ 2007.05.30/27(551):. “Insurance and Insurance Activities” Law of RA, LA-177-N, adopted on 09.04.2007, entered into force on 30.09.2007, Official Journal of the Republic of Armenia 2007.05.30/27(551).
7. «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր սպահովագրության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-177-Ն, ընդունվել է 18.05.2010 թ., ուժի մեջ մտել՝ 30.09.2007թ, ՀՀՊՏ 2010.06.16/26(760):

- “Law on Obligatory Insurance of Liability Arising from Use of Motor Vehicles”, LA-177-N, adopted on 18.05.2010, entered into force on 30.09.2007, Official Journal of the Republic of Armenia 2010.06.16/26(760).
8. Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-L որոշում:
“Decision of the Government of the Republic of Armenia No 1902-L of 18 November 2021 ‘‘On approving the 2021-2026 Action Plan of the Government of the Republic of Armenia’’.
9. «Զբոսաշրջության մասին» օրենքի նախագիծ:
The draft law of RA “On tourism”.
<http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=14395&Reading=0>.
10. Directive (EU) 2015/2302 of the European Parliament and of the Council of 25 November 2015 “On Package Travel and Linked Travel Arrangements”, amending Regulation (EC) No 2006/2004 and Directive 2011/83/EU of the European Parliament and of the Council and repealing Council Directive 90/314/EEC.
11. Council of European Union Directive 90/314/EEC of 13 June 1990 “On Package Travel, Package Holidays and Package Tours”.
12. The Civil Code of Germany of 1896.
13. The Civil Code of Quebec of 18.12.1991.
14. The Tourism Code of France of 20.12.2004.
15. “Tourism Law” of Latvia of 7.10.1998.
16. “Law on Tourism” of Lithuania of 19.03.1998.
17. “Austrian Trade Act” of 25.11.1994.
18. Judgement of the Court of Justice of European Union of 16 February 2012, issue C-134/11, ECLI:EU:2012:98
19. Решение Высшего Евразийского экономического совета от 14 мая 2018 г. № 7 «О внесении изменений в перечень секторов (подсекторов) услуг, в которых функционирует ЕРУ в рамках Евразийского экономического союза». Decision of Supreme Eurasian economic council of 14.05.2018 N 7 “On amendments to the list of sectors (subsectors) of services in which the ERU operates within the framework of the Eurasian Economic Union.
20. Федеральный закон РФ «Об основах туристской деятельности в Российской Федерации» от 24.11.1996.
Federal law of the Russian Federation of 24.11.1996 “About Basis of Tourism Activity in Russian Federation”.
21. Закон «О туризме» Республики Беларусь от 11.11.2021.
Law “On tourism” of the Republic of Belarus of 11.11.2021.

22. Обзор судебной практики Верховного суда Российской Федерации № 3 (2020) (Утвержден Президиумом Верховного Суда Российской Федерации 25 ноября 2020 г.).
Presidium of the Supreme Court of the Russian Federation, Review of judicial practice of the Supreme Court of the Russian Federation, No. 3 (2020).
23. Բարսեղյան Տ., ՀՀ քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, 4-րդ հրատ., Եր., «Տիգրան մեծ» հրատ., 2014:
Barseghyan T. K., Civil Law of the Republic of Armenia, first part, 4th ed., “Tigran Mets” pub. house, Yerevan, 2014.
24. C. Torres, J. Melgosa Arcos, L. Jegouzo and others, Collective Commentary about new Package Travel Directive, “ESHTE” pub. house, 2020;
<https://intranet.eshte.pt/collectivecommentary>.
25. C. Torres, J. Melgosa Arcos, L. Jegouzo, V. Francescelli, F. Morandi, Tourism law in Europe, “ESHTE” pub. house, 2022; <https://publications.eshte.pt/dir/tlie/tlie/4/>.
26. Брагинский М.: Витрянский В., Договорное право, Общие положения, Книга первая, издание 3-е, М., изд. Статут, 2001.
Braginski M., Vitryanski V., “Contract Law, General Provisions”, Book One, 3rd edition, М., “Statute“ pub. house, 2001).https://private-right.ru/wp-content/uploads/Dogovornoe_pravo_T1.pdf
27. Дедиков С., Выплаты произведены, но проблемы остались//Законы России: опыт, анализ, практика, 2008, N 3.
Dedikov S., “Payments have been made, but problems still remain// Laws of Russia: experience, analysis, practice, 2008, N 3.
28. Завьялова С., Механизм финансовых гарантий прав и законных интересов туристов: вчера, сегодня, завтра// Общество: политика, экономика, право, N 9, 2016.
Zavyalova S., “The mechanism of financial guarantees of the rights and legitimate interests of tourists: yesterday, today, tomorrow// Society: politics, economics, law, N 9, 2016. <https://cyberleninka.ru/article/n/mehanizm-finansovyh-garantiy-prav-i-zakonnyh-interesov-turistov-vchera-segodnya-zavtra>.
29. Леухова М., Трезубов С., «Проблемы правовой природы финансового обеспечения деятельности туроператора»//Вестник Кемеровского государственного университета, 2015, N 2 /62.
Leukhova M., Trezubov S., “Issues of the legal nature of financial security for the activities of a tour operator// Bulletin of Kemerovo State University, 2015, N 2 /62.
30. Отческий И., «Защита прав потребителей в обязательствах по возмездному оказанию туристических услуг»: Монография, М.: изд. «Юстицинформ», 2017.
Otcheskiy I., “Protection of consumer rights in obligations for the provision of tourist services”, Monography, М., “Justitsinform” pub. house, 2017.

Eva Saghoyan

*Adviser to the Prosecutor General of the Republic of Armenia,
Ph.D. student at Civil Law Chair, Faculty of Law, Yerevan State University*

LEGAL INSTITUTION OF FINANCIAL SECURITY AS A MEAN OF PROTECTION OF TOURISTS' PROPRIETARY INTERESTS¹

Abstract

The article is devoted to some issues of incorporation of financial security mechanism into domestic legislation in the context of the international obligations of the Republic of Armenia. The aim of the article is to compare means of financial security – determined in the laws of foreign countries – with the ones determined in the new draft law “On Tourism” in light of international criteria for the legal regulation of tourism activities, as well as to discuss some problems related to the grounds of payoff by means of financial security. As a result of research of foreign and domestic practice, the author proposes to determine as an obligatory means of financial security for tourism activities not only bank’s or other credit or insurance company’s guarantee, but also a Guarantee Fund, formed through annual payments of subjects of tourism activities. It is also proposed to differentiate the scope of application of each of these means of financial security, taking into account the objectivity or subjectivity of the reasons for non-fulfillment of the obligation as a criterion for such differentiation.

In particular, according to the author, a demand for payoff can be presented to a bank, other credit or insurance company in case of failure to fulfill an obligation due to the impossibility of fulfillment because of force majeure, including acts of a foreign competent authorities prohibiting entry into the territory of a given state and the insolvency of an outbound tour operator and/or a travel agent, who sells travel packages on his own behalf. The same demand can be presented to the Guarantee Fund in case of initiated criminal proceedings in relation to the alleged criminal actions of subjects of tourism activities, as well as in case of insolvency of a bank, other credit or insurance company, if the latter were obliged to pay compensation to the tourist.

Keywords: financial security; bank guarantee; insurance guarantee; insolvency of the subject of tourism activity; impossibility of execution; premeditated bankruptcy; fraud; guarantee fund.

¹ The article was presented on 30.09.2023 and was reviewed on 13.11.2023.

Ева Сагоян

*Советник Генерального прокурора Республики Армения,
аспирант кафедры гражданского права юридического факультета
Ереванского государственного университета*

ИНСТИТУТ ФИНАНСОВОГО ОБЕСПЕЧЕНИЯ КАК СПОСОБ ЗАЩИТЫ ИМУЩЕСТВЕННЫХ ИНТЕРЕСОВ ТУРИСТОВ¹

Абстракт

Статья посвящена некоторым вопросам внедрения института финансового обеспечения в отечественное туристическое законодательство в контексте международных обязательств Республики Армения. Статья имеет цель сравнивать способы финансового обеспечения, закрепленные в законодательствах зарубежных стран и в новом законопроекте «О туризме», в свете международных критериев правового регулирования туристической деятельности, обсуждать некоторые проблемы, связанные с основаниями осуществления выплат по способам финансового обеспечения. В ходе исследования зарубежной и отечественной практики автор предлагает в качестве способов обязательного финансового обеспечения в сфере туристической деятельности законодательно закрепить не только гарантии банков, иных кредитных или страховых компаний, но и Гарантийный фонд, сформированный за счет ежегодных взносов субъектов туристической деятельности. Также предлагается разграничить сферу применения каждого из способов финансового обеспечения, основываясь на таком критерии разграничения, как объективность или субъективность причин неисполнения обязательства. В частности, требование о выплате можно предъявлять банку, иной кредитной или страховой компании в случае невыполнения обязательства по причине невозможности исполнения в связи с обстоятельствами непреодолимой силы, в том числе с актами иностранных компетентных органов о запрете въезда на территорию данного государства и с неплатежеспособностью выездного туроператора и турагента, реализующего туристические пакеты от своего имени. Предъявление же такого требования Гарантийному фонду возможно при инициированном уголовном производстве по отношению предполагаемых преступных действий субъектов туристической деятельности, а также неплатежеспособности банка, иной кредитной или страховой компании, если последние, в соответствии с законом, были обязаны выплатить возмещение туристу.

Ключевые слова: финансовое обеспечение; банковская гарантия; страховая гарантия; несостоятельность субъекта туристической деятельности; невозможность исполнения; преднамеренное банкротство; мошенничество; Гарантийный фонд.

¹ Статья была представлена 30.09.2023 и прошла рецензирование 13.11.2023.

Ալիսա Ամիրխանյան

*ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական
և իրավական ապահովման վարչության ավագ դատախազ,
արդարադատության երրորդ դասի խորհրդական,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ*

**ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՏ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԻՔ¹**

Համառոտագիր

Կոռուպցիան իր ամենատարբեր դրսևորումներով մշտապես եղել և մնում է հասարակության լայն շերտերին անհարմարություն և անհանգստություն պատճառող, քաղաքացիների շրջանում վրդովմունքի, անապահովության և անարդարության զգացումներ առաջացնող երևույթ, որը ծնում է ապօրինությունների ու ամենաթոշողության միջավայր՝ արժեզրկելով ինչպես անհատի իրավունքների համալիրն ու արժանապատիվ կեցությունը, այնպես էլ հեղինակազրկելով պետությունը ու սպառնալիք ստեղծելով պետականության հիմքերի համար:

Վերջին տարիներին մեր երկրում տեղի ունեցած հասարակական-քաղաքական իրադրության փոփոխման արդյունքում կոռուպցիայի դեմ պայքարը կապված կոռուպցիային հակազդելու աննախադեպ քաղաքական կամքի առկայության հետ, նոր թափ և բովանդակություն է ձեռք բերել: Ըստ այդմ, Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելումը և դրա դեմ պայքարը հռչակվել են որպես ռազմավարական նշանակություն ունեցող առաջնահերթություններ:

Նման պայմաններում կարևորվում է կոռուպցիայի դեմ պայքարի միջազգայնորեն ընդունված նոր գործիքների ներդրումը, և դրանց շարունակական կատարելագործումը՝ միաված կոռուպցիայի հակազդմանն ինչպես քաղաքացիաիրավական, վարչաիրավական, այնպես էլ քրեաիրավական հարթություններում:

Այս համատեքստում ավելի քան կարևորվում է ապօրինի հարստացման հանցակազմի վերլուծությունը՝ հաշվի առնելով դրա՝ մեր իրավական համակարգի համար նոր և դեռևս բավարար չափով ուսումնասիրված չլինելը:

Հոդվածում փորձ է արվել հիմնավորել ապօրինի հարստացման դեմ քրեաիրավական միջոցներով պայքարելու անհրաժեշտությունը՝ ՀՀ-ում կոռուպցիայի

¹ Հոդվածը ներկայացվել է 12.05.2023թ., գրախոսվել է 10.10.2023թ.:

ընկալման, դրա մակարդակի և տարածվածության, ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորությունների, միջազգային լավագույն փորձի, ՀՀ-ում ապօրինի հարստացման դեմ այլ՝ ոչ քրեաիրավական միջոցներով պայքարելու հնարավորության և արդյունավետության համատեքստում: Ըստ այդմ, հողվածում անդրադարձ է կատարվում ՀՀ-ում ապօրինի հարստացման քրեականացման անհրաժեշտությանը, ներկայացվում է ապօրինի հարստացման քրեականացմանը կողմ և դեմ ներկայացվող հիմնական փաստարկները, ինչպես նաև եզրահանգումներ՝ ՀՀ-ում ապօրինի հարստացման քրեականացման հիմնավորվածության առնչությամբ:

Հիմնաբառեր- ապօրինի հարստացում, կոռուպցիայի դեմ պայքար, քրեականացում, անմեղության կանխավարկած, ապօրինի ծագում ունեցող գույք:

Ներածություն

Կոռուպցիան իր ամենատարբեր դրսևորումներով մշտապես եղել և մնում է հասարակության լայն շերտերին անհարմարություն և անհանգստություն պատճառող, քաղաքացիների շրջանում վրդովմունքի, անապահովության և անարդարության զգացումներ առաջացնող երևույթ, որը ծնում է ապօրինությունների ու ամենաթողության միջավայր՝ արժեզրկելով ինչպես անհատի իրավունքների համալիրն ու արժանապատիվ կեցությունը, այնպես էլ հեղինակազրկելով պետությունն ու սպառնալիք ստեղծելով պետականության հիմքերի համար:

Վերջին տարիներին մեր երկրում տեղի ունեցած հասարակական-քաղաքական իրադրության փոփոխման արդյունքում կոռուպցիայի դեմ պայքարը՝ կապված կոռուպցիային հակազդելու աննախադեպ քաղաքական կամքի առկայության հետ, նոր թափ և բովանդակություն է ձեռք բերել: Ըստ այդմ, Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելումը և դրա դեմ պայքարը հռչակվել են որպես ռազմավարական նշանակություն ունեցող առաջնահերթություններ:

Նման պայմաններում կարևորվում է կոռուպցիայի դեմ պայքարի միջազգայնորեն ընդունված նոր գործիքների ներդրումը և դրանց շարունակական կատարելագործումը՝ միտված կոռուպցիայի հակազդմանն ինչպես քաղաքացիաիրավական, վարչաիրավական, այնպես էլ քրեաիրավական հարթություններում:

Այս համատեքստում ավելի քան կարևորվում է ապօրինի հարստացման հանցակազմի վերլուծությունը՝ հաշվի առնելով դրա՝ մեր իրավական համակարգի համար նոր և դեռևս բավարար չափով ուսումնասիրված չլինելը:

Սույն հողվածի շրջանակներում փորձ է արվել անդրադառնալ ՀՀ-ում ապօրինի հարստացման քրեականացման անհրաժեշտությանը, քրեականացմանը կողմ և դեմ ներկայացվող հիմնական փաստարկներին՝ ՀՀ-ում կոռուպցիայի ընկալման, դրա մակարդակի և տարածվածության, ՀՀ-ի ստանձնած միջազգային

պարտավորությունների, ապօրինի հարստացման դեմ այլ՝ ոչ քրեաիրավական միջոցներով պայքարելու հնարավորության համատեքստում:

Ըստ այդմ, աշխատանքի հիմնական նպատակն ապօրինի հարստացման՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիքի վերլուծությունն է վերոնշյալ համատեքստում:

Ապօրինի հարստացումը՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիք

Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարը ռազմավարական նշանակություն ունեցող առաջնահերթություն է: Վերջին տարիներին մեր երկրում տեղի ունեցած հասարակական-քաղաքական իրադրության փոփոխման արդյունքում կոռուպցիայի դեմ պայքարը՝ կապված կոռուպցիային հակազդելու աննախադեպ քաղաքական կամքի առկայության հետ, նոր թափ և բովանդակություն է ձեռք բերել: Ըստ այդմ, կոռուպցիայի դեմ առավել թիրախավորված և արմատական պայքար մղելը, կոռուպցիայի հանրային մերժումն ու կոռուպցիայից զերծ հանրությունը ՀՀ կառավարության ռազմավարական նպատակներն են, որոնք իրենց արտացոլումն են գտել այդ թվում ՀՀ կառավարության ծրագրում²:

ՀՀ-ում ապօրինի հարստացման համար պատասխանատվության միջոցների ներդրման առաջին քայլերը կատարվել են դեռևս 2014 թվականին, երբ նույն թվականի մայիսի 22-ին ՀՀ Ազգային ժողովը հաստատեց ՀՀ կառավարության ծրագիրը 2014-2017թթ.-ի համար: Ծրագրի 2.3 բաժնում «Մարդու իրավունքների պաշտպանության և արդարադատության արդյունավետ համակարգը» վերտառությամբ ներկայացված էր կառավարության կողմից իրականացվելիք հակակոռուպցիոն քաղաքականությունը, որը պետք է հիմնված լիներ կոռուպցիայի դեմ պայքարի նոր՝ վերախնամատարված տեսլականի վրա: Մասնավորապես, նշվում էր, որ «կմշակվեն և կներդրվեն «չհիմնավորված հարստացման», շահերի բախման, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների բացահայտումն ու չեզոքացումը, ինչպես նաև էթիկայի կանոններով սահմանված պահանջների խախտման համար ներգործության միջոցների կիրառումն ապահովող գործուն կառուցակարգեր», իսկ «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը պարտավոր կլինի հայտարարագրերի չներկայացման, վարքագծի կանոնադրերի պահանջների՝ ներառյալ շահերի բախման կանոնների, «չհիմնավորված հարստացման» դեպքերի, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների խախտում թույլ տված հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց նկատմամբ իրավական ներգործու-

² Տե՛ս ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագիրը: Հասանելի է հետևյալ համացանցային հղումով՝ <https://www.gov.am/files/docs/3133.pdf> (մուտք՝ 11.05.2023):

թյան միջոցներ կիրառելու առաջարկություններ ներկայացնել իրավասու անձանց կամ մարմինների³»:

ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1141-Ն որոշմամբ հաստատված՝ «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագիրը» և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված՝ «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը» մեր երկրում հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղությունները նախանշող առանցքային փաստաթղթերն են:

«ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագիրը» հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանն ուղղված մի շարք ինստիտուցիոնալ բարեփոխումներ էր նախատեսում, այդ թվում՝ հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց ակտիվների ու շահերի հայտարարագրման համակարգի բարելավում, կոռուպցիոն բնույթի իրավախախտումների քննության արդյունավետությունն ապահովող կառուցակարգերի ներդրում, կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու և ամրապնդելու համար անհրաժեշտ գործուն միջոցների ձեռնարկում, ինչպես նաև **կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար պաշտոնատար անձանց պատասխանատվության գործուն համակարգի ներդրում, կոռուպցիոն դրսևորումների համար կարգապահական, վարչական և քրեական պատասխանատվության միջոցների շարունակաբար կատարելագործում, որի շրջանակներում էլ նախատեսվում էր իրականացնել ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծություն:**

Ի կատարումն Հակակոռուպցիոն ռազմավարության 2015-2018թթ. միջոցառումների ծրագրի՝ ՀՀ-ում իրականացվեցին համակարգային նշանակություն ունեցող մի շարք օրենսդրական բարեփոխումներ, որոնք որոշակի նախադրյալներ ստեղծեցին հետագա հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ իրականացման համար: Մասնավորապես՝

- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում ընդլայնվեց հայտարարագրման պարտականություն ունեցող սուբյեկտների շրջանակը,
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում ներդրվեցին պատասխանատվություն նախատեսող դրույթներ՝ հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից հայտա-

³ Տե՛ս ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2014-2017թթ. ծրագիրը հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://www.gov.am/files/docs/1321.pdf> (մուտք՝ 11.05.2023):

բարագրերը օրենքով և բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից սահմանված պահանջների, կարգի և ժամկետների պահպանմամբ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով չներկայացնելու կամ հայտարարագիրը դիտավորությամբ չներկայացնելու կամ հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար՝ համապատասխան լրացումներ կատարելով նաև ՀՀ քրեական օրենսգրքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում,

- 2017 թվականի հունիսի 9-ին ընդունվեց «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերի փայթեթը՝ ուղղված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ ազդարարող անձանց իրավական պաշտպանության երաշխիքների օրենսդրական ամրագրմանը և այլն:

Վերոնշյալ օրենսդրական բարեփոխումների համատեքստում էլ երկարատև ուսումնասիրությունների, քննարկումների ու բանավեճերի արդյունքում, ի վերջո, 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված ՀՕ-230-Ն օրենքով 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքում (այսուհետ՝ Նախկին ԶՕ) կատարվեց լրացում, որով քրեականացվեց ապօրինի հարստացումը: Այսպես՝ Նախկին ԶՕ 310.1 հոդվածի համաձայն՝ **«Ապօրինի հարստանալը՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, և եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ:**

2. Մույն հոդվածում էական է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը)»:

Արարքի քրեականացման անհրաժեշտությունը հիմնավորվում էր Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմամբ և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում ներկայացված օրինակներով⁴: Մասնավորապես՝ օրենքի նախագծին կից ներկայացված հիմնա-

⁴ Տե՛ս «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի հիմնավորումը՝ հետևյալ համացանցային հղումով՝ <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8445&Reading=0>: (մուսք՝ 11.05.2023):

վորման (այսուհետ՝ Հիմնավորում) մեջ Նախագծի հեղինակների կողմից վկայակոչվել են ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 20-րդ հոդվածը և մի շարք երկրներում ապօրինի հարստացման վերաբերյալ առկա կարգավորումները: Այսպես՝ ներկայացվել են Ուկրաինայի, Մոլդովայի, Լիտվայի, Սլովակիայի, Արգենտինայի, Պերուի, Ավստրալիայի, Իտալիայի, Ռուսաստանի օրենսդրական կարգավորումները կամ օրենսդրական լուծումները խնդրո առարկա հարցի վերաբերյալ՝ առանց, սակայն, անդրադառնալու դրանց արդյունքներին, վիճակագրությանը կամ իրավակիրառության արդյունավետությունը բնորոշող այլ չափորոշիչներին⁵:

Հիմնավորման մեջ Նախագծի հեղինակների կողմից որևէ ձևով անդրադարձ չի կատարվել նաև ապօրինի հարստացման հանրային վտանգավորության բնույթը, աստիճանը բնութագրող հատկանիշների վերլուծությանը, հիշյալ երևույթի դեմ այլ՝ ոչ քրեաիրավական միջոցներով պայքարելու անբավարարությանը, ինչպես նաև արարքների քրեականացման գործընթացում ուշադրության արժանի այլ հանգամանքներին: Այնինչ, յուրաքանչյուր արարքի քրեականացման հիմքում ընկած է, նախ և առաջ, արարքի հանրային վտանգավորության և արարքի նկատմամբ սոցիալական վերահսկողության այլ միջոցների համեմատությամբ դրա քրեականացման նպատակահարմարությունը: Արարքի քրեականացումը հասարակական հարաբերությունների կարգավորվածությունն ապահովող առավել ընդհանուր սոցիալական գործընթացի՝ սոցիալական վերահսկողության համակարգի տարր է: Տեսաբան-գիտնականների կողմից վաղուց արդեն առաջարկվել են հասարակական վտանգավորություն պարունակող վարքագծի քրեականացման սկզբունքները⁶:

Այսպես՝ քրեականացումը պետք է իրականացնել ոչ թե պահի ազդեցության տակ կամ մեկ կոնկրետ դեպքի առնչությամբ, այլ հաշվի առնելով արարքի քրեականացման անհրաժեշտությունը: Բացի այդ, արարքի քրեականացումն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը: Մասնավորապես՝ պատճառված վնասի կարևորությունը, մեղքի ձևը արարքի հանրային վտանգավորության աստիճանը բնորոշող այն կարևոր հատկանիշներն են, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել արարքների քրեականացում իրականացնելիս: Կարևոր է հաշվի առնել նաև քրեականացվող արարքի դեմ վարչական կամ քաղաքացիաիրավական միջոցներով պայքարելու ոչ բավարար լինելը և այլն: Այս հատկանիշները կարող են դառնալ այն ցուցիչները, որոնց օգնությամբ կարելի է հանցավոր և իրենից բարձր հանրային վտանգավորություն ներկայացնող արարքները սահմանազատել ոչ հանցավոր արարքներից:

⁵ Տե՛ս նախորդ համացանցային հղումը:

⁶ Տե՛ս Кудрявцев В.Н. Уголовная политика и нормотворчество / В.Н. Кудрявцев // Уголовное право России. Общая часть: учебник / под ред. В.Н. Кудрявцева [и др.]. М.: Юрист, 2003., էջ 28-46:

Արարքի քրեականացման համար կարևոր նշանակություն ունի նաև հանրորեն վտանգավոր այս կամ այն արարքի տարածվածությունը, տվյալ արարքի նկատմամբ հանրության վերաբերմունքը: Եթե օբյեկտիվ իրականության մեջ առկա է իրավական բարիքներին էական վնաս պատճառող արարք, եթե տվյալ արարքը մարդկանց մեծ մասի կողմից դատապարտելի է կամ ընկալվում է որպես բարձր վտանգավորություն ունեցող, ապա դրա դեմ պայքարը քրեաիրավական միջոցներով դառնում է անհրաժեշտ:

Քրեականացումը կարող է պայմանավորված լինել նաև ստանձնած միջազգային պարտավորություններով, գործալ գործընթացներով, գիտատեխնիկական առաջընթացով (մասնավորապես՝ կիբեռահանցավորություն, գենետիկայի, բժշկագիտության բնագավառում ներկայումս տարածում ստացող հանրավտանգ արարքներ, ահաբեկչության տարբեր դրսևորումներ և այլն): Քրեականացումը պայմանավորված է նաև հանրավտանգ արարքների այնպիսի նոր դրսևորումներով կամ դրանց հնարավորությամբ, որոնք հասարակական հարաբերություններում տեղի ունեցող գործընթացների հետևանք են: Մասնավորապես, այդպիսի նոր դրսևորումներ են առկա կամ կարող են ի հայտ գալ տնտեսական, ֆինանսական, ֆիսկալ հարաբերություններում:

Ընդ որում, քրեականացում իրականացնելիս պետք է հաշվի առնել արդեն նշված գործոնները՝ արարքի հանրային վտանգավորության աստիճանը, դրա տարածվածությունը, հասարակական հարաբերությունների զարգացման համար խոչընդոտ լինելը, այլ՝ **ոչ քրեաիրավական միջոցներով այդ արարքի դեմ պայքարի անարդյունավետությունը** կամ համանման հանրային վտանգավորություն ունեցող արարքների արդեն իսկ քրեականացված լինելու փաստը, ինչը ապացուցել է իր արդյունավետությունը: Քրեականացման համար կարևոր չափանիշ կարող է լինել նաև դատական պրակտիկան: Ներկայումս հանդիպում են դեպքեր, երբ իրավակիրառողը հնարավորություն չի ունենում հանրային բարձր վտանգավորություն ներկայացնող և ՔՕ-ով նախատեսված որևէ արարքին շատ նման դրսևորմանը համապատասխան քրեաիրավական գնահատական տալ, որովհետև այն քրեականացված չէ կամ համապատասխան հանցակազմը հստակ ձևակերպված չէ, ապահովված չէ իրավական որոշակիությունը: Փաստորեն առկա է օրենսդրական բացը: Նման դեպքերում հարցի լուծման եղանակը նման արարքները հստակ հատկանիշներով օրենքում նախատեսելն է:

«Ն»-ում ապօրինի հարստացման քրեականացման անհրաժեշտության առկայությանը կամ բացակայությանը հանգելու համար առաջարկում ենք նախ՝ վերոնշյալ չափանիշների հիման վրա վերլուծության ենթարկել դրա հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, ինչպես նաև անդրադառնալ հիշյալ երևույթի դեմ այլ՝ ոչ քրեաիրավական միջոցներով պայքարելու հնարավորությանը և արարքների քրեականացման գործընթացում ուշադրության արժանի այլ հանգամանքներին:

Այսպես՝ ակնհայտ է, որ կոռուպցիան իր ամենատարբեր դրսևորումներով մշտապես եղել և մնում է հասարակության լայն շերտերին անհարմարություն և անհանգստություն պատճառող, քաղաքացիների շրջանում վրդովմունքի, անապահովության և անարդարության զգացումներ առաջացնող երևույթ, որը ծնում է ապօրինությունների ու ամենաթողության միջավայր՝ արժեզրկելով ինչպես անհատի իրավունքների համալիրն ու արժանապատիվ կեցությունը, այնպես էլ հեղինակագրկելով պետությունն ու սպառնալիք ստեղծելով պետականության հիմքերի համար:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունները, որոնք անմիջականորեն ոտնձգում են պետական համակարգի բնականոն գործունեությունն ապահովող հասարակական հարաբերությունների դեմ և սպառնալիք ստեղծում մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար, օժտված են բարձր հանրային վտանգավորությամբ: Դրանց բնորոշ է մեղքի դիտավորյալ ձևը և շահադիտական կամ անձնական շահագրգռվածության այլ նպատակը:

Ընդ որում, մեր երկրում կոռուպցիայի տարածվածության, տասնամյակներ շարունակ առկա համակարգային կոռուպցիոն երևույթների առկայության, հասարակության սոցիալական խիստ բևեռացվածության պայմաններում ինչպես ապօրինի հարստացման քրեականացման պահին, այնպես էլ այժմ առկա է հանրային պահանջ՝ հակակոռուպցիոն գործիքների առավել լայն կիրառմամբ պայքարել ապօրինի հարստացածների դեմ:

Այսպես՝ «Global Financial Integrity» միջազգային կազմակերպության կողմից 2015 թվականին հրապարակված՝ «Չարգացող երկրներից ապօրինի ֆինանսական հոսքերի մասին» զեկույցի համաձայն՝ Հայաստանից 2004 թվականից մինչև 2013 թվականն ընկած ժամանակահատվածում ապօրինի կերպով դուրս է բերվել 9,833 միլիարդ դոլար, որը կազմում է տարեկան մոտավորապես 980 միլիոն դոլար⁷:

Կոռուպցիոն հանցագործությունների պաշտոնական վիճակագրական պատկերը և ս վկայում է երկրում կոռուպցիայի համընդգրկունության, կոռուպցիոն համակարգային երևույթների առկայության և դրա դեմ պայքարի արդյունավետության բարձրացման անհրաժեշտության մասին⁸:

Հատկանշական է, որ ապօրինի հարստացումը քրեականացնելու հնարավո-

⁷ Տե՛ս զեկույցը հետևյալ համացանցյին հղմամբ՝ https://secureservercdn.net/45.40.149.159/34n.8bd.myftpupload.com/wp-content/uploads/2015/12/IFF-Update_2015-Final-1.pdf (մուտք՝ 11.05. 2023):

⁸ Տե՛ս կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների մասին հաղորդումները՝ <https://www.prosecutor.am/am/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%BA%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6%D5%B0%D5%A1%D5%B6%D6%81%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D6%84%D5%B6%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC/> (մուտք՝ 11.05.2023):

րությունը քննարկելու առաջարկությամբ են հանդես եկել նաև կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունները՝ Հայաստանի վերաբերյալ տարբեր տարիներին հրապարակած զեկույցներում:

Այսպես՝ Եվրոպայի Խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ)՝ Հայաստանի վերաբերյալ չորրորդ գնահատման զեկույցում նշվում էր եկամուտների հայտարարագրման գործընթացում լուրջ իրավախախտումների դեպքում իշխանությունների կողմից քրեաիրավական պատժամիջոցների կիրառման անհրաժեշտության մասին, այդ թվում՝ հավանություն տալով ապօրինի հարստացման հանցանքի ներմուծմանը՝ իրավակիրառության կառուցակարգերի ամրապնդման նպատակով⁹:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) «Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի» 3-րդ շրջանի մոնիթորինգի զեկույցում Հայաստանին խրախուսվում էր հետագա վերլուծություններ իրականացնել ապօրինի հարստացման քրեականացման կարիքների և հնարավորությունների ուղղությամբ¹⁰:

Այսպիսով՝ **ապօրինի հարստացման՝ բարձր հանրային վտանգավորություն ունենալու հանգամանքը կասկածից վեր է, քանի որ ապօրինի հարստացման դեպքում ողջամտորեն ենթադրվում է, որ պաշտոնատար անձի գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են անձի օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, ձեռք են բերվել ապօրինի՝ վերջինիս ծառայողական դիրքն ու պաշտոնից բխող հնարավորություններն օգտագործելու արդյունքում, ինչի հետևանքով անմիջականորեն սպառնալիքի տակ է դրվել ինչպես պետական ծառայության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների, այնպես էլ անձանց սեփականության և այլ վերաբերելի իրավունքների պաշտպանությունը:**

Ինչ վերաբերում է ապօրինի հարստացման դեմ այլ՝ ոչ քրեաիրավական միջոցներով պայքարելու հնարավորությանը, ապա այս հարցում պետությունները տարբեր մոտեցումներ են որդեգրել: Կան երկրներ, որոնք ապօրինի հարստացածների դեմ պայքարն իրականացնում են քրեաիրավական, կան երկրներ, որոնք ապօրինի հարստացման դեմ պայքարում են վարչաիրավական կամ քաղաքացիաիրավական հարթությունում:

Որոշ հեղինակներ այն տեսակետն են հայտնում, որ ապօրինի հարստացման

⁹ Տե՛ս Գրեկոյի՝ Հայաստանի վերաբերյալ չորրորդ գնահատման զեկույց, 2015 թվական, 232-րդ կետ: Հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://rm.coe.int/16806c2bd8> (մուտք՝ 11.05.2023):

¹⁰ Տե՛ս Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության «Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի» 3-րդ շրջանի մոնիթորինգի զեկույց, 2014 թվական. Հասանելի է հետևյալ համացանցային հղումով՝ <http://www.oecd.org/daf/anti-bribery/Armenia-Round-3-Monitoring-Report-ENG.pdf> (մուտք՝ 11.05.2023):

դեմ պայքարում քրեաիրավական միջոցները պետք է կիրառվեն որպես վերջին միջոց՝ հարկային օրենքները, քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցները, այդ թվում՝ քաղաքացիական բռնագրավումը, պետք է նախընտրելի լինեն¹¹:

Ապօրինի հարստացման դեմ պայքարի միջոցների ընտրության հարցում թերևս կարելի է համաձայնել Դ. Խաչատուրյանի այն դիտարկման հետ, որ ապօրինի հարստացումը քրեականացնող համապատասխան հոդվածի բացակայությունը պետությունների քրեական օրենսդրության մեջ պայմանավորված է՝ 1) նման հոդված ունենալու անհրաժեշտության բացակայությամբ՝ կապված ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող նախորդող հանցագործությունը բացահայտելու դատավարական միջոցների արդյունավետության, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված գույքը քրեաիրավական տիրույթից դուրս բռնագրավվելու հնարավորության հետ, և 2) ինստիտուցիոնալ ռեսուրսների առկայության հետ (այդ թվում՝ կամքի)՝ կապված նախորդող հանցագործությունը բացահայտելու հետ¹²:

Ապօրինի հարստացման հանցանքի և հանցավոր ճանապարհով ձեռք բերված ակտիվների բռնագրավման ինստիտուտի հարաբերակցության առումով ակնհայտ է, որ ապօրինի հարստացման դեմ պայքարը որպես վերջնարդյունք՝ պետք է միտված լինի ապօրինի ձեռք բերված գույքի բռնագրավմանը՝ հօգուտ օրինական տիրապետողի կամ պետության: Քրեաիրավական գործողության տիրույթում ապօրինի ձեռք բերված գույքի բռնագրավումն անխուսափելիորեն կապված է հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով անձի մեղավորության հաստատման հետ, ինչն ապօրինի հարստացման հանցակազմի իրավակիրառության ընթացքում ի հայտ եկող դժվարությունների հետ մեկտեղ որոշակիորեն բարդացնում է ապօրինի ձեռք բերված գույքի բռնագրավման գործընթացը: Թերևս սա է պատճառը, որ բազմաթիվ զարգացած երկրներ պաշտոնատար անձանց ապօրինի հարստացման դեմ պայքարն իրականացնում են քաղաքացիաիրավական հարթությունում՝ առավել գործուն և արդյունավետ կառուցակարգեր նախատեսելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագրավման համար:

Հատկանշական է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագրավումը քաղաքացիաիրավական գործողության տիրույթում արդեն իսկ իրողություն է նաև մեր իրավական համակարգում: Այսպես՝ ԱԺ կողմից 16.04.2020 թվականին ընդունվեց «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը, որը կարգավորման է ենթարկում «առանց մեղադրական դատավճռի ակտիվների

¹¹ Տե՛ս, օրինակ, Համագործակցություն հանուն լավ կառավարման ծրագրի շրջանակներում ԵՄ և ԵԽ համատեղ սեմինարի նյութեր, 05.06.2018 թվական, Քիշնև, զեկուցողներ Ջոնաթան Ֆիշեր և Անիտա Գլիֆորդ:

¹² Տե՛ս Դ. Խաչատուրյան, Ապօրինի հարստացման և դրա նկատմամբ նախորդող հանցագործությունների ապացուցման առարկան, չափորոշիչն ու մեթոդները, Միջազգային գիտագործնական կոնֆերանսի նյութեր, 2017 թվական, Սարանսկ, էջեր 131-132:

բռնագանձման» (non-conviction based asset forfeiture) ինստիտուտը քաղաքացիական դատավարության շրջանակներում: Այն քրեական վարույթից դուրս իրականացվող գործընթաց է, որը հնարավորություն է տալիս օրենքում հստակորեն ամրագրված հիմքերի առկայության դեպքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի արդյունքում դատարանի կողմից իրականացնել պաշտոնատար անձի կամ վերջինիս հետ փոխկապակցված անձի գույքի բռնագանձում՝ հօգուտ պետության:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք՝ կոռուպցիայի դեմ պայքարի ներկա փուլում ՀՀ-ում ապօրինի հարստացման դեմ քրեաիրավական միջոցներով պայքարելն արդարացված է՝ հաշվի առնելով այն, որ ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող հանցագործությունը բացահայտելու դատավարական միջոցները երբեմն սուղ են, իսկ քրեաիրավական տիրույթից դուրս ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կառուցակարգերը մեր երկրում դեռևս կայացման փուլում են:

Այնուամենայնիվ, ապօրինի հարստացման քրեականացումը ինչպես աշխարհի շատ այլ երկրներում, այնպես էլ ՀՀ-ում միանշանակորեն չի ընդունվել և բազմաթիվ վեճերի ու տարաձայնությունների տեղիք է տվել: Ըստ այդմ, առաջարկում ենք անդրադառնալ մասնագիտական գրականության մեջ և իրավական հանրության կողմից ապօրինի հարստացման քրեականացմանը կողմ և դեմ ներկայացվող հիմնական փաստարկներին:

Ապօրինի հարստացման քրեականացմանը կողմ ներկայացվող փաստարկներն ու հիմնավորումները հիմնականում շեշտադրում են դրա՝ որպես հակակոռուպցիոն գործիքի արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարի գործում այն դեպքերում, երբ կոռուպցիոն բնույթի այլ հանցագործությունները հնարավորություն չեն տալիս բացահայտել կոռուպցիոն դեպքը և իրականացնել քրեական հետապնդում: Նման պայմաններում ապօրինի հարստացման հանցանքը թույլ է տալիս քրեական վարույթի շրջանակներում հասնել հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագրավման:

Այսպես՝ ապօրինի հարստացման քրեականացմանը կողմ փաստարկները (հիմնավորումները) ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

- Ապօրինի հարստացումը հետևանքային հանցանք է, որը հնարավորություն է տալիս իրավակիրառողին իրավական գնահատական տալու անձի կատարած արարքին այն դեպքում, երբ, օրինակ, կաշառք ստանալու հանցակազմով քրեական գործի քննությունը մտնում է փակուղի կամ կաշառք ստանալու դեպքում առհասարակ քրեական հետապնդում հնարավոր չի լինում հարուցել անհրաժեշտ և բավարար ապացուցողական հենքի բացակայության պատճառով, քանի որ կաշառակերության դեպքում ապացույցների համակցության հավաքումը՝ կապված կաշառակերության գաղտնի բնույթով, հաճախ առանց փաստաթղթային հետքի, երբեմն օտարերկրյա

գործարքներ ընդգրկելով կատարված լինելու պայմաններում, երբեմն անիրագործելի է:

- Ապօրինի հարստացումը հաղթահարում է ապացուցողական խոչընդոտները՝ կապված կաշառակերության և կոռուպցիոն բնույթի մյուս հանցանքների հիմնավորման հետ, և հաստատված համարում հանրային ծառայողի կողմից հանցանքի կատարումը բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր չէ ողջամտորեն հիմնավորել վերջինիս եկամուտների էական աճը:
- Անհրաժեշտ չէ հիմնավորել, որ եկամուտների նշանակալից աճը որևէ այլ հանցանքի, օրինակ՝ կաշառակերության, հարկերի վճարումից չարամտորեն խուսափելու կամ այլ հանցանքի հետևանք է:
- Քանի որ ապօրինի հարստացման դեպքում քրեական հետապնդման ենթարկվելն ավելի հեշտ է, այն ավելի ուղիղ ճանապարհ է դեպի քրեական վարույթի շրջանակներում ապօրինի ձեռք բերված գույքի բռնագրավում:
- Այն կարևոր կանխարգելիչ և զսպող նշանակություն ունեցող գործիք է և ցույց է տալիս պետական պաշտոնյային, որ եթե վերջինս ներգրավված է կոռուպցիայի մեջ, կկորցնի իր պաշտոնը, ապօրինի ձեռք բերած ակտիվները, հասարակական դիրքը և, ի վերջո, ազատությունը:
- Ոչ բոլոր իրավունքներն են բացարձակ և այս դեպքում հանրային ոլորտում կոռուպցիայի հաղթահարումը գերակայում է մյուս վերաբերելի իրավունքների¹³:
- Ապօրինի հարստացման քրեականացումը՝ որպես հակակոռուպցիոն գործիք, հավանության է արժանանում տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից¹⁴ և այլն:
- Ապօրինի հարստացման քրեականացմանը դեմ փաստարկներն ու հիմնավորումները պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի.
 1. ապօրինի հարստացման հանցանքի և անմեղության կանխավարկածի ու դրա հետ սերտորեն փոխկապակցված՝ անձի լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքների միջև հակասությանը վերաբերող փաստարկներ:
 2. ապօրինի հարստացման հանցանքի՝ քրեական իրավունքի ընդհանուր սկզբունքներին հակասելու վերաբերյալ փաստարկներ:
 3. ապօրինի հարստացման արդյունավետ իրավակիրառությանը խոչընդոտող կամ դրա դժվար իրավակիրառությանը վերաբերող փաստարկներ:

¹³ Տե՛ս Համագործակցություն հանուն լավ կառավարման ծրագրի շրջանակներում ԵՄ և ԵԽ համատեղ սեմինարի նյութեր, 05.06.2018 թվական, Քիշնև, գեկուցողներ Չոնաթան Ֆիշեր և Անիտա Գլիֆորդ:

¹⁴ Տե՛ս The accumulation of unexplained wealth by public officials: Making the offence of illicit enrichment enforceable, Anti-corruption resource centre, U4 Brief, January 2012 N1
 Հասանելի է՝ հետևյալ համացանցային հղումով՝ <https://open.cmi.no/cm/mixmlui/bitstream/handle/11250/2474912/The%20accumulation%20of%20unexplained%20wealth%20by%20public%20officials%3a%20Making%20the%20offence%20of%20illicit%20enrichment%20enforceable?sequence=1&isAllowed=y> (access 10.05.2023)

- Ապօրինի հարստացման քրեականացմանը դեմ փաստարկներն առաջին հերթին կապված են ապօրինի հարստացման հանցանքի հետ անմեղության կանխավարկածի սկզբունքի, ինչպես նաև դրա հետ սերտորեն փոխկապված՝ անձի լռելու ու իր դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատված լինելու իրավունքների միջև հակասության հետ:

Աշխարհի շատ երկրներ խուսափում են ապօրինի հարստացման քրեականացումից՝ մատնանշելով հենց այն խոչընդոտները, որոնք կապված են անմեղության կանխավարկածի սկզբունքի իրացման հետ¹⁵:

Անմեղության կանխավարկածը մի շարք միջազգային-իրավական փաստաթղթերում ամրագրված հանրաճանաչ սկզբունք է: Այն իր ամրագրումն է ստացել նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում: Այսպես՝ համաձայն կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական իրավախախտում կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը մի քանի բաղադրիչից է բաղկացած: Ապօրինի հարստացման ինստիտուտի հետ առերևույթ հակասություն կարող է առաջացնել այս սկզբունքի բաղադրատարր հանդիսացող այն գաղափարը, համաձայն որի՝ անձը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, անձի մեղավորությունն ապացուցելու պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը:

Հիշյալ դրույթն արդար դատաքննության բաղադրատարր հանդիսացող կարևոր երաշխիք է ինչը հնարավորություն է տալիս հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձին ապացուցման պարտականությունից ազատված լինելու պայմաններում, արդյունավետ կերպով իրացնել իր պաշտպանության իրավունքը: Մինևույն ժամանակ, անմեղության կանխավարկածը բացարձակ չէ, այն դինամիկ սկզբունք է, և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը՝ որպես կոնվենցիայի կենդանի գործիք, տարբեր տարիներին կայացված վճիռներում զարգացրել է հիշյալ սկզբունքի իրավակիրառությունը: Մասնավորապես՝ ինչպես ցույց է տալիս Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը՝ այնպիսի բարձր հանրային վտանգավորություն և բարձր կազմակերպվածության մակարդակ ունեցող անդրազգային հանցագործությունների դեմ պայքարում, ինչպիսիք են թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, կոռուպցիան, Եվրոպական դատարանը թույլ է տալիս պայմանականորեն ասված «նահանջ» անմեղության կանխավարկածի սկզբունքից և հնարավոր համարում ապացուցման բեռի տեղափոխումը մեղադրյալի վրա:

Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշակի բացառիկ դեպքերում համաչափության և ռացիոնալության սկզբունքների պահպան-

¹⁵ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի իրականացման վերանայում, 2013 թվական, Վիեննա:

ման պայմանով անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում չի համարում ապացուցման բեռի տեղափոխումը մեղադրյալի վրա:

Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը խնդրո առակա հարցի առնչությամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- *գույքի հանցավոր ծագումը կարող է հաստատվել անուղղակի ապացույցների հիման վրա, այդ թվում՝ եզրահանգումներ անելով այն հանգամանքից, որ մեղադրյալը հրաժարվում է ներկայացնել բացատրություններ գույքի ծագման առնչությամբ*¹⁶,
- *քրեական գործերով արդար դատաքննության հայեցակարգի հետ համատեղելի է դիմումատուի վրա իր գույքային իրավիճակի վերաբերյալ հավաստի բացատրություններ տալու պարտականություն դնելը*¹⁷:

Որոշ հեղինակներ¹⁸ ապօրինի հարստացման դեպքում ապացուցման բեռի տեղափոխումը մեղադրյալի վրա արդարացնում են այն փաստարկմամբ, որ գույքի ենթադրյալ ապօրինի ծագման աղբյուրները մեղադրյալի իմացության շրջանակի մեջ են մտնում և, ըստ այդմ, քրեական հետապնդման մարմինները լուրջ դժվարությունների առջև կկանգնեն այն բացահայտելու առումով:

Իրավաբանական գրականության մեջ¹⁹ ապօրինի հարստացման դեպքում մեղադրյալի վրա ապացուցման բեռի տեղափոխման հարցը քննարկելիս խոսվում է մեղադրյալի կողմից ապացուցման (ապօրինի հարստացումը ժխտելու) իրավաբանական (իրավական) և ապացուցողական պարտականության մասին: Իրավաբանական պարտականության դեպքում մեղադրյալը քրեական հետապնդման մարմնին պետք է «համոզի», որ իր ակտիվները բխել են օրինական աղբյուրից, և ներկայացնի այն հավաստող ապացույցներ, իսկ այն դեպքում, երբ մեղադրյալը կրում է միայն ապացուցողական պարտականություն, բավարար է սոսկ այնպիսի փաստական տվյալների ներկայացումը, որոնք կհերքեն այն ենթադրությունը, որ ակտիվներն անօրինական ծագում ունեն: Եթե մեղադրյալը ցույց է տալիս իր եկամուտների օրինական ծագումը հիմնավորող ապացույցներ, ապա ապացուցման պարտականությունը մեխանիկորեն տեղափոխվում է քրեական հետապնդման մարմնի վրա, որը պետք է ապացույցի, որ եկամուտները

¹⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Ցյուշենն ընդդեմ Բելգիայի» գործով 2017 թվականի մայիսի 2-ի որոշումը, գանգատ 23572/07, կետեր 27-30:

¹⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Գրեյսոն և Բիրամն ընդդեմ Միացյալ թագավորության» գործով 2008 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումը, գանգատներ 19955/05 և 15085/06, կետեր 49, 23: Տե՛ս նաև, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Ցյուշենն ընդդեմ Բելգիայի» գործով 2017 թվականի մայիսի 2-ի որոշումը, գանգատ 23572/07, կետ 30:

¹⁸ Տե՛ս Չհիմնավորված հարստության քրեականացման հիմնախնդիրը. ապօրինի հարստացման հանցանքը և մարդու իրավունքների խախտումները, Ջիֆրի Բոլս, Օրենսդրություն և հանրային քաղաքականություն, [Նճ. 17:835 2014], էջ 868:

¹⁹ Տե՛ս Չհիմնավորված հարստության քրեականացման հիմնախնդիրը. ապօրինի հարստացման հանցանքը և մարդու իրավունքների խախտումները, Ջիֆրի Բոլս, Օրենսդրություն և հանրային քաղաքականություն, [Նճ. 17:835 2014], էջ 859-860:

ծագել են ապօրինի աղբյուրից, իսկ եթե մեղադրյալին չի հաջողվում ցույց տալ իր եկամուտների օրինական ծագումը, ապա քրեական հետապնդման մարմինը գալիս է այն եզրահանգման, որ ակտիվները ձեռք են բերվել ապօրինի: Այսինքն՝ ապացուցողական պարտականության դեպքում բավարար է միայն մեղադրյալի կողմից ողջամիտ կասկածի հարուցումը, որ եկամուտները ծագել են օրինական աղբյուրից, իսկ ողջամիտ կասկածից վեր ապացուցողական չափանիշով հարստացման ապօրինի լինելը հիմնավորելու պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը: Ապօրինի հարստացումը քրեականացրած շատ երկրներ շեշտում են, որ իրենց ներպետական օրենսդրությամբ մեղադրյալները կրում են միայն ապացուցողական պարտականություն, իսկ ապօրինի հարստացումը հիմնավորելու իրավաբանական պարտականությունը շարունակում է մնալ քրեական հետապնդման մարմնի վրա:

Այնուամենայնիվ, ինչպես ամերիկյան, այնպես էլ ռուսական իրավաբանական հանրույթը ներկայացնող որոշ հեղինակներ գտնում են, որ ապօրինի հարստացման հանցանքի իրավակիրառությունը անխուսափելիորեն առաջացնում է խնդրահարույց իրավիճակներ անմեղության կանխավարկածի սկզբունքի և իր դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատված լինելու իրավունքի պահպանման առումով, քանի որ հանցանքն ինքնին ենթադրում է մեղադրյալի կողմից բացատրության ներկայացում, և անկախ այն հանգամանքից՝ մեղադրյալը կրում է ապացուցման իրավաբանական, թե ապացուցողական պարտականություն, երկու դեպքում էլ այն ենթադրում է հարստացման օրինականությունը հիմնավորող որոշակի փաստական տվյալների ներկայացում, ինչը մարդու իրավունքների խախտման հավանական ռիսկ է իր մեջ պարունակում²⁰:

Գտնում ենք՝ որոշ իրավիճակներում մեղադրյալի կողմից ապօրինի հարստացման մեղադրանքից պաշտպանվելը կարող է **անխուսափելիորեն** առաջացնել այնպիսի իրավիճակ, երբ մեղադրյալի կողմից իր տիրապետության տակ գտնվող ակտիվների օրինական ծագման վերաբերյալ բացատրությունը վկայի վերջինիս կողմից այլ հակաիրավական արարքների, օրինակ՝ հայտարարագրման ենթակա եկամտի կամ գույքի չհայտարարագրման, կամ կեղծ տվյալների հայտարարագրման կամ հարկերի վճարումից խուսափելու և այլ հակաիրավական արարքների կատարման մասին: **Նման իրավիճակներում մեղադրյալի իրավական վիճակը չփաստարացնելու և ապօրինի հարստացման մեղադրանքի շրջանակներում իր եկամտի ծագման աղբյուրների վերաբերյալ բացատրություն ներկայացնելու պրակտիկան խթանելու առումով կարևոր է քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախաձեռնումը՝ մեղադրյալի վրա ապացուցման բեռի տեղափոխման հստակ կանոնների**

²⁰ Տե՛ս նախորդ հոդումը, նույն տեղում, ինչպես նաև Դ. Գ. Միխայլենկո, Ապօրինի հարստացումն ազգային օրենսդրություն ներմուծելու խոչընդոտները, Իրավունք և պետություն, N 4 (69), 2015, էջ 58:

ամրագրման հետ մեկտեղ քննարկման առարկա դարձնելով նաև համապատասխան լրացուցիչ երաշխիքների նախատեսման հարցը:

Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության մեջ անմեղության կանխավարկածի սկզբունքի ամրագրմանը, ապա հատկանշական է, որ 2015 թվականին իրականացված սահմանադրական բարեփոխումների արդյունքում անմեղության կանխավարկածի սկզբունքը որոշակիորեն այլ ձևակերպմամբ է ամրագրվել: Այսպես՝ նախորդ՝ 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝ **«Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:**

Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփաստված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի»:

2015 թվականի խմբագրությամբ՝ Սահմանադրության 66-րդ հոդվածում անմեղության կանխավարկածի սկզբունքն ամրագրվել է հետևյալ բովանդակությամբ՝ **«Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:**

Փաստորեն, նոր խմբագրությամբ Սահմանադրության տեքստից հանվել են անմեղության կանխավարկածի սկզբունքի բովանդակության մաս կազմող դրույթներն առ այն, որ «մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը», և որ «չփաստված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի»: Նման սահմանադրական փոփոխությունների կատարման արդյունքում, ըստ էության, անմեղության կանխավարկածի սկզբունքի սահմանադրական ձևակերպումը «հարմարեցվեց» ապօրինի հարստացման հանցանքի՝ մեր իրավական համակարգ ներմուծմանը:

Ապօրինի հարստացման քրեականացմանը դեմ հաջորդ փաստարկը վերաբերում է քրեական իրավունքի ընդհանուր սկզբունքների հետ դրա հակասությանը: Այսպես՝ ապօրինի հարստացման հանցակազմի դեպքում, ըստ էության, չկա արարք, իսկ պաշտոնատար անձ լինելը և հարստության տիրապետելն ինքնին հանցավոր գործունեություն չէ²¹. այս առումով հանցանքը խոցելի է թվում իրավական որոշակիության տեսանկյունից:

Քրեականացմանը դեմ հաջորդ փաստարկները կապված են ապօրինի հարստացման հանցանքի իրավակիրառության ժամանակ ի հայտ եկող դժվարությունների հետ՝ կապված հանցանքի որակման, ապօրինի ակտիվների ծագման

²¹ Տե՛ս The Accumulation of Unexplained Wealth by Public Officials: Making the Offence of Illicit Enrichment Enforceable, Anti-corruption Resource Centre, U4 Brief, January 2012 N1.

Հասանելի է՝ հետևյալ համացանցային հղումով <https://open.cmi.no/cmi-xmlui/bitstream/handle/11250/2474912/The%20accumulation%20of%20unexplained%20wealth%20by%20public%20officials%3a%20Making%20the%20offence%20of%20illicit%20enrichment%20enforceable?sequence=1&isAllowed=y> (access 10.05.2023).

աղբյուրի բացահայտման, ապօրինի հարստացման հանցանքի ավարտի պահի, ապօրինաբար ձեռք բերված ակտիվների՝ բարեխիղճ ձեռք բերողի տիրապետության տակ անցնելու, անձի իրավական վիճակը վատթարացնող քրեական օրենքի՝ հետադարձ ուժով կիրառվելու անթույլատրելիության, ապօրինի հարստացման փաստը հիմնավորող անհրաժեշտ և բավարար ապացուցողական հենքի ձևավորման հետ և այլն:

Սրա հետ կապված՝ հատկանշական է, որ վերոնշյալ գործոնները չեն կարող որոշիչ լինել ապօրինի հարստացման քրեականացման անհրաժեշտության և դրա դեմ քրեաիրավական միջոցներով պայքարի ընտրության հարցում, քանի որ դրանք, ըստ էության, ապօրինի հարստացման դեպքի հայտնաբերման և բացահայտման գործընթացում ի հայտ եկող խոչընդոտներ կամ դժվարություններ են և, այստեղ տեղին է ևս մեկ անգամ հիշատակել Կուդրյավցևի դիտարկումն առ այն, որ «քրեականացում իրականացնելիս պետք է հաշվի առնել արարքի հանրային վտանգավորության աստիճանը, դրա տարածվածությունը, հասարակական հարաբերությունների զարգացման համար խոչընդոտ լինելը, այլ՝ **ոչ քրեաիրավական միջոցներով այդ արարքի դեմ պայքարի անարդյունավետությունը** կամ համանման հանրային վտանգավորություն ունեցող արարքների արդեն իսկ քրեականացված լինելու փաստը, ինչը ապացուցել է իր արդյունավետությունը»²²:

Ինչ վերաբերում է ինստիտուտի կիրառման արդյունավետությանը միջազգային մակարդակում, ապա 2009 թվականի նոյեմբերին ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիան վավերացրած անդամ-պետությունների կոնֆերանսի երրորդ նստաշրջանի արդյունքում ընդունվեց 3/3 բանաձևը (Ակտիվների վերականգնում), որի 13-րդ կետը անդամ-պետություններին հորդորում էր իրականացնել հետագա ուսումնասիրություն և վերլուծություններ ակտիվների վերականգնման գործողությունների արդյունքների վերաբերյալ և, ըստ անհրաժեշտության, թե ինչպես կարող են իրավական կանխավարկածները, ապացուցման բեռի տեղափոխման միջոցները և ապօրինի հարստացման քննությունը նպաստել կոռուպցիոն հասույթի վերականգնմանը:

Հիշյալ կոչին ի պատասխան՝ առաջին խոր վերլուծությունը Գողացված ակտիվների վերականգնման նախաձեռնության (STAR) և Համաշխարհային բանկի կողմից համատեղ 2012 թվականին իրականացված «Ապօրինի հարստացման քրեականացմամբ կոռուպցիայի դեմ պայքարի» ձեռնարկն²³ է: Հիշյալ ուսումնասիրությամբ ապօրինի հարստացումը քրեականացրած պետությունների փորձի վերլուծության հիման վրա հեղինակների կողմից եզրահանգումներ են կատար-

Տե՛ս Кудрявцев В.Н. Уголовная политика и нормотворчество / В.Н. Кудрявцев // Уголовное право России. Общая часть: учебник / под ред. В.Н. Кудрявцева [и др.]. М.: Юрист, 2003., էջ 28-46:
²³ Տե՛ս On the take Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption, Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias, Tammar Berger, 2012:

վել դրա՝ որպես հակակոռուպցիոն գործիքի արդյունավետության վերաբերյալ՝ փաստելով, որ «Պատշաճ իրավական և ինստիտուցիոնալ երաշխիքների պահպանման պայմանով ապօրինի հարստացման վերաբերյալ դրույթները կարող են արդյունավետ գործիք լինել, որը կգործի արդարացիորեն: Այս առումով պետություններին ուղղված մարտահրավեր է՝ զարգացնել ինստիտուցիոնալ կարողությունները՝ ամրապնդելու անկախությունը և զգոն լինել՝ կանխելու հնարավոր չարաշահումները (...):»²⁴:

Եզրակացություն

Ելնելով վերոգրյալից՝ ակնհայտ է, որ պաշտոնատար անձանց ապօրինի հարստացման դեմ պայքարը՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր և առանցքային տարր, առաջնային նշանակություն ունի: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով մեր երկրում տասնամյակներ շարունակ արմատացած համակարգային կոռուպցիոն երևույթների առկայությունը, ինչպես նաև ներկայումս ՀՀ իշխանությունների քաղաքական կամքը կոռուպցիայի դեմ պայքարի գործում, գտնում ենք՝ ապօրինի հարստացման դեմ պայքարը ևս նոր բովանդակություն է ձեռք բերում: **Նման պայմաններում առաջնային պլան է մղվում ապօրինի հարստացման դեմ պայքարի արդյունավետությունը՝ նախ և առաջ միտված պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար ձեռք բերված գույքը հետ վերադարձնելու կառուցակարգերի կատարելագործմանը:**

Ըստ այդմ, գտնում ենք՝ որ ապօրինի հարստացման հանցակազմի կատարելագործումը՝ ուղղված դրա արդյունավետ իրավակիրառության համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելուն, կարևոր նշանակություն է ձեռք բերում և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի գործողության հետ միաժամանակ կարող է լուրջ արդյունքներ գրանցել կոռուպցիայի դեմ պայքարի գործում:

²⁴ Տե՛ս նախորդ հղումը՝ 39-րդ էջ:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2014-2017թթ. ծրագիրը՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://www.gov.am/files/docs/1321.pdf> (մուտք՝ 11.05.2023).
The 2014-2017 Program of the RA Government, approved by the RA Government's Decision No. 511-A of May 19, 2014. Available at the following web link: <https://www.gov.am/files/docs/3133.pdf> (access 11.05.2023).
2. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագիրը: Հասանելի է հետևյալ համացանցային հղումով՝ <https://www.gov.am/files/docs/3133.pdf> (մուտք՝ 11.05.2023).
The 2019 Program of the RA Government, approved by the RA Government's dDecision No. 65-A of February 8, 2019. Available at the following web link: <https://www.gov.am/files/docs/3133.pdf> (access 11.05.2023).
3. Սարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Ջյուշենն ընդդեմ Բելգիայի» գործով 2017 թվականի մայիսի 2-ի որոշումը, գանգաստ 23572/07, կետեր 27-30.
The decision of the European Court of Human Rights in the case of Csyuschen v. Belgium of May 2, 2017, Application no. 23572/07, paragraphs 27-30.
4. Սարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Գրեյսոն և Բարնհամն ընդդեմ Միացյալ թագավորության» գործով 2008 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումը, գանգաստներ 19955/05 և 15085/06, կետեր 49, 23.
The decision of the European Court of Human Rights in the case of Grayson and Barnham v. United Kingdom, Application no. 19955/05 and 15085/06, paragraphs 49, 23.
5. Кудрявцев В.Н. Уголовная политика и нормотворчество / В.Н. Кудрявцев // Уголовное право России. Общая часть: учебник / под ред. В.Н. Кудрявцева [и др.]. М.: Юрист, 2003, էջ 28-46.
Kudryavtsev V.N. Criminal policy and norms // Criminal law of Russia.. General part: textbook / V.N. Kudryavtseva [and others]. — M. Jurist, 2003, pages 28-46.
6. Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias, Tammar Berger. “On the take Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption”, 2012.
7. Դ. Խաչատրյան, Ապօրինի հարստացման և դրա նկատմամբ նախորդող հանցագործությունների սպառնուցման առարկան, չափորոշիչն ու մեթոդները, Միջազգային գիտագործնական կոնֆերանսի նյութեր, 2017 թվական, Սարանսկ:
D. Khachaturyan “The Object, Criteria and Methods of Proving Illicit enrichment and Crimes Preceding it”, Proceedings of the International Scientific and Practical Conference, 2017, Saransk.

8. Դ. Գ. Միխայլենկո, «Ապօրինի հարստացումն ազգային օրենսդրություն ներմուծելու խոչընդոտները», Իրավունք և պետություն, N 4 (69), 2015, էջ 58.
D. C. Mykhailenko, “Obstacles for introducing illicit enrichment in national legislation”, Law and State, N 4 (69), 2015, p. 58..
9. Ջիֆրի Բոլս, Չհիմնավորված հարստության քրեականացման հիմնախնդիրը. ապօրինի հարստացման հանցանքը և մարդու իրավունքների խախտումները, Օրենսդրություն և հանրային քաղաքականություն, [Vol. 17:835 2014].
Jeffrey Boles “Criminalizing the Problem of Unexplained Wealth: Illicit Enrichment Offenses and Human Rights Violations” Legislation and Public Policy [Vol. 17:835].
10. 10. The Accumulation of Unexplained Wealth by Public Officials: Making the Offence of Illicit Enrichment Enforceable, Anti-corruption Resource Centre, U4 Brief, January 2012 N1. Available at the following web link: (access 11.05.2023) <https://open.cmi.no/cmi-xmloi/bitstream/handle/11250/2474912/The%20accumulation%20of%20unexplained%20wealth%20by%20public%20officials%3a%20Making%20the%20offence%20of%20illicit%20enrichment%20enforceable?sequence=1&isAllowed=y>
11. «Համագործակցություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում ԵՄ և ԵԽ համատեղ սեմինարի նյութեր, 05.06.2018 թվական, Քիշնև, զեկուցողներ Ջոնաթան Ֆիշեր և Անիտա Գլիֆորդ:
Materials of Workshop of the EU-CE Joint Workshop on Cooperation for Good Governance, 05.06.2018, Chisinau, rapporteurs Jonathan Fisher and Anita Glifford.
12. «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի հիմնավորումը՝ հետևյալ համացանցային հղումով <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8445&Reading=0> (մուտք՝ 11.05.2023).
Justification of the draft law “On Amendments to the Criminal Code” at the following Internet link: <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8445&Reading=0>. (access 11.05.2023).
13. «Global Financial Integrity» միջազգային կազմակերպության կողմից 2015 թվականին հրատարակված՝ «Չարգացող երկրներից ապօրինի ֆինանսական հոսքերի մասին» զեկույց՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ https://secureservercdn.net/45.40.149.159/34n.8bd.myftpupload.com/wp-content/uploads/2015/12/IFF-Update_2015-Final-1.pdf (մուտք՝ 11.05.2023).
Report “On Illicit Financial Flows from Developing Countries” published by the International Organization “Global Financial Integrity” in 2015 with the following link: https://secureservercdn.net/45.40.149.159/34n.8bd.myftpupload.com/wp-content/uploads/2015/12/IFF-Update_2015-Final-1.pdf (access 11.05.2023).
14. Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների մասին հաղորդումը, որը հրատարակվում է ՀՀ դատախազության պաշտոնական կայքէջում: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.prosecutor.am/am/>

D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84-%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%BA%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B6%D6%81%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D6%84%D5%B6%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC/ (մուսք` 11.05.2023).

The report on the results of the investigation of corruption crimes, which is published on the official website of the RA Prosecutor’s Office. Available at the following link:

<http://www.prosecutor.am/am/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84-%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%BA%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6%D5%B0%D5%A1%D5%B6%D6%81%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D6%84%D5%B6%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC/> (access 11.05.2023).

- 15. Գրեկոյի Հայաստանի վերաբերյալ չորրորդ գնահատման զեկույց, 2015 թվական, 232-րդ կետ: Հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://rm.coe.int/16806c2bd8> (մուսք` 11.05.2023).

Greco Fourth Assessment Report on Armenia, 2015, paragraph 232. Available at the following link: <https://rm.coe.int/16806c2bd8> (access 11.05.2023).

- 16. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության «Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի» 3-րդ շրջանի մոնիթորինգի զեկույց, 2014 թվական. Հասանելի է հետևյալ համացանցային հղումով՝ <http://www.oecd.org/daf/anti-bribery/Armenia-Round-3-Monitoring-Report-ENG.pdf> (մուսք` 11.05.2023).

3rd Monitoring Report of the Organization for Economic Co-operation and Development Istanbul Anti-Corruption Action Plan, 2014. Available at the following web link: <http://www.oecd.org/daf/anti-bribery/Armenia-Round-3-Monitoring-Report-ENG.pdf> (access 11.05.2023).

- 17. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի իրականացման վերանայում, 2013 թվական, Վիեննա.

Review of the implementation of the UN Convention against Corruption, 2013, Vienna.

Alisa Amirkhanyan

*Senior Prosecutor at the Department of Organization,
Supervision and Legal Assistance of the Prosecutor
General's Office of the Republic of Armenia,
Third Rank Counsellor of Justice,
Degree applicant of the Department of Criminal Law, Faculty of Law,
Yerevan State University*

ILLICIT ENRICHMENT AS AN INSTRUMENT IN THE FIGHT AGAINST CORRUPTION¹

Abstract

With its various manifestations, corruption has always been and remains a phenomenon that causes discomfort and anxiety for the wide layers of society, causes indignation, insecurity and injustice among citizens, which creates lawlessness and permissiveness, devaluing both the complex of individual rights and dignified life, as well as discrediting the state, posing a threat to the foundations of statehood.

As a result of the change in the socio-political situation in our country in recent years, the fight against corruption, due to the unprecedented political will to fight corruption, has gained new momentum and content. Accordingly, the prevention of corruption and the fight against it in the Republic of Armenia have been declared as priorities of strategic importance.

In such circumstances, it is important to introduce new internationally accepted instruments for combating corruption and to continue to improve them, aimed at combating corruption in the civil, administrative and criminal spheres.

In this context, the analysis of the crime of illicit enrichment is more than important, considering its new and still insufficiently studied nature for our legal system.

In the article, an attempt was made to justify the need to fight against illicit enrichment with criminal legal measures in the context of the perception of corruption in RA, its level and prevalence, the international obligations assumed by RA, international best practices, the possibility and effectiveness of fighting against illicit enrichment in RA with other, non-criminal legal means.

Accordingly, the article refers to the need for criminalization of illicit enrichment in RA, presents the main arguments for and against the criminalization of illicit enrichment, as well as conclusions regarding the justification of criminalization of illicit enrichment in RA.

Keywords: illegal enrichment; fight against corruption; criminalization; presumption of innocence; property of illegal origin.

¹ The article was presented on 12.05.2023 and was reviewed on 10.10.2023.

Алиса Амирханян

*Старший прокурор управления по организации, контролю и правовому обеспечению
Генеральной прокуратуры Республики Армения,
советник юстиции третьего класса,
соискатель кафедры уголовного права юридического факультета
Ереванского государственного университета*

НЕЗАКОННОЕ ОБОГАЩЕНИЕ КАК ИНСТРУМЕНТ БОРЬБЫ С КОРРУПЦИЕЙ¹

Абстракт

Коррупция в различных своих проявлениях всегда была и остается явлением, причиняющим дискомфорт и тревогу широким слоям общества, вызывающим возмущение, чувство неуверенности и несправедливости у граждан, что создает атмосферу беззакония и вседозволенности, обесценивая комплекс прав личности и достойное проживание, дискредитируя государство и создавая угрозу для основ государственности.

В результате изменения в последние годы общественно-политической обстановки в нашей стране, борьба против коррупции, благодаря беспрецедентной политической воле к борьбе с коррупцией, обрела новый импульс и содержание. Следовательно, предотвращение коррупции и борьба с ней в Республике Армения объявлены в качестве приоритетов стратегического значения.

В подобных условиях становится важным внедрение новых международно признанных инструментов борьбы против коррупции и их постоянное совершенствование, направленное на противодействие коррупции как в гражданско-правовой, административно-правовой, так и в уголовно-правовой сферах.

В этом контексте анализ преступления незаконного обогащения является более чем важным, учитывая его новый и еще недостаточно изученный характер для нашей правовой системы.

В статье предпринята попытка обосновать необходимость борьбы с незаконным обогащением уголовно-правовыми средствами в контексте восприятия коррупции в РА, ее уровня и распространенности, международных обязательств, взятых на себя РА, лучшего международного опыта, возможности и эффективности борьбы с незаконным обогащением в РА другими, не уголовно-правовыми средствами. Следовательно, в статье говорится о необходимости криминализации незаконного обогащения в РА, приводятся основные аргументы за и против криминализации незаконного обогащения, а также выводы относительно обоснованности криминализации незаконного обогащения в РА.

Ключевые слова: незаконное обогащение; борьба с коррупцией; криминализация; презумпция невиновности; имущество незаконного происхождения.

¹ Статья была представлена 12.05.2023 и прошла рецензирование 10.10.2023.

Գայանե Մելիքյան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության ավագ դատախազ, Երևանի պետական համալսարանի քրեական դատախազության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՁՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ¹

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է Aut dedere aut judicare (extradite or prosecute - հանձնիր կամ դատիր) հանրահայտ սկզբունքի գործնական կիրառման ընթացքում առաջացող խնդիրներին: Հեղինակը, քննարկվող սկզբունքը դիտարկելով որպես հանձնման մասին միջնորդությունը մերժելու տրամաբանական հետևանք, քննարկման առարկա է դարձնում այն դեպքերը, երբ պետությունը, որի կողմից ներկայացված հանձնման մասին միջնորդությունը մերժվել է, հանդես չի գալիս քրեական հետապնդում իրականացնելու մասին խնդրանքով: Հոդվածում վերլուծության են ենթարկվում նման իրավիճակներում քրեական հետապնդման իրականացման հնարավոր բացասական հետևանքները և առաջարկվում համապատասխան լուծումներ:

Միաժամանակ, հոդվածում քննարկման և վերլուծության են ենթարկվել օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից փոխանցված վարույթներով գործնականում առաջացող խնդիրները, հստակ ուրվագծվել են այդ խնդիրների առաջացման պատճառները, որոնց հիման վրա հեղինակը ներկայացրել է համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկներ:

Հիմնաբառեր- հանձնման մասին միջնորդություն, քրեական հետապնդում, հետախուզվող, միջազգային սկզբունք, յուրիսդիկցիա, միջազգային պայմանագիր, կոնվենցիա, քրեական վարույթ նախաձեռնել, հետապնդման ժամկետ և այլն:

Ներածություն

Aut dedere aut judicare (extradite or prosecute - հանձնիր կամ դատիր) հանրահայտ սկզբունքը քննարկման առարկա է դարձել տեսաբանների կողմից դեռևս

¹ Հոդվածը ներկայացվել է 05.12.2023 թ. և գրախոսվել է 05.12.2023 թ.:

վաղ ժամանակվանից: Թեև իրավաբանական գրականության մեջ վերոնշյալ սկզբունքը միջազգային համագործակցության շրջանակներում դիտարկելու վերաբերյալ կարծիքները նույնական չեն՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հեղինակների մի մասի կարծիքով քրեական գործերով միջազգային համագործակցությունը բաղկացած է՝ 1) քրեական գործերով իրավական օգնությունից, 2) հետախուզվող անձանց հանձնումից, 3) պատժի հետագա կրման նպատակով դատապարտյալների փոխանցումից, մեր կարծիքով, միջազգային համագործակցության շրջանակներում պետք է դիտարկել նաև քրեական վարույթների փոխանցումը, ինչը որոշ չափով վերոնշյալ սկզբունքի իրացման եղանակներից է²:

Քրեական վարույթների փոխանցումը, որը, ինչպես արդեն նշվեց, «Հանձնիր կամ դատիր» սկզբունքի արտահայտման ձևերից մեկն է, միջազգային համագործակցության շրջանակներում դիտարկելը արդարացված է նաև այնքանով, որ այն ուղղակիորեն կապված է հանձնման ինստիտուտի հետ: Անձի հանձնումը բացառող հանգամանքների դեպքում պատժի անխուսափելիությունը հանգեցնում է քրեական վարույթի փոխանցման: Այսինքն, վերոնշյալ երկու ինստիտուտները մեկը մյուսի տրամաբանական շարունակությունն են, իսկ թե որքանով է քննարկման ենթակա ինստիտուտը արդյունավետ գործում, որ դեպքերում այն պետք է դիտարկվի որպես հանձնման միջնորդության մերժման պարտադիր հետևանք և ինչ խնդիրներ են առկա քննարկվող ինստիտուտի կիրառման արդյունքում, կքննարկենք ստորև:

Քրեական վարույթի փոխանցումը որպես հանձնումը մերժելու հետևանք. հիմնախնդիրներն ըստ ՀՀ օրենսդրության

Պետության ինքնիշխանությունն ու իրավահավասարությունը միջազգային իրավունքի հիմնաքարային սկզբունքներից են, որոնք ամրագրված են նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ: Դրանք ծառայում են յուրաքանչյուր պետությանը միջամտությունից պաշտպանելու համար: Իրավագորությունը (jurisdiction) գործիք է, որը օգնում է պետությանը սպահովել իր ինքնիշխանությունը: Գոյություն ունեն իրավագորության (յուրիսդիկցիայի) տեսակներ³, որոնցից մեկը հենց ունիվերսալ իրավագորությունն (յուրիսդիկցիան) է:

Ունիվերսալ յուրիսդիկցիան յուրաքանչյուր պետության դատարանին վերապահված քրեական հետապնդման իրականացման կարողությունն է տվյալ պետության տարածքից դուրս հանցանք կատարած այն անձանց նկատմամբ, ովքեր տվյալ

² St'u Абдуллоев П. С., «Формирование института передачи уголовного судопроизводства в рамках международного сотрудничества на постсоветском пространстве//ВЕСТН. МОСК. УН-ТА. СЕР. 11. ПРАВО. 2015. № 6, էջ 83:

³ St'u Jovana BLEŠIĆ, Aut dedere aut judicare in international and domestic law, 19.04.2022, էջ 2-ում մասնավորապես նշված են յուրիսդիկցիայի հետևյալ տեսակները՝ տարածքային, ազգային, պաշտպանիչ, պասիվ և ունիվերսալ:

պետության քաղաքացին չեն, հանցանքից տուժած անձը կապված չէ տվյալ պետության հետ, իսկ հանցանքը ուղղված չէ տվյալ պետության ազգային շահերի դեմ (այլ խոսքով՝ քննության իրականացումն է այն հանցագործությունների նկատմամբ, որոնց նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի գործողությունը չի տարածվում):

Ներկայումս այս կանոնը համարվում է միջազգային իրավունքի սկզբունք, բացի այդ, այն արտացոլված է նաև մի շարք միջազգային պայմանագրերում, ազգային օրենսդրություններում և դատական պրակտիկայում՝ կապված ինչպես միջազգային հանցագործությունների (ցեղասպանություն, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ և պատերազմական հանցագործություններ), այնպես էլ ազգային օրենսդրությամբ նախատեսված հանցագործությունների (սպանություն, առևանգում, ավազակային հարձակում և այլն) հետ⁴:

«Հանձնիր կամ դատիր» սկզբունքը ունի խոր արմատներ: Դրա հիմնական էությունը այն անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու մեջ է, որոնց հանձնումն հայցող օտարերկրյա պետությանը ինչ-ինչ պատճառներով հնարավոր չէ իրականացնել:

Անձին քրեական հետապնդման ենթարկելը օտարերկրյա պետության միջնորդության հիման վրա առաջին անգամ իր արտահայտությունն է գտել Հյուզո Հրոցիոսի «Պատերազմի և խաղաղության իրավունք» (1625 թ.) աշխատության մեջ, որն ուներ հետևյալ արտահայտությունը՝ «aud dedere aut punire» - հանձնիր կամ ինքդ պատժիր: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ սկզբունքի կիրառությունը սահմանափակվում էր այնպիսի հանցագործություններով, որոնք ինչ-որ կերպով վնաս էին պատճառում մարդկությանը, և որոնք ներկայումս ընդունված է անվանել միջազգային հանցագործություններ⁵: Վերջինս պնդում էր, որ ընդհանուր պարտավորություն է հանձնել կամ պատժել անձին բոլոր հանցագործությունների դեպքում, որոնց արդյունքում մեկ այլ պետություն վնաս է կրել: Վերոնշյալ երևույթը Հրոցիոսը բնութագրում էր որպես իրավունք, որը պատկանում է պետությանը՝ պատժելու հանցագործին, որի իրագործմանը որևէ պետություն չի կարող միջամտել: Մեր օրերում սկզբունքը կիրառվում է քրեական հետապնդման ենթարկելու՝ «aud dedere aut judicare» և ոչ թե պատժելու կոնստիտուտում⁶ 21.05.2022 թ.՝ նկատի ունենալով անմեղության կանխավարկածը, որը պատկանում է յուրաքանչյուր անձի:

Քննարկվող սկզբունքի պայմաններում պետությունները չեն կարող ապահով պայմաններ ստեղծել որոշակի կատեգորիայի հանցանք կատարած անձանց համար և ստիպված են կիրառել իրենց յուրիսդիկցիան (որը ենթադրում է ունի-

⁴ St' u International Law Commission, The Obligation to extradite or prosecute, Amnesty International, Publication, 2009, էջ 8:

⁵ St' u M. Plachta, “Aut Dedere Aut Judicare: An Overview of the Modes of Implementation and Approaches”, Maastricht Journal of European and Comparative Law, 6 (4), 1999, էջ 331:

⁶ St' u Stoyan P., The obligation aut dedere aut judicare (‘extradite or prosecute’) in international law: scope, content, sources and applicability of the obligation ‘extradite or prosecute’ by, 2016 թ., էջ 16:

վերսալ յուրիսդիկցիայի կիրառում) համապատասխան կատեգորիայի հանցանք կատարելու մեջ կասկածվող անձանց նկատմամբ, կամ հանձնել անձին այն պետությանը, որը կարող է և ցանկություն ունի քրեական հետապնդում իրականացնել նշված անձանց նկատմամբ⁷, կամ փոխանցել անձին միջազգային դատարան⁸:

Ինչպես արդեն նշվել է, քննարկվող սկզբունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային պայմանագրերում, որոնց անդամակցում է նաև ՀՀ-ն:

«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984 թ. կոնվենցիան, որը ՀՀ-ի համար ուժի մեջ է մտնել 1993 թվականից, մասնավորապես սահմանում է, որ պետությունը, որը հրաժարվում է իրականացնել այլ պետության տարածքում Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարած անձի հանձնումը, պարտավորվում է այդ անձի վերաբերյալ գործը հանձնել իր իրավասու մարմիններին վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով⁹:

Համանման կարգավորումներ են նախատեսված նաև «Ահաբեկչության արգելման մասին» 1997 թ. եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածով (ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2004 թվականին), «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ» 1999 թ. կոնվենցիայի 9-րդ հոդվածով (ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2004 թվականից):

ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» 1957 թ. կոնվենցիայի 16-րդ հոդվածի 10-րդ մասը ունի հետևյալ բովանդակությունը. «Մասնակից պետությունը, որի տարածքում է գտնվում հանցագործության կատարման մեջ կասկածվող անձը, եթե այդ անձին չի հանձնում այն հանցագործության կապակցությամբ, որի նկատմամբ սույն հոդվածը չի կիրառվում միայն այն բանի հիման վրա, որ նա հանդիսանում է նրա քաղաքացիներից մեկը, **պարտավոր է, հանձնում հայցող Մասնակից պետության խնդրանքով**, առանց չարդարացված ուշացումների, գործը փոխանցել իր իրավասու մարմիններին՝ հետապնդման նպատակով: Այդ մարմիններն ընդունում են իրենց որոշումը և վարույթն իրականացնում են նույն կարգով, ինչ այդ Մասնակից պետության ներքին օրենսդրության համաձայն ցանկացած վտանգավոր բնույթի այլ հանցագործության դեպքում»:

ՄԱԿ-ի «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» 1988 թ. կոնվենցիայի 6-րդ հոդվածի 9-րդ մասի «բ»

⁷ Տե՛ս International Law Commission, The Obligation to extradite or prosecute, Amnesty International, Publication, 2009, էջ 8:

⁸ Տե՛ս նույն տեղում: Հատկանշական է, որ հանցանք կատարած անձին միջազգային դատարանին հանձնելը, որպես «հանձնիր կամ դատիր» սկզբունքի ապահովման եղանակ, ձևավորվել է ավելի ուշ, երբ հիմնադրվել է միջազգային դատարանը, և պետությունները եկել են այն եզրահանգման, որ հանցանք կատարած անձին միջազգային դատարանին հանձնելով՝ վերջինները թույլ չեն տալիս միջազգային սկզբունքի խախտում:

⁹ Տե՛ս «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984 թ. կոնվենցիայի 7-րդ հոդված:

կետի համաձայն՝ առանց իր ազգային օրենսդրությամբ սահմանված որևէ քրեական իրավագործություն խախտելու, Կողմը, որի տարածքում գտնվում է ենթադրվող օրինախախտը, այն դեպքում, երբ նա օրինախախտին չի հանձնում այդպիսի օրինախախտման նկատմամբ՝ 4-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն, գործը փոխանցում է իր իրավասու մարմիններին՝ քրեական հետապնդում սկսելու նպատակով, **եթե հայցող Կողմն իր օրինական իրավագործությունը պահպանելու նպատակով չի դիմում մեկ այլ խնդրանքով:**

Քննարկվող հարցի վերաբերյալ տեսական գրականության, ինչպես նաև վերը մեջբերված և այլ կոնվենցիաների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ անդրազգային կամ ունիվերսալ հանցագործությունների կատարման մեջ կասկածվող անձանց կամ մեղադրյալներին չհանձնելու դեպքում պետությունները պարտավորվում են իրականացնել վերջիններիս նկատմամբ քրեական հետապնդում: Հատկանշական է, որ որոշ ունիվերսալ հանցագործություններ վերոնշյալ փաստաթղթերում բնորոշվում են որպես ոչ քաղաքական: Հակառակ դեպքում հարց էր առաջանալու, թե ինչպես պետք է վարվեր հայցվող պետությունը, որը, օրինակ, կատարված ցեղասպանությունը դիտարկել որպես քաղաքական հանցագործություն: Այդ պատճառով, հանցագործության ոչ քաղաքական լինելու վերաբերյալ հստակ սահմանումը պարտավորեցնում է պետություններին իրականացնել հանձնելու կամ քրեական հետապնդման ենթարկելու պարտավորությունը:

Վերը ներկայացված դեպքերում, ինչպես արդեն նշվել է, խոսքը անդրազգային հանցագործությունների մասին է, իսկ ինչպե՞ս պետք է վարվել մյուս բոլոր քրեորեն հետապնդելի արարքների կատարման մեջ գտնվող անձանց հետ:

Արդյոք, հանձնումը մերժելը բոլոր դեպքերում պետք է հանգեցի քրեական հետապնդման իրականացման հայցվող պետության կողմից:

Այսպես, օրինակ՝ «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանձնումը պետք է կատարվի այնպիսի հանցագործությունների դեպքում, որոնք հայցող և հայցվող կողմերի օրենքներով պատժվում են ազատազրկմամբ կամ կալանքով՝ **նվազագույնը մեկ տարի կամ ավելի ժամկետով կամ ավելի խիստ պատժով:** Երբ դատապարտման կամ բանտարկության դատավճիռը կամ կալանավորման որոշումը կայացվում է հայցող կողմի տարածքում, ապա նշանակված պատիժը պետք է **լինի 4 ամսից ոչ պակաս:**»:

Տվյալ դեպքում հարց է առաջանում՝ ինչպես պետք է վարվի պետությունը, եթե արարքի համար նախատեսված պատիժը, որի համար անձի հանձնումը պահանջվում է, նվազ է 1 տարուց: Արդյո՞ք նման դեպքերում ստացվում է, որ հայցվող պետությունը ո՛չ հանձնում է, ո՛չ էլ անձին ենթարկում քրեական հետապնդման:

Կարծես թե վերը ներկայացված դատողությունը հիմնավորվում է նաև Կոն-

վենցիայի նույն հոդվածի 3-րդ մասի կարգավորմամբ, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որի օրենքով նախատեսված չէ հանձնում սույն հոդվածի առաջին կետում նշված որոշակի հանցագործությունների համար, կարող է նման դեպքերում այդպիսի հանցագործությունները բացառել սույն Կոնվենցիայի կիրառման շրջանակներից»:

Վերը ներկայացվածի համատեքստում տեղին է քննարկման առարկա դարձնել 2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի՝ միջազգային իրավունքին համապատասխան որևէ անձի հանձնման խնդրանքի մերժումը այդ հանձնման խնդրանքում նշված ենթադրյալ հանցանքի կապակցությամբ քրեական վարույթ նախաձեռնելու առիթ է, եթե այդ անձի և նրան վերագրվող ենթադրյալ արարքի վրա տարածվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի գործողությունը:

Հարկ է նշել, որ վերը մեջբերված կարգավորումը նախատեսված չէր 1998 թվականի քրեական դատավարության օրենսգրքում, չնայած այն հանգամանքին, որ թե՛ 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգիրքը (հոդված 15-ի 3-րդ մաս), թե՛ 2021 թվականին ընդունված քրեական օրենսգիրքը (հոդված 12-ի 3-րդ մաս) նախատեսել են ունիվերսալ յուրիսդիկցիայի հնարավորություն:

Նման կարգավորման առկայության պայմաններում հարց է առաջանում՝ արդյո՞ք վերոնշյալ կարգավորումը վերաբերում է վարույթի նախաձեռնմանը բոլոր դեպքերում, երբ հանձնումը չի իրականացվում, թե՛ շարունակում է գործել միայն միջազգային հանցագործությունների նկատմամբ:

Հոդվածի բովանդակության վերլուծությունից ստացվում է, որ քրեական վարույթ պետք է նախաձեռնվի բոլոր դեպքերում, երբ ՀՀ քրեական օրենսգիրքը տարածվում է տվյալ անձի և վերջինիս արարքի նկատմամբ, անկախ այն հանգամանքից, թե հետախուզում հայտարարած պետությունը հանդես է եկել քրեական հետապնդման ենթարկելու միջնորդությամբ, թե ոչ:

Քրեական վարույթի փոխանցման և քրեական հետապնդման իրականացման միջնորդությամբ հանդես գալու հնարավորություն նախատեսված է ինչպես Մինսկի, Քիշնևի, այնպես էլ «Քրեական վարույթների փոխանցման մասին» 1972թ. եվրոպական կոնվենցիայով:

Այսպես՝ վերոնշյալ կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է «Պայմանավորվող պետությանը բացառապես սույն հոդվածի 1-ին¹⁰ կետով վերապահված իրավասությունը կարող է իրականացվել միայն մեկ այլ Պայմանա-

¹⁰ Տե՛ս Քրեական վարույթների փոխանցման մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սույն Կոնվենցիայի կիրառման նպատակով ցանկացած Պայմանավորվող պետություն, իր քրեական օրենքին համապատասխան, իրավասու է հետապնդում իրականացնելու ցանկացած հանցագործության առնչությամբ, որի նկատմամբ կիրառելի է մեկ այլ Պայմանավորվող պետության քրեական օրենքը:

վորվող պետության ներկայացրած՝ վարույթ իրականացնելու մասին **խնդրանքի հիման վրա»:**

Մինակի կոնվենցիայի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պարտավորվում է **մյուս Պայմանավորվող կողմի հանձնարարությամբ**, իր օրենսդրությանը համապատասխան, քրեական հետապնդում իրականացնել սեփական քաղաքացիների նկատմամբ, որոնք կասկածվում են հարցնող Պայմանավորվող կողմի տարածքում հանցագործություն կատարելու մեջ:

Համանման կարգավորում է նախատեսված նաև Քիչնևի կոնվենցիայի 91-րդ հոդվածի 1-ին մասով:

Հատկանշական է, որ մեջբերված բոլոր կարգավորումներում նախատեսված է հայցող կողմի խնդրանքի կամ հանձնարարության առկայության պարտադիր բնույթը: Բանն այն է, որ նման պահանջի առկայությունը պատահական չէ: Չէ՞ որ հայցող կողմը, խնդրելով քրեական հետապնդում իրականացնել իր տարածքում հանցանք կատարած անձի նկատմամբ, դրանով իսկ զիջում է քրեական հետապնդման իրականացման իր իրավագործությունը (յուրիսդիկցիան) հայցող պետությանը (ուղարկում է քրեական գործ), որն էլ իր հերթին ունի համապատասխան հետևանքներ այն անձի համար, ում հանձնումը չի իրականացվել: Դա նշանակում է, որ հայցվող պետության կողմից իրականացված քրեական հետապնդումը և դրա արդյունքում վերջնական որոշման կայացումը պարտադիր բնույթ ունի հայցող պետության համար, որն էլ իր հերթին պետք է հանգեցնի հայցող պետությունում տվյալ անձի համար բոլոր իրավական հետևանքների, այդ թվում՝ հետախուզման դադարեցման:

Հակառակ դեպքում, եթե առաջնորդվենք քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումներով, ստացվում է՝ անկախ այն հանգամանքից՝ առկա է նման միջնորդություն/խնդրանք, թե ոչ, ՀՀ իրավատու մարմինները պետք է նախաձեռնեն վարույթ, իրականացնեն քրեական հետապնդում և կայացնեն վերջնական որոշում, և տվյալ դեպքում հարց է առաջանում, թե նշված վերջնական որոշումը ի՞նչ նշանակություն կունենա տվյալ հայցող պետության համար, արդյոք այն կընդունվի՞ տվյալ պետության կողմից, չէ որ, եթե վերջինս հանդես չի եկել համապատասխան միջնորդությամբ, իր մոտ շարունակում է առկա լինել հետախուզվող անձի նկատմամբ քրեական գործ/վարույթ, արդյոք այդ պայմաններում ՀՀ-ի կողմից կայացված վերջնական որոշումը պարտադիր է տվյալ պետության համար, և վերջինս կարող է այդ որոշման հիման վրա իր մոտ կարճել քրեական գործը և դադարեցնել անձի նկատմամբ քրեական հետապնդումը իր բոլոր իրավական հետևանքներով: Կարծում ենք, քրեական հետապնդման իրականացման խնդրանքի բացակայության դեպքում նման հետևանքներ հայցող պետությունից ակնկալելը ոչնչով արդարացված չէ: Միգուցե, հայցող պետությունը ցանկություն չունի զիջել իր յուրիսդիկցիան մեկ

այլ պետության և պատրաստ է սպասել այնքան ժամանակ, մինչև հետախուզվող անձը կհայտնաբերվի մեկ այլ պետությունում, որը պատրաստ կլինի հանձնել վերջինիս հետախուզում հայտարարած պետությանը:

Նման կարգավորումը իրականում վտանգավոր հետևանքներ կարող է առաջացնել նաև հետախուզվող անձի համար, որի հանձնումը մերժվել է, սակայն առանց հայցող պետության խնդրանքի՝ վերջինիս նկատմամբ իրականացվել է քրեական հետապնդում: Թեև տվյալ դեպքում կարող է առկա լինել այն տեսակետը, որ ՀՀ-ի կողմից իրականացված քրեական հետապնդումը պետք է պարտադիր հաշվի առնվի հայցող պետության կողմից, քանի որ կիսախտվի կրկին դատվելու անթույլատրելիության միջազգային սկզբունքը: Սակայն տվյալ դեպքում, մեր կարծիքով, առաջանում է երկու հիմնաքարային սկզբունքների՝ կրկին դատվելու անթույլատրելիության և պետության իրավասության բախում, որի պարագայում հետախուզվող անձը չի կարող երաշխավորված լինել, որ ստեղծած իրավիճակը բոլոր դեպքերում կմեկնաբանվի հոգուտ իրեն և չի առաջացնի բացասական հետևանքներ:

Վերոնշյալից բացի, հարկ է նշել, որ մի շարք եվրոպական պետություններ առհասարակ չեն վավերացրել «Քրեական վարույթների փոխանցման մասին» վերը նշված եվրոպական կոնվենցիան, իսկ Մինսկի և Քիշնևի կոնվենցիաների մեջբերված հոդվածներում խոսքը հայցվող պետության սեփական քաղաքացիների նկատմամբ քրեական հետապնդման իրականացման մասին է: Այսինքն՝ մեջբերվածից կարելի է ենթադրել, որ համապատասխան պետությունները պատրաստ չեն զիջել իրենց իրավասությունը, հատկապես երբ խոսքը գնում է սովորական հանցագործությունների մասին:

Ի հիմնավորումն վերը նշվածի՝ ցանկանում ենք քննարկել նաև «Քրեական գործերով իրավական օգնության մասին» 1959 թ. եվրոպական կոնվենցիան, որի 21-րդ հոդվածը հնարավորություն է նախատեսում իր տարածքում հանցանքի կապակցությամբ հարուցված քրեական գործից ուղարկել դատավարական փաստաթղթեր հայցվող պետությանը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասում ամրագրված է, որ Հայցվող կողմը պետք է ծանուցի Հայցող կողմին նման տեղեկության կապակցությամբ ձեռնարկված ցանկացած գործողության մասին և ուղարկի յուրաքանչյուր արձակված դատավճռի պատճենը:

Փաստորեն, նման հնարավորություն նախատեսելով՝ կոնվենցիան չի կարգավորում, թե նշված դատավճռը ինչ իրավական հետևանք պետք է ունենա հայցող պետության համար (չի առաջացնում պետության համար իր իրավասությունից հրաժարվելու պարտականություն), ինչը ևս մեկ անգամ հիմնավորում է, որ այն հայեցողական նշանակություն կարող է ունենալ հայցող պետության համար՝ անձի համար առաջացնելով անբարենպաստ հետևանքներ:

Ուտի, գտնում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 5-րդ մասի բովանդակությունը պետք է լրացնել «և եթե առկա է քրեական հետապնդման իրականացման մասին խնդրանք» նախատեսությամբ:

Շարունակելով վերլուծությունը՝ ցանկանում ենք անդրադառնալ նաև այն հարցին, թե ինչպես պետք է վարվեն ՀՀ իրավասու մարմինները քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ քրեական վարույթը օտարերկրյա պետության կողմից ՀՀ իրավասու մարմիններին փոխանցելու դեպքում:

Տվյալ դեպքում հարց է առաջանում, թե ինչպես պետք է իրականացվի քննությունը, արդյոք փոխանցված վարույթը/գործը հիմք է քրեական վարույթ նախաձեռնելու համար, թե արդեն իսկ փոխանցված վարույթը/գործը պետք է քննիչն ընդունի իր վարույթ և իրականացնի նախաքննություն:

Հարկ է նշել, որ նշված հարցը կարգավորված չէր ինչպես ՀՀ քրեական դատավարության 1998 թ. օրենսգրքում, այնպես էլ շարունակում է մնալ չկարգավորված 2021 թվականին ընդունված օրենսգրքում և օրենքի նախագծում:

Օրինակ՝ «Քրեական գործերով իրավական օգնության մասին» Խորվաթիայի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածը սահմանում է, որ Խորվաթիայի քաղաքացու կամ Խորվաթիայում բնակվող անձի կողմից օտարերկրյա պետության տարածքում կատարված հանցագործության համար օտարերկրյա պետության քրեական հետապնդում իրականացնելու մասին միջնորդությունը քրեական գործի հետ փոխանցվում է իրավասու դատախազին¹¹:

Մերքիայի Հանրապետության «Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքի 41-րդ հոդվածը սահմանում է, որ հանրային դատախազը օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում իրականացնում է քրեական հետապնդում օտարերկրյա պետության տարածքում հանցանք կատարած անձի նկատմամբ:

Նույն օրենքի 42-րդ հոդվածը սահմանում է, որ Մերքիայի Հանրապետության իրավասու մարմիններին պետք է փոխանցվեն քրեական գործի բնօրինակը կամ **հաստատված պատճենը**, իսկ 47-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանվում է, որ քրեական գործի հարուցումը իրականացվում է Մերքիայի օրենսդրությանը համապատասխան: Հայցող պետության օրենսդրությանը համապատասխան կատարված դատավարական գործողությունները հավասարեցվում են Մերքիայի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան կատարված գործողություններին¹²:

Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի 598-րդ հոդվածի համաձայն՝ «Օտարերկրյա պետության կողմից փոխանցված քրեական վարույթի քննությունը սկսվում է նախաքննության փուլից և իրականացվում է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան:

Օտարերկրյա պետության օրենսդրությանը համապատասխան ստացված նյութերում պարունակվող տեղեկությունները կարող են ճանաչվել թույլատրելի

¹¹ Տե՛ս Քրեական գործերով իրավական օգնության մասին Խորվաթիայի Հանրապետության 10.12.2004 թ. օրենքի 63-րդ հոդվածը:

¹² Տե՛ս նույն տեղում, 42-47-րդ հոդվածները:

ապացույց, եթե չեն խախտում Ուկրաինայի սահմանադրությամբ և քրեական դատավարությամբ ամրագրված սկզբունքները և չեն ստացվել մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների խախտմամբ»:

Հատկանշական է, որ նույն օրենսգրքի 599-րդ հոդվածը հնարավորություն է տալիս նաև քրեական գործը Ուկրաինայի իրավասու մարմիններից օտարերկրյա պետությանը ուղարկելուց հետո համապատասխան հիմքերի առկայության դեպքում վերսկսել գործի վարույթը (օրինակը չբավարարելով քննության արդյունքներով¹³):

Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 598-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օտարերկրյա պետության տարածքում հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու վերաբերյալ օտարերկրյա պետության իրավասու մարմնի միջնորդությունը քննարկում է Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը կամ համապատասխան իրավասու դատախազը¹⁴:

Ի տարբերություն վերը ներկայացված կարգավորումների՝ հարկ է նշել, որ Լատվիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 723-725-րդ հոդվածների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ օտարերկրյա պետության կողմից վերջինիս տարածքում հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությունը հիմք է քրեական գործի հարուցման համար¹⁵:

ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 459-րդ հոդվածը նախատեսում է օտարերկրյա պետության կողմից ստացված քրեական հետապնդում իրականացնելու միջնորդության հիման վրա քրեական հետապնդումը շարունակելու և քրեական գործ հարուցելու առանձին կառուցակարգեր:

Մասնավորապես օտարերկրյա պետության տարածքում հանցանք կատարած և ՌԴ վերադարձած ՌԴ քաղաքացու նկատմամբ քրեական հետապնդման մասին միջնորդությունը ստացվելու և բավարարվելու դեպքում, քրեական գործի նախաքննությունը և դատաքննությունը իրականացվում է ՌԴ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան:

Այն դեպքերում, երբ օտարերկրյա պետության տարածքում հանցանք կատարած ՌԴ քաղաքացին վերադառնում է ՌԴ մինչև օտարերկրյա պետությունում քրեական գործի հարուցումը, ապա վերջինիս վերաբերյալ օտարերկրյա պետությունից ստացված նյութերը առիթ են ՌԴ իրավասու մարմինների կողմից քրեական գործի հարուցման համար¹⁶:

¹³ Տե՛ս Ուկրաինայի քրեական դատավարության 13.10.2012 թ. օրենսգրքի 589-599-րդ հոդվածները:

¹⁴ Տե՛ս Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության 04.07.2014 թ. օրենսգրքի 589-րդ հոդված:

¹⁵ Տե՛ս Լատվիայի Հանրապետության քրեական դատավարության 21.06.2007 թ. օրենսգրքի գլուխ 67:

¹⁶ Տե՛ս ՌԴ քրեական դատավարության 18.12.2001 թ. օրենսգրքի 459-րդ հոդված:

Վերը ներկայացված կարգավորումներից կարելի է եզրահանգել, որ քրեական գործի փոխանցման դեպքում հիմնականում գործում է երկու կարգ. մի դեպքում փոխանցված գործը առիթ է քրեական գործի հարուցման համար, իսկ մյուս դեպքում՝ օտարերկրյա պետության կողմից արդեն իսկ հարուցված քրեական գործով քրեական հետապնդումը շարունակելու համար:

Ներկայացված օրինակներում առկա են կարգավորումներ, որոնք հնարավոր են համարում նաև քրեական գործի հաստատված պատճենի ընդունումը, որոշ դեպքերում նախատեսված էր քրեական գործի ստացումը բացառապես սեփական քաղաքացիների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով:

Վերլուծելով ներկայացված դեպքերը՝ «Քրեական գործերով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի Նախագծում առաջարկվում է նախատեսել, որ.

1. օտարերկրյա պետության կողմից քրեական հետապնդում իրականացնելու մասին միջնորդությունը պետք է վերաբերի ՀՀ քաղաքացիներին կամ ՀՀ-ում մշտապես բնակվող անձանց,

2. միջնորդությանը կից ՀՀ իրավասու մարմիններին պետք է ուղարկվի բացառապես քրեական գործի բնօրինակը, իսկ պատճենը ստացվելու դեպքում այն ենթակա լինի վերադարձման՝ բնօրինակը ուղարկելու առաջարկով: Նման կարգավորման նախատեսումը կարևոր է այնքանով, որ քրեական գործի փոխանցման դեպքում հայցող պետությունը կփոխանցի իր յուրիսդիկցիան տվյալ գործի քննության կապակցությամբ, իսկ ՀՀ իրավասու մարմինների կողմից տվյալ գործով կայացված որոշումը կլինի վերջնական, իսկ քննության արդյունքներով բավարարված չլինելու դեպքում հայցող պետությունը չի կարողանա վերսկսել վարույթը,

3. փոխանցված քրեական գործը չպետք է առիթ հանդիսանա քրեական գործի հարուցման համար ՀՀ իրավասու մարմինների կողմից, այլ առաջարկվող կարգավորման համաձայն՝ այն պետք է թարգմանվի և քննիչի կողմից վարույթ ընդունվի, օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից իրականացված քննության ընթացքում ստացված ապացույցները պետք է համարվեն թույլատրելի և ունենան նույն ուժը, ինչ ՀՀ քրեական դատավարության օրենսդրության համաձայն ստացված ապացույցները, եթե դրանք չեն ստացվել մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ոտնահարմամբ կամ քրեական վարույթի սկզբունքների խախտմամբ: Եթե փոխանցված վարույթով կատարված ապացուցողական գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները չդիտվեն որպես թույլատրելի, ապա իմաստագրվում է վարույթը փոխանցելու ինստիտուտի նախատեսումը: Բացի այդ, կարծում ենք, որ առաջարկվող կարգավորումը համապատասխանում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի տրամաբանությանը, որի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապացույցի թույլատրելիությունը որոշվում է այն ձեռք բերելու պահին գործող օրենքով:

Հարկ է նշել նաև, որ քրեական վարույթների փոխանցման դրույթներ նախատեսող կոնվենցիաները, սահմանելով վարույթի փոխանցման հնարավորությունը, չեն մանրամասնում, թե ինչ կարգով պետք է շարունակվի փոխանցված վարույթով քննությունը համապատասխան պետությունում՝ դրանով իսկ տվյալ հարցի կարգավորումը թողնելով յուրաքանչյուր պետության օրենսդրությանը: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ թե՛ նախկին և թե՛ գործող քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված չէ և չի եղել օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից ձեռք բերված ապացույցների «վերիֆիկացման» պահանջ՝ ուստի գտնում ենք, որ փոխանցված վարույթի դեպքում բացակայում է դրա հիման վրա վարույթ նախաձեռնելու և արդեն իսկ կատարված ապացուցողական գործողությունները կրկին կատարելու անհրաժեշտությունը:

Հաջորդ հարցը, որ կցանկանայինք քննարկել փոխանցված քրեական գործով իրականացվող քննության կապակցությամբ, վերաբերում է քրեական հետապնդման ժամկետների հաշվարկին:

1998 թվականին ընդունված օրենսգրքի կարգավորումների պայմաններում փոխանցված քրեական գործը կոնվենցիայով նախատեսված պահանջներին բավարարելու դեպքում¹⁷, ըստ էության, խնդիրներ չէր առաջացնում ժամկետների առումով, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021 թվականին ընդունված քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված են քրեական հետապնդման ժամկետներ՝ կախված կատարված հանցագործության ծանրությունից, հարց է առաջանում, փոխանցված գործի պարագայում ո՞ր պահից պետք է հաշվել քրեական հետապնդման ժամկետները՝ օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից մեղադրյալին մեղադրանքը ներկայացնելով, թե՛ ՀՀ իրավասու մարմինների կողմից վերջինիս մեղադրանքը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու և նոր մեղադրանք առաջադրելու պահից:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քննարկվող հարցի կապակցությամբ տվյալ պահին առկա չեն պրակտիկ դեպքեր, որոնք հնարավորություն կտային եզրակացնելու, թե որ ուղղությամբ է ընթանում դատական պրակտիկան՝ կարծում ենք, հետագայում նման խնդիրներից խուսափելու նպատակով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում պետք է նախատեսել հետևյալ կարգավորումը՝

¹⁷ Տե՛ս Քիչնևի կոնվենցիայի 92-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ Հայցող Պայմանավորվող կողմի հարուցած քրեական գործ ուղարկելու դեպքում այդ գործով քննությունը հայցվող Պայմանավորվող կողմի կողմից շարունակվում է նրա ներպետական օրենսդրության համապատասխան: Նախքան քրեական հետապնդում իրականացնելու վերաբերյալ հանձնարարությունն ուղարկելը հայցող Պայմանավորվող կողմը լուծում է քննության, մեղադրյալներին կալանքի տակ պահելու և գործով վարույթ վերսկսելու ժամկետների երկարացման վերաբերյալ հարցը:

Օտարերկրյա պետության կողմից փոխանցված և վարույթ ընդունված քրեական գործով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված քրեական հետապնդման ժամկետները սկսում են հոսել մեղադրյալին առաջադրված մեղադրանքը ՀՀ օրենսդրությամբ համապատասխանեցնելու և վերջինիս նոր մեղադրանք ներկայացնելու պահից:

Նախ, հարկ է նշել, որ քրեական հետապնդում իրականացնելու մասին որոշումը ողջ դատավարության կենտրոնական փաստաթուղթն է, որը կանխորոշում է գործի հետագա ընթացքը, հետևաբար այն պետք է կազմված լինի ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ համապատասխան և ապահովի նաև անձի համար իրեն ներկայացված մեղադրանքի որոշակիությունը՝ դրանով իսկ ապահովելով վերջինիս պաշտպանության իրավունքը:

Վերոգրյալից բացի, փոխանցված վարույթը ենթադրում է նաև քրեական գործի թարգմանություն և, ինչպես նշվեց, համապատասխանեցում ՀՀ օրենսդրությամբ, որը պահանջում է ողջամիտ ժամկետ: 2021 թվականին ընդունված քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված քրեական հետապնդման ժամկետների պարագայում օտարերկրյա պետությունից ստացված քրեական գործերի դեպքում այդ ժամկետը կա՛մ արդեն իսկ լրացած է լինելու, կա՛մ մոտ է լինելու լրանալուն, հետևաբար, օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից մեղադրյալին առաջադրված մեղադրանքի պահից ժամկետը հաշվարկելու դեպքում անհնարին է լինելու իրականացնել միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները:

Հետևաբար, օրենսդրությամբ չպետք է նախատեսված լինեն այնպիսի կարգավորումներ, ինչպիսիք անհնար կարող են դարձնել միջազգային պայմանագրերի կատարումը:

Վերջին հարցը, որը կցանկանայինք քննարկել սույն պարագրաֆի շրջանակներում, վերաբերում է ՀՀ իրավասու մարմիններին փոխանցված գործը օտարերկրյա պետությանը վերադարձնելու հնարավորությանը:

Քրեական վարույթների փոխանցման մասին եվրոպական կոնվենցիայի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հայցող պետության կողմից քրեական գործը կարող է փոխանցվել հայցվող պետությանը որոշակի հիմքերի ամկայության դեպքում: Որպես այդպիսիք կարելի է նշել, օրինակ, կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հետևյալ հիմքերը՝

- ա) եթե կասկածվող անձը մշտապես բնակվում է հայցվող Պետությունում,
- բ) եթե կասկածվող անձը հայցվող Պետության քաղաքացի է կամ ծագումով հայցվող Պետությունից է,
- գ) եթե կասկածվող անձը հայցվող Պետությունում կրում է կամ կրելու է պատիժ ազատազրկման ձևով,
- դ) եթե հայցվող Պետությունում տվյալ կասկածվող անձի նկատմամբ իրականացվում է վարույթ նույն կամ այլ հանցագործությունների կապակցությամբ,
- ե) եթե գտնում է, որ վարույթի փոխանցումը բխում է ճշմարտությունը բա-

ցահայտելու շահերից և, մասնավորապես, որ ապացույցի կարևորագույն տարրերը հայցվող Պետությունում են,

գ) եթե գտնում է, որ հայցվող Պետության կողմից դատավճիռն ի կատար անվելու դեպքում դրա իրականացումը կբարելավի դատապարտյալի սոցիալական վերականգնման հնարավորությունները,

ե) եթե գտնում է, որ չի կարող ապահովվել կասկածվող անձի ներկայությունը հայցող Պետությունում իրականացվող դատաքննությանը, և որ կարող է ապահովվել նրա ներկայությունը դատաքննությանը հայցվող Պետությունում,

ը) եթե գտնում է, որ հնարավոր դատավճիռը կայացնելու դեպքում այն ի կատար չի անվի նույնիսկ հանձնման մասին խնդրանք ներկայացնելու դեպքում, բայց գտնում է, որ հայցվող Պետությունը կարող է դա անել:

Մեջբերված, ինչպես նաև կոնվենցիայով նախատեսված այլ հիմքերի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ կոնվենցիան նախատեսում է քրեական գործի փոխանցման հնարավորությունը այն դեպքում, երբ առկա է «կապ» այդ պետության, հանցանքը կատարած անձի և տվյալ քրեական գործի միջև: Այսինքն՝ քրեական գործի փոխանցման նպատակը, ըստ էության, արդյունավետ քննության իրականացումն է, չնայած որ այս տեսակետի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա են տարբեր կարծիքներ¹⁸:

Ըստ էության, տվյալ հարցի վերաբերյալ քննարկումները բաժանվում են երկու խմբի: Մի մասի կարծիքով՝ քրեական վարույթի փոխանցմամբ ապահովվում է պատժի անխուսափելիության սկզբունքը, իսկ մյուս մասը հիմնականում բարձրացնում է այն հարցը, թե որքանով արդյունավետ կարող է իրականացվել մի գործի քննությունը այն պետության իրավասու մարմինների կողմից, որի տարածքում տվյալ հանցագործությունը չի կատարվել, վկաները և տուժողները չեն գտնվում նրա տարածքում և այլն:

Հարկ է նշել, որ երկրորդ կարծիքի հեղինակների մտահոգություններն արդարացված են: Պրակտիկայում շատ հաճախ հանդիպում են դեպքեր, երբ փոխանցված վարույթով իրականացված քննության շրջանակներում մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում՝ սպառելով նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները, վերջինիս նկատմամբ կայացվում է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում: Հարց է առաջանում՝ տվյալ դեպքում ի՞նչ պետք է անել փոխանցված քրեական գործի հետ: Ինչպես արդեն նշվել է վերևում, գործի փոխանցման հիմքը կապն է տվյալ պետության և հանցանք կատարած անձի միջև, սակայն անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում, ըստ էության, քրեական գործը պահել հայցվող պետության իրավասու մարմինների վարույթում իմաստա-

¹⁸ Stéphanie Anne-Sophie Massa, Bridging the legal gap, The International Initiative for Opening Negotiations on a Multilateral Treaty for Mutual Legal Assistance and Extradition in the Domestic Prosecution of Atrocity Crimes, Cambridge University Press 2017, էջ 4:

գրկվում է և հաշվի առնելով կոնվենցիայի դրույթները՝ ենթադրվում է, որ գործը ենթակա է վերադարձման հայցող պետության:

Սակայն այս իրավիճակը ևս առաջ է բերում մի շարք խնդիրներ: Մասնավորապես ո՛չ միջազգային պայմանագրերով, ո՛չ օտարերկրյա պետությունների օրենսդրություններով կարգավորված չէ այն հարցը, թե քրեական գործը վերադարձվելու դեպքում ինչ իրավական արժեք ունի հայցվող պետության կողմից անձի նկատմամբ կայացված քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումը, արդյո՞ք այն պարտադիր է հայցող պետության համար: Պրակտիկան ցույց է տալիս, որ տվյալ որոշումը ոչ մի հետևանք չի ունենում հայցող պետության համար և անձի նկատմամբ շարունակվում է գործել հայցող պետության կողմից հայտարարված հետախուզումը:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ առաջարկվում է «Քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսել դրույթ, որի համաձայն՝ փոխանցված քրեական վարույթով մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը հայցող պետությանը վերադարձնելու դեպքում անձը պետք է նախազգուշացվի վերջինիս նկատմամբ գործող հետախուզման և «Սահմանը հատելու դեպքում օտարերկրյա պետությունում հայտնաբերվելու և համապատասխան հիմքերի առկայության դեպքում հետախուզում հայտարարած պետությանը հանձնվելու հնարավորության մասին»:

Եզրակացություն

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 5-րդ մասի բովանդակությունը պետք է լրացնել «և եթե առկա է քրեական հետապնդման իրականացման մասին խնդրանք» նախադասությամբ, որը կհստակեցնի հանձնման մասին միջնորդությունը մերժելու դեպքում վարույթ նախաձեռնելու դեպքերը և նվազագույնի կհասցնի նույն անձի նկատմամբ տարբեր պետություններում նույն արարքի կապակցությամբ գուգահեռ քննության իրականացումը:

Փոխանցված վարույթով նոր վարույթ չպետք է նախաձեռնվի, այլ իրականացված քննությունը պետք է շարունակվի:

Օտարերկրյա պետության կողմից փոխանցված և վարույթ ընդունված քրեական գործով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված քրեական հետապնդման ժամկետների հաշվարկը առաջարկվում է սկսել մեղադրյալին առաջադրված մեղադրանքը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու և վերջինիս նոր մեղադրանք ներկայացնելու պահից:

Քրեական հետապնդումը անձի նկատմամբ դադարեցնելու և գործը հայցող պետությանը վերադարձնելու դեպքում օրենսդրությամբ պետք է նախատեսվի անձին դրա մասին հայտնելու պահանջ:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Լատվիայի Հանրապետության քրեական դատավարության 21.06.2007 թ. օրենսգիրք:
Criminal Procedure Code of The Republic of Latvia, 21.06.2007.
2. «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ», 1984 թ.:
UN Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 1984.
3. Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության 04.07.2014 թ. օրենսգիրք:
Criminal Procedure Code of the Republic of Kazakhstan.
4. Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության 18.12.2001 թ. օրենսգիրք:
Criminal Procedure Code of the Russian Federation.
5. Ուկրաինայի քրեական դատավարության 13.10.2012 թ. օրենսգիրք:
Criminal Procedure Code of Ukraine, 13.10.2012.
6. Քրեական վարույթների փոխանցման մասին եվրոպական կոնվենցիա, 15.05.1972:
European Convention on the Transfer of Proceedings in Criminal Matters, 15.05.1972.
7. Քրեական գործերով իրավական օգնության մասին Խորվաթիայի Հանրապետության 1}10.12.2004 թ.:
Act on Mutual Legal Assistance in Criminal Matters, 10.12.2004
8. Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին Քիշնևի կոնվենցիա, 07.10.2002 թ.:
Convention on Legal Aid and Legal Relations in Civil, Family and Criminal Cases, adopted in Kishinev on 07.10.2002
9. Абдуллоев П.С., Формирование института передачи уголовного судопроизводства в рамках международного сотрудничества на постсоветском пространстве. Москва, 2015.
Abdulloev P.S., Formation of the institution of transfer of criminal proceedings within the framework of international cooperation in the post-Soviet space, Moscow 2015.
10. Jovana BLEŠIĆ, Aut dedere aut judicare in international and domestic law, 19.04.2022,
11. International Law Commission, The Obligation to Extradite or Prosecute, Amnesty International, Publication 2009.

12. M. Plachta, “Aut Dedere Aut Judicare: An Overview of the Modes of Implementation and Approaches”, *Maastricht Journal of European and Comparative Law*, 6 (4), 1999.
13. Stoyan P. The obligation aut dedere aut judicare (‘extradite or prosecute’) in international law: scope, content, sources and applicability of the obligation ‘extradite or prosecute’ by.
14. (access 20.08.2023)
15. International Law Commission, *The Obligation to Extradite or Prosecute*, Amnesty International, Publication 2009.
16. Anne-Sophie Massa, *Bridging the legal gap, The International Initiative for Opening Negotiations on a Multilateral Treaty for Mutual Legal Assistance and Extradition in the Domestic Prosecution of Atrocity Crimes*, Cambridge University Press:

Gayane Melikyan

Senior Prosecutor of the Department of International Legal Cooperation of the Prosecutor General's Office of the Republic of Armenia, Ph.D. Student of the Department of Criminal Procedure and Criminology of YSU

TRANSFER OF CRIMINAL PROCEEDINGS AS A RESULT OF REFUSAL OF EXTRADITION: MAIN ISSUES UNDER THE LEGISLATION OF RA¹

Abstract

The article is devoted to the problems that arise in the practical application of the well-known principle *Aut dedere aut judicare* “Extradite or Prosecute”. The author, considering the principle under discussion as a logical consequence of the refusal of an extradition request, discusses cases when the state that rejected the extradition request does not apply for criminal liability. The article analyzes the possible negative consequences of criminal prosecution in such situations and proposes appropriate solutions.

At the same time, the problems arising in practice during the transfer of proceedings by the competent authorities of a foreign state have been reviewed and analyzed in the article, the reasons of occurrence of these problems have been clearly identified, on the basis of which the author presented proposals for making relevant legislative changes.

Keywords: extradition request; criminal prosecution; wanted person; international principle; jurisdiction; international treaty; convention; to initiate criminal proceeding;

¹ The article was presented on 05.12.2023 and was reviewed on 05.12.2023.

terms of persecution etc.

Гаяне Меликян

*Старший прокурор управления международно-правового сотрудничества
Генеральной прокуратуры Республики Армения, аспирант кафедры
уголовного судопроизводства и криминалистики ЕГУ*

ПЕРЕДАЧА УГОЛОВНОГО ПРОИЗВОДСТВА КАК ПОСЛЕДСТВИЕ ОТКАЗА В ВЫДАЧЕ: ОСНОВНЫЕ ЗАДАЧИ ПО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РА¹

Абстракт

Статья посвящена проблемам, возникающим при практическом применении известного принципа *Aut dedere aut judicare* (*extradite or prosecute*) «Либо выдай, либо суди». Автор, рассматривая обсуждаемый принцип как логическое последствие отказа в запросе о выдаче, анализирует случаи, когда государство, которым было отказано в запросе о выдаче, не обращается с просьбой о привлечении к уголовной ответственности. В статье анализируются возможные отрицательные последствия уголовного преследования в подобных ситуациях и предлагаются соответствующие решения.

В то же время в статье были рассмотрены и проанализированы проблемы, возникающие на практике при передаче дел компетентными органами иностранного государства, четко обозначены причины возникновения этих проблем, на основании чего автором были представлены предложения о внесении соответствующих законодательных изменений.

Ключевые слова: запрос о выдаче; уголовное преследование; разыскиваемый; международный принцип; юрисдикция; международный договор; конвенция; возбудить уголовное производство; сроки преследования и т. д.

¹ Статья была представлена 05.12.2023 и прошла рецензирование 05.12.2023.

Հայկ Հարությունյան

*Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, Հայաստանում Ֆրանսիական
համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դասախոս*

**ՏՈՒԺՈՂԻ ԵՎ ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻ
ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՂԱՏԵԼՈՒ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ¹**

Համառոտագիր

Արդիականություն ու նպատակահարմարություն: Սույն աշխատության շրջանակներում ուսումնասիրության է ենթարկվել քրեական պատասխանատվությունից ազատելու՝ տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքը, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածում:

Քրեական պատասխանատվությունից ազատելու վկայակոչված հիմքը առաջին անգամ նախատեսվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով, իսկ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված քրեական օրենսգրքով նախատեսվեց նշված հիմքի կիրառման ավելի մանրամասն կարգավորումներ:

Մինչդեռ կարելի է փաստել, որ քննարկվող հիմքի կիրառելիության ժամանակ առաջանում են հարցեր, որոնց պատասխանները տրված չեն ո՛չ գործող օրենսդրությամբ, ո՛չ էլ ՀՀ դատական պրակտիկայում: Մասնավորապես՝ ի՞նչ է հաշտությունը, համակցությամբ հանցանք կատարած անձը կարո՞ղ է քննարկվող հիմքով ազատվել քրեական պատասխանատվությունից, տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը հանդիսանում է իրավակիրառ մարմնի իրավո՞ւնքը, թե՞ պարտականությունը:

Հիշյալ և առաջ քաշված այլ հարցեր, որոնց անդրադարձել ենք սույն աշխատության շրջանակներում, պահանջում են լուծումներ՝ քրեաիրավական հիմքի լիարժեք կիրառման անհրաժեշտությամբ պայմանավորված:

Հոդվածի նպատակը: Տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքի քրեաիրավական հիմնախնդիրների ուսումնասիրություն:

¹ Հոդվածը ներկայացվել է 01.09.2023թ., գրախոսվել է 13.11.2023թ.:

Արդյունքները: Հեղինակի կողմից տրվել է հաշտության բնորոշումը, բացահայտվել են «առաջին անգամ հանցանք կատարած անձ» հասկացության կիրառման գործնական խնդիրները, ապացուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված՝ հիմքի սահմանափակման կիրառման խնդիրները:

Արդյունքների գործնական և տեսական նշանակությունը: Տեսական նշանակությունն այն է, որ ստացված արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա հետազոտությունների համար, իսկ գործնական նշանակությունը՝ օգտագործվել քրեական օրենսդրության կատարելագործման և պրակտիկայի ձևավորման համար:

Հիմնաբառեր- առաջին անգամ հանցանք կատարած անձ, տուժողի և հանցանք կատարած անձի հաշտություն, պատճառված վնասի հատուցում կամ հարթում, ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք, քրեական պատասխանատվությունից ազատել:

Ներածություն

Թեմայի ձևակերպում: Տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքի օրենսդրական և գործնական հիմնախնդիրների ուսումնասիրությունը և դրանց լուծումները:

Հետազոտության հիպոթեզի ձևակերպում: Աշխատությունում ներկայացված մոտեցումներն ու կատարված ուսումնասիրության արդյունքների վրա հիմնված առաջարկությունները կարող են օգտագործվել քրեական օրենսդրության կատարելագործման և պրակտիկայի ձևավորման համար:

Հետազոտության արդիականության հիմնավորումը: Ընտրված թեմայի արդիականությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ նշված քրեաիրավական հիմքը գործնականում ունի լայն կիրառելիություն, մինչդեռ գործնականում բացակայում է այդ նորմի կիրառելիության միասնական մոտեցումը, որպիսի հանգամանքը պայմանավորված է օրենսդրական թերի կարգավորումներից և պրակտիկայի բացակայությունից:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության՝ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքի օրենսդրական և գործնական հիմնախնդիրների ուսումնասիրությունը և դրանց լուծումները: Այդ նպատակը պայմանավորել է հետազոտության շրջանակներում հետևյալ խնդիրների առաջաշումը՝ «առաջին անգամ հանցանք կատարած անձ» հասկացության գործնական կիրառելիությունը, «հաշտության» հասկացության բնորոշման բացակայությունը, պատճառված վնասի հատուցման կամ հարթման պայմանի բացակայությունը:

§ 1.1. Քրեական պատասխանատվությունից ազատելը՝ որպես քրեական իրավունքի ինստիտուտ

Նոր քրեական քաղաքականությունը քրեական պատասխանատվության և պատժի խնդիրները դիտարկում է որոշակի փոխզիջման՝ որպես իրավական պետությունում տվյալ խնդրի լուծման թույլատրելի միջոց²: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր պետություն պետք է որդեգրի քրեական այնպիսի քաղաքականություն, որի արդյունքում հնարավոր կլինի քրեաիրավական և քրեադատավարական միջոցներով արդյունավետ պայքարել հանցավորության դեմ, ինչպես նաև կանխել այն:

ՀՀ քրեական օրենսգրքում առկա են նորմեր, որոնք կարգավորում են հանցանք կատարելուց հետո անձի կողմից դրսևորած դրական վարքագծի հիման վրա առաջացող հատուկ հասարակական հարաբերություններ: Այդ նորմերում սահմանվում են պահանջներ, որոնց իրականացումը ենթադրում է, որ հանցանք կատարած անձը կորցրել է իր երբեմնի հանրային վտանգավորությունը, ինչը հիմք է՝ անձին ազատելու հետագա քրեաիրավական ներգործության միջոցներից, մասնավորապես՝ քրեական պատասխանատվությունից: Քրեական իրավունքի տեսությունում այդ նորմերն իրենց իրավական բնույթով կարգավորում են հատուկ հարաբերություններ և հանդիսանում խրախուսական նորմեր: Խրախուսանքի համար անհրաժեշտ պայման է հանցանք կատարելուց հետո հանցանք կատարած անձի կողմից դրական վարքագիծ դրսևորելը: Քրեական իրավունքում քննարկվող նորմերի ամբողջությունը կազմում է հենց քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը:

ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը կարելի է պայմանական դասակարգել ըստ դրանց կիրառման իմպերատիվության հատկանիշի, մասնավորապես՝

1. հանգամանքներ, որոնց առկայության դեպքում հանցանք կատարած անձը **կարող է** ազատվել քրեական պատասխանատվությունից (գործուն գղջալու հիմք),

2. հանգամանքներ, որոնց առկայության դեպքում հանցանք կատարած անձը, **պետք է** ազատվի քրեական պատասխանատվությունից (հանցագործությունից կամովին հրաժարվելու, տուժողի և հանցանք կատարած անձի՝ հաշտության, հանցանքի վաղեմության ժամկետներն անցնելու հիմքեր):

Մեր խորին համոզմամբ, քրեական օրենսդրությունում առկա վերոհիշյալ հանգամանքները հանդես են գալիս որպես պետության այլընտրանքային պատասխան անձի կատարած անօրինականության դեմ, որի միջոցով օրենքով սահմանված կարգով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու և պատիժ կիրառելու փոխարեն, ինչպես նշում է Ն.Վ. Երոխինը, «(...) պետությունն

² Տե՛ս Якобашвили Г.М. Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим: дисс. ... канд. юрид. наук. М., 2002, էջ 4-5:

օրինական «գործարք կնքելով» հանցանք կատարած անձի հետ»³ իր առաջնային խնդիրն է համարում ոչ այնքան հանցագործին պատժելը, որքան արժեքներն ու շահերը օրենքով պաշտպանելը:

§ 1.2. Տուժողի և հանցանք կատարած անձի՝ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու կիրառման պայմանները

Տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքը նախատեսված է եղել նաև 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Նախորդ օրենսգիրք) 73-րդ հոդվածում, որը սահմանում է. «Ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը»: Նույնական կարգավորում նախատեսվել է նաև 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Նոր օրենսգիրք) 82-րդ հոդվածի («Քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի և հանցանք կատարած անձի՝ հաշտության հիմքով») 1-ին մասում, որի համաձայն՝ **«Եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նրա ու տուժողի միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարված հանցանքում առկա են ընտանիքում բռնության հատկանիշներ»:**

Նոր քրեական օրենսգրքում տրված բնորոշումն էականորեն տարբերվում է Նախորդ օրենսգրքի 73-րդ հոդվածում նախատեսված ձևակերպումից: Հիմնական տարբերությունը հանգում է նրան, որ նախ՝ քննարկվող քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքը դարձել է «իմպերատիվ», ինչպես նաև օրենսդրի կողմից նախատեսվել է նշված հիմքի կիրառման ավելի մանրամասն կարգավորումներ, մասնավորապես՝ անդրադարձ է կատարվել հանցակցի, ինչպես նաև հանցանք կատարած անչափափաս և սահմանափակ մեղսունակ անձանց կողմից տուժողի հետ հաշտվելու առանձնահատկություններին:

Նոր օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է չորս պայմաններ (**առաջին անգամ հանցանք կատարել, ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարել, տուժողի և հանցանք կատարած անձի հաշտություն, ընտանիքում բռնության հատկանիշների բացակայություն**), որոնք իրենց էությամբ նույնարժեքային չեն, և քրեական

³ Стів Ерохина Н.В., Прекращение уголовного дела и (или) уголовного преследования в связи с деятельным раскаянием на стадии предварительного расследования. М.: Изд-во Моск. ун-та МВД России, 2002, էջ 28:

պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս յուրաքանչյուրն ունի իր իրավական արժեքը: Ավելին՝ նշված հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար անհրաժեշտ է չորս պայմանների միաժամանակյա առկայությունը:

«Առաջին անգամ հանցանք կատարած անձի» հասկացության բնորոշումն առաջին անգամ օրենսդրական մակարդակով նախատեսվել է Նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում, որի համաձայն՝ **առաջին անգամ հանցանք կատարած է համարվում այն անձը, որը նախկինում հանցանք չի կատարել կամ կատարել է, սակայն ազատվել է քրեական պատասխանատվությունից, կամ որի դատվածությունը սույն օրենսգրքով սահմանված կարգով մարվել կամ վերացվել է:** Թեև նշված հասկացությունը օգտագործվում էր նաև Նախորդ օրենսգրքում (ընդհանուր և հատուկ մասերում), սակայն օրենսդրորեն տրված չէր դրա բնորոշումը, ինչը գործնականում առաջացնում էր այդ հասկացության միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Օրենսդրական ճշգրիտ բնորոշման կարևորությունն առաջին հերթին պայմանավորվում է այն հանգամանքով, որ դրա միջոցով օրենսդիրը սահմանափակում է քրեական պատասխանատվությունից ազատելու նորմի կիրառման շրջանակն այն հանցանք կատարած անձանց նկատմամբ, ովքեր ունեն հանրային վտանգավորության բարձր աստիճան:

Իրավաբանական գրականությունում գոյություն չունի միատեսակ մոտեցում, թե որն է հանդիսանում առաջին անգամ հանցանք կատարելը:

Իրավաբան-գիտնականների գերակշռող մասը նշում է, որ «Առաջին անգամ կատարված է համարվում այն հանցանքը (արարք), որը անձը փաստացի կատարել է առաջին անգամ, կամ արարքը, որը անձը թեև կատարել է ոչ առաջին անգամ, սակայն կատարված հանցանքի համար անցել են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները⁴»: Ս.Գ. Կելինսկան կարծում է, որ հանցանքը պետք է համարել առաջին անգամ կատարված, երբ հանցանքը կա՛մ փաստացիորեն, կա՛մ իրավականորեն կատարվել է առաջին անգամ, այսինքն՝ կա՛մ վաղեմության ժամկետները մարվելուց, կա՛մ նախկինում կատարած հանցանքի համար դատվածությունը հանվելուց կամ մարվելուց հետո⁵:

«Առաջին անգամ հանցանք կատարած» օրենսդրական բնորոշման բացահայտման շրջանակներում, անհրաժեշտ է քննարկել այն իրավիճակը, երբ անձը հանցանքը (ոչ մեծ կամ միջին ծանրության) կատարում է իրական կամ իդեալական համակցությամբ, արդյո՞ք վերջինս նշված հիմքով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից կատարած հանցանքների համար:

Առաջին անգամ հանցանք կատարելու հասկացության ճիշտ կիրառումն ունի

⁴ Ст'ю Комментарий к Уголовному кодексу Российской Федерации // Отв. ред. А.В. Наумов. 2-е изд., перераб. и доп. М.: Юристъ, 1996, էջ 206:
⁵ Ст'ю Келина С.Г., Теоретические вопросы освобождения от уголовной ответственности. / Отв. ред.: Пионтковский А.А. М.: Наука, 1974, էջ 159:

իր կարևորությունը, քանի որ նախ՝ գործնականում նշված իրավիճակները հաճախ են առաջանում, երկրորդ՝ գործնականում բացակայում է նշված հասկացության կիրառման միասնական մոտեցումը:

Ն.Կուզնեցովայի մոտեցման համաձայն՝ եթե անձի կատարած արարքի մեջ առկա է հանցանքի համակցություն, ապա հնարավոր է անձին ազատել քրեական պատասխանատվությունից կատարած արարքներից միայն առաջինից⁶:

Յու.Վ. Մատվեևայի կարծիքով՝ եթե անձի կողմից կատարվում է միանգամից երկու հանցանք, ապա այդ անձին հնարավոր է բոլոր հանցանքերի համար ազատել քրեական պատասխանատվությունից, քանի որ այս դեպքում անձը հանցանքը իրավականորեն կատարել է առաջին անգամ⁷:

«Առաջին անգամ հանցանք կատարելու» հասկացության կիրառելիության վերաբերյալ արդեն իսկ դատարաններում ձևավորվել է որոշակի պրակտիկա: Մասնավորապես՝ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ ԱԲԴ/0302/01/22 գործով որոշում է կայացրել մեղադրյալ Ս.Դ.-ի նկատմամբ Նախորդ օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցնել՝ Նոր օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասի, այն է՝ տուժող Ռ.Զ.-ի հետ հաշտվելու հիմքով⁸:

Հիշյալ որոշումից հետևում է, որ դատարանը նույն վարույթով, նույն անձի կողմից կատարված մեկից ավելի միջին ծանրության հանցանքները դիտարկել է, որպես առաջին անգամ կատարված հանցանք և անձին ազատել է քրեական պատասխանատվությունից՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով: Ստացվում է, որ եթե անգամ անձի կողմից կատարվել են մեկից ավելի հանցանքներ (ոչ մեծ և միջին ծանրության), ապա վերջինիս արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով, համարվում է առաջին անգամ հանցանք կատարած անձ:

Այսպիսով, պետք է նշել, որ թե՛ իրական և թե՛ իդեալական համակցության դեպքում անձը մեկ կամ մեկից ավելի արարքներով կատարում է երկու կամ ավելի հանցանքներ, հետևաբար հանցանք կատարած անձը նշված հիմքով կարող է քրեական պատասխանատվությունից ազատվել միայն կատարված հանցանքներից մեկի համար: Սակայն քրեական պատասխանատվությունից ազատելու իրագործման շրջանակներում, կախված համակցության տեսակից (իդեալական կամ իրական), վարույթն իրականացնող մարմինն անձին քրեական պատասխանա-

⁶ Տե՛ս Кузнецова Н., Частичное прекращение уголовного дела при множественности преступлений // Законность. № 3, М., 2001, էջ 31:

⁷ Տե՛ս Матвеева Ю.В., Освобождение от уголовной ответственности в связи с деятельным раскаянием: Автореф. дис... канд. юрид. наук. М., 2001, էջ 19:

⁸ Տե՛ս Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ ԱԲԴ/0302/01/22 գործով որոշումը:

տվությունից ազատելու հարցում պետք է դրսևորի տարբերակված մոտեցում: Մասնավորապես՝ եթե հանցանքը կատարվել է իրական համակցությամբ, ապա անձը պետք է քրեական պատասխանատվությունից ազատվի դրանցից միայն առաջին հանցանքի կատարման համար, իսկ եթե հանցանքը կատարվել է իդեալական համակցությամբ, ապա հանցանք կատարած անձին պետք է հնարավորություն տրվի ընտրելու հանցանքներից որի համար ազատվի քրեական պատասխանատվությունից: Վերջին մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ իդեալական համակցության դեպքում անձը մեկ արարքով կատարում է քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված երկու կամ ավել հանցանքներ, ինչը գործնականում դժվարացնում է տարանջատել, թե հանցանքներից որն է կատարվել առաջինը: Օրինակ՝ եթե անձն իդեալական համակցությամբ կատարել է ոչ մեծ և միջին ծանրության հանցանքներ, ապա վերջինս կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից միջին ծանրության հանցանքի կատարման համար՝ անկախ այն հանգամանքից, թե իդեալական համակցությամբ մեջ ընդգրկված հանցանքներից որ գործողությունն (արարք) է առաջինը կատարվել:

Գործնականում հանդիպող հաջորդ իրավիճակը այն է, երբ հանցանք կատարելու ժամանակ անձն ունեցել է դատվածություն, սակայն հաշտության ժամանակ նշված դատվածությունը մարվել կամ վերացվել է, արդյո՞ք վերջինիս կատարած հանցանքը կարող է գնահատվել առաջին անգամ կատարված:

ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենսգրքով նախատեսված հանցանքը կատարելու ժամանակ է համարվում գործողությունը կամ անգործությունը կատարելու պահը՝ անկախ հետևանքներն առաջանալու պահից»:

Նշված իրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ հանցանք կատարելու ժամանակ է համարվում հենց արարքը կատարելու պահը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածում նշվում է առաջին անգամ **հանցանք** կատարել հասկացությունը, ինչը ենթադրում է, որ առաջին անգամը վերաբերվում է հանցանքին, իսկ հանցանքի կատարման ժամանակ է համարվում գործողությունը կամ անգործությունը կատարելու պահը: Այլ կերպ՝ օրենսդիրը որպես ելակետային հասկացություն օգտագործում է հանցանքը, հետևաբար անկախ այն հանգամանքից, թե երբ է տուժողը և հանցանք կատարած անձը հաշտվել, եթե այն կատարվել է դատվածության ժամանակ, ապա վերջինս ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի հիմքով չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից, քանի որ նրա հանցանքը չի համարվի առաջին անգամ կատարված:

ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով սահմանված հաջորդ օրենսդրական պահանջն այն է, որ հանցանքը պետք է լինի ոչ մեծ կամ միջին ծանրության: Նույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ մեծ ծանրության հանցանքներ են համարվում սույն օրենսգրքով նախատեսված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված առավելագույն

պատիժը չի գերազանցում 2 տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ», իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Միջին ծանրության հանցանքներ են համարվում սույն օրենսգրքով նախատեսված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում 5 տարի ժամկետով ազատազրկումը»:

Ի տարբերություն 2003 թվականի մայիսի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ի մասի կարգավորմանը, որտեղ նախատեսված էր բացառապես ոչ մեծ ծանրության հանցանքը՝ նոր քրեական օրենսգրքով օրենսդիրը ընդլայնել է տուժողի և հանցանք կատարած անձի՝ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերը՝ տարածելով նաև միջին ծանրության հանցանքների վրա:

Նոր քրեական օրենսգրքի հեղինակները նշված մոտեցումը հիմնավորել են այն հանգամանքով, որ նախորդ քրեական օրենսգրքում այս ինստիտուտի կիրառության շրջանակները խիստ նեղացված են՝ կապվելով միայն ոչ մեծ ծանրության հանցանք կատարելու հետ: Նման պարագայում այն դառնում է գրեթե ոչ կիրառելի՝ նկատի ունենալով նաև այն, որ ոչ մեծ ծանրության հանցագործությունների մի զգալի մասը մասնավոր մեղադրանքի գործեր են, և զուտ տուժողի բողոքի բացակայությունը, նույնիսկ եթե հանցավորի և տուժողի միջև հաշտությունը չի կայացել և տուժողին պատճառված վնասը չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել, արդեն իսկ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու պայման է: Հարցի լուծման տարբերակ է միջին ծանրության հանցագործությունների պարագայում ևս այս ինստիտուտի կիրառման հնարավորության ընձեռումը, հատկապես որ մասնավոր մեղադրանքի գործերի շարքում ևս հանդիպում են միջին ծանրության հանցագործություններ⁹:

Նշվածի վերաբերյալ քրեական իրավունքի տեսությունում առկա են տարբեր մոտեցումներ: Այսպես՝ ինչպես նշում է Ի.Մ. Ալիկպերովը. «(...) որոշ դեպքերում անհրաժեշտ է հաշվի առնել տուժողի կարծիքը, մասնավորապես՝ այլ տեսակի (միջին ծանրության և ծանր հանցագործություններ) հանցագործություններ կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծելու դեպքում: Ասվածը, մասնավորապես, վերաբերում է միջին ծանրության և ծանր հանցագործություններին, բայց որոնց դեպքում տուժողի կյանքին կամ առողջությանը ծանր հետևանքներ չեն պատճառվել: Նման դեպքերում զոհի կամքն անտեսելով՝ մեղավորին քրեական պատասխանատվության ենթարկելը հանգեցնում է նրան, որ տուժողի շահերը խախտվում են երկու անգամ. Առաջինը՝ հանցագործի գործողությունների, երկրորդը՝ պետական մարմինների գործողությունների հետևանքով»¹⁰:

⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի հայեցակարգ, էջ 61:

¹⁰ Տե՛ս Аликперов Х. Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим // Законность. № 6, М., 1999, էջ 13:

Վ.Գ. Ուլյանովը նույնպես համաձայն է ընդլայնել տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու արարքների շրջանակը՝ դրանում ընդգրկելով նաև միջին ծանրության հանցագործությունները¹¹:

Գտնում ենք, որ տուժողի և հանցանք կատարած անձանց հաշտության դեպքերը նաև միջին ծանրության հանցանքների վրա տարածելով՝ կրնդլայնվի նշված հիմքի կիրառելիությունը, ինչը կխթանի վարույթն իրականացնող մարմնի ծանրաբեռնվածությունը բեռնաթափելուն:

Օրենսդրի կողմից, անձին հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու նախատեսված հաջորդ պայմանը, հանցանք կատարած անձի և տուժողի հաշտությունն է: Ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի՝ նոր քրեական օրենսգրքում, օրենսդիրը չի սահմանափակվում միայն հաշտության հասկացության ամրագրումով, այլ որոշակի չափով փորձում է բնորոշել այն՝ նշելով, որ հաշտությունը պետք է լինի որպես ինքնուրույն, ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնություն: Այլ կերպ՝ օրենսդիրը հաշտության հասկացությանն օժտել է ինքնուրույնության, ազատ կամարտահայտության և փոխադարձ համաձայնության չափանիշներով:

Ըստ Խ.Ալիկպերովի՝ հաշտությունը պետք է ընդունել որպես տուժողի կողմից հանցագործություն կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին ներկայացված դիմումից հրաժարում կամ քրեական գործի կարճման մասին ներկայացված դիմում՝ հաշտության հասնելու վերաբերյալ¹²:

Հաշտությունն այն է, երբ տուժողն իր կամարտահայտությամբ հրաժարվում է դատական կարգով իր իրավունքների պաշտպանությունից¹³:

Դա երկկողմանի կայացված փաստաթուղթ է, որը պահանջում է ոչ միայն տուժողի համաձայնությունը, այլ նաև մեղադրյալի¹⁴:

Հաշտությունը նշանակում է քաղաքացիների միջև օրինական հարաբերությունների վերականգնում՝ բացառելով պետության հարկադրանքի կիրառման անհրաժեշտությունը, (...) ¹⁵:

Հաշտության հասկացության հարցի կապակցությամբ իր դիրքորոշումն է հայտնել նաև Վճռաբեկ դատարանը՝ մասնավորապես նշելով. «(...) Հանցանք կատարած անձի համար հաշտությունը հանցանքի կատարման մեջ իրեն մեղավոր ճանաչելն է, այդ արարքի համար զղջալը, ափսոսանք հայտնելը, իսկ տուժողի

¹¹ St'u Ульянов В.Г., Реализация прав потерпевших в российском уголовном процессе: Автореф. дис. ... канд. юрид. наук. Краснодар, 1998, էջ 13-14:
¹² St'u Аликперов X., Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим // Законность. № 6, М., 1999, էջ 12:
¹³ St'u Давыдов П.М., Мирский Д.Я. Прекращение уголовных дел. М.: Юрид. лит., 1963, с. 60:
¹⁴ St'u Каткало С.И., Лукашевич В.З., Судопроизводство по делам частного обвинения. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1972, էջ 123:
¹⁵ St'u Гальперин И.М., Об уголовном преследовании, осуществляемом потерпевшим в советском уголовном процессе // Советское государство и право. № 10, М.: Наука, 1957, էջ 52:

համար՝ հանցանք կատարած անձին ներելը: Բացի այդ, հաշտությունն ենթադրում է տուժողի և ենթադրյալ հանցագործի կամավոր և փոխադարձ համաձայնություն միմյանց հետ հաշտվելու վերաբերյալ: Այսինքն՝ հաշտությունը պետք է լինի ինչպես գործողություն, այնպես էլ փոխադարձ գործողությունների արդյունք:

Հաշտության կամավոր բնույթը ենթադրում է հաշտվելու վերաբերյալ կողմերի ինքնուրույն և ազատ կամահայտնություն:

Հաշտության փոխադարձ բնույթը նշանակում է, որ կողմերից երկուսն էլ պետք է հայտարարեն հաշտության մասին»¹⁶:

Վ.Վ. Ցենյովան արդարացիորեն նշում է, որ նպատակահարմար է հաշտությունը դիտարկել երկու ասպեկտների միջոցով. մի կողմից՝ որպես գործընթաց, որն իրականացվում է որոշակի ժամանակի ընթացքում, մյուս կողմից՝ որպես արդյունք, հետևանք, որն ի հայտ է գալիս համապատասխան գործողությունների հետևանքով¹⁷:

Ի.Մ. Գալպերինը նշում է, որ հաշտությունը բնականոն հարաբերությունների վերականգնում է: Այսպես, սույն մոտեցման մեջ արտացոլված են միանգամից մեկից ավել հաշտեցման հատկանիշներ. «վերականգնումը»՝ որպես գործընթաց, սույն գործընթացին նվազագույնը երկու անձանց մասնակցությունը, և «վերականգնումը»՝ որպես արդյունք¹⁸:

Հաշտեցման գործընթացին պետք է մասնակցի են նվազագույնը երկու անձ՝ հանցագործություն կատարած անձը և հանցագործությունից տուժած անձը: Ուստի նպատակահարմար չէ համաձայնել Պ.Ս. Դավիդովայի, Դ.Ս. Միրսկիի, Խ.Դ. Ալեկսեբրովարծում են, թե հաշտությունը տուժողի կողմից հանցանք կատարած անձի դեմ ներկայացրած քրեական պատասխանատվության ենթարկելու դիմումից միակողմանի հրաժարումն է: Հաշտության գործընթացին պարտադիր պետք է մասնակցի են նվազագույնը երկու անձ, քանի որ այն երկկողմանի համաձայնություն է:

Դեռևս XIX դարի վերջերին Ա. Լոխվիցկին նշում էր. «Ի՞նչ է պետք հասկանալ հաշտության եզրույթի տակ, փոխադարձ իրական հաշտեցում, թե՛ բավարար է միակողմանի տուժող կողմի դիմումը, որ նա հաշտվում է: Ակնհայտ է, որ վերջինի դեպքում դա չի արձանագրվի որպես հաշտեցում, այլ՝ որպես ներում: (...): Պատժի չիրականացման գլխավոր հիմքը ոչ թե նվազ հանցագործություններն են, ինչպիսիք են գրպարտությունը, վիրավորանքը և այլն, այլ այն, որ թշնամությունը զիջել է խաղաղությանը, հետևաբար հանրային շահը չի վնասվել: Երբ մեղավորը

¹⁶ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԱԶԳ/0157/01/10 որոշման 18-րդ կետ:

¹⁷ Տե՛ս Ценева В.В., Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим, дис. ... канд. юрид. наук. Кемерово, 2002, էջ 153:

¹⁸ Տե՛ս Гальперин И.М., Наказание: социальные функции, практика применения. М.: Юрид. лит., 1983, էջ 206:

չի զոջում, թշնամությունը չի դադարում, ապա հաշվի առնելով հանրության շահը՝ նպատակահարմար է նրան բաց թողնել առանց պատիժ կիրառելու: Բայց օրենքը չի սահմանել հաշտեցման ապացույցի որևէ պայման, և մեր պրակտիկան ձևավորվել է միայն վիրավորվածի կամ տուժողի դիմումի հիման վրա»¹⁹:

Մեր կարծիքով Ի.Մ. Գալպերինի այն մոտեցումը, որ պետք է վերականգնվեն «կանոնավոր, բնականոն իրավական հարաբերությունները», այդքան էլ արդարացված չէ: Առաջին՝ բոլոր անձնական հարաբերությունները հնարավոր չէ կարգավորել իրավունքով, երկրորդ, հեղինակի կողմից ներկայացված է ընդարձակ հասկացություն, քանի որ, օրինակ՝ քրեական իրավունքի ոլորտում հնարավոր է հասնել խաղաղության, բայց միևնույն ժամանակ լինել կոնֆլիկտային այլ հարաբերություններում, օրինակ՝ քաղաքացիաիրավական հարաբերություններում: Մեր կարծիքով այս դեպքում պետք է խոսել կոնկրետ հարաբերությունների մասին, որոնք առաջացել են հանցագործության արդյունքում, և որոնք պետք է կարգավորվեն:

Ավելին, ինչպես նշում է Ռ.Կ. Պլիսկոն, տուժողի հետ հաշտվելը հիմնականում կրում է ձևական (ֆորմալ) բնույթ, որի առկայությունն իրականում չի նախատեսում կողմերի միջև սահմանել բարեկամական կամ մտերմիկ հարաբերություններ: Հարաբերություններն իրենց միջև կարող են մնալ ինչպես նախկինում՝ լարված և թշնամական: Սակայն, եթե այս դեպքում տուժողը չի առարկում քրեական հետապնդման դադարեցման դեմ, և միաժամանակ առկա են օրենսդրական այլ իրականացված պահանջներ, որոնք նախատեսված են տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու նորմում, մեղավորը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից²⁰:

Մեր կարծիքով հաշտությունը կարելի է բնորոշել որպես գործընթաց և արդյունք, որն իր բնույթով ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնություն է՝ ուղղված տուժողի և հանցանք կատարած անձի միջև առաջացած հանցանքի հետևանքները վերացնելուն, իրավական միջոցներով հասարակական հարաբերությունները վերականգնելուն և պահպանելուն:

Ի տարբերություն ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորմանը՝ ՀՀ նոր քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասում բացակայում է հանցանքի հետևանքով տուժողին պատճառված վնասի հատուցման կամ հարթման վերաբերյալ օրենսդրական պայմանը: Այլ կերպ՝ նոր օրենսգրքով հանցանքի հետևանքով տուժողին պատճառված վնասի հատուցումը կամ հարթումը՝ այլևս չի դիտարկվում որպես քրեական պատասխանատվությունից ազատելու պայման: Ընդ որում՝ նոր քրեական օրենսգրքի հայեցակարգի ուսում-

¹⁹ Ст'ю Лохвицкий А., Курс русского уголовного права. С.-Пб.: Журн. М-ва юст., 1867, էջ 266-267:

²⁰ Ст'ю Плиско Р.К., Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим, дис. ... канд. юрид. наук. Владивосток, 2009, էջ 145:

նասիրությունից ևս հնարավոր չէ եզրահանգել, թե ինչ հիմնավորումների արդյունքում են հեղինակները հրաժարվել նոր քրեական օրենսգրքում նշված պայմանի նախատեսումից:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում էր կամընտրային հնարավորություն՝ հատուցել կամ այլ կերպ հարթել պատճառված վնասը:

Լ.Չ Թադևոսյանը նշում է, որ օրենսդիրը սահմանում է հանրային վտանգավոր հետևանքների վերացման երկու տեսակ. առաջին՝ «վնասի հատուցում» և երկրորդ՝ «հանցագործությամբ պատճառված վնասն այլ կերպ հարթելը», երբ հանցագործություն կատարված անձը կարող է, օրինակ, վերադարձնել հափշտակված իրը կամ ամբողջովին փոխհատուցել պատճառված վնասը գումարային տեսքով, վճարել տուժողի բուժման ողջ ծախսերը (եթե հանցագործության արդյունքում կատարվել է անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում, որի արդյունքում տուժողը կորցրել է լսողությունը կամ տեսողությունը, ապա նրան պատճառված վնասը հնարավոր չէ հատուցել, հնարավոր է միայն «հարթել») և այլն²¹:

Իրավաբանական գրականության մեջ սույն հասկացությունների փոխհարաբերակցությունների շուրջ առկա չէ միասնական մոտեցում:

Պ.Գ. Մարֆիցինը կարծում է, որ «վնասը հարթել» հասկացությունն ավելի լայն է իր նշանակությամբ, քան «վնաս հատուցելը»: Հեղինակի կարծիքով. «Պատճառված վնասը հարթելը կարող է կայանալ հափշտակված գումարի կամ գույքի վերադարձմամբ, տուժողին հափշտակվածի փոխարեն այլ առարկաներ տրամադրելով կամ այլ ձևով փոխհատուցելով: Միաժամանակ կարևոր չէ հատուցման ձևը: Հափշտակված առարկաները և արժեքները կարող են վերադարձվել քննիչի կողմից այն ժամանակ, երբ նրանք առգրավված կլինեն մեղադրյալից, գումարային փոխհատուցումը կարող է փոխանցվել առձեռն տուժողին կամ փոխանցվել, օրինակ, նրա բանկային հաշվին և այլն: Բացի այդ, վնասի հարթման այլ տեսակներ են տուժողից ներողություն խնդրելը (այդ թվում՝ հրապարակայնորեն), որևէ օգնություն ցուցաբերելը (նյութական, ֆիզիկական), պատճառված վնասը վերացնելը և այլն»²²:

Վ.Վ. Սվերչկովը նշում է, որ «վնասը հարթել» և «վնասը հատուցել» հասկացությունների տարբերությունը իրավական գործողության բնույթի մեջ՝ համապատասխան տեսակի վնասներ «հաղթահարելով»: Եթե գույքային վնասը «հատուցվում» է, ապա ֆիզիկական և բարոյական վնասը «հարթվում է այլ եղանակով»²³:

²¹ Տե՛ս Тадевосян Л.З., Проблемы ответственности за неоконченную преступную деятельность по уголовному законодательству Республики Армения. Дисс. ... докт. юрид. наук. М., 2009, էջ 329:

²² Տե՛ս Марфицин П.Г., Прекращение уголовного дела в связи с примирением с потерпевшим. // Законодательство и практика. № 2. Омск: Изд-во Ом. юрид. ин-та МВД России, 1999, էջ 37:

²³ Տե՛ս Сверчков В.В., Актуальные вопросы освобождения от уголовной ответственности в связи с деятельным раскаянием // Государство и право. № 12. М.: Наука, 1999, էջ 58:

Գտնում ենք, որ անընդունելի է օրենսգրքի հեղինակների մոտեցումը, որ տուժողին պատճառված վնասի հատուցումը կամ հարթումը այլևս չպետք է դիտարկվի, որպես տուժողի և հանցանք կատարած անձի՝ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու առանձին օրենսդրական պայման: Վերջին դիրքորոշումը հիմնավորվում է այն հանգամանքով, որ նշված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը նոր քրեական օրենսգրքով նախատեսվել է որպես պարտադիր հիմք, այլ կերպ՝ եթե առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանները, ապա վարույթն իրականացնող մարմնի կողմից հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելը կրում է պարտադիր (իմպերատիվ) բնույթ, ինչպես նաև տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության դեպքերը ընդլայնվել են՝ տարածվելով դրանք նաև միջին ծանրության հանցանքների կատարման վրա: Ստացվում է, որ օրենդիրը մի կողմից՝ վարույթն իրականացնող մարմնի համար սահմանել է նշված հիմքի կիրառելիության իմպերատիվություն և նշված հիմքի կիրառելիության ընդլայնում (տարածելով միջին ծանրության հանցանքների վրա), իսկ մյուս կողմից բացառել է տուժողին պատճառված վնասի հատուցման կամ հարթման պայմանի նախատեսումը, որպիսի հանգամանքը գործնականում նպաստելու է նշված հիմքի ձևական կիրառման դեպքերին: Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմինը զրկված է լինելու գնահատելու տուժողին պատճառված վնասի հատուցման կամ հարթման հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, որպիսի հանգամանքի բացակայությունն իր հերթին արգելք չի հանդիսանալու վարույթն իրականացնող մարմնի համար չազատել հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից:

Բացի այդ, տուժողի և հանցանք կատարած անձի՝ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը (ՀՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդված) վերականգնողական արդարադատության դրսևորումներից մեկն է, որի կարևոր խնդիրն է, պարզել տուժողի պահանջները, հաշվի առնել դրանք և հատուցել նրան պատճառած վնասը, բարձրացնել տուժողի դերը քրեական դատավարությունում, ինչպես նաև տնտեսել քրեաիրավական հարկադրանքը՝ հանցավորի պատասխանատվությունը սահմանափակելով տուժողին պատճառված վնասները հատուցելով:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածում՝ նախատեսելով տուժողին պատճառված վնասի հատուցման կամ հարթման պայման, նշվածը նաև հիմնավորվում է հատկապես այն հանգամանքով, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակարգում չկան հիմնավորումներ խնդրո առարկա պայմանի չնախատեսման վերաբերյալ, հակառակը՝ հայեցակարգի վերաբերելի մասի ուսումնասիրությունից հետևում է, որ տուժողին պատճառված վնասի հատուցման կամ հարթման պայմանը չի ենթարկվել փոփոխության:

Հարկ է փաստել, որ ի տարբերություն ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի կարգավորման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի համակարգային վերլուծությունից հետևում է, որ եթե հանցանք կատարած անձի կողմից իրականացվել են քննարկվող հոդվածում սահմանված բոլոր պայմանները (միաժամանակ հանցանքում բացակայում են ընտանիքում բռնության հատկանիշներ), վարույթն իրականացնող մարմինը կաշկանդված է նրան քրեական պատասխանատվությունից ազատելու մասին որոշում կայացնելու պարտականությամբ, քանի որ օրենսդիրը վարույթն իրականացնող մարմնի համար սահմանել է պարտականություն՝ նախատեսելով «ազատվում է քրեական պատասխանատվությունից» բառակապակցությունը:

Այդ կապակցությամբ՝ ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակարգի հեղինակները նշել են, որ պետք է հստակ սահմանել, որ տուժողի և հանցավորի հաշտության պարագայում դատարանը հանցանք կատարած անձին ոչ թե կարող է ազատել, այլ ազատում է քրեական պատասխանատվությունից²⁴:

Գրականությունում գոյություն ունեն մոտեցումներ, որոնց համաձայն՝ քննարկվող ոլորտում հայեցողական (դիսպոզիտիվ) նորմերն էական թերություն են հանդիսանում՝ նվազեցնելով դրանց դրական առաքելությունը: Վերոնշյալ մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ տվյալ անձին քրեական պատասխանատվությունից ազատելը յուրաքանչյուր դեպքում կախված է ոչ միայն վերջինիս կողմից հանցանք կատարելուց հետո քննարկվող նորմերով նախատեսված դրական վարքագծի դրսևորումից, այլ նաև դատավորի, դատախազի, քննիչի հայեցողությունից: Նման կարգով քրեական պատասխանատվությունից ազատելն իրավակիրառողների կողմից կարող է իրականացվել ոչ օբյեկտիվ, և կայացված որոշումները՝ չհամապատասխանել արդարության սկզբունքին²⁵:

Վերջին մոտեցումը հիմնավորում են նրանով, որ քրեական օրենսգրքում սահմանված «կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից» ձևակերպումը ենթադրում է, որ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք է հանդիսանում ոչ այնքան օրենսդրի կողմից սահմանված բոլոր պայմանների կատարումը, անձի՝ հանցանք կատարելուց հետո դրսևորած դրական վարքագիծը, որքան քննիչի, դատախազի և դատավորի հայեցողությունը: Նման մոտեցումը դժվար թե հնարավոր լինի գնահատել իրավաչափ, հատկապես եթե հաշվի առնենք այն, որ իրավակիրառ մարմինների հայեցողությունը ոչ միշտ է լինում օբյեկտիվ և արդար:

Իրավակիրառ գործունեությունում քննարկվող հարցի կապակցությամբ հայեցողական մոտեցումը կարող է առաջացնել որոշակի բարդություններ, մասնավորապես՝ այն ժամանակ, երբ նույն փաստական հանգամանքներով երկու

²⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի հայեցակարգ, էջ 61:

²⁵ Տե՛ս Алиперов Х., Освобождение от уголовной ответственности (уголовно-правовые аспекты)//Законность. № 5. М., 1999, էջ 20:

քրեական վարույթներից մեկը կարճվում է, իսկ երկրորդը՝ ոչ: Մինչդեռ Լ.Վ. Գոլովկոն առաջարկում է պահպանել քրեական պատասխանատվությունից ազատելու գոյություն ունեցող ֆակուլտատիվությունը՝ պատճառաբանելով, որ պետք է հաշվի առնել հասարակության կարծիքը: Առարկելով իր ընդդիմախոսներին՝ նա նշում է, որ ժամանակն է դադարել իրավակիրառողների հայեցողության մեջ չարիք տեսնելը. դա միայն իրավական տեխնիկայի ռճաճևն է, որի միջոցով պրակտիկ աշխատողներին հնարավորություն է ընձեռվում իրավիճակը հիմնավորված անհատականացնելու²⁶:

Բացի այդ, իրավական հարաբերությունները կարգավորող դիսպոզիտիվ մեթոդն օգտագործելիս օրենսդրի կամքն ուղղված է կոնկրետ իրադրության բոլոր հանգամանքները առավելագույնս հաշվի առնելուն: Իրականում անհնար է նորմատիվ մակարդակում կանխատեսել բազմազան իրավիճակներ և փաստեր, ինչպես նաև հանցանք կատարած անձանց առանձնահատկությունները, և դրանցից յուրաքանչյուրին սահմանել համարժեք օրենսդրական կարգավորում:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ գրականությունում նշված հարցի վերաբերյալ առկա չէ միասնական մոտեցում. մի խումբ գիտնականներ կարծում են, որ տուժողի և հանցանք կատարած անձի՝ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը պետք է լինի իմպերատիվ, քանի որ վարույթն իրականացնող մարմինը նույնական փաստական հանգամանքներով տարբեր քրեական վարույթներով չի կարող ապահովել միատեսակ կիրառելիություն, ինչը վտանգելու է արդարության սկզբունքի ապահովվումը, իսկ որոշ գիտնականներ գտնում են, որ դիսպոզիտիվության առկայությունն արդարացված է՝ պայմանավորված քրեական պատասխանատվության անհատականացման սկզբունքով, որի ապահովման համար անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք պայմաններ և հանգամանքներ, որոնք սպառնիչ կերպով չեն կարող նախատեսվել օրենսդրությամբ և կարող են գնահատվել միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից կոնկրետ քրեական վարույթով:

ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ «Նախկինում սույն հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից»:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է սահմանափակում, այն դեպքում, երբ քրեական վարույթի քննությամբ պարզվում է, որ հանցանք կատարած անձն արդեն իսկ նախկինում քրեական պատասխանատվությունից ազատվել է նույն հիմքով, ապա դրանից հետո վարույթն իրականացնող մարմինը չի կարող կրկին նույն անձին քրեական պատասխանատվությունից ազատել տուժողի հետ հաշտվելու հիմքով: Այլ կերպ՝ արգելքը

²⁶ Стіу Головки Л.В., Альтернативы уголовному преследованию в современном праве: Монография. М.: Юрид. центр Пресс, 2002, էջ 267-268:

կիրառելի է այն դեպքում, եթե հանցանք կատարած անձի վերաբերյալ առկա է վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ տուժողի և հանցանք կատարած անձի՝ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու դատավարական ակտ: Նույն հիմքով կրկին ազատվելու անթույլատրելիությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ օրենսդիրը բացառել է հանցանք կատարած անձի մոտ անպատժելիության զգացման ձևավորումը, այլ խոսքով՝ հանցանք կատարած անձը տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելուց հետո չի ուղղվել, այլ հակառակը՝ շարունակել է իր հանցավոր վարքագիծը՝ կատարելով նոր հանցանք:

Համաձայնելով օրենսդրի հետ՝ այնուամենայնիվ, կարծում ենք, որ խնդրո առարկա նորմի օրենսդրական ձևակերպման առկա պայմաններում գործնականում ամբողջովին չի իրագործվելու օրենսդրի հիշյալ նպատակը: Բանն այն է, որ օրենսդրի կողմից նախատեսված բացառությունը վերաբերելի չէ այն դեպքերին, երբ, օրինակ, անձը նախկինում քրեական պատասխանատվությունից ազատվել է գործուն գղջալու հիմքով, քանի որ նշված հիմքով պատասխանատվությունից ազատված անձը կրկին կարող է քրեական պատասխանատվությունից ազատվել արդեն տուժողի հետ հաշտվելու հիմքով: Ստացվում է այնպիսի իրավիճակ, որ նախկին հանցանքի կատարման համար գործուն գղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը կարող է կատարել նոր հանցանք (ոչ մեծ կամ միջին ծանրության), ապա կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից արդեն ՀՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով:

Արդյո՞ք նշված օրենսդրական կարգավորման պայմաններում կարող է իրագործվել օրենսդրի նպատակը՝ բացառել հանցանք կատարած անձի մոտ անպատժելիության զգացման ձևավորումը:

Գտնում ենք, որ նշված օրենսդրական ձևակերպման պայմաններում գործնականում չի հաշտովելու ամբողջությամբ իրագործել օրենսդրի նպատակը: Բանն այն է, որ նշված նորմի նախատեսմամբ՝ օրենսդիրը դրանով կարգավորել է հասարակական հարաբերություններ, որոնք բացառապես վերաբերելի են տուժողի և հանցանք կատարած անձի՝ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելուն, մինչդեռ նշված օրենսդրական սահմանափակումը պետք է իրականացվեր քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի հաշվառմամբ: Այլ խոսքով՝ օրենսդրի կողմից նման սահմանափակման նախատեսումը չպետք է վերաբերեր բացառապես քննարկվող հիմքին: Ի վերջո օրենսդրական սահմանափակման նախատեսման տեսանկյունից կարևոր չէ, թե հանցանք կատարած անձը նախկինում որ հիմքով (գործուն գղջալու՞, թե՞ տուժողի հետ հաշտվելու հիմքով) է ազատվել քրեական պատասխանատվությունից, կարևորը այն է, որ հանցանք կատարած անձն արդեն իսկ մեկ անգամ ազատվել է քրեական պատասխանատվությունից քննարկվող հիմքերից որևիցե մեկով, որը

դրաներվել է վարույթն իրականացնող մարմնի կողմից խրախուսական նորմի կիրառմամբ և վերջինիս ներելով այն նպատակով, որ քրեական պատասխանատվությունից ազատված անձն այլևս նոր հանցանք չի կատարի, հակառակ դեպքում՝ կրացառվի կրկնակի խրախուսական նորմի կիրառումը:

Հատկանշական է, որ նույնական օրենսդրական սահմանափակում նախատեսված է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի՝ «**Քրեական պատասխանատվությունից ազատելը գործուն զղջալու հիմքով**» 2-րդ մասով, որի համաձայն՝ «Նախկինում սույն հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից»:

Այսպիսով, գտնում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ մասում և 82-րդ հոդվածի 5-րդ մասում կատարել օրենսդրական համապատասխան փոփոխություններ, որոնց դեպքում գործուն զղջալու և տուժողի հետ հաշտվելու հիմքերով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից նույն հիմքերով, որպիսի հանգամանքն իր հերթին կապահովի օրենսդրի նպատակը՝ բացառել հանցանք կատարած անձի մոտ անպատժելիության զգացման ձևավորումը:

Եզրակացություն

Տուժողի և հանցանք կատարած անձի՝ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքի կիրառման հիմնախնդիրներին նվիրված սույն գիտական աշխատանքում կատարվել են ներքոհիշյալ եզրահանգումները.

- Տուժողի և հանցանք կատարած անձի՝ հաշտության հիմքով անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե վերջինս կատարել է համակցությամբ հանցանք, քանի որ վերջինիս կողմից կատարված հանցանքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ չի կարող համարվել առաջին անգամ կատարված հանցանք:
- Տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության դեպքերը միջին ծանրության հանցանքների վրա տարածելով՝ գործնականում ընդլայնվելու է նշված հիմքի կիրառելիությունը, ինչն իր հերթին բեռնաթափելու է վարույթն իրականացնող մարմնի ծանրաբեռնվածությունը:
- Հաշտությունը գործընթաց և արդյունք է, որն իր բնույթով ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնություն է՝ ուղղված տուժողի և հանցանք կատարած անձի միջև առաջացած հանցանքի հետևանքները վերացնելուն, իրավական միջոցներով հասարակական հարաբերությունները վերականգնելուն և պահպանելուն:

- Անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություններ կատարել «ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածում» նախատեսելով տուժողին պատճառված վնասի հատուցման կամ հարթման պայման, քանի որ նման օրենսդրական կարգավորման պայմաններում վարույթն իրականացնող մարմինը զրկված է լինելու գնահատելու նշված հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը, ինչի բացակայությունն իր հերթին արգելք չի հանդիսանալու վարույթն իրականացնող մարմնին համար չազատել անձին քրեական պատասխանատվությունից, որպիսի հանգամանքը չի բխում վերականգնողական արդարադատության պահանջներից (տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքը հանդիսանում է վերականգնողական արդարադատության դրսևորման եղանակ):
- ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ և 82-րդ հոդվածի 5-րդ մասերում անհրաժեշտ է կատարել այնպիսի փոփոխություններ, որոնց դեպքում գործուն գղջալու և տուժողի հետ հաշտվելու հիմքերով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չկարողանա կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից նույն հիմքերով, որպիսի հանգամանքն իր հերթին ապահովվելու է օրենսդրի նպատակը՝ բացառելու է հանցանք կատարած անձի մոտ անպատժելիության զգացման ձևավորումը:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի հայեցակարգ:
Concept of the new Criminal Code of the Republic of Armenia.
2. ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԱԶԳ/0157/01/10 որոշում:
Clause 18 of Decision № EAKD/0157/01/10 of the RA Court of Cassation, dated July 13, 2011.
3. Արմավիրի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ ԱԲԳ/0302/01/22 որոշում:
Decision of the Court of General Jurisdiction of the First Instance of Armavir Marz, dated April 28, 2023 in Case № ARD/0302/01/22.
4. Аликперов Х., Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим // Законность. № 6. М., 1999. С. 12.
Alikperov Kh., Exemption from Criminal Liability in Connection with Reconciliation with the Victim // Legality. № 6 - М., 1999, page 12.
5. Гальперин И.М., Наказание: социальные функции, практика применения. М.: Юрид. лит., 1983. С. 206.
Galperin I.M. Punishment: Social Functions, Practice of Application – М.: Leg. lit., 1983, page 206.
6. Гальперин И.М., Об уголовном преследовании, осуществляемом потерпевшим в советском уголовном процессе // Советское государство и право. № 10. М.: Наука, 1957. С. 52.
Galperin I.M. On the Criminal Prosecution Carried out by the Victims in the Soviet Criminal Procedure // The Soviet State and Law. № 10. М.: Nauka, 1957, page 52.
7. Головки Л.В., Альтернативы уголовному преследованию в современном праве: Монография. М.: Юрид. центр Пресс, 2002. С. 267-268.
Golovko L.V. Alternatives to criminal prosecution in contemporary law. Monograph / - М.: Leg. Cent. Press, 2002, pages 267-268.
8. Давыдов П.М., Мирский Д.Я., Прекращение уголовных дел. М.: Юрид. лит., 1963. С. 60.
Davidov P.M., Mirskiy D.Ya., Termination of Criminal Cases. М.: Leg. Lit., 1963, page 60.
9. Ерохина Н.В., Прекращение уголовного дела и (или) уголовного преследования в связи с деятельным раскаянием на стадии предварительного расследования. М.: Изд-во Моск. ун-та МВД России, 2002. С. 28.
Yerokhina N.V. Termination of a Criminal Case and/or Criminal Prosecution in Connection with Active Repentance in the Stage of Preliminary Investigation. – М.: Publ. Moscow, uni. MIA of Russia, 2002, page 28.

10. Катъкало С.И., Лукашевич В.З., Судопроизводство по делам частного обвинения. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1972. С. 123.
Katkalo S.I., Lukashevich V.Z., Trial Proceedings for Private Charges L.: Publ. Leningr. uni., 1972, page 123.
11. Келина С.Г., Теоретические вопросы освобождения от уголовной ответственности. / Отв. ред.: Пионтковский А.А. М.: Наука, 1974. С. 159.
Kelina S.G., Theoretical Issues of Exemption from Criminal Liability. / EIC: Piontkovskiy A.A. – M.: Nauka, 1974, page 159.
12. Кузнецова Н., Частичное прекращение уголовного дела при множественности преступлений // Законность. № 3. М., 2001. С. 31.
Kuznetsova N., Partial Termination of a Criminal Case in Case of Multiple Crimes // Legality. № 3 - M., 2001, page 31.
13. Лохвицкий А., Курс русского уголовного права. С.-Пб.: Журн. М-ва юст., 1867. С. 266-267.
Lokhvitskiy A. Russian Criminal Law Course – S.-Pb.: Journal of the Min. of Just., 1867, pages 266-267.
14. Марфицин П.Г., Прекращение уголовного дела в связи с примирением с потерпевшим. // Законодательство и практика. № 2. Омск: Изд-во Ом. юрид. ин-та МВД России, 1999. Стр. 37.
Marfitsin P.G., Termination of the Criminal Case due to Reconciliation with the Victim. // Law and Practice. № 2 - Omsk: Publ. Om., uni. MIA of Russia, 1999, page 37.
15. Матвеева Ю.В., Освобождение от уголовной ответственности в связи с деятельным раскаянием: Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2001. С. 19.
Matveeva Yu. V., Exemption from criminal liability in connection with active repentance: Diss. Abstr. ... PhD in Law - M., 2001, page 19.
16. Плиско Р.К., Освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим: Дис. ... канд. юрид. наук. Владивосток, 2009. С. 145.
Plisko R.K., Exemption from Criminal Liability in Connection with Reconciliation with the Victim, Diss. ... PhD in Law. Vladivostok, 2009, page 145.
17. Сверчков В.В., Актуальные вопросы освобождения от уголовной ответственности в связи с деятельным раскаянием // Государство и право. № 12. М.: Наука, 1999. С. 58.
Sverchkov V.V., Actual Issues of Exemption from Criminal Liability in Connection with Active Repentance // State and Law. № 12 - M.: Nauka, 1999, page 58.
18. Тадевосян Л.З., Проблемы ответственности за неоконченную преступную деятельность по уголовному законодательству Республики Армения: Дис. ... докт. юрид. наук. М., 2009. С. 329.
Tadevosyan L.Z., Problems of Responsibility for Unfinished Criminal Activity

under the Criminal Legislation of the Republic of Armenia. Diss. ... PhD in Law. – M., 2009, page 329.

19. Ульянов В.Г., Реализация прав потерпевших в российском уголовном процессе: Автореф. дис. ... канд. юрид. наук. Краснодар, 1998. С. 13-14.
Ulyanov V.G., Exercise of the Rights of Victims in the Russian Criminal Process: Diss. Abstr. ... PhD in Law. Krasnodar, 1998, pages 13-14.
20. Ценева В.В., Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим: Дис. ... канд. юрид. наук. Кемерово. 2002. С. 153.
Tseneva V.V., Exemption from Criminal Liability in Connection with Reconciliation with the Victim, Diss. ... PhD in Law. Kemerovo, 2002, page 153.
21. Якобашвили Г.М., Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим: Дис. ... канд. юрид. наук. М., 2002. С. 4-5.
Yakobashvili G.M., Exemption from Criminal Liability due to Reconciliation with the Victim: Diss. ... PhD in Law - M., 2002, pages 4-5.

Hayk Harutyunyan

*Senior Prosecutor of Prosecutor's Office of Yerevan City, Ph.D. in Law,
Lecturer at French University in Armenia, Faculty of Law*

CURRENT ISSUES RELATED TO RELEASE FROM LIABILITY BASED ON THE RECONCILIATION BETWEEN THE VICTIM AND THE OFFENDER¹

Abstract

Relevance and expediency: Reconciliation between the victim and the offender as a ground for release from criminal liability envisaged by Article 82 of the Criminal Code of the Republic of Armenia was studied in the scope of this work.

The above-mentioned ground for release from criminal liability was envisaged by the RA Criminal Code adopted on April 18, 2003, for the first time, and more detailed regulations of the application of the mentioned ground were envisaged by the Criminal Code adopted on May 5, 2021.

Meanwhile, it can be stated that questions arise in the course of application of the mentioned ground, the answers whereto are not provided by the current legislation or by the RA judicial practice. Particularly– What is reconciliation? Can the offender committing a combined crime be released from criminal liability based on the discussed ground? Is release from liability based on the reconciliation with the victim the right or the obligation of the law-enforcement authority?

The above-mentioned questions, as well as many other questions which are addressed in this work, require answers, conditioned by the necessity of application of criminal legal basis.

The Purpose of the Article: The study of criminal and legal issues related to the reconciliation between the victim and the offender as a ground for release from criminal liability.

Results: The author provided the definition of reconciliation, identified practical issues regarding application of the term “first-time offender”, proved the issues regarding the limited application of the ground envisaged by Article 82 (5) of the RA Criminal Code.

Practical and theoretical significance of the results: The theoretical significance is that the results shall serve as a theoretical ground for further studies, and the practical significance is that it can be used for the improvement of criminal legislation and for establishing a practice.

Keywords: first-time offender; reconciliation between the victim and the offender, compensation or settlement of the damage caused, crime of minor or medium gravity, release from criminal liability.

¹ The article was presented on 01.09.2023 and was reviewed on 13.11.2023.

Айк Арутюнян

*Старший прокурор Прокуратуры города Еревана,
кандидат юридических наук,
преподаватель юридического факультета
Французского университета в Армении*

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ОСВОБОЖДЕНИЯ ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ НА ОСНОВАНИИ ПРИМИРЕНИЯ ПОТЕРПЕВШЕГО И ЛИЦА, СОВЕРШИВШЕГО ПРЕСТУПЛЕНИЕ¹

Абстракт

Актуальность и целесообразность. В рамках данной работы изучению подвергнуто основание освобождения от уголовной ответственности - примирения потерпевшего и лица, совершившего преступление, предусмотренное статьей 82 Уголовного кодекса РА.

Упомянутое основание освобождения от уголовной ответственности впервые было предусмотрено Уголовным кодексом РА от 18 апреля 2003 года, а Уголовным кодексом, принятым 5 мая 2021 года, было предусмотрено более подробное регулирование применения указанного основания.

Между тем, можно аргументировать, что во время применения обсуждаемого основания возникают вопросы, ответы на которые не даны ни в действующем законодательстве, ни в судебной практике РА. В частности, что такое примирение, может ли лицо, совершившее преступление в совокупности, быть освобождено от уголовной ответственности на рассматриваемом основании, освобождение от уголовной ответственности на основании примирения с потерпевшим является правом или обязанностью правоприменительного органа.

Упомянутые и другие выдвинутые вопросы, к которым мы обратились в рамках данной работы, требуют решения, обусловленного необходимостью полноценного применения уголовно-правовой базы.

Цель статьи. Изучение уголовно-правовых задач основания освобождения от уголовной ответственности - примирения потерпевшего и лица, совершившего преступление.

Результаты. Автором дано определение примирения, раскрыты практические проблемы применения понятия «лицо, совершившее преступление впервые», доказаны проблемы применения ограничения основания, предусмотренного частью 5 статьи 82 Уголовного кодекса РА.

¹ Статья была представлена 01.09.2023 и прошла рецензирование 13.11.2023.

Практическая и теоретическая значимость результатов. Теоретическая значимость состоит в том, что полученные результаты могут служить теоретической основой для дальнейших исследований, а практическая значимость – использоваться для совершенствования уголовного законодательства и формирования практики.

Ключевые слова: лицо, совершившее преступление впервые; примирение потерпевшего и лица, совершившего преступление; возмещение или сглаживание причиненного ущерба; преступление небольшой или средней тяжести; освобождение от уголовной ответственности.

Մոնա Մարգարյան

*ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հսկակոռուպցիոն կոմիտեում
մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության
վարչության դատախազ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ*

**ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԿԵՂԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՔՐԵԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ ՈՒ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ
ԴՐԱ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ¹**

Համառոտագիր

Հոդվածը վերաբերում է ՀՀ նախկին և գործող քրեական օրենսգրքերի այն հոդվածների վերլուծությանը, որոնք քրեական պատասխանատվություն են նախատեսում քաղաքացիական, վարչական կամ քրեական գործով կամ վարչական վարույթով ապացույց կեղծելու համար: Հոդվածը, մասնավորապես, ուղղված է ապացույց կեղծելու համար քրեական պատասխանատվություն սահմանող օրենսդրության ծագման և դրա զարգացման պատմության ուսումնասիրմանը, հանցատեսակի քրեականացմանն ուղղված օրենսդրության պատմական զարգացումների ընթացքում հանցատեսակի կիրառման հարցում առաջ եկած հիմնախնդիրների հետազոտմանն ու վերլուծությանը, դրա կիրառման առնչությամբ առկա հակասական մոտեցումների ուսումնասիրությանը: Ապացույցներ, բացատրություններ կամ դատավարական փաստաթղթեր, կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալներ, կամ առարկաներ կեղծելը, փոխելը, ոչնչացնելը կամ թաքցնելը, կամ կեղծ ապացույցներ ներկայացնելը որպես նոր խմբագրությամբ գործող հանցատեսակ հանդիսանում է նորույթ, ունի կիրառման ոչ այնքան հարուստ պրակտիկ փորձ, լի է տարաբնույթ խնդրահարույց ձևակերպումներով, որոնք հեղինակի կողմից վեր են հանվել և հետազոտվել, ինչի արդյունքում հեղինակը հանդես է եկել ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածում օրենսդրական փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններով:

¹ Հոդվածը ներկայացվել է 31.08.2023թ., գրախոսվել է 10.11.2023թ.:

Հիմնաբառեր- ապացույց կեղծել, ապացույց կեղծելու համար քրեական պատասխանատվություն, քաղաքացիական, վարչական կամ քրեական գործով, վարչական վարույթով ապացույց, բացատրություններ, դատավարական փաստաթղթեր, օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալներ կամ առարկաներ:

Ներածություն

Ապացույց կեղծելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող իրավանորմերի վերլուծությունը ներկայումս ունի կարևոր նշանակություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապացույց կեղծելու հանցակազմի քրեականացման և դրա՝ ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսվելուց ի վեր դրա կիրառելիությանն առնչվող բազմաթիվ խնդիրներ են առաջ եկել:

Բանն այն է, որ ապացույց կեղծելու՝ որպես հանցատեսակի կիրառման պրակտիկան, որին հարկ ենք համարում անդրադառնալ ստորև, անհերքելիորեն վկայում է այն մասին, որ քննարկվող հոդվածով նախաձեռնված քրեական վարույթների մեծամասնության շրջանակներում իրականացված նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինը շատ հաճախ եկել է եզրակացության առ այն, որ այն «դատական հեռանկարից» գուրկ է:

Նշվածը պայմանավորված է ինչպես ապացույց կեղծելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերում տեղ գտած խնդրահարույց ձևակերպումներով, այնպես էլ անձանց կողմից կատարված արարքը քննարկվող հանցակազմով որակելիս քրեական պատասխանատվություն նախատեսող այլ հանցատեսակներից տարանջատելու շուրջ առաջ եկած իրավական վեճերով:

Սույն հոդվածում հարկ ենք համարում վերլուծության ենթարկել իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած վերոնշյալ խնդիրները երկու ուղղություններով:

Նախևառաջ, հոդվածի շրջանակներում անհրաժեշտ է հետազոտական վերլուծության ենթարկել այն թեզը, թե ինչով է պայմանավորված եղել օրենսդրի կողմից ապացույց կեղծելու հանցատեսակի քրեականացման անհրաժեշտությունը, ինչպիսի խնդիրների առաջացումը կանխելու, դրանք լուծելու նպատակ է հետապնդել օրենսդիրը քննարկվող հանցակազմով նախատեսված արարքի կամ արարքների նկատմամբ պետության կողմից վարվող քրեական քաղաքականության մեջ փոփոխություններ կատարելիս:

Այլ կերպ՝ սույն հոդվածում քննարկման առարկա է հանդիսանում ապացույց կեղծելու հանցատեսակի՝ ՀՀ օրենսդրական համակարգում ներդրման պատմության ուսումնասիրությունը:

Այնուհետև, սույն հոդվածի շրջանակներում համակարգային վերլուծության է ենթարկվել 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քրեական օրենսգրք) ներկայումս գործող խմբագրությամբ

479-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը, ինչի արդյունքում վեր են հանվել դրա կիրառմանն առնչվող մի շարք հիմնախնդիրներ:

Հարկ ենք համարում ընդգծել, որ սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքում փորձ է կատարվել որոշակիորեն համակարգել քննարկվող հանցատեսակին վերաբերող խնդրահարույց ձևակերպումները, ինչի հեռանկարային արդյունքը կարող է լինել դրանում համապատասխան փոփոխություններ կատարելուն ուղղված օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու համար պարարտ հող նախապատրաստելը:

1. Ապացույցների կեղծման համար քրեական պատասխանատվության վերաբերյալ օրենսդրության ծագումն ու զարգացումը

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարելու դեպքում իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները»*:²

ՀՀ սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»*:³

ՀՀ սահմանադրությունն ամրագրում է նաև իրավական պետության հիմնաքար հանդիսացող այն դրույթը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է: Այսինքն՝ պետական իշխանության մարմիններից հենց դատարանն է, որն իր գործունեությամբ ապահովում է անհատի, հասարակության, պետության շահերի պաշտպանությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ սահմանադրական, քրեական, վարչական, քաղաքացիական, սնանկության գործերով արդարադատության իրականացման միջոցով:

Յուրաքանչյուր գործով դատարանի կողմից արդարադատության իրականացման նպատակն օրինական, հիմնավորված, պատճառաբանված և արդարացի դատական ակտ կայացնելն է, դատական ակտ, որում դատարանի հետևությունները հիմնված կլինեն պատշաճ ընթացակարգով հավաքված, ստուգված և դատարանի կողմից գնահատված ապացույցների վրա: Այսինքն՝ արդարադատություն իրականացնել առանց ապացուցման գործընթացի ան-

² Տե՛ս, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», հոդված 8-րդ, 1948թ. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1896>:

³ Տե՛ս, ՀՀ Սահմանադրություն, 2015 թվականի փոփոխություններ, 61-րդ հոդված <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>:

հնար է: Հետևաբար՝ յուրաքանչյուր ոտնձգություն, որն ուղղված կլինի ապացուցման գործընթացին, խոչընդոտ կատեղծի օբյեկտիվ ճշմարտության բացահայտման համար, ոչ միայն կասկածի տակ կղնի տվյալ գործով կայացված դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը, այլ նաև կվնասի արդարադատության շահն իր ամբողջության մեջ: Այդ պատճառով է, որ արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարը յուրաքանչյուր իրավական պետության կարևորագույն խնդիրն է, և պետության համապատասխան արձագանքն է քրեական օրենքի հատուկ մասի ինքնուրույն գլխում հիշյալ բնույթի հանցագործությունների ամրագրումը:

Արդարադատության անխոչընդոտ և պատշաճ իրականացման համար որպես յուրատիպ երաշխիք կարելի է ընդգծել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ նաև՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք) որպես արդարադատության դեմ ուղղված ինքնուրույն՝ ապացույցները կեղծելու հանցակազմի նախատեսումը: Հարկ է նշել, որ սույն հանցակազմը ՀՀ իրավական համակարգին մինչ 2003 թվականն անծանոթ է եղել, քանի որ ՀԽՍՀ 1961 թվականի քրեական օրենսգրքով ապացույցներ կեղծելու հանցակազմ նախատեսված չի եղել: Սակայն նշված օրենսգիրքը նախատեսել է արդարադատության դեմ ուղղված այնպիսի հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն, ինչպիսիք են ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը, ակնհայտ սուտ մատնությունը և ակնհայտ սուտ ցուցմունք տալը, և որպես այդ հանցագործությունների ծանրացնող հանգամանք՝ նախատեսված է եղել վերոհիշյալ հանցավոր արարքների կատարումը՝ գույքորդված արհեստականորեն մեղադրանքի ապացույցներ ստեղծելով: Այսինքն՝ մինչև 2003 թվականը գործող քրեական օրենսգիրքը քննարկվող արարքի քրեականացման հարցը, ըստ էության, լուծվել է՝ մի շարք արարքների համար այնպիսի ծանրացնող հանգամանք նախատեսելով, որը կարելի է դիտարկել որպես ապացույց կեղծելու հանցագործության յուրօրինակ դրսևորում՝ հաշվի առնելով, որ արհեստականորեն մեղադրանքի ապացույց ստեղծելը որոշ չափով նույնիսկ նույնանում է ապացույց կեղծելու հանցակազմի հետ:

Հատկանշական է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքը, ապացույց կեղծելը (479-րդ հոդված) նախատեսելով որպես առանձին հանցակազմ, արհեստականորեն մեղադրանքի ապացույցներ ստեղծելը որպես ծանրացնող հանգամանք նախատեսում է նաև արդարադատության դեմ ուղղված մի շարք այլ հանցագործությունների դիսպոզիցիաներում, ինչը իրավակիրառ պրակտիկայում խնդիրներ է առաջ բերում արարքի որակման առումով, ինչն առանձին քննարկման առարկա է:

Ինչպես արդեն նշվեց՝ ապացույց կեղծելու հանցակազմը՝ որպես արդարադատության դեմ ուղղված հանցագործություն, նախատեսվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում: Օրենսգրքի ընդունման

պահին նշյալ հանցագործության համար քրեական պատասխանատվություն սահմանող հոդվածն ունեցել է հետևյալ խմբագրությունը.

«1. **Քաղաքացիական գործով** սպացույցներ կեղծելը գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի կողմից պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ մեկից երկու տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

2. **Քրեական գործով** սպացույցներ կեղծելը հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի կամ պաշտպանի կողմից պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասում նշված անձանց կողմից քրեական գործով սպացույցներ կեղծելը, որը՝

1) կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով,

2) անգոռուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:⁴»

Նախ, ինչպես կարելի է նկատել, հետագա օրենսդրական փոփոխությունների արդյունքում շտկվել են քննարկվող հանցագործության նախնական տեքստում առկա որոշ վրիպակներ, մասնավորապես, հոդվածից հանվել է դրա 3-րդ մասում առկա «առաջին կամ» բառակապակցությունը, քանի որ քրեական գործով սպացույցները կեղծելու հանցակազմի սուբյեկտ չեն կարող լինել **քաղաքացիական գործով** մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները: Սակայն, հետագա օրենսդրական փոփոխությունների արդյունքում քննարկվող հանցակազմում կատարվել է նշանակալի փոփոխություն, այն է՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-147-Ն օրենքով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է քրեական պատասխանատվություն ոչ միայն քաղաքացիական, այլ նաև վարչական դատավարության գործով գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի կողմից սպացույցներ կեղծելու համար, ինչը, կարծում ենք, առանցքային նշանակություն ունեցող փոփոխություն է, քանի որ սպացույցների կեղծումը վարչական դատավարության շրջանակներում, նախնառաջ, ունի նույնքան հանրային վտանգավորություն, որքան քաղաքացիական գործերով սպացույց կեղծելը:

Ինչպես ժամանակին նշել է Տ. Մ. Յաբլոնկովը, երբ մի կողմից գործ ունենք

⁴ Տե՛ս, ՀՀ քրեական օրենսգրքը, 2003թ., <https://www.arlis.am/documentview.aspx?docid=69646>:

հանրային իշխանության մարմինների հետ, և դատարանին վերապահված չէ ակտիվ դերակատարություն, ապա հաճախ վճիռը կայացվում է այն կողմի օգտին, որը գործը առավել խելամիտ է վարում, իսկ ոչ փորձառու կողմը, չներկայացնելով անհրաժեշտ ապացույցները և չկարողանալով հիմնավորել իր պահանջները, հայտնվում է անբարենպաստ վիճակում:⁵

Եվ այդպիսի անբարենպաստ իրավիճակում հայտնվելու արդյունքում է, որ տեսականորեն հնարավոր են իրավիճակներ, երբ դատավարության մասնակիցները փորձում են դիմել ոչ օրինական միջոցներով իրենց շահերի պաշտպանությանը: Այդ իսկ պատճառով վարչական դատավարության ընթացքում դրա մասնակիցների կողմից ապացույցներ կեղծելուն ուղղված արարքի քրեականացումը լիովին արդարացված է:

Հարկ է նշել նաև, որ քննարկման առարկա հանցակազմի կիրարկման պատմության ընթացքում նաև վիճարկվել է դրա սահմանադրականության հարցը:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանին ուղղված իր դիմումում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի ենթադրյալ հակասահմանադրականությունը վիճարկելիս դիմողը նշել է. «(...) *դիտարկվող հոդվածը կարող էր ունենալ նաև 4-րդ մաս, որով պարզաբանված կլիներ «կեղծել» կամ «ապացույց կեղծել» հասկացությունները, ինչը կբացառեր հոդվածի իմաստի տարածական մեկնաբանումը: Մասնավորապես, ըստ դիմողի, իրավակիրառ պրակտիկայում հոդվածի տարածական մեկնաբանման շրջանակներում ապացույցի կեղծում է համարվել նաև ցուցմունք տվող վկային ուղղորդելը, մինչդեռ, դիմողի կարծիքով, վկայի ցուցմունքը հետաքննության և նախաքննության ընթացքում առարկայացվում է օրենքով նախատեսված կարգով կազմված արձանագրությամբ, հետևաբար՝ կեղծվել կարող է վկայի ցուցմունքի արձանագրությունը:»⁶*

ՀՀ Սահմանադրական դատարանը, քննարկման առարկա դարձնելով ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի ենթադրյալ հակասահմանադրականության հարցը, գտել է, որ «(...) *դիմողը, ըստ էության, բարձրացնում է վիճարկվող դրույթում «ապացույցներ կեղծել» եզրույթի սահմանման օրենսդրական ամրագրման անհրաժեշտության հարց:*

Օրենսդիրը, չամրագրելով «ապացույցներ կեղծել» եզրույթի սահմանումը, որոշակի հայեցողություն է տվել համապատասխան իրավասությանը օժտված իրավակիրառողին՝ կոնկրետ դեպքում որոշելու, թե ինչ է նշանակում ապացույցներ կեղծել, քանի որ եզրույթի հստակ սահմանման առկայության պարագայում հնարավոր են դեպքեր, որոնք դուրս կմնան դրա բովանդակային սահմաններից:

Վերոգրյալը հաստատվում է նաև ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով: Այսպես, օրինակ, 2004թ. դեկտեմբերի 21-ի՝ «Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի» (Busuioc

⁵ Տե՛ս Яблочков Т. М., Учебник русского гражданского судопроизводства, Ярославль, 1910, էջ 326:

⁶ Տե՛ս, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 19 սեպտեմբերի 2017թ. ՄԳՈ-1377 որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=116052>:

v. Moldova) վճռում ՄԻԵԳ-ի կողմից արձանագրվել է, որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, սակայն դա կարող է հանգեցնել չստիպարանգ կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին, հետևաբար շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է:»⁷

Վերլուծության ենթարկելով ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշումն առ այն, որ «սպացույցներ կեղծել» եզրույթի սահմանման չամբագրումը իրավակիրառողին որոշակի հայեցողություն է տվել այն կոնկրետ իրավիճակում գնահատելու այնուամենայնիվ, կարծում ենք, որ գործող խմբագրությամբ քննարկվող նորմում հանցագործության օբյեկտիվ կողմի դրսևորումների հստակեցումն արդարացված է և նաև անհրաժեշտ, հատկապես արարքի կատարման ավարտի հարցը քննարկելիս:

Անդրադառնալով սպացույց կեղծելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածին՝ պետք է նշել, որ այն էականորեն տարբերվում է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության դիսպոզիցիայից: Գործող իրավանորմն ընդլայնել է ոչ միայն հանցագործության առարկան և սուբյեկտների շրջանակը, այլ նաև կոնկրետ շարադրվելով՝ հստակեցվել են հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումները՝ առավել լայն պաշտպանության տակ վերցնելով արդարադատության իրականացման տարբեր ուղղությունները:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածի համաձայն՝

«1. Զաղաքացիական, վարչական կամ քրեական գործով կամ վարչական վարույթով սպացույց, բացատրություն կամ դատախազական փաստաթուղթ կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալ կամ առարկա կեղծելը, փոխելը, ոչնչացնելը կամ թաքցնելը կամ կեղծ սպացույց ներկայացնելը՝ պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) շահադիտական դրդումներով,

3) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

⁷ Տես՝ նույնը:

4) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության վերաբերյալ գործո՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Մույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անգորշությանը առաջացրել է ծանր հետևանք, պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով»:

Վերոշարադրյալ նորմի ուսումնասիրությունից հետևում է, որ դրանով նախատեսված հանցակազմի դիսպոզիցիայի մեջ ընդգրկվել է նաև ապացույց կեղծելը վարչական վարույթի ընթացքում: Վարչական վարույթը թեև արդարադատության իրականացման ինքնուրույն ճյուղ չէ, սակայն այն իր մեջ որոշակի առումով նման տարրեր պարունակում է:

Վարչական վարույթը, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, վարչարարության իրականացման ձևերից մեկն է, որն իրենից ներկայացնում է վարչական մարմնի արտաքին ներգործություն ունեցող գործունեություն՝ վարչական ակտի ընդունմամբ եզրափակվող: Վարչական ակտը, իր հերթին, անձի համար իրավական հետևանքներ առաջացնող, այսինքն՝ իրավունք կամ պարտականություն սահմանող անհատական իրավական ակտ է, որը վարչական կամ դատական կարգով չբողոքարկվելու պարագայում ստանում է օրինական ուժ: Հատկանշական է, որ վարչական ակտերն ընդունվում են հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, այսինքն՝ դրանք ուղղակիորեն առնչվում են հանրային շահին: Բացի այդ, վարչարարության իրականացման ընթացքում մեծ են վարչական մարմնին ապացույց կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու ռիսկերը, և բոլոր դեպքերում այս գործընթացի շրջանակներում կեղծ միջամտության արդյունքում կայացված ոչ օրինական որոշումը վտանգի տակ է դնում պետական իշխանության հեղինակությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ միանգամայն ընդունելի է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի՝ ապացույցները կեղծելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող 479-րդ հոդվածում, ի թիվս համապատասխան ճյուղային դատավարությունների, վարչական վարույթը ևս նախատեսելը:

Միևնույն ժամանակ, հասկանալի չէ այն հանգամանքը, որ քննարկվող հանցակազմի շրջանակներից դուրս է մնացել մինչդատական քրեական վարույթը, ինչը կարծում ենք, որ ընդունելի չէ հետևյալ պատճառներով:

Նախևառաջ, մինչդատական քրեական վարույթը նախորդում է քրեական գործերով դատաքննությանը, և հենց այս փուլում են ձեռք բերվում գործի համար նշանակություն ունեցող ապացույցները, որոնք հաստատում կամ հերքում են հանցագործության դեպքը, դրա հանգամանքները (ժամանակը, տեղը, եղանակը և այլն), մեղադրյալի առնչությունը դեպքին, ապացույցման են ենթարկվում

ենթադրյալ հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները, մեղադրյալի մեղավորությունը ենթադրյալ հանցանքը կատարելու մեջ, քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքները, ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասը, այն հանգամանքները, որոնք թույլ են տալիս անձին ազատել քրեական պատասխանատվությունից կամ պատժից, այն հանգամանքները, որոնցով անձը հիմնավորում է վարույթի ընթացքում իր գույքային պահանջները, այն հանգամանքները, որոնցով վարույթի մասնակիցը կամ այլ անձը հիմնավորում է իր պահանջները⁸:

Ավելին, քննարկվող հոդվածի դիսպոզիցիայում մինչդատական վարույթի ընթացքում օբյեկտիվ կողմի գործողությունների կատարման ներառումը կարևորվում է նաև այն առումով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը նախատեսում է նաև հայեցողական քրեական հետապնդման ինստիտուտը, որով սահմանված լիազորությունների կիրառման դեպքում հսկող դատախազի՝ հանրային քրեական հետապնդում չհարուցելու կամ դադարեցնելու մասին որոշմամբ եզրափակվում է քրեական վարույթի ընթացքը: Հետևաբար, ապացույցների հավաքման, ստուգման, գնահատման այս կարևորագույն փուլը, որը կանխորոշելու է քրեական գործի հետագա ընթացքը, կարծում ենք, չպետք է դուրս մնա քննարկվող հոդվածի դիսպոզիցիայից, և այն նույնպես պետք է վերցվի քրեաիրավական պաշտպանության տակ:

Ասվածն առավել հիմնավոր ներկայացնելու համար պետք է նշել նաև, որ ՀՀ վարչական դատավարության մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝ 1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները: (...):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեություն է»:

Ստացվում է, որ ինչպես մինչդատական վարույթը նախորդում է քրեական գործի դատական քննությանը, այնպես էլ վարչական վարույթը նախորդում է վարչական դատավարությանը: Մակայն օրենսդիրը վարչական վարույթի շրջանակներում կեղծ ապացույց ներկայացնելն առավել վտանգավոր արարք է դիտել, քան նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում վարույթն իրականացնող մարմնին կեղծ ապացույց ներկայացնելը:

⁸ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածում ներառել նաև քրեական վարույթով նախաքննության ընթացքում ապացույց կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալ կամ առարկա կեղծելը, փոխելը, ոչնչացնելը կամ թաքցնելը կամ կեղծ ապացույց ներկայացնելը:

Միևնույն ժամանակ, ՀՀ գործող քրեական օրենսգիրքը թեև ընդլայնել է պաշտպանության տակ վերցված արդարադատության իրականացման ճյուղերը, սակայն այն կրկին չի ամբողջացրել, քանի որ ՀՀ-ում գործում են նաև արդարադատություն իրականացնող այլ դատարաններ, որոնցում իրականացվող վարույթների ընթացքում ևս ապացույց կեղծելը կամ կեղծ ապացույց ներկայացնելը կվտանգի արդարադատության իրականացման այդ ճյուղի բնականոն գործընթացը և վնաս կպատճառի այս հանցատեսակի օբյեկտը կազմող հասարակական հարաբերություններին:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է սահմանադրական արդարադատությանը՝ որպես արդարադատության յուրահատուկ տեսակ, որի իրականացումը վերապահված է բացառապես ՀՀ սահմանադրական դատարանին: ՀՀ սահմանադրական դատարանը, ի թիվս այլնի, ստուգում է նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, լուծում է սահմանադրական մարմինների միջև վերջիններիս սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերը և այլն: Իր սահմանադրական լիազորությունների իրականացման շրջանակներում ՀՀ Սահմանադրական դատարանն իրավասու է որոշում ընդունելու համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելը հանձնարարել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, այդ թվում՝ դատարաններին և դատախազության մարմիններին⁹: Ստացվում է, որ ՀՀ սահմանադրական դատարանը, ինչպես և վարչական, քրեական և քաղաքացիական արդարադատություն իրականացնող մարմինները, իր լիազորություններն իրականացնելու և համապատասխան որոշում կայացնելու նպատակով գնահատման է ենթարկում որոշակի փաստական տվյալներ հերքող կամ հաստատող ապացույցներ, սակայն դրանք կեղծելու համար գործող օրենսդրությամբ քրեական պատասխանատվություն չի նախատեսվում:

Բացի այդ, ՀՀ-ում, բացի վարչական դատարանից, որպես մասնագիտացված դատարան, գործում է նաև սնանկության դատարանը, որին ենթակա են սնանկության հարաբերությունները կարգավորող օրենքով նախատեսված բոլոր գործերը:

Նման պայմաններում, կարծում ենք, ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով նախատեսված հիշյալ հանցակազմն ունի լրամշակման կարիք, որի արդյունքում որպես քրեորեն պատժելի արարք պետք է նախատեսվի նաև սնանկության գործերով և սահմանադրական արդարադատության շրջանակնե-

⁹ Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 3-րդ մասը:

րում տեղի ունեցող դատավարությունների ընթացքում կողմերի կողմից հանցագործության առարկան կազմող ապացույցի, բացատրության կամ դատավարական փաստաթղթի կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալի կամ առարկայի կեղծելը, փոխելը, ոչնչացնելը կամ թաքցնելը, կամ կեղծ ապացույցի ներկայացնելը:

Ինչպես արդեն նշվեց, ի տարբերություն 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված 349-րդ հոդվածի՝ ՀՀ քրեական օրենսգրքը ընդլայնել է նաև հանցագործության առարկայի շրջանակը, որում հատկապես ուշադրության արժանի է օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների և առարկաների ներառումը: Ստացվում է, որ նման պարագայում մեկ քայլ առաջ կատարելով՝ օրենսդիրը պաշտպանում է նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները, քանի որ դրանք նույնպես ունեն կեղծիքից երաշխավորված լինելու անհրաժեշտություն, ինչպես ապացույցները՝ դատավարության ընթացքում:

Կրկին անդրադառնալով ապացույց կեղծելու արարքի քրեականացման և այդ հանցակազմի հետագա լրացման, կատարելագործման հարցին՝ պետք է նշել, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածում ապացույցներ կեղծելու հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները խիստ թերի էին նկարագրված, մասնավորապես «ապացույց կեղծել» հասկացությունը իրավաբանական գրականության մեջ բնութագրվում է ինչպես եղած ապացույցները փոփոխելով՝ դրանցում ջնջում, քերվածք կատարելով կամ մի առարկան ուրիշով փոխարինելով, իրեղեն ապացույցները ձևափոխելով և այլն, այնպես էլ նոր, կեղծ ապացույցներ ներկայացնելով, ընդ որում, ապացույցների կեղծման բոլոր հնարքները բաժանում են երկու խմբի՝ ինտելեկտուալ կեղծիք, երբ ամբողջովին նոր ապացույց է ստեղծվում (այդ թվում՝ եղած իրական ապացույցը փոխարինելու համար), և նյութական կեղծիք, երբ եղած իրական ապացույցը փոփոխությունների է ենթարկվում¹⁰: Մինչդեռ նշված հոդվածի դիսպոզիցիան քաղաքացիական, վարչական կամ քրեական գործով դատարան կեղծ ապացույց ներկայացնելու օբյեկտիվ կողմը չէր նախատեսում, ինչը, թերևս, առավել տարածված իրավիճակ է, քան արդեն իսկ գործում եղած ապացույցը կեղծելը, փոխելը, ոչնչացնելը կամ թաքցնելը: Նման իրավիճակներ պրակտիկայում հաճախ հանդիպում են քաղաքացիական, վարչական դատավարությունների ընթացքում, երբ կողմերն իրենց պահանջները հիմնավորում են կեղծ պայմանագրեր, ստացականներ, վկայականներ, տեղեկանքներ և այլ կեղծ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով, որոնք դատարանների կողմից ընդունվում և կցվում են գործին:

¹⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Երևանի պետական համալսարան, Երևան: ԵՊՀ հրատ., 2012թ., էջ 944:

Նշված բացթողումն արդեն իսկ լրացվել է, և ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է նաև կեղծ ապացույց ներկայացնելու ձևով, որի ներքո պետք է հասկանալ կեղծված ապացույցը դատարան կամ վարչական մարմին հանձնելուն ուղղված գործողությունները:

Հատկանշական է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքը հրաժարվել է նաև ապացույց կեղծելու հանցագործության սուբյեկտային սահմանափակ շրջանակի նախատեսումից, այսինքն՝ հանցակազմի սուբյեկտը ընդհանուր է, ինչը ևս մեկ քայլ առաջ է նախկին օրենսդրական կարգավորումներից:

Քննարկվող հանցակազմի և իրավակիրառ պրակտիկայի համադրված վերլուծությունը ակնհայտ է դարձնում հանցագործության որակման առումով առկա հետևյալ խնդիրը, ինչին օրենսդրի կողմից որևէ անդրադարձ չի կատարվել:

Այսպես, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը նկարագրվում է որպես ձևական հանցակազմ, այսինքն՝ ավարտված է համարվում դրա կատարման պահին՝ անկախ հետևանքների վրա հասնելուն, այնուամենայնիվ քննարկվող հանցակազմը ունի որոշակի առանձնահատկություններ: Այսպես, պատկերացնենք մի իրավիճակ, երբ հայցվոր կողմը քաղաքացիական դատավարության կարգով իրականացվող քաղաքացիական գործով դատաքննության ընթացքում դատարանին է ներկայացնում ապացույց հանդիսացող մի փաստաթուղթ (օրինակ՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականի օրինակ), որը կեղծված է: Դատարանն ընդունում է փաստաթուղթը և կցում քաղաքացիական գործի նյութերին, սակայն նշված փաստաթուղթին գործով ապացուցման ենթակա հանգամանքների պարզաբանման համար որևէ նշանակություն չի տրվում, այն դատարանի կողմից կայացված դատական ակտում վերլուծության չի ենթարկվում:

Հարց է առաջանում՝ արդյո՞ք նման իրավիճակում արարքը պետք է որակել որպես ավարտված հանցագործություն: Մասնավորապես, արդյո՞ք արարքի որակման տեսանկյունից կարևոր է այն հանգամանքը, թե ապացույցը ներկայացնելով՝ հանցավորը հասնում է իր նպատակին, թե՞ անկախ նշված հանգամանքից, արարքը պետք է համարվի ավարտված:

Քննարկվող հանցակազմի և համարժեք վտանգավորություն ունեցող արդարադատության դեմ ուղղված մեկ այլ հանցակազմի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի, որը պատասխանատվություն է նախատեսում քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարչական վարույթով սուտ բացատրություն տալու, կամ քրեական, քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարույթով սուտ ցուցմունք, կամ փորձագետի կողմից կեղծ եզրակացություն կամ կարծիք տալու, կամ թարգմանչի կողմից սխալ թարգմանություն կատարելու, կամ նոտարի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու գործով վկայի կողմից սուտ ցուցմունք տալու համար, եթե դա էական նշանակություն

է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը, վերլուծության արդյունքում հանգում ենք հետևության, որ նշված հետևանքը նույնպես պետք է նախատեսվի քննարկվող հանցակազմում, ավելին՝ այն նույնպես պետք է նախատեսի իրախուսական նորմ այն մասին, որ ապացույցներ, բացատրություններ կամ դատավարական փաստաթղթեր կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալներ կամ առարկաներ կեղծած, փոխած, ոչնչացրած կամ թաքցրած կամ կեղծ ապացույցներ ներկայացրած անձն ազատվի նախատեսված պատասխանատվությունից, եթե նա մինչդատական վարույթի, հիմնական գործի դատական քննության կամ վարչական վարույթի ընթացքում՝ մինչև վարույթն իրականացնողի կողմից դատավճիռ, վճիռ կամ այլ վերջնական (վարույթը եզրափակող) որոշում կայացնելը, կամովին հայտնի իր կատարած արարքի մասին:

Եզրակացություն

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ շարադրված վերլուծությունների հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածը անհրաժեշտ է ենթարկել փոփոխությունների, և քննարկվող նորմը շարադրել հետևյալ կերպ.

«1. Սահմանադրական, քաղաքացիական, վարչական, սնանկության կամ քրեական գործով կամ վարչական վարույթով կամ քրեական վարույթով ապացույց, բացատրություն կամ դատավարական փաստաթուղթ կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալ կամ առարկա կեղծելը, փոխելը, ոչնչացնելը կամ թաքցնելը կամ կեղծ ապացույց ներկայացնելը, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը,

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատագրվմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրվմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»

Բացի այդ, առաջարկվում է նաև քննարկվող հանցատեսակի համար նախատեսել իրախուսական նորմ հետևյալ ձևակերպմամբ.

«Սահմանադրական, քաղաքացիական, վարչական, սնանկության կամ քրեական գործով կամ վարչական վարույթով կամ քրեական վարույթով ապացույց, բացատրություն, կամ դատավարական փաստաթուղթ կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալ կամ առարկա կեղծած, փոխած, ոչնչացրած կամ թաքցրած կամ կեղծ ապացույց ներկայացրած անձն ազատվում է նշված արարքների համար նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նա հիմնա-

կան գործի մինչդաստական վարույթի, կամ դատական քննության, կամ վարչական վարույթի ընթացքում՝ մինչև վարույթն իրականացնողի կողմից դատավճիռ, վճիռ կամ այլ վերջնական (վարույթը եզրափակող) որոշում կայացնելը, կամովին հայտնել է իր կողմից սպացույց, բացատրություն կամ դատավարական փաստաթուղթ կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալ կամ առարկա կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ սպացույց ներկայացնելու մասին»:

Այսպիսով, պետք է նշել, որ արդարադատության դեմ ուղղված այս հանցագործությունը, որի դրսևորումները պրակտիկայում բազմատեսակ են և բազմաբնույթ, բազմակողմանի ուսումնասիրության և վերլուծության կարիք ունի, որի արդյունքում առաջարկվող փոփոխությունները, լրացումները, գործող հոդվածի մեկնաբանությունները անխուսափելի կդարձնեն քրեական պատասխանատվությունը բոլոր այն դեպքերում, երբ խոչընդոտներ կստեղծվեն արդարադատության իրականացման համար, քանի որ հիշյալ հանցագործությամբ ոչ միայն խախտվում են կոնկրետ անձի կամ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, այլև վտանգվում են դատական համակարգի հեղինակությունը, դատական իշխանության նկատմամբ հանրային վստահությունը:

Փրականության ցանկ (reference list, список литературы)

1. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», 1948թ.:
The Universal Declaration of Human Rights, 1948.
2. Яблочков Т.М., Учебник русского гражданского судопроизводства, Ярославль, 1910.
Yablochkov T. M., Textbook of Russian Civil Proceedings, Yaroslavl, 1910.
3. Клейнман А.Ф., Новейшие течения в советской науке процессуального права. М., 1967.
Kleinman A.F., The Latest Trends in the Soviet Science of Procedural Law. M., 1967.
4. Рыжаков А.П., Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. 2-е изд. М., 2002.
Ryzhakov A.P. Commentary on the Criminal Procedure Code of the Russian Federation. 2nd ed. - M., 2002.
5. Волкова И.А., Ответственность за фальсификацию доказательств по уголовному делу: дис. ... канд. юрид. наук. М., 2005.
Volkova I. A., Responsibility for the Falsification of Evidence in a Criminal Case: Dis. ... cand. legal Sciences. M., 2005.
6. Горелик А. С., Лобанова Л. В., Преступления против правосудия. СПб., 2005. С. 217; Свечков В. А. Фальсификация доказательств // Законность. 2001. № 11. С. 12; Уголовная ответственность за преступления против правосудия / Под ред. А. В. Галаховой. М., 2003.
Gorelik A.S., Lobanova L.V., Crimes Against Justice. SPb., 2005. S. 217; Sverchkov V. A. Falsification of Evidence // Legitimacy. 2001. No. 11. P. 12; Criminal Liability for Crimes against Justice / Ed. A. V. Galakhova. M., 2003.
7. Курс советского уголовного права. В 6-ти томах. Т. 6 / Под ред. А.А. Пионтковского, П.С. Ромашкина, В.М. Чхиквадзе. М., 1971. С. 151. См. также: Власов И. С, Тяжкова И.М. Ответственность за преступления против правосудия. М., 1968.
The Course of Soviet Criminal Law. In 6 volumes. T. 6 / Ed. A.A. Piontkovsky, P.S. Romashkina, V.M. Chkhikvadze. - M., 1971. - S. 151. See also: Vlasov I.S., Tyazhkova I.M. Responsibility for Crimes against Justice. - M., 1968.
8. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 19 սեպտեմբերի 2017 թ. ՍԴՈ-1377 որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=116052>.
RA Constitutional Court Decision: 19 September 2017: SDO-1377, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=116052>.
9. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ», ընդ. խմբագր.՝ Գ.Հարությունյան, Ա. Վաղարշյան, Երևան, 2010թ.:

“Comments on the Constitution of the Republic of Armenia”, v. editor: G. Harutyunyan, A. Vagharshyan, Yerevan, 2010.

10. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Երևանի պետական համալսարան, Երևան: ԵՊՀ հրատ., 2012թ.:
Criminal Law of the Republic of Armenia. Special part (sixth edition with amendments and additions), Yerevan State University, Yerevan. YSU Publishing House, 2012.

Sona Margaryan

Prosecutor of the Department of Supervision over Legality of Pre-trial Proceedings in the RA Anti-Corruption Committee of the Prosecutor General's Office of the Republic of Armenia, Degree applicant of the Department of Criminal Law, Faculty of Law, Yerevan State University

THE ORIGIN AND DEVELOPMENT OF THE LEGISLATION ON CRIMINAL LIABILITY FOR FALSIFYING EVIDENCE AND SOME FUNDAMENTAL ISSUES REGARDING ITS APPLICABILITY¹

Abstract

The article concerns the analysis of articles of the previous and current edition of the Criminal Codes of the Republic of Armenia, which criminalize evidence falsification in civil, administrative or criminal cases or administrative proceedings. The article is particularly targeted at the study of the origin of the legislation establishing criminal liability for falsifying evidence and the history of its development, the research and analysis of the problems that arose during application of the given articles, the study of the contradictory approaches to its application. Falsifying, changing, destroying or hiding evidence, explanations or judicial documents or data or objects obtained as a result of an operational-investigative measure or presenting false evidence as a crime under the new edition of the RA Criminal Code is a novelty, is not widely applied in practice, is full of various problematic formulations, which were raised and researched, as a result of which the author came up with recommendations on making legislative changes in Article 479 of the RA Criminal Code.

Keywords: falsifying evidence; criminal liability for falsifying evidence; evidence in civil, administrative or criminal cases, administrative proceedings; explanations; judicial documents; data or objects obtained as a result of operational-investigative measures.

¹ The article was presented on 31.08.2023 and was reviewed on 10.11.2023.

Сона Маркарян

*Прокурор управления по надзору за законностью досудебного производства в Антикоррупционном комитете РА
Генеральной прокуратуры Республики Армения,
соискатель кафедры уголовного права юридического факультета
Ереванского государственного университета*

ПРОИСХОЖДЕНИЕ И РАЗВИТИЕ ЗАКОНОДАТЕЛЬСТВА ОБ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ФАЛЬСИФИКАЦИЮ ДОКАЗАТЕЛЬСТВ И НЕКОТОРЫЕ ФУНДАМЕНТАЛЬНЫЕ ВОПРОСЫ, КАСАЮЩИЕСЯ ЕГО ПРИМЕНИМОСТИ¹

Абстракт

В данной работе проводится анализ статей предыдущей и действующей редакций Уголовного кодекса Республики Армения, которые устанавливают уголовную ответственность за фальсификацию доказательств по гражданским, административным или уголовным делам или административному производству. Статья, в частности, направлена на изучение происхождения законодательства, устанавливающего уголовную ответственность за фальсификацию доказательств, и историю его развития, исследование и анализ проблем, возникших при применении этих статей, изучение противоречивых подходов к его применению. Фальсификация, изменение, уничтожение или сокрытие доказательств, объяснений или судебных документов или сведений или предметов, полученных в результате оперативно-розыскной деятельности, либо представление ложных доказательств, квалифицирующиеся как преступление, предусмотренное новой редакцией Уголовного кодекса РА, является новинкой, не имеет богатого практического опыта применения, насыщен различными проблемными формулировками, которые были выдвинуты и изучены, в результате чего автором были разработаны рекомендации по внесению законодательных изменений в статью 479 УК Республики Армения.

Ключевые слова: фальсификация доказательств; уголовная ответственность за фальсификацию доказательств; доказательства по гражданским, административным или уголовным делам, во время административного производства; объяснения; судебные документы; данные или предметы, полученные в результате оперативно-розыскного мероприятия.

¹ Статья была представлена 31.08.2023 и прошла рецензирование 10.11.2023.

Արգիշտի Սահակյան

Արարատի կայսզորի գինիորսկյան դատասխագության դատասխագ

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ¹

Համառոտագիր

Խուլիզանությունը ընդգրկված է գործող քրեական օրենսգրքի հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների շարքում, որոնք ոտնձգում են մեր հասարակությունում մարդկանց միջև գոյություն ունեցող փոխադարձ հարգանքի, պատվի, արժանապատվության, ազատության, անձնական անձեռնմխելիության և այլ արժեքների պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների նկատմամբ:

Հետևաբար, խուլիզանության դեմ պայքարը եղել և մնում է իրավապահ մարմինների առաջնահերթ խնդիրներից մեկը, որի լուծման արդյունավետությունը պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝ քրեական օրենսդրության կատարելագործմամբ և դրա կիրարկման միատեսակ պրակտիկայի ձևավորմամբ:

Նշվածի համատեքստում առանձնակի ուշադրության է արժանի խուլիզանության հանցակազմի տեսական վերլուծությունը, մասնավորապես՝ այն հարցերը, որոնք ծագել և ծագում են տեսության մեջ և գործնականում, և որոնք վերաբերում են խուլիզանության հանցակազմի առանձնահատկություններին, նրա շարժառիթների բովանդակային մեկնաբանությանը, խուլիզանական դրդումների և անձնական անբարյացակամ հարաբերություններից բխող վրեժի շարժառիթների տարանջատմանը, դիտավորության դրսևորման եղանակին, խուլիզանության և այլ հանցագործությունների տարանջատմանն ու գուգորդումներին:

Հոդվածի նպատակն է՝ խուլիզանության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմի վերլուծությունը, տեսական և պրակտիկ հիմնախնդիրների վեր հանումը, որոնք կապված են գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի կիրառման հետ, և դրանց լուծումը, այս հանցագործության կատարողների նկատմամբ պատասխանատվության նախատեսող իրավական հիմքի համարժեքության գնահատումը, և դրա հիման վրա՝ քրեական օրենսդրության

¹ Հոդվածը ներկայացվել է 31.08.2023թ., գրախոսվել է 15.11.2023թ.:

կատարելագործման և դրա կապակցությամբ առաջարկություններ ներկայացնելը:

Սույն աշխատանքում խուլիզանության համար քրեական պատասխանատվության վերաբերյալ գործող քրեական օրենսդրության իրավական վերլուծության արդյունքում բացահայտվել են խուլիզանության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները և վեր հանվել դրանցում առկա թերությունները: Պարզվել է խուլիզանության հանցակազմը սահմանազատելու չափանիշները նմանատիպ այլ հանցակազմերից: Հիմնավորվել է խուլիզանության հանցակազմում նոր ծանրացնող հանգամանք նախատեսելու անհրաժեշտությունը:

Թեմայի ուսումնասիրության արդյունքները կարող են նպաստել ինչպես իրավակիրառ պրակտիկայում խուլիզանության հանցակազմի որակման հիմնախնդիրների լուծմանը, այնպես էլ խուլիզանության վերաբերյալ քրեական օրենսդրության կատարելագործմանը:

Հիմնաբառեր- խուլիզանություն, հասարակական կարգ, հասարակություն, անհարգալից վերաբերմունք, իրավական նորմեր, բարոյական նորմեր, կոպիտ խախտում:

Ներածություն

Աշխատանքը նվիրված է խուլիզանության համար քրեաիրավական պատասխանատվություն նախատեսող նորմի վերլուծությանը:

Խուլիզանությունը, խուլիզանական դրդապատճառներով կատարվող այլ քրեորեն պատժելի արարքների հետ մեկտեղ, ամենատարածված հանցագործություններից մեկն է: Քրեագետների կարծիքով խուլիզանությունը կարելի է ճանաչել որպես հանցավորության «առաջնային դպրոց», բռնությամբ կատարվող մի շարք հանցագործությունների համար:

Հանցագործությունների այս տեսակի տարածվածությունը հաստատվում է վիճակագրությամբ: 2017-2021 թթ, ՀՀ տարածքում գրանցվել է խուլիզանության 1422 դեպք:

Խուլիզանությունը հանրային մեծ վտանգավորություն ներկայացնող արարք է, որն էական վնաս է պատճառում ինչպես պետության ու հասարակության շահերին, այնպես էլ քաղաքացիների իրավունքներին և օրինական շահերին:

Խուլիզանության հանցակազմի գիտական վերլուծությունը թեպետ եղել է ոչ քիչ թվով գիտնականների ուսումնասիրության առարկան, սակայն դրան առնչվող առանձին հարցեր դեռևս վիճահարույց բնույթ են կրում ինչպես գիտության մեջ, այնպես էլ քրեական իրավունքի գործնական կիրառման ոլորտում: Հարցերը, որոնք ծագել և ծագում են տեսության մեջ և գործնականում, վերաբերում են խուլիզանության հանցակազմի առանձնահատկություններին, նրա շարժառիթների բովանդակային մեկնաբանությանը, խուլիզանական դրդումների և անձնական

անբարյացակամ հարաբերություններից բխող վրեժի շարժառիթների տարանջատմանը, դիտավորության դրսևորման եղանակին, խուլիգանության և այլ հանցագործությունների, մասնավորապես՝ զանգվածային անկարգություններին մասնակցելու, դիակն անարգանքի ենթարկելու և գերեզմանն անարգանքի ենթարկելու հանցակազմերի տարանջատմանն ու զուգորդումներին: Միաժամանակ, հետաքրքրություն են ներկայացնում «Հ քրեական օրենսգրքով («այսուհետ՝ գործող քրեական օրենսգիրք») խուլիգանության համար պատասխանատվություն նախատեսող դրույթի կիրառման հարցերը՝ կապված հանցագործության օբյեկտի, սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմերի, ինչպես նաև ծանրացնող հանգամանքների հետ: Վերոգրյալի հիման վրա կարելի է փաստել, որ խուլիգանության համար քրեական պատասխանատվության հիմնախնդիրները վերլուծության կարիք ունեն:

Հետազոտության նպատակն է խուլիգանության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմի վերաբերյալ վերլուծության կատարումը, տեսական և պրակտիկ հիմնախնդիրների վեր հանումը, որոնք կապված են գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի կիրառման հետ, և դրանց լուծումը, այս հանցագործության կատարողների նկատմամբ պատասխանատվություն նախատեսող իրավական հիմքի համարժեքության գնահատումը, և դրա հիման վրա՝ քրեական օրենսդրության կատարելագործման և դրա կապակցությամբ առաջարկություններ ներկայացնելը:

- Այս նպատակին հետամուտ փորձ են արվել լուծելու հետևյալ խնդիրները՝
- իրականացնել խուլիգանության համար քրեական պատասխանատվության վերաբերյալ գործող քրեական օրենսդրության իրավական վերլուծություն՝ միաժամանակ համեմատություն կատարելով 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում («այսուհետ՝ քրեական նախկին օրենսգիրք») առկա իրավակարգավորումների հետ,
 - բացահայտել խուլիգանության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները և վեր հանել դրանցում առկա թերությունները,
 - պարզել խուլիգանության հանցակազմը սահմանազատելու չափանիշները նմանատիպ այլ հանցակազմերից,
 - վերլուծել հանցակազմի ծանրացնող հանգամանքները:

ԳԼՈՒԽ 1. Խուլիգանության հասկացությունը և տարրերը

§1. Խուլիգանության հասկացությունը

Քրեական նախկին օրենսգրքի 258-րդ հոդվածով խուլիգանությունը սահմանվում էր որպես «դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտել, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով»²: Այս սահմանումը հիմնականում բնութագրում էր խու-

² Տե՛ս ՀՀ Քրեական օրենսգիրք, 2003 թ., 258-րդ հոդված

լիզանության օբյեկտիվ կողմը, բայց նաև պարունակում էր դրա հիմնական օբյեկտի նշում (հասարակական կարգ) և դրանում արտահայտվող դրդումը (հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք):

Որոշ հեղինակներ գտնում են, որ «հասարակական կարգի կոպիտ խախտում» և «հասարակության նկատմամբ ակնհայտ անհարգալից վերաբերմունք» գնահատողական հատկանիշները դարձնում են խուլիզանության սահմանումը անորոշ և նշում են, որ խուլիզանության հասկացության մեջ գնահատողական հատկանիշների ավելորդությունները գործնականում հանգեցնում են մեղադրյալի արարքի սխալ որակման:

Ուրիշները կարծում են, որ գնահատողական հատկանիշները հնարավորություն են տալիս ավելի լավ հաշվի առնել սոցիալական իրավիճակը, գործի առանձնահատուկ հանգամանքները, որոնք յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ունեն բազմազան բովանդակություն և դրսևորման տարբեր ձևեր:

Գործող քրեական օրենսգրքով խուլիզանության (297-րդ հոդված) հանցակազմն էական փոփոխության է ենթարկվել: Օրենսդիրը փորձել է, ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, հանցակազմը այնպես ձևակերպել, որ ապահովվի իրավական որոշակիությունն ու կոնկրետությունը: Խուլիզանության դիսպոզիցիան ձևակերպվել է կոնկրետ արարքները նշելով³: Այսպես՝ խուլիզանությունը բնորոշվում է հետևյալ կերպ.

«1. Խուլիզանությունը՝ հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելը, որը դրսևորվել է անձին ստորացնելով կամ հայհոյանքներով կամ անպարկեշտ արտահայտություններով կամ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ մարդկանց անդորրը խախտելով կամ նույն եղանակներով հանրային միջոցառումը, արարողությունը խափանելով կամ հասարակական նշանակության օբյեկտի, հիմնարկի կամ կազմակերպության բնականոն աշխատանքը խոչընդոտելով (...):»⁴:

Ինչպես տեսնում ենք, գործող քրեական օրենսգրքում խուլիզանության հասկացությունը ավելի է կոնկրետացվել և ավելի քիչ գնահատում է պահանջում:

Մեր կարծիքով՝ քրեական օրենսդրությունում գնահատողական հատկանիշների առկայությունն անխուսափելի է, բայց դրանց թիվը պետք է նվազագույնի հասցվի, ինչն էլ կատարվել է խուլիզանության հանցակազմի սահմանման մեջ գործող քրեական օրենսգրքում: Եթե մենք ամբողջովին հրաժարվենք գնահատողական հասկացություններից, անհնար կլինի ձևակերպել խուլիզանության և որոշ այլ հանցագործությունների օրենսդրական սահմանումը: Խուլիզանություն-

³ Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց. /Ա.Գաբուզյան, Ա.Մարգարյան, Տ.Սիմոնյան., 2022. էջ 367: <https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57>(մուտք 28.08.2023)

⁴ Տե՛ս ՀՀ Քրեական օրենսգրքը, 2022 թ., 297-րդ հոդված

նը կարող է կատարվել բազմապիսի արարքներով և մի շարք օբյեկտների նկատմամբ, ուստի անհնար է խուլիզանության հանցակազմի մեջ նշել խուլիզանական բոլոր արարքները և այն օբյեկտները, որոնց նկատմամբ ոտնձգում են այդ արարքները: Այսինքն հանցակազմում գնահատողական հատկանիշների առկայությունը անհրաժեշտություն է:

Խուլիզանության հանրային վտանգավորությունը հիմնականում այն է, որ այն առավել հաճախ կատարվում է հասարակական վայրերում, և կարող է ուղղված լինել տարբեր օբյեկտների դեմ: Խուլիզանությունը վտանգավոր է նաև այն պատճառով, որ հաճախ այն կատարողները անպատժելիության դեպքում կարող են կատարել այնպիսի ծանր հանցագործություններ, ինչպիսիք են սպանությունը, բռնաբարությունը, կողոպուտը և այլն: Խուլիզանության և այս հանցագործությունների միջև կապը պատահական չէ, քանի որ նրանք բոլորն են ունեն նույն պատճառներն ու պայմանները, որոնք նպաստել են դրանց կատարմանը: Բացի այդ, հաշվի առնելով խուլիզանական դրդումների առանձնահատկությունները, այս հանցագործության վտանգավորությունը նաև համապատասխան գործողությունների որոշակի անկանխատեսելիությունն է, դրանց իրականացման արտաքին պատճառի բացակայությունը կամ ակնհայտ աննշանության, ինչպես նաև մեղավորի անփույթ վերաբերմունքի ինչպես առանձին քաղաքացիների, այնպես էլ ամբողջ հասարակության նկատմամբ:

Մենք կարծում ենք, որ խուլիզանության հանցակազմում առկա «հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք» հասկացությունները ինքնին չեն հանդիսանում հանրորեն վտանգավոր գործողությունների կամ խուլիզանության հետևանքների նկարագրություն: Այս հատկանիշները պետք է դիտարկվեն որպես խուլիզանական գործողությունների սոցիալական հատկություններ, որոնք նրանց հանրորեն վտանգավոր բնույթ են հաղորդում:

Խուլիզանությունը ընդգրկված է գործող քրեական օրենսգրքի հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների շարքում և նշված օբյեկտների դեմ ուղղված առավել տարածված և վտանգավոր հանցագործություններից է: Անհրաժեշտ է անդրադառնալ խուլիզանության պատճառներին ու պայմաններին:

Խուլիզանության պատճառները դրա կատարումն անմիջականորեն առաջացնող երևույթներն են, իսկ պայմանները այն երևույթներն են, որոնք նպաստում են պատճառների ձևավորմանը և զարգացմանը: Միևնույն ժամանակ, խուլիզանության պայմաններն ինքնին չեն առաջացնում դրա կատարումը, այլ ժամանակի և տարածության մեջ պատճառներին ուղեկցելով՝ ապահովում են դրանց զարգացումը, ինչը հանգեցնում է խուլիզանական գործողությունների անմիջական իրականացմանը:

Բացի պատճառներից և պայմաններից, անհրաժեշտ է նաև ընդգծել խուլի-

զանության առիթները և դրդումները: Առիթները իրավիճակային բնույթի բացասական հանգամանքներ են, որոնք իրենք են պատճառի գործողության համար և հրահրում են իրավախախտման կատարումը:

Դրդումները հանկարծակի չեն առաջանում, այլ ձևավորվում են անհատի հոգեբանության մեջ հասարակության մեջ գոյություն ունեցող արտաքին հանգամանքների ազդեցության տակ: Կան մի շարք գործոններ, որոնք իրենք են խուլիզանություն կատարելու իրանի ձևավորմանը: Դրանցից են միջավայրի բացասական ազդեցությունը, կրթության ցածր մակարդակը, զբաղվածության և մշտական եկամտի բացակայությունը: Խուլիզանների զգալի մասը չունի եկամտի մշտական աղբյուր, կրթության բավարար մակարդակ, ուստի նրանց հնարավորությունները չեն բավարարում իրենց հոգևոր և նյութական պահանջմունքները: Իրենց սոցիալական հատկությունների տեսանկյունից՝ նրանք, ինչպես կարծում են, չեն կարող հույս ունենալ հասարակության մեջ օրինական ինքնահաստատման համար, ուստի ընտրում են հակաօրինական եղանակները:

Շատ դեպքերում խուլիզանություն կատարելու պատճառը (թեկուզ ակնհայտորեն աննշան), տուժողի անօրինական պահվածքն է լինում, որը նվազեցնում է մեղավոր անձի ինքնատիրապետումը, նրան տանում է մոռցիոնալ լարված վիճակի, որում որոշում է կայացվում հանցագործություն կատարելու մասին:

§2. Խուլիզանության օբյեկտը և օբյեկտիվ կողմը

Խուլիզանության էությունը հասկանալու համար կարևոր նշանակություն ունի այս արարքի օբյեկտի ճիշտ սահմանումը: Հանցագործության օբյեկտի պարզումը նախապայման է քրեական օրենսդրության ճիշտ կիրառման և անձի կողմից կատարված հանրորեն վտանգավոր գործողությունների ճիշտ որակման համար:

Նախկին քրեական օրենսգրքում առկա խուլիզանության հանցակազմի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ խուլիզանության հիմնական, անմիջական օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կազմում են հասարակական կարգի բովանդակությունը, իսկ պարտադիր լրացուցիչ օբյեկտն անձի անձեռնմխելիության, պատվի և արժանապատվության, առողջության, քաղաքացիների և կազմակերպությունների գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Վճռաբեկ դատարանը նշում է, որ հասարակական կարգն ընկալվում է երկու իմաստով՝ լայն և նեղ: Լայն իմաստով՝ հասարակական կարգը հասարակության մեջ առկա սոցիալական կապերի և հարաբերությունների համակցությունն է, որը ձևավորվում է սոցիալական, իրավական և բարոյական նորմերի գործողության արդյունքում, և յուրաքանչյուր հանցագործություն, զանցանք կամ այլ իրավախախտում այս կամ այն չափով հանգեցնում է դրա խախտման:

Խուլիզանության հիմնական հանցակազմի անմիջական օբյեկտն այն հա-

սարակական հարաբերություններն են, որոնք կազմում են հասարակական կարգի բովանդակությունը նեղ իմաստով: Նեղ իմաստով՝ հասարակական կարգն ընկալվում է որպես հասարակական նշանակության վայրերում այնպիսի իրադրության առկայություն, որի պայմաններում ապահովված է քաղաքացիների արժանավայել վարքագիծը, կազմակերպությունների, հիմնարկների և հասարակական նշանակության այլ օբյեկտների բնականոն աշխատանքը, ինչպես նաև այդ վայրերում գտնվող անձի (անձանց) ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը: Խուլիգանության հիմնական հանցակազմն ունի մեկ, իսկ որակյալ հանցակազմը՝ երկու օբյեկտ: Մասնավորապես՝ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, ենթակա է որակման՝ որպես հասարակ խուլիգանություն, մինչդեռ նույն արարքը, որը զուգորդվում է անձի առողջությամբ, գույքային իրավունքներին և այլին վնաս պատճառելով, ենթակա է որակման խուլիգանության որակյալ հանցակազմով⁵:

Այս որոշումը մասամբ շարունակում է արդիական մնալ գործող քրեական օրենսգրքում առկա խուլիգանության հանցակազմի վերաբերյալ: Հասարակական կարգը շարունակում է մնալ խուլիգանության անմիջական օբյեկտ, պարզապես «հասարակական կարգ» հասկացությունը հանվել է խուլիգանության հանցակազմի սահմանումից: Օրենսդիրը փորձել է Վճռաբեկ դատարանի՝ «նեղ իմաստով հասարակական կարգ» հասկացության մեկնաբանությունը ներմուծել գործող քրեական օրենսգրքի խուլիգանության հանցակազմի մեջ՝ ավելացնելով այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ մարդկանց անդորրը խախտել, հանրային միջոցառումը, արարողությունը խափանել կամ հասարակական նշանակության օբյեկտի, հիմնարկի կամ կազմակերպության բնականոն աշխատանքին խոչընդոտել: Որպես խուլիգանության անմիջական օբյեկտ է հանդել գալիս նաև բարոյականության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների ամբողջությունը, սրա մասին է խոսում այն հանգամանքը, որ խուլիգանության հանցակազմում որպես արարքի կատարման եղանակ են նշված հայհոյանքները կամ անպարկեշտ արտահայտությունները: Անձի անձեռնմխելիության, պատվի և արժանապատվության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները շարունակում են մնալ որպես խուլիգանության պարտադիր լրացուցիչ օբյեկտ, իսկ արդեն անձի առողջության, քաղաքացիների և կազմակերպությունների գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները՝ ոչ, քանի որ խուլիգանության հանցակազմից դուրս են մնացել այնպիսի ծանրացնող հանգամանքներ, ինչպիսիք են անձի նկատմամբ բռնություն գործադրելը, ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը և առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը:

⁵ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի որոշումը ԱՎԴ/0014/01/11 գործի վերաբերյալ, 15-րդ կետ: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=76838> (մուտք 20.08.2023):

Խուլիգանությունը առաջին հերթին ուղղված է հասարակական կարգի և բարոյականության դեմ, իսկ դրա ընթացքում այլ հասարակական հարաբերությունների խախտումը ծառայում է միայն որպես հանցագործության հիմնական օբյեկտի՝ հասարակական կարգի խախտման միջոց:

Չնայած նրան, որ խուլիգանության հիմնական անմիջական օբյեկտները հասարակական կարգն ու բարոյականությունն են՝ խուլիգանության կատարմամբ մի շարք դեպքերում անմիջականորեն խախտվում է հասարակության անվտանգությունը, օրինակ՝ երբ խուլիգանությունը կատարվում է գեների կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ:

Մեղավոր անձը, կատարելով խուլիգանություն, մարտահրավեր է նետում ոչ միայն որոշակի անձի, այլև հասարակությանն ամբողջությամբ, ինչի մասին վկայում է շատ դեպքերում այս ոտնձգության տուժողին պատահականորեն ընտրելը: Խուլիգանության ընթացքում անձնական անվտանգության խախտումը միաժամանակ կարող է ոտնձգություն անել հասարակական անվտանգության նկատմամբ և գործել որպես հասարակական կարգի խախտման միջոց:

Քրեական իրավունքում անվտանգությունը հասկացվում է որպես «անհատի, հասարակության և պետության կենսական շահերի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից»: Կենսական շահերը «կարիքների ամբողջություն են, որոնց բավարարումը հուսալիորեն ապահովում է անհատի, հասարակության և պետության գոյությունը և առաջադեմ զարգացման հնարավորությունը»: Իսկ «անվտանգության օբյեկտներն են՝ անձը և իր իրավունքներն ու ազատությունները, հասարակությունը և իր նյութական և հոգևոր արժեքները, պետությունը և իր սահմանադրական կարգը, ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը»: Ըստ այդմ՝ հասարակական անվտանգությունը, անձնական անվտանգության և պետության անվտանգության հետ մեկտեղ, անվտանգության բաղկացուցիչ մասն է:

Հասարակական անվտանգությունը հասարակական հարաբերությունների արտաքին և ներքին սպառնալիքներից պաշտպանվածությունն է՝ այն կարիքների ամբողջության բավարարմամբ, որոնք հուսալիորեն ապահովում են հասարակության գոյությունը և դրա առաջադեմ զարգացումը: Անվտանգությունը ձեռք է բերվում այն նյութական և հոգևոր արժեքների պաշտպանության միջոցով, առանց որոնց ներկայիս հասարակությունը չի կարող գոյություն ունենալ և զարգանալ:

«Հասարակական անվտանգություն» և «հասարակական կարգ» հասկացությունները բովանդակությամբ տարբերվում են և չեն կարող ներառվել իրար մեջ կամ փոխարինել իրար:

Վ.Ի. Չարուբինը նշում է, որ «հասարակական կարգ» և «հասարակական անվտանգություն» տերմինները պետք է դիտարկվեն որպես անկախ հասկացու-

թյուններ, որոնցից յուրաքանչյուրն ունի հատուկ բովանդակություն⁶: Սրա մասին խոսում է նաև այն փաստը, որ և՛ նախկին, և, գործող քրեական օրենսգրքերում այս երկու հասկացությունները ներառված են տարբեր գլուխներում:

Որոշ գիտնականներ ինչպես հասարակական կարգը, այնպես էլ հասարակական անվտանգությունը համարում են խուլիգանության օբյեկտ՝ առանց նշելու, թե այդ օբյեկտներից որն է առաջինը, որը՝ երկրորդը⁷: Գտնում ենք, որ հասարակական անվտանգությունը խուլիգանության լրացուցիչ օբյեկտն է:

Մենք կարծում ենք, որ հասարակական անվտանգության և հասարակական կարգի միջև որոշիչ տարբերությունն այն է, որ անվտանգության խախտման դեպքում վերոհիշյալ հարաբերությունների առկայությունը վտանգվում է, իսկ երբ հասարակական կարգն է խախտվում, այդ հարաբերությունները միայն ապակայունանում են: Իհարկե, այդ օբյեկտները սերտորեն փոխկապակցված են և կախված են միմյանցից, ինչի մասին խոսում է շատ դեպքերում խուլիգանության զուգորդումը հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների հետ: Օրինակ՝ խուլիգանության նախապատրաստության նպատակով զենքի ապօրինի ձեռքբերումը ոտնձգում է ոչ միայն հասարակական անվտանգության նկատմամբ, այլև հասարակական կարգի:

Քրեական նախկին օրենսգրքում որպես խուլիգանության ծանրացնող հանգամանքներ էին նախատեսված բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը, ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը և անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը: Եթե հասարակական կարգի խախտումը ուղեկցվում էր անձի կամ գույքի նկատմամբ ոտնձգությամբ, ապա արարքի որակումը որոշվում էր հիմնական անմիջական օբյեկտով:

Եթե հանրորեն վտանգավոր արարքի կատարման ժամանակ այդպիսի հիմնական օբյեկտը հասարակական կարգն էր, իսկ մյուս օբյեկտները պակաս նշանակալից էին, ապա ողջ արարքը դիտարկվում էր որպես խուլիգանություն: Եթե կոնկրետ դեպքում անձի նկատմամբ ոտնձգությունն ավելի կարևոր էր, քան հասարակական կարգի խախտումը, օրինակ՝ սպանության, կամ հավասար էր դրան, օրինակ՝ խուլիգանական դրդումներով տուժողի առողջությանը ծանր վնաս հասցնելը, հիմնականը ճանաչվում էին այն հասարակական հարաբերությունները, որոնք ապահովում էին անձի կյանքը կամ առողջությունը: Հետևաբար, արարքը որակվում էր համակցությամբ՝ որպես անձի դեմ ուղղված հանցագործություն և խուլիգանություն:

Գործող քրեական օրենսգրքով վերը նշված ծանրացնող հանգամանքները առկա չեն, և եթե անձը կատարում է բռնություն գործադրելով կամ դա գոր-

⁶ St'u Зарубин В.И., Уголовная ответственность за хулиганство: Дис. ... канд. юрид. наук. М., 2001. էջ 41.

⁷ St'u Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Под общ. ред. В.М. Лебедева. 2-е изд., перераб. и доп. М.: Норма, 2004. էջ 528.

ծաղրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով, ապա արարքը որակվում է համակցությամբ՝ խուլիզանություն և կոնկրետ արարքի կատարում:

Նախկին իրավակարգավորումների համաձայն՝ սեփականության հարաբերությունները, անկախ դրա ձևերից, կարող էին հանդես գալ որպես խուլիզանության լրացուցիչ օբյեկտ: Խուլիզանությունը, որը կատարվում էր գույքը ոչնչացնելով կամ վնասելով, ոտնձգություն էր ոչ միայն գույքային հարաբերությունների նկատմամբ, այլև նյութական աշխարհի իրերը, որոնք նաև դառնում էին հանցագործության առարկա: Գործող քրեական օրենսգրքում գույքը ոչնչացնելը և վնասելը նախատեսված չէ որպես ծարացող հանգամանք, ուստի սեփականության հարաբերությունները չեն կարող հանդես գալ որպես խուլիզանության լրացուցիչ օբյեկտ:

Այսպիսով, խուլիզանության հիմնական, անմիջական օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կազմում են հասարակական կարգի և բարոյականության բովանդակությունը, իսկ պարտադիր լրացուցիչ օբյեկտն անձի անձեռնմխելիության, պատվի և արժանապատվության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Հանցագործության օբյեկտիվ կողմը որոշակի պայմաններում, տեղում և ժամանակահատվածում ընթացող և քրեաիրավական պաշտպանության համապատասխան օբյեկտներին վնաս պատճառող հանրորեն վտանգավոր ոտնձգության արտաքին դրսևորումն է:

Հանցագործության օբյեկտիվ կողմից պետք է տարբերել կոնկրետ հանցակազմի օբյեկտիվ կողմը: Վերջինս ներառում է օրենսդրությամբ սահմանված խիստ որոշակի այնպիսի հատկանիշներ, որոնք նկարագրում են տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը: Հետևաբար հանցակազմի օբյեկտիվ կողմը քրեական օրենքով սահմանված որոշակի հանցագործության այնպիսի հատկանիշների համակցությունն է, որոնք բնութագրում են կոնկրետ հանցավոր ոտնձգության կատարման արտաքին գործընթացը:

Հանցագործության օբյեկտիվ կողմն են կազմում այն հատկանիշները, որոնք արտաքինից բնութագրում են հանցագործությունը: Դրանց թվին են դասվում հանրորեն վտանգավոր արարքը, հանրորեն վտանգավոր հետևանքները, հանրորեն վտանգավոր արարքի և հետևանքների միջև պատճառական կապը, հանցագործության տեղը, ժամանակը, իրադրությունը, գործիքներն ու միջոցները, ինչպես նաև եղանակը:

Քրեական նախկին օրենսգրքում խուլիզանության հանցակազմը՝ իր օբյեկտիվ կողմի ձևավորմամբ, ձևական-նյութական էր: Մի դեպքում այս հանցագործությունը համարվում էր ավարտված արարքի կատարման պահից (հասարակ խուլիզանություն), մյուս դեպքում՝ հետևանքները վրա հասնելու պահից (գույքը ոչնչացնելով կամ վնասելով գույքորդված խուլիզանություն): Գործող քրեական

օրենսգրքով խուլիզանության հանցակազմը իր օբյեկտիվ կողմից ձևավորմամբ լիովին ձևական է:

Քրեական նախկին օրենսգրքում խուլիզանության հանցակազմի օբյեկտիվ կողմի առանցքը վերը նշված երկու գնահատողական հատկանիշների (հասարակական կարգի կոպիտ խախտում և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք) համադրությունն էր: Վճռաբեկ դատարանը այդ հատկանիշների վերաբերյալ արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ կոպիտ խախտումը՝ որպես խուլիզանության հանցակազմի հատկանիշ, բնութագրական է հասարակական կարգի կազմալուծման կամ խախտման գործընթացի արդյունքներին (հետևանքին): Այն արտահայտվում է նրանում, որ անձի կատարած գործողությունների հետևանքով հասարակության անդամների մեջ առաջանում է զայրույթ, վրդովմունք, կամ նրանց անհարմարություն կամ լուրջ անհանգստություն է պատճառվում, կամ առաջանում է վախի զգացում իրենց կյանքի, առողջության, զույքի պահպանության կապակցությամբ: Բացի այդ, կոպիտ խախտումն արտահայտվում է նաև աշխատանքային և այլ գործունեության կամ հասարակական նշանակության արարողության կազմալուծմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խախտումը որպես կոպիտ գնահատելիս անհրաժեշտ է ելնել հասարակական կարգի վրա այդ խախտման ունեցած ազդեցությունից: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հասարակական կարգը կոպիտ կերպով կարող է խախտվել ցանկացած արարքի կատարման պարագայում, մինչդեռ խուլիզանության առկայության մասին է վկայում այնպիսի արարքի կատարումը, որը միտված է հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելուն և որպես այդպիսին՝ հանդիսացել է խուլիզանություն կատարող անձի դիտավորության մեջ ընդգրկված նպատակի իրականացման միջոց⁸:

Հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքը պետք է ընկալվի վարքագծի համընդհանուր կանոնների նկատմամբ արհամարհական վերաբերմունքը, իրեն այլ քաղաքացիներին հակադրելը կամ նրանց նկատմամբ սեփական երևակայական գերազանցության ցուցադրական արտահայտությունը: «Հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքը կարող է դրսևորվել ներկաների կարծիքը անտեսելով, իր գործողությունների անթույլատրելիության վերաբերյալ նկատողությունները արհամարհելով կամ նման նկատողություններից հետո ազդեհիվության մեծացմամբ»⁹:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ անձի գործողություններում հասարակության

⁸ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի որոշումը ԱՎԳ/0014/01/11 գործի վերաբերյալ, 18-19-րդ կետեր: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=76838> (մուտք 20.08.2023):

⁹ Տե՛ս Уголовное право. Особенная часть. Т.2 / Под ред. Л.Д. Гаухмана, СВ. Максимова. М., 1999. էջ 36.

նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորումն արտահայտվում է մարդկային համակեցության կանոնների նկատմամբ ակնհայտ արհամարհանք դրսևորելու, հասարակական վայրերում վարքագծի կանոնները ցուցադրական կերպով անտեսելու, շրջապատի մարդկանց և կոլեկտիվին հակադրվելու ձևով: Հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորող անձը դիտավորյալ կերպով խախտում է հասարակության նկատմամբ հարգանքի դրսևորման տարրերը¹⁰:

Գործող քրեական օրենսգրքում խուլիգանության դիսպոզիցիայի ձևակերպումը շատ նման է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հասարակական կարգի կոպիտ խախտում» և «հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք» հասկացությունների մեկնաբանությանը: Պարզապես օրենսդիրը, փորձելով ապահովել իրավական որոշակիությունը, թվարկել է այն արարքները, որոնք խուլիգանության օբյեկտիվ կողմն են հանդիսանում: Փաստորեն խոսքը այնպիսի արարքների մասին է, որոնք անհանգստություն կամ զայրույթ են առաջացնում հասարակության անդամների մոտ:

Անձին ստորացնել ասելով՝ կարելի է հասկանալ անձին ծաղրուծանակի ենթարկելը, վիրավորելը, անպարկեշտ արարքներ կատարել հարկադրելը և այլն: Խուլիգանություն համարվող մնացած արարքներն արդեն մեկնաբանված են վճռաբեկ դատարանի կողմից և հանրահայտ են իրավակիրառողին: Համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ մարդկանց անդորրը խախտելը կարող է դրսևորվել հասարակության ներկայությամբ սեռական հարաբերություն ունենալով, տարբեր բարձր ձայներով, օդ կրակելով և այլն¹¹:

Քրեական նախկին օրենսգրքի 137.1 հոդվածի 1-ին մասով պատասխանատվություն էր նախատեսվում անձին ծանր վիրավորանք հասցնելու համար, որը դրսևորվում էր նրան հայեցողով կամ նրա արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելով: Իսկ որպես ծանրացնող հանգամանք էր նախատեսված նշված արարքը տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ հրապարակային այլ եղանակով: Վերը նշված հոդվածը ապարքեականացվել է, սակայն ինչպես տեսնում ենք՝ այն իր արտահայտությունն է գտել խուլիգանության հանցակազմում:

Մի շարք գիտնականներ նշում են հասարակական վայրը որպես խուլիգանության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ:

Կարծում ենք՝ հանցագործության վայրը չի որոշում որևէ արարքի որակումը որպես խուլիգանություն և ավելին, չի հանդիսանում քննարկվող հանցագործու-

¹⁰ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի որոշումը ԱՎԴ/0014/01/11 գործի վերաբերյալ, 20-21-րդ կետեր: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=76838>(մուտք 20.08.2023):

¹¹ Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց. /Ա.Գաբուզյան, Ա.Մարգարյան, Տ.Սիմոնյան., 2022. էջ 367: <https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57>(մուտք 20.08.2023):

թյան պարտադիր հատկանիշ: Այս մասին խոսում է նաև այն, որ խուլիզանության դիսպոզիցիայում խուլիզանության կատարման վայրը նշված չէ որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ: Որոշիչ է ոչ թե վայրը, այլ մարդիկ, հասարակությունը, որին իր վարքագծով մարտահրավեր է նետում հանցագործը:

Այն կարծիքը, որ խուլիզանությունը կարող է կատարվել ցանկացած վայրում, որտեղ պետք է պահպանվի հասարակական կարգը, նույնպես սխալ է: Մեր կարծիքով՝ ավելի ճիշտ է ասել, որ հասարակական կարգը պետք է պահպանվի ցանկացած վայրում, հետևաբար դրա խախտումը կարող է իրականացվել ցանկացած վայրում:

Վճռաբեկ դատարանը քրեական նախկին օրենսգրքում առկա խուլիզանության հանցակազմի վերաբերյալ նշում է, որ արարքը չի կարող որակվել որպես խուլիզանություն, եթե տվյալ արարքի արդյունքում հասարակությանը լուրջ սահանգստություն չի պատճառվում: Կարծում ենք, որ այդ որոշումը արդիական է նաև գործող քրեական օրենսգրքում առկա խուլիզանության հանցակազմի մասով:

Արարքը խուլիզանություն որակելու համար անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրել ոչ միայն մեղավոր անձի գործողությունները, այլև տուժողի վարքագիծը ոտնձգությունից առաջ: Եթե հաստատվում է, որ հակամարտության նախաձեռնողը տուժողն է եղել, կամ հանցագործություն կատարած անձի գործողությունները հիմնականում եղել են տուժողի հետ թշնամական հարաբերությունների պատճառով, ապա արարքը չի կարող որակվել որպես խուլիզանություն: Մինևույն ժամանակ, արարքը խուլիզանություն որակելու համար բավարար չէ այն փաստը, որ այդ անձը հանդիսանում է հանցագործության նախաձեռնողը կամ ակտիվ կողմը: Անհրաժեշտ է պարզել մեղավորի գործողությունների դրդումները:

Քրեական իրավունքի գրականության մեջ, ինչպես նաև իրավապահ մարմինների պրակտիկայում հաճախակի է դրվում այն հարցը, թե արդյո՞ք պարտադիր է այլ անձանց ներկայությունը տվյալ հանցագործությունը կատարելիս:

Նախկին իրավակարգավորումների համաձայն՝ հրապարակայնությունը, խուլիզանության պարտադիր հատկանիշ չէր համարվում: Խուլիզանությունը հնարավոր էր կատարել այլ մարդկանց բացակայության պայմաններում, օրինակ՝ գիշերվա ժամերին ամայի փողոցում խուլիզանական շարժառիթով հասարակական գույքի ոչնչացումը: Սակայն նման դեպքերում անհրաժեշտ էր, որ կատարված փաստը վաղ թե ուշ հայտնի դառնար հասարակությանը: Գործող քրեական օրենսգրքում առկա խուլիզանության հանցակազմի դիսպոզիցիայից երևում է, որ հասարակության ներկայությունը պարտադիր է արարքը խուլիզանություն որակելու համար, քանի որ նշված են այնպիսի արարքներ, ինչպիսիք են՝ մարդկանց անդորրը, միջոցառումները կամ արարողությունները խափանելը կամ հիմնարկների կամ կազմակերպությունների բնականոն աշխատանքը խոչընդոտել:

Մակայն հասարակության ներկայությունը կարող է անմիջական չլինել այն դեպքում, երբ արարքը կատարվում է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով:

Նկատենք, որ արարքում խուլիզանության հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը որոշվում է ոչ միայն արարքի կատարման եղանակով, անհրաժեշտ է հաշվի առնել նաև իրավիճակը՝ որում կատարվել է արարքը:

Հանցագործության կատարման իրավիճակ (պայմաններ) ասելով՝ պետք է հասկանալ այն հանգամանքները, որոնցում կամ որոնց առկայությամբ կատարվել է հանցագործությունը: Մակայն այս հատկանիշը խուլիզանության օբյեկտիվ կողմի ֆակտուտատիվ հատկանիշ է: Այնուամենայնիվ, արարքին ճիշտ իրավական գնահատական տալու համար դրա կարևորությունը չի կարելի թերագնահատել, քանի որ առաջին հերթին արարքի պայմանները հաշվի առնելը դրա կատարման եղանակի և հետևանքների հետ մեկտեղ հնարավորություն են տալիս որոշել արարքի շարժառիթը, և համապատասխանաբար, սահմանազատել հարակից հանցագործություններից, և երկրորդ՝ իրավիճակը, որում կատարվել է արարքը, հիմնականում ցույց է տալիս հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունքի առկայությունը (բացակայությունը):

Խուլիզանական դրդումների առկայության մասին խոսում են այնպիսի պայմաններ, որոնք վկայում են, որ մեղավորի գործողությունները օբյեկտիվորեն ազդում են ոչ միայն անհատի, այլև ամբողջ հասարակության շահերի վրա: Այդպիսի պայման կարող է լինել այլ անձանց համար արարքի ակնհայտությունը, արարքի կատարման ժամանակ այլ անձանց ներկայությունը, որոնք հանցագործի արարքը ընկալում են որպես իրենց անվտանգությանը սպառնացող, անդորրը խանգարող և այլն:

§3. Խուլիզանության սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը

Խուլիզանության սուբյեկտի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է բացահայտել հանցավորի անձ հասկացությունը:

Հանցավորի անձը կրիմինոլոգիայի մեջ սովորաբար սահմանվում է որպես սոցիալական էական հատկությունների, հատկանիշերի, կապերի և հարաբերությունների ամբողջություն, որոնք բնութագրում են քրեաիրավական արգելքը խախտողին: Հանցավորի անձի կառուցվածքում առանձնանում են մի քանի ենթահամակարգեր, բաղադրիչներ, հատկանիշներ (սոցիալ-ժողովրդագրական, սոցիալ-դերային, իրավական և բարոյահոգեբանական): Հանցավորի անձը անցնում է կյանքի տարբեր փուլեր, որի ընթացքում նրա մոտ կարող են ձևավորվել և դրսևորվել քրեածին և քրեական հատկանիշներ, իսկ ոմանց մոտ՝ հակակրիմինալ, դրական միտումներ:

Խուլիզանի անհատականության ձևավորման առանձնահատկությունները

բացահայտելու տեսանկյունից ուշադրության է արժանի «քրեածին անձ» հասկացությունը, որը «հանցավոր անձ» հասկացության բացատրությունն է և արտացոլում է հանցագործություն կատարելու և կրկնելու նախատրամադրված սուբյեկտի հատկությունները: Հանցավորությունը մարդու մեջ ձևավորված սուբյեկտիվ հատկությունների համադրություն է, որը կրիտիկական զանգվածին հասնելու պահին առաջացնում է նոր էֆեկտ՝ անօրինական կերպով գործելու կարողություն: Անհատի հանցավորությունը ձևավորվում է նախքան հանցագործություն կատարելը, կազմվում է դրա կատարման պահին, գոյություն ունի (կարող է գոյություն ունենալ) նաև քրեական պատասխանատվության իրականացումից հետո՝ հանդիսանալով հանցագործության կրկնության նախապայման:

Այսպիսով, եթե «հանցավորի անձ» հասկացությունը ենթադրում է անձի կողմից արդեն իսկ կատարված հանցագործության առկայություն և «իր ամբողջական տեսքով գոյություն ունի հանցագործության կատարման պահին», ապա «քրեածին անձ» տերմինը ներառում է անձի հատկությունները իրենց զարգացման մեջ ինչպես հանցագործության կատարումից առաջ, այնպես էլ դրա կատարման ընթացքում և դրանից հետո, այսինքն՝ դա դիմամիկ հասկացություն է:

Հանցագործի անձի սոցիալ-ժողովրդագրական նկարագրությունը հիմնված է առաջին հերթին այնպիսի հատկությունների վրա, ինչպիսիք են սեռը և տարիքը: Խուլիգանություն կատարողների ճնշող մեծամասնությունը տղամարդիկ են: Մա հավաստվում է վիճակագրությամբ. 2017-2021 թթ. խուլիգանությունների միայն 2,5%-ն է կատարվել կանանց կողմից: Այս իրավիճակը բացատրվում է տղամարդկանց և կանանց սոցիալական դերերով, սեռերի հոգեֆիզիկական առանձնահատկություններով, ինչպես նաև այն փաստով, որ այդպիսի հանցագործությունները հաճախ կատարվում են ակոհոլային հարբեցողության պայմաններում: Իսկ հարբեցողությունը հիմնականում բնորոշ է տղամարդկանց:

Խուլիգանություն կատարած անձանց տարիքային կատեգորիայի հարաբերակցությունը ցույց է տալիս, որ հիմնական մասը կազմում են 18-40 տարեկան անձինք: Խուլիգանություն կատարած անձանց կրթական մակարդակը, որպես կանոն, բարձր մակարդակի վրա չէ:

Ամփոփելով՝ մենք կքննարկենք խուլիգանի անձի հոգեբանական առանձնահատկությունները: Քրեագետների դիտարկումների համաձայն՝ հանցագործություններ կատարած մի շարք անձանց բնութագրական է անգիտակցական ցանկությունը «դուրս գալ իրենց «Ես»-ի սահմաններից, բարձրանալ, ըստ իրենց, ավելի բարձր մակարդակի: Նրանք կարիք ունեն «դուրս գալ» առօրյա ընդհանուր կյանքից, զգալ իրենց ուժեղ, աչքի ընկնել, կատարել ոչ սովորական արարք, որը նրանց վեր է դասում մյուսներից: Հաճախ այդպիսի վարքագիծը թելադրված է ներքին անգիտակցական դրդումներով: Այս առումով, նրանք վատ են յուրացնում հասարակության պահանջները, ավելի հեշտ են խախտում հասարակական ար-

գեղքները և ավելի հեշտ ընդունում արարքների հանցավոր եղանակները: Այս պնդումները լիովին վերաբերվում են խուլիգանի անձին:

Խուլիգանի անձը հոգեբանական առանձնահատկություններով էապես տարբերվում է ինչպես օրինապաշտ քաղաքացիներից, այնպես էլ այլ հանցագործություններ կատարած անձանցից: Դա արտահայտվում է ընդգծված եսասիրությամբ, հասարակության մեջ ընդունված վարքագծի կանոնների մեծամասնության մերժմամբ, համամարդկային արժեքների անտեսմամբ և ուրիշներից «վեր բարձրանալու» ցանկությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտող այլ գործողությունների կատարման մեջ:

Խուլիգանությունը և խուլիգանական դրդումներով կատարվող այլ հանցագործությունները պետք է դիտարկվեն որպես ագրեսիայի դրսևորման յուրօրինակ տեսակ, իսկ այդ գործողությունների կատարման ընթացքում բռնության գործադրման կամ դրա սպառնալիքի դեպքում՝ նաև դաժանության դրսևորում: Չնայած այն հանգամանքին, որ ագրեսիան և դաժանությունը որոշ չափով բնորոշ են գրեթե ցանկացած անձի՝ խուլիգանների և այլ բռնի հանցագործների դեպքում այդ հատկությունները ձեռք են բերում գերաճած հատկանիշներ:

Ագրեսիվությունն ու դաժանությունը դառնում են անձի կայուն հատկանիշներ ոչ թե ակնթարթորեն, այլ աստիճանաբար՝ նրա սոցիալականացման ընթացքում:

Սոցիալականացման գործընթացում կան մի քանի հանգամանքներ, որոնք պայմանավորում են համապատասխան մոտիվացիոն ոլորտի ձևավորումը և որպես հետևանք, դիտարկվող հանցագործության կատարումը: Դրանք են՝ ոչ բարեկեցիկ ընտանիքը, ընտանիքի անբավարար նյութական ապահովվածությունը, կրթական հաստատությունների կրթական և ուսուցողական գործառնության բացակայությունը կամ թուլությունը, ոչ ֆորմալ միջավայրի բացասական ազդեցությունը:

Այսպիսով, խուլիգանությունը բնութագրվում է այս արարքի տարածվածությամբ, որը կատարվում է հիմնականում հասարակական վայրերում շատ դեպքերում ակոհոլային հարբեցողության վիճակում գտնվող անձանց կողմից:

Հանցագործության հաջորդ տարրը դա սուբյեկտիվ կողմն է: Այն մեղավոր անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կողմից կատարված և քրեական օրենսդրությամբ որպես հանցագործություն նախատեսված հանրորեն վտանգավոր արարքի նկատմամբ:

Սուբյեկտիվ կողմը բնութագրում է մեղավոր անձի հոգեբանության մեջ տեղի ունեցող գործընթացները և ենթակա չէ մարդկային զգայարանների կողմից ուղղակի ընկալմանը, բայց այն կարող է հաստատվել հանցագործի վարքագիծը վերլուծելու և գնահատելու միջոցով:

Քրեական իրավունքի տեսության մեջ հանցակազմի սուբյեկտիվ կողմի բովանդակությունը բացահայտվում է այնպիսի հատկանիշների օգնությամբ, ինչ-

պիսիք են մեղքը, շարժառիթը, նպատակը և հույզերը: Միևնույն ժամանակ, մեղքը հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է, իսկ շարժառիթն ու նպատակը գործում են որպես դրա ֆակուլտատիվ հատկանիշներ և որպես կանոն՝ ձեռք են բերում պարտադիր կարգավիճակ, եթե դրանք քրեական օրենսգրքի կոնկրետ հոդվածում նշված են որպես այդպիսին:

Գործող քրեական օրենսգրքում էական փոփոխությունների է ենթարկվել մեղքի ինստիտուտը: Մեղքի բնորոշման մեջ նշվում է արարքի հակաիրավակա-նությունը գիտակցելու մասին: Այսպես՝ «Քրեական օրենսգրքով նախատեսված պատժի սպառնալիքով արգելված արարքը համարվում է մեղավորությամբ կատարված, եթե այն կատարողը գիտակցել է իր արարքի հակաիրավականությունը կամ թեև չի գիտակցել, բայց կարող էր գիտակցել դա»:

Քրեաիրավական իմաստով դրդումը սովորաբար սահմանվում է որպես շարժառիթ, որով առաջնորդվել է հանցագործություն կատարած անձը: Դրդումը պայմանավորված է անձի ներքին պահանջմունքներով և ցանկություններով, որոնք անձի մոտ առաջացնում են հանցագործության կատարման վճռականու-թյուն, և որոնցով նա առաջնորդվում է այն կատարելիս:

Հանցագործության նպատակը, ինչպես շարժառիթը, համարվում է ֆակուլ-տատիվ հատկանիշ: Այն սերտորեն կապված է շարժառիթի հետ, բայց բնութագ-րում է կամային գործընթացի բոլորովին այլ կողմ՝ որոշելով գործունեության ուղղությունը: Այլ կերպ ասած՝ հանցագործության նպատակը այն ցանկալի ար-դյունքն է, որին անձը ձգտում է հասնել հանցագործություն կատարելու միջոցով:

Ելնելով նշված տեսական դրույթներից՝ վերլուծենք խուլիգանության սուբյեկ-տիվ կողմը: Գիտնականների մեծ մասը հիմնավոր կերպով պաշտպանում է այն կարծիքը, որ խուլիգանությանը բնորոշ է բացառապես ուղղակի դիտավորությու-նը: Միևնույն ժամանակ, որոշ գիտնականներ այն կարծիքին են, ըստ որի՝ այս հանցագործությունը կարող է կատարվել ոչ միայն ուղղակի, այլև անուղղակի դի-տավորությամբ:

Գործող քրեական օրենսգրքում ուղղակի դիտավորությունը սկզբում սահ-մանվում է դիտավորության ընդհանուր հատկանիշը ներկայացնելով, այն է՝ անձը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազ-մի հատկանիշ են: Այնուհետև ներկայացվում է արարքի նկատմամբ անձի վերա-բերմունքը. արարքը կատարելը նրա նպատակն է կամ նպատակին հասնելու միջոցը: Ձևական հանցակազմներում հանրորեն վտանգավոր հետևանքները հան-ցակազմի հատկանիշ չեն, ուստի հանցանք կատարողի գիտակցական և կամային վերաբերմունքը դրսևորվում է ոչ թե հետևանքների, այլ կատարվող արարքի նկատմամբ: Անուղղակի դիտավորության դեպքում անձը գիտակցում է իր արար-քի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են, ու թեև այդ արարքը կատարելը և տվյալ հանցանքն իրականացնելը նրա նպատա-կը չէ, այնուամենայնիվ կատարում է դա: Սակայն խուլիգանության դեպքում այդ

արարքը կատարելը անձի նպատակն է կամ նպատակին հասնելու միջոցը: Անձը խուլիզանությունը կատարում է, քանի որ նպատակ ունի ընդգծել սեփական անձի առավելությունները, ցույց տալ իր արհամարանքը հասարակության մեջ ընդունված կանոնների նկատմամբ: Ուստի կասկածի տակ չի կարող դրվել այն կարծիքը, որ խուլիզանությունը կարող է կատարվել մեղքի միայն մեկ ձևով՝ ուղղակի դիտավորությամբ:

Մեղքի ձևը որոշվում է գիտակցական և կամային վերաբերմունքի բնույթով: Գիտակցական հատկանիշը արտահայտվում է մեղավորի կողմից իր արարքի այն փաստական հանգամանքների տեղեկացվածության մեջ, որոնք խուլիզանության հանցակազմի հատկանիշ են: Նա կատարում է գործողություններ, որոնցով հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք է ցուցաբերում: Որոշիչ գործոնն այն է, որ մեղավորը գիտակցի իր արարքի հակաիրավականությունը, ընդ որում՝ շատ կարևոր է նաև, որ նա հնարավորություն ունենա դա գիտակցելու:

Խուլիզանության սուբյեկտիվ կողմը դիտարկելիս մեծ նշանակություն ունի արարքի շարժառիթի սահմանումը: Քրեական իրավունքի տեսության մեջ շարժառիթը որպես կոնկրետ հանցագործությունների սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ համարելու երկու պայման կա. 1) շարժառիթի ուղղակիորեն առկայությունը քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում, 2) շարժառիթի առկայությունը բխում է հատուկ մասի իրավական բնույթից և որոշվում է այս նորմը քրեական օրենսգրքի հատուկ մասի այլ նորմերի հետ համեմատելով:

Քրեական նախկին օրենսգրքի 258–րդ հոդվածում խուլիզանական դրդումի սահմանումը տրված չէր, միայն նշված էր դրա արտաքին դրսևորումը՝ հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի տեսքով: Մեր կարծիքով՝ նշված հանգամանքը օրենսդիրի էական բացթողում էր, որն ուղղակիորեն ազդում էր արարքի որակման ճշգրտության և, որպես արդյունք, միատեսակ իրավակիրառության վրա: Սակայն այս բացը լրացվեց Վճռաբեկ դատարանի կողմից խուլիզանական դրդումի սահմանմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խուլիզանությունը կարող է կատարվել խուլիզանական դրդումներով, որը դրսևորվում է հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու ձգտմամբ: Խուլիզանական դրդումների հիմքում ընկած են նաև անձի անգուսպ եսամոլությունը, սեփական անձի առավելությունն ընդգծելու միջոցով ներքին բավականություն ստանալու, զվարճանալու ձգտումը:

Խուլիզանություն կատարող անձն ինքնահաստատվում է, ձգտում հակահասարակական վարքագծով ապացուցել իր անկախությունը հասարակության մեջ

ընդունված վարքագծի կանոններից, իր անձը հակադրելով հասարակությանը՝ ցույց տալ իր գերակայությունը և այլն:

Արարքը խուլիզանություն կամ այլ հանցագործություն որակելու հարցի լուծումը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կախված է արարքի շարժառիթից, ինչպես նաև հանցավորի հետապնդած նպատակից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ խուլիզանական դրդումներն անհրաժեշտ է սահմանազատել արարքը կատարելու պահին անձի մոտ առկա հուզական վիճակից, որն անձի մոտ առաջացնում է լարվածություն, էմոցիոնալ բռնկվածություն և այլն: Մասնավորապես, եթե արարքը սկսվել է կենցաղային հողի վրա առաջացած վեճի կամ տուժողի հակաօրինական կամ հակաբարոյական վարքագծի հետևանքով, ապա անհրաժեշտ է պարզել՝ անձի արարքը (հայեցողություններ տալը կամ այլ վարքագիծը) ստեղծված իրավիճակին համարժեք հուզական դրսևորում է, թե՞ ուղղված է դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելուն, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ հանցավորի վարքագիծն ուղղված է կոնկրետ անձի, պայմանավորված է նրա հակաօրինական կամ հակաբարոյական վարքագծով և հանդիսանում է հանցավորի հուզական վիճակի արտահայտություն, խուլիզանության հանցակազմը բացակայում է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արարքը խուլիզանություն կարող է որակվել այն դեպքում, երբ անձի մոտ առկա են խուլիզանական դրդումներ: Վերոգրյալի հետ մեկտեղ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ արարքը խուլիզանություն կարող է որակվել նաև այն դեպքերում, երբ անձի մոտ առկա են հանցանքի կատարման այլ դրդումներ, սակայն հանցանքի կատարման ընթացքում ձևավորվում են խուլիզանական դրդումներ¹²:

Ճիշտ է, Վճռաբեկ դատարանի նշված որոշումը վերաբերում է խուլիզանության նախկին հանցակազմին, սակայն գտնում ենք, որ այն արդիական և կիրառելի է նաև հիմա: Արարքը չի կարող որակվել որպես խուլիզանություն՝ առանց անձի գործողություններում խուլիզանական դրդումները հաստատելու:

Որոշ դեպքերում խուլիզանությունը կարող է կատարվել կենցաղային հողի վրա առաջացած վեճի արդյունքում: Այս դեպքում նախ անհրաժեշտ է պարզել, թե ո՞վ է հանդիսացել վեճը նախաձեռնողը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը չի կարող որակվել որպես խուլիզանություն, եթե վիճաբանությունն առաջանում է տուժողի ոչ իրավաչափ վարքագծի հետևանքով և, հետևաբար, հանցանք կատարած անձի մոտ բացակայում են

¹² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի որոշումը ԱՎԳ/0014/01/11 գործի վերաբերյալ, 24-27-րդ կետեր: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=76838> (մուտք՝ 20.08.2023):

խուլիգանական դրդումները: Նման պարագայում արարքը կարող է խուլիգանություն որակվել միայն այն դեպքում, երբ խուլիգանական դրդումներն առաջանան հետագայում և արարքը վերաճի խուլիգանության¹³:

Միևնույն ժամանակ, հանցագործությունը որակելիս անընդունելի է դրա կատարման խուլիգանական դրդապատճառների վերաբերյալ եզրակացություն անել միայն այն հիմքով, որ որևէ այլ դրդապատճառ բացակայում է, կամ դրդապատճառ չկա ընդհանրապես:

Խուլիգանական դրդումների առկայության մասին կարող են վկայել հետևյալ օբյեկտիվ գործոնները.

- ա) արարքը հասարակական վայրում կատարելը,
- բ) արարքի կատարումը, չնայած ոչ հասարակական վայրում (իր սովորական իմաստով), բայց այլ անձանց համար ակնհայտության պայմաններում (օրինակ՝ անտառում՝ զբոսաշրջության ճամբարում),
- գ) տուժողի կողմից սադրանքի բացակայությունը, հանցագործությունը կատարելը արտաքին պատճառի բացակայության կամ ակնհայտ աննշանության պայմաններում:

Խուլիգանական դրդումի մասին կարող է խոսել կամ մատնանշված գործոնների համադրությունը, կամ դրանցից մեկը: Այս շարժառիթի առկայության վերաբերյալ վերջնական եզրակացությունը կարող է արվել միայն արարքի՝ իրավական նշանակության ունեցող բոլոր հատկանիշներն ուսումնասիրելուց հետո:

Շարժառիթը որոշում է արարքի նպատակը: Դրանք միասին ծառայում են որպես մեղավորության ձևավորման հիմք և ցույց են տալիս դիտավորության ուղղությունը: Ըստ այդմ՝ խուլիգանությունը և խուլիգանական դրդումներով այլ հանցագործությունները բնութագրվում են նրանով, որ դրանց իրականացման գլխավոր նպատակը, առաջին հերթին, հասարակական կարգը խաթարելն է:

Ինչ վերաբերում է խուլիգանության նպատակին, ապա պետք է նշել, որ քրեական իրավունքի տեսության մեջ տեսակետ կա, որ խուլիգանության նպատակը պետք է որոշվի միայն քրեաիրավական իմաստով՝ այսինքն այն պետք է հասկանալ որպես հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու անձի ցանկություն: Այս դիրքորոշումը չի կարող ճիշտ համարվել, քանի որ անհրաժեշտ է տարբերակել ուղղակի դիտավորության անբաժանելի մաս համարվող նպատակը հանցագործության սուբյեկտիվ կողմի անկախ հատկանիշ համարվող նպատակից: Առաջին դեպքում նպատակը օբյեկտիվ կողմի արտացոլումն է և ունի նյութական օբյեկտիվ մարմնավորում վերջինիս հատկանիշների մեջ, որոնք նշված են քրեական օրենսգրքի Հատուկ մասի կոնկրետ հոդվածում: Նպատակը՝ որպես հանցագործության սուբյեկտիվ կողմի

¹³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի որոշումը ԱՎԳ/0014/01/11 գործի վերաբերյալ, 28-րդ կետ: [https://www.arlis.am/documentview.aspx?docID=76838\(մուտք՝ 20.08.2023\):](https://www.arlis.am/documentview.aspx?docID=76838(մուտք՝ 20.08.2023):)

անկախ հատկանիշ, չունի այդպիսի մարմնավորում: Այն բնութագրում է հանցագործի հոգեբանական վերաբերմունքը հանցագործության հանցակազմից դուրս գտնվող հետևանքների նկատմամբ, այսինքն՝ նրանց, որոնք նշված չեն քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում որպես տվյալ հանցագործության հանցակազմի հատկանիշ:

Ըստ այդմ նպատակը՝ որպես հանցագործության սուբյեկտիվ կողմի ինքնուրույն հատկանիշ, միշտ կապվում է հետևանքների հետ, որոնք ընկած են կոնկրետ հանցակազմի շրջանակներից դուրս, բայց ոչ գործողությունների հետ, իսկ խուլիգանության ընթացքում հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունքը արարքի սոցիալական բնութագրերն են, որոնք նախատեսված են գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածում:

Հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք արտահայտելու ցանկությունը խուլիգանություն կատարելիս դիտավորության կամային հատկանիշի բաղադրիչն է, ոչ թե սուբյեկտիվ կողմի ինքնուրույն հատկանիշ համարվող նպատակը:

Չնայած այն հանգամանքին, որ նպատակը խուլիգանության ֆակուլտատիվ հատկանիշն է՝ անհրաժեշտ է պարզել դրա առկայությունն ու բովանդակությունը այն ոտնձգությունը որակելու յուրաքանչյուր դեպքում, որն արտաքնապես նման է քննարկվող արարքին կամ խուլիգանական դրդումներով կատարված այլ հանցագործությանը: Դա անհրաժեշտ է արարքի շարժառիթը ճիշտ որոշելու, և այն հարակից հանցագործություններից սահմանազատելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ խուլիգանությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ արարքում խուլիգանական դրդումների պարտադիր արտացոլմամբ, որոնք որոշում են գործողության ուղղությունը:

ԳԼՈՒԽ 2. Խուլիգանության հարաբերակցությունը այլ հանցագործությունների հետ և սահմանազատումը այլ արարքներից

§1. Խուլիգանության սահմանազատումը հարակից հանցագործություններից

Ավելի վաղ մենք արդեն քննարկել ենք հարակից հանցագործություններից խուլիգանության սահմանազատման որոշ առանձնահատկություններ: Այս պարագրաֆում այդ առանձնահատկությունները ավելի մանրամասն կվերլուծենք:

Քրեական նախկին օրենսգրքով խուլիգանության հանցակազմը հարաբերակցվում էր մարդու կյանքի և առողջության, սեփականության, հասարակական կարգի, պետական իշխանության դեմ ուղղված այնպիսի հանցագործությունների հետ ինչպիսիք էին. 1) խուլիգանական դրդումներով կատարված սպանություն-

նը, խուլիգանական դրդումներով առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը, 2) ծեծը (համապատասխանում է գործող քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածին), 3) սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույքը ոչնչացնելու սպառնալիքը (համապատասխանում է գործող քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածին), 4) գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, 5) վանդալիզմը (սպաքրեականացվել է), 6) իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը (համապատասխանում է գործող քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածին):

Գործող քրեական օրենսգրքում սահմանազատման այդ խնդիրը չի առաջանում, և եթե անձը խուլիգանությունից բացի կատարում է վերը նշված հանցագործություններից որևէ մեկը, սպա նրա արարքը որակվում է համակցությամբ՝ խուլիգանություն և կոնկրետ հանցագործություն: Օրինակ՝ եթե անձը խուլիգանական դրդումներով առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելուց բացի կատարում է նաև խուլիգանության օրգանական մաս կազմող այլ գործողություններ, սպա արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ՝ գործող քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով և 297-րդ հոդվածի 1-ին մասով: Իսկ եթե խուլիգանությունը արտահայտվում է միայն առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով, սպա արարքը պետք է որակվի միայն գործող քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասին 12-րդ կետով:

Քրեական օրենսդրության, ինչպես նաև քննչական և դատական պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել գործող քրեական օրենսգրքում առկա հասարակական կարգի և անվտանգության դեմ ուղղված հետևյալ հանցագործությունները, որոնցից անհրաժեշտ է տարբերակել խուլիգանությունը. 1) զանգվածային անկարգություններին մասնակցելը (գործող քրեական օրենսգրքի 327-րդ հոդված), 2) դիակն անարգանքի ենթարկելը (գործող քրեական օրենսգրքի 305-րդ հոդված), 3) գերեզմանն անարգանքի ենթարկելը (գործող քրեական օրենսգրքի 306-րդ հոդված): Ի դեպ՝ տարբերակման այս խնդիրը կար նաև քրեական նախկին օրենսգրքում:

Չանգվածային անկարգությանը մասնակցելը տարբերվում է խուլիգանությունից, առաջին հերթին, ոտնձգության հիմնական օբյեկտով (հասարակական անվտանգության), օբյեկտիվ կողմի բարդությամբ: Որպեսզի անձի արարքը որակվի նշված հոդվածով, անհրաժեշտ է, որպես կանոն, մեկից ավելի անկարգություն կատարող՝ այն զանգվածային համարելու համար: Չանգվածային անկարգություններ են համարվում հասարակական անվտանգությանն սպառնացող զանգվածային անկարգություններին մասնակցելը, եթե մասնակցի արարքը զուգորդվել է բռնություն գործադրելով կամ անձի կյանքը կամ առողջությունը վտանգող այլ արարքի կատարմամբ, հրկիզումով, գույք ոչնչացնելով կամ վնասելով, հրագեն, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք գործադրելով կամ այդ գործողություն-

ները կազմակերպելով կամ ղեկավարելով: Օբյեկտիվ կողմի բարդությունն այն է, որ արարքը միաժամանակ զուգորդվում է այնպիսի գործողությունների հետ, ինչպիսիք են բռնություն գործադրելը կամ անձի կյանքը կամ առողջությունը վտանգող այլ արարքի կատարումը, հրկիզումը, գույք ոչնչացնելը կամ վնասելը, հրազեն, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք գործադրելը: Այս հանցագործության օբյեկտիվ կողմը ոչ միայն վերը նշված գործողություններն են, այլ նաև դրանց կազմակերպումը կամ ղեկավարումը: Չանգվածային անկարգության մասին, որպես կանոն, կարող են վկայել բռնության, հրկիզումների, գույք ոչնչացնելու և այլ գործողությունների կատարումն առավել ընդգրկուն տարածքներում, գործողությունների առավել տևականությունը, կատարողների և պատճառված վնասների մեծաքանակությունը:

Մեր կարծիքով՝ զանգվածային անկարգություններ իրականացնելու գործընթացում կարող են իրականացվել խուլիգանության օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների մեծ մասը: Նման գործողություններն այս պարագայում անկարգությունների օրգանական մասն են կազմում և չեն պահանջում լրացուցիչ որակավորում: Սակայն, եթե զանգվածային անկարգությունները կատարվել են խուլիգանական շարժառիթներով, ապա արարքը պետք է նաև լրացուցիչ որակել որպես խուլիգանություն:

Դիակն անարգանքի ենթարկելը սահմանվում է որպես դիակը պղծելը, ապօրինի արտաշիբիմելը, նրա հագուստը կամ նրա վրա գտնվող այլ իրը վերցնելը կամ մահացածի հիշատակն այլ կերպ անարգելը: Գերեզմանն անարգանքի ենթարկելը սահմանվում է որպես մահացածին թաղելու վայրը կամ գերեզմանի վրա եղած շինությունը կամ առարկան ոչնչացնելը, վնասելը կամ պղծելը: Այս հանցագործությունների առարկաններն են հանդիսանում դիակը, թաղման վայրը, գերեզմանի վրա եղած շինությունն ու առարկան, իսկ խուլիգանության դեպքում որպես առարկա հանդես է գալիս հասարակական կարգը: Խուլիգանական դրդումները հանդես են գալիս որպես հիշյալ հանցագործությունների ֆակուլտատիվ հատկանիշ, բայց խուլիգանության սուբյեկտիվ կողմի անբաժանելի մասն են: Հենց այդ հատկանիշն է առավելապես հնարավորություն տալիս սահմանազատել այս երկու հանցագործությունները: Բացի դրանից խուլիգանության օբյեկտիվ կողմը՝ հասարակական կարգը խախտող գործողությունները, ավելի լայն է, իսկ դիակը կամ գերեզմանը անարգանքի ենթարկելու օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները հասարակական կարգը խախտող գործողությունների միայն մի մասն են կազմում:

Խուլիգանությունը այլ հանցագործություններից սահմանազատելու գլխավոր տարրերն են. հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունքը և խուլիգանական դրդումները:

Այսպիսով, մենք քննարկեցինք իրավապահ մարմինների պրակտիկ գործու-

նեության ընթացքում ամենաշատ հանդիպող դեպքերը, որոնք պահանջում են խուլիզանության սահմանազատում այլ հանցագործություններից: Դա պետք է իրականացվի՝ կախված հանցագործների դիտավորության բովանդակությունից և ուղղությունից, դրդապատճառներից, նպատակներից, արարքի կատարման եղանակից և այլ հանգամանքներից:

§ 2. Խուլիզանության ծանրացնող հանգամանքները

Գործող քրեական օրենսգրքում նախատեսվել են խուլիզանության հետևյալ ծանրացնող հանգամանքները՝ արարքը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից, ,
- 2) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ կամ
- 3) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով,
- 4) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով:

Գործող քրեական օրենսգրքում չեն նախատեսվել խուլիզանության այնպիսի ծանրացնող հանգամանքներ, ինչպիսիք էին բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով խուլիզանությունը, կազմակերպված խմբի կողմից խուլիզանությունը, իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով, անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով, բացառիկ ցինիզմով զուգորդված խուլիզանությունը, զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիզանությունը:

Եթե իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն է ցույց տրվել, սպա արարքը պետք է որակել որպես խուլիզանություն և վարչական իրավախախտում: Եթե իշխանության ներկայացուցչի նկատմամբ ինտենսիվ դիմադրություն, բռնություն է գործադրվել, սպա արարքը պետք է որակել նաև 452-րդ հոդվածի 3-րդ մասով պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու նպատակով պաշտոնատար անձի կամ նրա մերձավոր ազգականի, կամ մերձավորի, կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելը: Այդ դեպքում առողջությանը վնասի պատճառումը չի որակվում՝ բացառությամբ առողջությանը պատճառված ծանր վնասի: Եթե զենք է օգտագործվել, սպա արարքը կորակվի համակցությամբ, եթե զենքն անօրինական է եղել:

Խուլիզանությունը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից, արարքը որակյալ դարձնող հատկանիշ է և նախատեսված է գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Օրենքի սահմանումից հետևում է, որ արարքի որակման համար կապ չունի խմբի կողմից խուլիզանությունը կատարվել է նախնակա՞ն, թե՞ առանց նախնական համաձայնության: Երկու դեպքում էլ գործ ունենք համակատարման՝ խմբի անդամների կողմից խուլիզանության կատարման հետ:

Ինչպես նշեցինք, արարքը կազմակերպված խմբի կողմից կատարելը որպես ծանրացնող հանգամանք հանվել է խուլիզանության հանցակազմից: Սակայն, եթե խուլիզանությունը կատարվի հանցավոր կազմակերպության կողմից, ապա արարքը կրկին կորակվի գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Նախկինում օրենսդիրը մի խումբ անձանց կողմից կատարված խուլիզանության համար պատասխանատվությունը կապում էր քրեական նախկին օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի հետ: Այսինքն՝ արարքը որակվում էր խմբի կողմից կատարված միայն այն դեպքում, երբ առկա էր քրեական նախկին օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասում նշված բռնությունը կամ դրա սպառնալիքը, կամ գույքի ոչնչացումը կամ վնասումը: Ուստի խմբի կողմից քրեական նախկին օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խուլիզանության կատարման դեպքում հանցավորի արարքը չէր կարող որակվել քրեական նախկին օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ որպես մի խումբ անձանց կողմից կատարված: Խմբի առկայության նման դեպքում, փաստորեն, հանցակիցներից յուրաքանչյուրի արարքը ենթակա էր որակման քրեական նախկին օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով, չնայած այն իր բնույթով, բնականաբար, ավելի վտանգավոր արարք էր, քան քրեական նախկին օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նույն հանցագործությունը մեկ անձի կողմից կատարելը:

Գործող քրեական օրենսգրքում այս խնդիրը առկա չէ, քանի որ 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված ծանրացնող հանգամանքը վերաբերում է 297-րդ հոդվածի 1-ին մասին, իսկ բռնության, դրա սպառնալիքի, գույքի ոչնչացման կամ վնասման հետ կապված ծանրացնող հանգամանքը հանվել է խուլիզանության հանցակազմից: Վերջինի մասին արդեն բազմիցս նշել ենք:

Խմբի կողմից խուլիզանության կատարման դեպքում խմբի յուրաքանչյուր անդամի գործողություն ենթակա է որակման գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով որպես ծանրացնող հանգամանք է նախատեսվում արարքն անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը: Գործող քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անօգնական վիճակում գտնվող է համար-

վում այն անձը, որն իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված՝ ի վիճակի չէ դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը: Արարքն անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը, որպես ծանրացնող հանգամանք, նախկինում ևս առկա էր քրեական օրենսգրքի հատուկ մասի մի շարք հոդվածներում, սակայն այդ հասկացության բացատրությունը քրեական նախկին օրենսգրքով տրված չէր:

Խուլիզանության հաջորդ ծանրացնող հանգամանքը արարքի կատարումն է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով: Նշված ծանրացնող հանգամանքը բացահայտելու համար անհրաժեշտ է հղում կատարել բլանկետային նորմերին, որոնք են՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքները:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ հասկացությունը ներառում է բոլոր այն միջոցները, որոնք ծառայում են տեղեկատվության ստեղծման, պահպանման, մշակման և զանգվածային լսարանին փոխանցման համար: Նշված տեխնոլոգիաների զարգացումը հասել է մի մակարդակի, երբ կյանքի ոլորտների մեծ մասն անհնար է դարձել առանց դրանց օգտագործման: Այս զարգացումը ոչ միայն նոր հնարավորություններ է բացում հասարակության և պետության համար, այլև հանցագործներին զինում է հանցագործությունների կատարման նոր մեթոդներով, ինչպես նաև լրացուցիչ հանցավոր սպառնալիքներ է ստեղծում հասարակական կյանքի բազմաթիվ ոլորտների համար: Ինչպես գիտենք, խուլիզանության դեպքում անձը ցանկանում է, ցույց տալ իր արհամարական վերաբերմունքը հասարակության, նրանում ընդունված վարքագծի կանոնների և նորմերի նկատմամբ: Իսկ վերը նշված տեխնոլոգիաները ավելի լայն հնարավորություններ են տալիս՝ անձին իր հանցավոր դիտավորությունը իրականացնելու: Այս տեխնոլոգիաների օգտագործման միջոցով խուլիզանություն կատարելու դեպքում հասարակության մեծ թվով անդամների է անհանգստություն պատճառվում, որի արդյունքում մեծանում է արարքի հանրային վտանգավորությունը: Ուստի արդարացված է խուլիզանության հանցակազմում այս ծանրացնող հանգամանքի նախատեսումը:

297-րդ հոդվածի 3-րդ մասում որպես առավել ծանրացնող հանգամանք է նախատեսված հոդվածի 1-ին համ 2-րդ մասով նախատեսված արարքի կատարումը զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ, կամ դրա գործադրման սպառնալիքով: Սա խուլիզանության ամենավտանգավոր տեսակն է: Սակայն գտնում ենք, որ խուլիզանության արդյունքում խայթարվող հասարակական հարաբերությունների բնույթը, ինչպես նաև տուժողին հասցվող վնասի աստիճանը էապես պայմանավորված չպետք է լինի այն հանգամանքով,

թե հանցագործության գործիքը՝ որպես զենք օգտագործվող առարկան, նախապես հարմարեցված կամ պատրաստված է, թե՛ ոչ, և այն հանցավորի կողմից բերվել է, թե՛ վերցվել է դեպքի վայրից:

Իրավակիրառ պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ անձը, կատարելով խուլիզանություն, հանցագործության վայրից վերցնում է շիշ, քար և այլ առարկաներ ու դիտավորությամբ վնաս պատճառում տուժողին, ինչն էապես մեծացնում է անձի արարքի հանրային վտանգավորությունը: Որպես կանոն՝ դրանք իրենց վտանգավորության աստիճանով չեն զիջում նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկային կամ միջոցին:

Ուստի, իրավական որոշակիությունն ապահովելու և իրավակիրառ գործունեության ընթացքում բարդություններից խուսափելու նպատակով, անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություն և գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքի ծանրացնող հանգամանքից հանել առարկայի կամ միջոցի նախապես պատրաստված կամ հարմարեցված լինելու բաղադրիչը:

Քրեական նախկին օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասում որպես առավել ծանրացնող հանգամանք էր նախատեսված նույն հոդվածի երկրորդ համ երրորդ մասով նախատեսված արարքի կատարումը զենք կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ: Ինչպես տեսնում ենք, նախկինում արարքը որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիզանության հանցակազմով որակելու համար անհրաժեշտ չէր, որ այդ առարկաները հատուկ հարմարեցված լինեին. դրանք կարող էին վերցված լինել նաև դեպքի վայրից¹⁴: Սակայն անհրաժեշտ էր, որ անձը կատարեր 258-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքները: Ստացվում է, եթե խուլիզանության ընթացքում գործադրվեր զենք, սակայն չլինեին 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքները (բռնություն կամ դրա սպառնալիք, գույքը ոչնչացնել կամ վնասել և այլն), ապա արարքը պետք է որակվեր 258-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես հասարակ խուլիզանություն:

Այս հանգամանքով էլ պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը նշում էր, որ զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիզանության ծանրացնող հանգամանքը հանցավորին կարող է մեղսագրվել, եթե նշված առարկաների օգտագործումը գույքողվել է՝ ա) բռնություն գործադրելով, կամ բ) բռնություն գործադրելու սպառնալիքով, կամ գ) անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելով: Գործադրում ասելով՝ պետք է հասկանալ կամ նշված առարկաների փաստացի գործադրումը, կամ գործադրման փորձը, կամ դրա սպառնալիքը¹⁵:

¹⁴ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի հուլիսի 13-ի որոշումը ՎԲ-125/07 գործի վերաբերյալ: <https://www.arlis.am/documentView.aspx?docID=38639> (մուտք 20.08.2023):

¹⁵ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի ապրիլի 12-ի որոշումը ՏԳ/0085/01/14 գործի վերաբերյալ: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=116735> (մուտք 20.08.2023):

Սա սխալ իրավակարգավորում էր, քանի որ այդ դեպքում զենքի գործադրումը փաստացի հաշվի չէր առնվում, իսկ զենքով խուլիզանությունը իրականացնելը ավելի մեծ վտանգավորություն ունի, քան հասարակ խուլիզանությունը: Ինչպես տեսնում ենք գործող քրեական օրենսգրքով արարքը 297-րդ հոդվածի 3-րդ մասով որակելու համար չի պահանջվում բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի, կամ անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելու առկայությունը: Անհրաժեշտ է միայն խուլիզանությունը կատարել զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով: Օրինակ՝ այդպիսի իրավիճակ կարող է լինել խուլիզանության ընթացքում զենքով օդ կրակելը:

Ինչպես տեսանք, նշված առարկաների գործադրման սպառնալիքը առկա էր նաև Վճռաբեկ դատարանի վերը նշված որոշման մեջ, որն այժմ իր արտահայտությունն է գտել խուլիզանության հանցակազմի ծանրացնող հանգամանքում:

Մի խումբ անձանց կողմից կատարված խուլիզանությունը 297-րդ հոդվածի 3-րդ մասով որակելու համար բավարար է նրանցից թեկուզ մեկի մոտ զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի առկայությունը և դրա գործադրումը կամ գործադրման սպառնալիքը: Բայց մյուս հանցակիցները դրա մասին պետք է իմանան: Սակայն եթե մյուս հանցակիցները զենքի կամ առարկայի կամ միջոցի գործադրման մասին չգիտեն, կամ դեմ են արտահայտվել և փորձել են կանխել, ապա այն գործադրող հանցակցի արարքը պետք է որակվի որպես սահմանազանցում:

Խուլիզանությունը մի շարք դեպքերում կատարվում է ակոհոլի, թմրամիջոցների, հոգեմետ կամ թունավոր, կամ դրանց համարժեք նյութերի ազդեցության տակ: Հարբած (ոչ սթափ) վիճակը մեծացնում է ազդեսիվ, հակասոցիալական գործողությունների ռիսկը, և համապատասխանաբար, ավելացնում է խուլիզանության հետ կապված իրավախախտումների թիվը: Արարքը հարբած վիճակում կատարելը մեծացնում է վերջինիս հանրային վտանգավորությունը և ավելի մեծ անհանգստություն է պատճառում հասարակությանը: Եթե անձը խուլիզանությունը կատարում է հարբած վիճակում և զրկված չէ դրա հետևանքով արարքի հակաիրավականությունը գիտակցելու և այն դեկավարելու կարողությունից, դա խոսում է խուլիզանական դրդումների ավելի արտահայտված լինելու մասին: Ուստի կարծում ենք, որ անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություն և խուլիզանության ծանրացնող հանգամանքների մեջ ավելացնել արարքը հարբած (ոչ սթափ) վիճակում կատարելը:

Քրեական նախկին օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով սահմանված հանցակազմը նախատեսում էր քրեական նախկին օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այնպիսի արարքի կատարումը, որն անձի

առողջությանը պատճառել է միջին ծանրության վնաս: Խուլիզանության հանցակազմի համար այս ծանրացնող հանգամանքի նախատեսումը գործնականում որոշակի շփոթ էր առաջացնում՝ կապված քրեական նախկին օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված հանցակազմի, այն է՝ խուլիզանական դրդումներով առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու հետ: Քրեական նախկին օրենսգրքի 113-րդ հոդվածում որպես ծանրացնող հանգամանք արդեն իսկ նախատեսված էր խուլիզանական դրդումներով առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը: Սրա հետ կապված էլ գործող քրեական օրենսգրքում նշված ծանրացնող հանգամանքը նախատեսված չէ:

Քրեական նախկին օրենսգրքում որպես խուլիզանության ծանրացնող հանգամանք էր նախատեսված արարքի կատարումը, որը զուգորդվել է բացառիկ ցինիզմով: Բացառիկ ցինիզմն անձի խիստ անամոթ, լկտի վարքագծի դրսևորումն է և վերաբերմունքը հասարակության նկատմամբ: Բացառիկ ցինիզմը գործող քրեական օրենսգրքում նախատեսված չէ որպես ծանրացնող հանգամանք, սակայն այն որոշակի չափով իր արտահայտությունն է գտել և մանրամասնեցվել է հանցակազմի մեջ, քանի որ սահմանման մեջ նշված է «հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելը»: Համաձայն ենք նշված փոփոխությանը, քանի որ խուլիզանության հատկանիշներ հանդիսացող վերը նշված վերաբերմունքի դրսևորումն իր մեջ արդեն իսկ պարունակում է որոշակի ցինիզմ, բացի դրանից ցինիզմի բացառիկության որոշումը հանգեցնում էր սուբյեկտիվ մոտեցումների և առաջացնում էր դժվարություններ արարքի որակման հարցում:

Եզրակացություն

Խուլիզանության հանցակազմի ուսումնասիրության արդյունքում հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1. Քրեական օրենսդրությունում գնահատողական հատկանիշների առկայությունն անխուսափելի է, բայց դրանց թիվը պետք է նվազագույնի հասցվի, ինչն էլ կատարվել է խուլիզանության հանցակազմի սահմանման մեջ գործող քրեական օրենսգրքում: Եթե մենք ամբողջովին հրաժարվենք գնահատողական հատկացություններից, անհնար կլինի ձևակերպել խուլիզանության և որոշ այլ հանցագործությունների օրենսդրական սահմանումը: Խուլիզանությունը կարող է կատարվել բազմապիսի արարքներով և մի շարք օբյեկտների նկատմամբ, ուստի անհնար է խուլիզանության հանցակազմի մեջ նշել խուլիզանական բոլոր արարքները և այն օբյեկտները, որոնց ոտնձգում են այդ արարքները: Այսինքն հանցակազմում գնահատողական հատկանիշների առկայությունը անհրաժեշտություն է:
2. Հասարակական անվտանգության և հասարակական կարգի միջև որոշիչ տարբերությունն այն է, որ անվտանգության խախտման դեպքում հասարա-

կական հարաբերությունների առկայությունը վտանգվում է, իսկ երբ հասարակական կարգն է խախտվում, այդ հարաբերությունները միայն ապակայունանում են:

3. Գործող քրեական օրենսգրքում խուլիգանության դիսպոզիցիայի ձևակերպումը շատ նման է ՀՀ վճարելի դատարանի՝ «հասարակական կարգի կոպիտ խախտում» և «հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք» հասկացությունների մեկնաբանությանը: Պարզապես օրենսդիրը, փորձելով ապահովել իրավական որոշակիությունը, թվարկել է այն արարքները, որոնք խուլիգանության օբյեկտիվ կողմն են հանդիսանում:
4. Հանցագործության վայրը չի որոշում որևէ արարքի որակումը որպես խուլիգանություն և, ավելին, չի հանդիսանում քննարկվող հանցագործության պարտադիր հատկանիշ: Այս մասին խոսում է նաև այն, որ խուլիգանության դիսպոզիցիայում արարքի կատարման վայրը նշված չէ որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ: Որոշիչ է ոչ թե վայրը, այլ մարդիկ, հասարակությունը, որին իր վարքագծով մարտահրավեր է նետում հանցագործը: Այն կարծիքը, որ խուլիգանությունը կարող է կատարվել ցանկացած վայրում, որտեղ պետք է պահպանվի հասարակական կարգը նույնպես սխալ է: Ավելի ճիշտ է ասել, որ հասարակական կարգը պետք է պահպանվի ցանկացած վայրում հետևաբար դրա խախտումը կարող է իրականացվել ցանկացած վայրում:
5. Խուլիգանության հանցակազմի դիսպոզիցիայից երևում է, որ հասարակության ներկայությունը պարտադիր է արարքը խուլիգանություն որակելու համար, քանի որ նշված են այնպիսի արարքներ, ինչպիսիք են՝ մարդկանց անդորրը, միջոցառումները կամ արարողությունները խափանել կամ հիմնարկների կամ կազմակերպությունների բնականոն աշխատանքը խոչնդոտել: Սակայն հասարակության ներկայությունը կարող է անմիջական չլինել այն դեպքում, երբ արարքը կատարվում է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով:
6. Խուլիգանությունը արտահայտվում է հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով և կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ՝ արարքում խուլիգանական դրդումների պարտադիր արտացոլմամբ, որոնք որոշում են գործողության ուղղությունը:
7. Խուլիգանությունը հասարակական կարգի և անվտանգության դեմ ոտնձգող այլ հանցագործություններից (զանգվածային անկարգություններին մասնակցելը, դիակն անարգանքի ենթարկելը և գերեզմանն անարգանքի ենթարկելը) սահմանազատելու գլխավոր միջոցը դա խուլիգանական դրդումն է:
8. 297-րդ հոդվածի 3-րդ մասում որպես առավել ծանրացնող հանգամանք է նախատեսված հոդվածի 1-ին համ 2-րդ մասով նախատեսված արարքի կատա-

րումը զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով: Սա խուլիզանության ամենավտանգավոր տեսակն է: Սակայն գտնում ենք, որ խուլիզանության արդյունքում խաթարվող հասարակական հարաբերությունների բնույթը, ինչպես նաև տուժողին հասցվող վնասի աստիճանը էապես պայմանավորված չպետք է լինի այն հանգամանքով, թե հանցագործության գործիքը՝ որպես զենք օգտագործվող առարկան, նախապես հարմարեցված կամ պատրաստված է, թե՛ ոչ, և այն հանցավորի կողմից բերվե՞լ է, թե՞ վերցվել է դեպքի վայրից: Իրավակիրառ պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ անձը, կատարելով խուլիզանություն, հանցագործության վայրից վերցնում է շիշ, քար և այլ առարկաներ ու դիտավորությամբ վնաս պատճառում տուժողին, ինչն էապես մեծացնում է անձի արարքի հանրային վտանգավորությունը: Որպես կանոն դրանք իրենց վտանգավորության աստիճանով չեն զիջում նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկային կամ միջոցին:

Ուստի, իրավական որոշակիությունն ապահովելու և իրավակիրառ գործունեության ընթացքում բարդություններից խուսափելու նպատակով անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություն և գործող քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքի ծանրացնող հանգամանքից հանել առարկայի կամ միջոցի նախապես պատրաստված կամ հարմարեցված լինելու բաղադրիչը:

9. Խուլիզանությունը մի շարք դեպքերում կատարվում է ավտոհոլի, թմրամիջոցների, հոգեմետ կամ թունավոր կամ դրանց համարժեք նյութերի ազդեցության տակ: Հարբած (ոչ սթափ) վիճակը մեծացնում է ագրեսիվ, հակասոցիալական գործողությունների ռիսկը և համապատասխանաբար ավելացնում է խուլիզանության հետ կապված իրավախախտումների թիվը: Արարքը հարբած կատարելը մեծացնում է վերջինիս հանրային վտանգավորությունը և ավելի մեծ անհանգստություն է պատճառում հասարակությանը: Եթե անձը խուլիզանությունը կատարում է հարբած վիճակում և զրկված չէ դրա հետևանքով արարքի հակաիրավականությունը գիտակցելու և այն դեկավարելու կարողությունից, դա խոսում է խուլիզանական դրդումների ավելի արտահայտված լինելու նորմերի մասին: Ուստի, անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություն և խուլիզանության ծանրացնող հանգամանքների մեջ ավելացնել արարքը հարբած (ոչ սթափ) վիճակում կատարելը:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ Զրեական օրենսգիրք. ընդունվել է 18.04.2003 թ.:
Criminal Code of the Republic of Armenia. Adopted 18.04.2003,
2. ՀՀ Զրեական օրենսգիրք. ընդունվել է 01.07.2022 թ.:
Criminal Code of the Republic of Armenia. Adopted 01.07.2022,
3. ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնարանման ուղեցույց. /Ա.Գաբուզյան, Ա.Մարգարյան, Տ.Սիմոնյան., 2022. էջ 50-55, 367: <https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57> (մուտք 28.08.2023):
A Guide for the Interpretation of Conceptual Approaches and New Institutions in the New RA Criminal Code / A. Gabuzyan, A. Margaryan, T. Simonyan., 2022: page 50-55, 367.
4. Зарубин В.И., Уголовная ответственность за хулиганство: Дис. ... канд. юрид. наук. М., 2001. С. 41.
Zarubin V.I. Criminal Liability for Hooliganism: Dissertation. ... Candidate of Legal Sciences. М., 2001. Page 41.
5. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Под общ. ред. В.М. Лебедева. 2-е изд., перераб. и доп. М.: Норма, 2004. С. 528.
Commentary on the Criminal Code of the Russian Federation /Under the general editorship V.M. Lebedev. Second edition, amendments and additions. М.: Norma, 2004. Page 528.
6. Уголовное право. Особенная часть. Т.2 / Под ред. Л.Д. Гаухмана, С.В. Максимова М., 1999. С. 36.
Criminal law. Special part. V.2 / Edited by L.D. Gauhman, S.V. Maksimova. М., 1999. page 36.
7. ՀՀ վճարելի դատարանի թիվ ԱՎԴ/0014/01/11 գործով որոշում:
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=76838>(մուտք 20.08.2023)
Decision of the Court of Cassation of RA on case AVD/0014/01/11
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=76838>(access 20.08.2023).
8. ՀՀ վճարելի դատարանի թիվ ՏԴ/0085/01/14 գործով որոշում:
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=116735>(մուտք 20.08.2023).
Decision of the Court of Cassation of RA on case TD/0085/01/14
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=116735>(access 20.08.2023).
9. ՀՀ վճարելի դատարանի ՎԲ-125/07 գործով որոշում:
<https://www.arlis.am/documentView.aspx?docID=38639>(մուտք 20.08.2023).
Decision of the Court of Cassation of RA on case VB-125/07
<https://www.arlis.am/documentView.aspx?docID=38639> (access 20.08.2023).

Argishti Sahakyan

Prosecutor of Ararat Garrison Military Prosecutor's Office

CRIMINAL LIABILITY FOR HOOLIGANISM¹

Abstract

Hooliganism is one of the crimes in the current Criminal Code, targeted against public order and morality, encroaching on public relations, aimed at protecting mutual respect, honour, dignity, freedom, personal integrity and other values that exist among people in our society.

Therefore, the fight against hooliganism has been and remains one of the priority tasks of law enforcement agencies, the effectiveness of which is determined by a number of factors, including the improvement of criminal legislation and the formation of a unified practice of its application.

In the context of the above-mentioned, the theoretical analysis of the signs of the offense of hooliganism deserves special attention; in particular, in theory and practice, issues arise regarding the signs of the offense of hooliganism, the meaningful interpretation of its motives, the definition of hooligan motives and revenge motives arising from personal unfriendly relations, the emergence and manifestation of intent, division and combination of actions related to hooliganism and other crimes.

